A. H. [illegible]

Cawnpore

Jany. [illegible]

ex [illegible]

1880

[illegible] [illegible] [illegible] [illegible]

[illegible]. 1930.

ստրն իւր գեղեցիկ 'ի կնութ̃. զի յետ
մահուան իւրոյ ժառանգեսցէ փոնցիա-
նոս զաթոռն։ որև եղև. իսկ։

Սա յորժամ էառ փոնցիանոս զդուս-
տրն մագոլոսի և փեսայացաւ նմա, յայնմ
հետէ յանձնեաց մագոլոս զթգ̃րութին
իւր փոնցիանոսի փեսային իւրոյ և ասէ։
Ահա ես ծերացեալ եմ և այլ ոչ կար
եմ կառավարել զօրսդ իմ. արդ օրհն
ութ̃ իմով բարով և խաղաղութ̃ վայե-
լեսցես զաթոռն քո։ Սա տուեալ
հրաման որ աղաղակեաց մունետիկն 'ի
մէջ քաղաքին ասելով. թէ այսուհե- 9
տև կայսր և թագաւորն հռոմայ փոնցի
անոսնէ։ Սա ամ̃ նախարարքն և կու-
սակալքն և մեծամեծ իշխանքն եկեալ
երկիրպագանէին փոնցիանոսի և ասէին.

 կեցցէ

նեցցէ արքայ։ Եւ կայսրն մողոլոս յետ
տարւոյ միոյ մեռաւ խաղաղութբ։ Եւ
յոյժ զուարճացոյց փոնցիանոս զերկիրն
իւր։ Որպէս ՚ի մեծամեծաց մինչև ցրկո–
ւքուննան ամքեան զոհ կու մատուցանէ
ին։ Եւ յետ երկու ամի թգրութե
ւոյ եղև նման զաւակ արու. որ եղև յոյժ
խնդութի արքային և նախարարացն.
որև անուանեցին զանունն նր Դիոկղե
տիանոս։ Եւ յորժամ եղև մանուկն
դիոկղետիանոս. է ամաց, մայր սորա հիւ
անդացաւ մերձ ՚ի մահ. և կոչեաց առ ինքն
զկայսրն և ասէ ցնա, Արքայ աղաչեմ
զքեզ. զի ունիմ խնդիրս մի փոքրիկ ՚ի
քէն զի կատարեսցես ինձ։ Ասէ կայսրն
խօսեաց թագուհի և ես շուտով կատա
րեցից զխնդրուածս քո։ Ասէ թա–



գու

գուհին. գիտեմ որ այս ցաւս որ դիպաւ
ինձ ցաւ մահու է. աղաչեմ զքեզ արքայ
զի յետ մահուան իմոյ յորժամ առնես
այլ թագաւորի միտ տացես հրաման թա-
գուհոյն քո որ իշխեսցէ ՚ի վերայ որդւոյ
իմոյ: Զի եթէ նա իշխեսցէ ՚ի վերայ
որդւոյ իմոյ, որդին իմ ոչ զերծանի ՚ի
մահուանէ: Այլ եղիցի պահեալ յօ-
տար երկրի՝ մինչև զարգասցի և զօրաս-
ցի որդին իմ: Եթէ զայս արասցես՝ բա-
զում բարութիւն հանդիպի քեզ և որդւոյ
իմոյ: Ասէ կայսրն. ով սիրելի թագու-
հի իմ կատարեցից զխնդրուածս քո:
Եւ ապա յետ սակաւ աւուրց, վախճա-
նեցաւ թագուհին. և արար կայսրն կոծ
մեծ ՚ի վերայ թագուհւոյն և թաղեաց
զնա պատուով: Յայնժամ թագաւորն յետ



կոծ

կոծոյն սկսաւ տրտմիլ և զմտաւ ածել
թէ զի՞նչ արասցէ զմիամօր որդին իւր։
Եւ հարցեալ իշխանացն թէ զմիամօր
որդին իմ զի՞նչ արարից որ և յետ մա-
հուան իմոյ կառավարեսցէ զաթոռն իմ։
Ասեն նախարարքն և իշխանքն. ա՛ր-
քայ յաւիտեան կաց։ Կան արտաքոյ
քաղաքիս իմաստասէրք է̅. կոչեա՛ զմինն
՚ի նոցանէ և տո՛ւր զորդին քո ՚ի ձեռս
նոցա զի իմաստնացուսցեն զնա։
Յայնժամ հրամանեաց արքայն գրել
հրովարտակ զի եկեսցեն նոքա առ ինքն.
որ և եկին իսկ։ Եւ արքայն ողջունեաց
զնոսա սիրով. և մեծարեաց զնոսա և պատուեաց։
Եւ ասէ արքայն ցիմաստասէրսն. գի-
տէ՞ք սիրելիք իմ թէ վասն էր կոչեցի
զձեզ. և նոքա ասեն ո՛չ գիտեմք։ Ասէ
արքայն

արքային. ունիմ որդեակ մի որ միամօր է ինձ. և կամիմ զնա տալ ձեզ. զի իմաստութե՟ ձերով ուսանիցի զհանճարս՝ որև յետ մահուան իմոյ կառավարեսցէ զաթոռ թագաւորութե՟ իմոյ։

Ապա ասէ առաջին դպրապետն (որում անունն էր պանցիլիաս.) արքայ յաւիտեան կաց. տուր զորդին քո 'ի ձեռս իմ. և ես ծառայեցից որդւոյ քո. և ուսուցից նմա զոր ինչ ես և ընկերքն իմ գիտեմք. մինչև յեօթն ամ։ Ապա ասէ երկրորդ. դպրապետն. արքայ յաւիտեան կաց. տուր զորդին քո 'ի ձեռս իմ. և ես ծառայեցից որդւոյ քո. և ուսուցից նմա զոր ինչ ես և ընկերքն իմ գիտեմք. մինչ 'ի վեց ամ։ և անուանի ծառայ քո չենթուլաս։ Ապա յառաջ գայ երրորդ

դպրապետն որում անուննէր գարդոն.
խօսի և ասէ. ո՛րքայ յաւիտեան կաց.
տո՛ւր զորդին քո 'ի ձեռս իմ. և ես
յօժարութի̃ն ծառայեցից որդւոյ քո. և
ուսուցից նմա զոր ինչ ես և ընկերքն
իմ գիտեն. մինչև 'ի հինգ ամ: Եւ
խօսի չորրորդ դպրապետն որում անուն
նէր մալխիօրախ և ասէ. ո՛րքայ յաւի֊
տեան կաց. տո՛ւր զորդին քո 'ի ձեռս
իմ և ես յօժար կամօք ծառայեցից որդւոյ
քո. և ուսուցից նմա զոր ինչ ես և ընկե
րքն իմ գիտեն. մինչև 'ի չորս ամ: Եւ
յառաջեաց հինգերորդ դպրապետն.
խօսի և ասէ. յիշեա՛ զիստէր զի բազու֊
ւմ ամ ծառայեալ եմ հօր քո: արդ տո՛ւր
զորդին քո 'ի ձեռս իմ. և ծառայեցից
որդւոյ քո. և ուսուցից նմա զոր ինչ ես և

 ընկե

ընկերքն իմ գիտեն. մինչև յերեքամ։ և
անուանի ծառայ քո յովսէփ իմաստասէր։
Սա՛ գայ յառաջ վեցերորդ դպրապետն
որում անուն էր կղէոպաս և խօսի ա-
սելով. ո՛րքայ յաւիտեան կաց. ծառա՛յ
եմ արքայիս իմոյ. արդ տո՛ւր զօրդին քո
՚ի ձեռս իմ. և ես միամտութ̃ ծառայեցից
որդոյ քո և ուսուցից նմա զոր ինչ ես և
ընկերքն իմ գիտեն. մինչև երկու տարի։
Սա՛ եօթն երորդում դըպրապետն
անուա՛մբ յովակիմ ձայնեաց առ արքայն
և ասէ. ո՛րքայ յաւիտեան կաց. և ունկն
դի՛ր լեր ծառայիս. զի ծառայ քո եմ
ես և ընկերքն իմ. արդ տո՛ւր զօրդին
քո ՚ի ձեռս իմ և ծառայեցից նմա յօժար
կամօք և ուսուցից նմա զոր ինչ ես և ըն
կերքն իմ գիտեմք. մինչև ՚ի մէկ տարի։



Սա՛

Նոյնպէս եօթանեքին իմաստասէրքն
խոնարհութ̃ և հեզութ̃ և ամօթխածութ̃
զայս արարին պատասխանի արքային ։
Նա ասէ արքայն. շնորհակալեմ ձեզ
ով իմաստուն դպրապետք. որ սիրով
ընդունեցիք զհրաւէր որդեակն իմ ։
Բայց եթէ տաց զորդին իմ միոյդ
միայն, միւսոցդ արհամարհեալ ելանէք
աստի. այլ տաց զորդին իմ ձեզ ա-
ռնեցուն. և զձեզ յանձնեմ նմա. որ
խնամ տանիք որդոյն իմոյ յօժարական
կամօք. և հոգաբարձութ̃ ուսուցանէք
զիմաստասիրութ̃ն և զհանճար. մանաւանդ
զաստղագիտութ̃ն և զամ̃ փիլիսոփայական
արարողութ̃ն ։ Զայս ասացեալ արքային
համբուրեաց զմանուկն. և առեալ ըղ
ձեռանէ որդոյն ետ ՚ի ձեռս դպրապե
տնաց

տացն և ասէ. երթիջիք խաղաղութ՟բ.
և տ՟ր եղիցի ընդ ձեզ:

Իսկ դպրապետացն խոնարհեալ երկիր պագին արքային. և առեալ զորդի արքային զմանուկն Դիոկղետիանոս գնացին յօթևանս իւրեանց: Իսկ դպրապետն Պանցիլիաս ետուր կազմել գեղեցիկ դարպաս մի զարմանալի յօրինուածով արտաքոյ քաղաքին. և անդ եդին զորդի արքային: Իսկ զդարպասի բոլորն և զառաստաղն թէ 'ի ներքուստ և թէ արտաքոյ դարպասին զամենեսեան բովանդակ գրովք լցին. զի յելանելն և մտանելն որդի արքային 'ի գիրն հայի. և ինքեանք յօժարութ՟բ և հոգաբարձութ՟բ ուսուցանէին զմանուկն մինչև յամ մի: Իսկ 'ի լնուլ ամին ասէ Պանցիլիաս դպ-

րապետն . ո՛րչ փորձեսցուք զաշակերտս մեր թէ ուսեա՞լ է ինչ ՚ի դպրութէս մերմէ թէ ոչ: Պատասխանի ետ դպրապետն զալթան եւ ասէ . բարիէ զոր ասես . յորժամ ննջեսցէ յայնժամ դիցուք ՚ի ներքոյ չորեցունց ոտիցն մահճին տերեւս ծառոց . եւ մեք կացցուք յանդիման նր մինչեւ զարթիցէ . եւ տեսանեմք թէ զինչ խօսի մեզ մանուկն: Եւ դպրպետքն ամենեքեան ասացին այո այդպէս արասցուք: Եւ յորժամ ննջեաց որդի արքային, յայնժամ եդին զճիւղս ծառոցն ՚ի ներքոյ ոտից մահճին . եւ ինքեանք կացին յանդիման նր մինչեւ զարթեաւ մանուկն Եւ իբրեւ զարթեաւ , պշուցեալ հայէր ընդ առաստաղն եւ ընդ գետինն . զոր տեսեալ դպրապետացն . ասեն որդե



ակ

և անկ ընդէր պղուցեալ հայիս ընդ ա-
ռաստաղն և ընդ գետինն։ Աստուածախաւն ի
ևս որդի արքային և ասէ․ մ͞թ այն հայիմ
զի կամ առաստաղ տաճարիս ցածացե-
ալ է, և կամ գետնին յատակն բարձրա-
ցեալ է։ Զայն լուեալ դպրապետայն
ասեն ցմիմեանս․ եթէ մնասցէ մանուկս
կենդանի, լինի կատարե͞լ իմաստասէր
մ͞ծ պղատոն կամ մ͞ծ արիստոտէլ։
Եւ յայնժամ ժողովեցան դպրապետքն
և եկին առ կայսրն և ասեն արքայ յաւ-
իտեան կաց․ երանի է քեզ և երանի է
որ ծննդեան մանկանն քո․ որ այսպիսի
սուր միտք մանուկ չէ տեսեալ մեր․
զի դեռ ամ մի է և ջանայ որ զմեզ
անցանի․ և եթէ հասանի նա ՚ի չափ
հասակի ոչ լինի նմանն ՚ի մ͞ր երկրի։

 Բայց

Բայց լաւ էր քեզ արքայ զի ունկն դնէր լինէիր մեզ զոր ինչ խօսելոց եմք առաջի արքայիս. և մի բարկանայցես խօսից մերոց։ Ասէ կայսրն. մի էր բարկանամ եթէ բարի լինի խօսք ձեր։

Ասեն դպիրքն. լաւ էր քեզ արքայ զի ամուսնանայիր դու և լինէր քեզ բազում որդիք. որ յայսպիսի իմաստավարժէին. այլ այս որդին քո Դիոկղետիանոս. որև յետ մահուան քո մի մի տիրեսցեն աթոռոյ թագաւորութեան քո։

Հաճանեցաւ կայսրն և ասէ. ելէք 'ի խնդիր և գտանէք գեղեցիկ աղջիկ մի. և ես առից զնա ինձ 'ի կնութիւն։

Եւ գնացեալ հրաւիրակքն շուրջ եկին 'ի բազում տեղիս. և գտին ըզդուստրն մողոլսի արքային գեղեցիկ

յոյժ. և բերին առ կայսրն։ Որև հաճոյ
թուեցաւ աչաց կայսերն. և արարին
հարսանիս. և եղև ուրախութիւն մեծ։
Եւ եդ կայսրն ՚ի գլուխ նր թագ.
և անուանեաց զնա թագուհի. և սիրե
աց զնա յոյժ վս գեղեցկութե նորա և
պճնեաց զնա զարմանալի կերպիւ և
կացին բազում ժամանակս և ոչ եղև նմա
զաւակ։ Եւ կինն խիստ տարակուսե-
ալ էր վս անզաւակութե իւրոյ. կարծէր
թէ յարքայէն է։ Եւ ետուր գտան
ել գաղտ ՚ի յարքայէն գեղեցիկ երի-
տասարդ մի. և բերեալ առ ինքն պճն-
եաց զնա կանացի զգեստիւ. և համապազ
ընայր ընդ նմա. մի թէ զաւակ ծնանիմ
ասելով։ և այսպէս պառնկէր և պահէր
զնա ՚ի սենեկի իւրում որպս կայս՛աղջիկ։

Յետոյ լռեալ Թագուհին թէ ունի Թագաւորն որդի մի միամօր. և տուեալ է զնա 'ի ձեռս իմաստասիրաց՝ ուսանիլ զիմաստութիւն և զհանճար։ Եւ վաղվաղակի չար խորհեցաւ 'ի միտս իւր և ասէ. լինէր որ մեռանէր որդի կայսերն. և ես ծնանէի որդի որ ժառանգ լինէր։ Եւ այսպիսի խորամանկութե̅ խորհէր սրտատօրէն թէ որպիսի հնարիւք կարօղ լինիցի սպանանել զմանուկըն և գտեալ ժամ զի աղաչեսցէ արքային բերել զմանուկն ։

* Խնդրէր Թագուհւոյն 'ի կայսերէն՝ զի բերցէ զմանուկն։

Եւ 'ի գիշերի միում մինչդեռ ընկողմնեալ էր կայսրն 'ի վր̅

մնհձին լուրոյ, խօսեցաւ ընդ Թագու-
հւոյն և ասէ: Սիրելի տիկին իմ. արդ
զծածուկ խորհուրդ սրտի իմում ծա-
նուցից քեզ. գիտեմ՝ զի ոչ գոյ մայր
ստեղծուած ՚ի ներքոյ երկնից որ սիրէ
զքեզ առաւել քան զիս: Ասէ Թա-
գուհին. եթէ այնպէս իցէ որ սիրես
զիս, փորքիկ խնդիրք մի ունիմ՝ արդ
խնդրեցից ՚ի քէն. եթէ կատարես,
երևի ապա սիրոյ նշոյլն: Ասէ կայսրն.
զոր ինչ խնդրես արարից վաղվաղակի:
Ասէ Թագուհին. տեսանես՝ զի դեռ
զաւակ ոչ ունիմք որ մխիթարէ զմեզ.
արդ յղեա և կոչեա զորդին քո առ
քեզ՝ զոր տուեալ ես ՚ի ձեռն իմաստա-
սիրաց. և ես տեսուք նորին ուրախա-
ցայց. մինչև տր ածն իմ պարգևեսցէ

մեզ զաւակ ։ Պատասխանի ետ կայսրն
և ասէ․ ո՛վ սիրելի թագուհի իմ․ է̃
ամ է որ և ես չեմ տեսեալ զորդին իմ․
վ̃ս աղերսանաց քոց՝ կատարեցից զխնդր
ուածս քո ։ Եւ նոյն ժամայն հրաման
արար արքայն գրել հրովարտակ առ է̃
իմաստասէրսն․ և կայսերական կնքով
կնքել առաքեաց․ զի ՚ի տօնի պենտա-
կոստէին բերցեն զորդին նր̃ ։ Եւ թէ
յապաղեսցեն՝ մահու մեռանիցին ։
Եւ յորժամ հասին թղթատարքն առ
իմաստասէրսն, ետուն զհրովարտակն ՚ի
ձեռս նց̃․ և նոքա առեալ բացին և ըն-
թերցան․ և վերահասու եղեն կամաց
արքային ։ Եւ ՚ի գիշերին՝ ելեալ
դպրապետքն հայեցան յաստղն․ եթէ
արքայի հրամայեալ օրն տարցուք զոր-



դին

գին, զինչ լինիցի նմա։ Տեսին և ծա-
նեան՝ զոր թէ հրամայեալ օրն տանիցեն,
վնաս լինի մանկանն. և թէ ոչ տանիցեն
իւրեանց վնաս լինի։ Եւ այսպէս տրտ-
մեալ և տարակուսեալ կային յոյժ. զի
ոչ գիտէին թէ յոր կողմն դառնան. այլ
լաւ համարէին իւրեանց մեռանիլն քան
զորդւոյ արքային։

Եւ մանուկն տեսեալ զվարժապետսն
այնպէս տրտում և տխուր սկսաւ և ինքն
տրտմիլ. և ասել ընդ միտս իւր թէ
զինչ պատահեցաւ վարժապետաց իմոց
որ այսպէս տրտումեն. և երկնչէր հար-
ցանել։ Եւ յետոյ վստահացեալ սկսաւ
հարցանել զվարժապետսն իւր և ասէ
ասացէք ինձ զպատճառն յաղագս որոյ
իրաց տրտմեալ էք։ Ասեն գպրպտոքն.


հայր

հայր քո ըզքեզ խնդրեալէ. և հրա-
մայեալէ թէ ՚ի տօնի պենտակոստէին
բերէք զորդին իմ: Նա՛ յորժամ ըն-
թերցաք ըզ հրովարտակ հօր քո ՚ի
նոյն գիշերին գնացեալ հայեցաք յաս-
տղն. և տեսաք որ թէ հրամայեալ օրն
տարցուք զքեզ առ հայրն քո նոյն ժամայն
սրով մեռանիս դու. վն՟ այն տրտումեմք
և ո՛չ գիտեմք թէ զի՞նչ արասցուք:
Ասէ մանուկն. ցուցէք ինձ զաստղն զայն
զի ես այլ տեսից զնա: Նա՛ յորժամ
ցուցին նմա զաստղն հայեցաւ և ետես
զայն յայտնի զոր ինչ ասացին վարժապե
տքն իւր: Նա՛ մինչդեռ ապուշ մնա-
ցեալէր և հայէր յաստղն, ետես այլ
փոքրիկ աստեղունք շուրջ զնովաւ ոսկ՟
գիր գրեալ. և ցուցանէր թէ մինչև

 յեօթ

յեօթն որ եթէ ոչ խօսեսցի , միայ կենդանի. բայց յեօթն օրն է անգամ տարցեն զնա 'ի սպանումն և բազում

Նեղութե ազատի ։

Իբրև ետես մանուկն զաստղն զայն կոչեաց զվարժապետքն իւր և ասէ . կարողէք դուք յայն եօթն օրն որ փրկէք զիս 'ի ձեռաց հօր իմոյ ։ և եցոյց նոցա զաստղն զայն ։ Ապա նայեցեալ վարժապետքն զաստղն որ ըստո՛յգ է խօսք մանկանն զոր ինչ և ասաց ։ Ապա ասեն օրհնեալ է Ած որ այսպիսի շնորհս ետուր աշակերտին մերոյ . որ կատարեալ բուն իմաստէր եղեալ իմաստութն իւրով և ողորմութն այ կարողացաւ իմանալ ըզ մահն իւր և որպիսի ապրիլն ։ Ապա պատասխանեալ պսեն ցմանուկն . այ կա-



րող

րող զօրութ՟ն ամենքս մէկ մէկ օր փըր-
կեսցուք զքեզ 'ի չար պատահմանէն
որ գալոց է 'ի վ՟ր քո։ Եւ սկսան պատ-
րաստել և գնալ առ կայսրն։ Իսկ մա-
նուկն մինչդեռ նննջէր 'ի միջօրէի 'ի վ՟ր
մահճին իւրոյ, ետես յերազին զի չորս
արմատ ծառոց բուսեալ էր 'ի մահճի
իւրում. և 'ի նոցանէ ելեալ եօթն
ճիւղ. և 'ի միջի նոցա կին մի նման վի-
շապի զոր կազմէր 'ի ճիւղիցն մահադեղ
այնորիկ որ նննջէր 'ի մահիճն։ Զա-
րթեաւ որդի արքային 'ի քնոյն և պատ-
մեաց զտեսիլն վարժապետաց իւրոց։
Եւ վարժապետքն գնացեալ հայեցան
յաստղն. և իմացան թէ զինչ էր երազն
և եկեալ պատմեցին որդւոյ արքային։
Եւ ասեն. չորս արմատքն ծառոյն դ-


տարբե

տարերքն են. և կինն վերջապ յետնա-
մայրն է. և է՟ ճիւղքն՝ եօթն օրն է։ Ե-
թէ խօսեսցիս յայն եօթն օրն մահու
մեռանիցիս։ Յետ այսորիկ ելանէ ՚ի
ճանապարհ. և եկին առ հայրն առ
արքայն։

Ո՞վ իբրև լուեալ զգալն որդւոյն իւրոյ
կայսրն փոնցիանոս, ել ընդ առաջ նորա
թմբկօք և փողօք և զանազան արուես-
տականօք և բազում զօրօք։ Ո՞վ տե-
սեալ մանուկն ըզ հայրն իւր առէ վար-
ժապետացն. ահա՛ գայ հայրն իմ։ և
դուք պատրաստ կացէք մի թէ փրկէք
զիս ա՟վ յայնմ պատահմանէն որ գալոցն
է ՚ի վ՟ր իմ։ Ասեն դպրապետքն. որ-
դեակ մի՛ վախեր. ողորմութ՟ն ա՟յ մեք
պատրաստեմք և ոչ մոռանամք զքեզ.

այլ դու այսուհետև ոչ ևս խօսեսցիս, զի հասեալ է ժամ քո ։ զայս ետուն պատուէր որդւոյ արքային ։ Եւ ահա գայր Թագաւորն ծանր փառօք և բազմութ̃ հեծելոցն․ և խոնարհեալ ետ ողջոյն վարժապետացն․ և կալեալ զձեռանէ որդոյն իւրոյ գիրկս արկեալ համբուրեաց զնա և ասէ․ ո՛րդեակ իմ սիրելի զի՛ արդ կեաս․ քանզի բազում ժամանա՛կէ որ չեմ տեսեալ զքեզ ։ Եւ որդին խոնարհեալ երկիրպագ հօրն․ և ոչ ինչ խօսեցաւ ։ Եւ կայսրն տեսեալ զարմացաւ ընդ միտս իւր և ասէ․ գուցէ ուսեալ է 'ի վարժապետացն իւրոց ո՛չ խօսիլ առաջի զօրացն ։ Եւ յորժամ եկին 'ի դարպասն, առեալ Թագաւորն զձեռանէ որդոյն իւրոյ և տարեալ ներ-



տոյց

տոյց մերձ առ իւր և ասէ. որդեակ իմ
ո՞րպ հրահանգեցին զքեզ վարժապետքն
քո. և զինչ ուսար ՚ի նոցանէ։ Իսկ մա–
նուկն խոնարհեալ երկիրպագ հօրն
իւրոյ և ո՛չ խօսեցաւ։ Սքանչացաւ
կայսրն և ասէ. որդեակ ընդէ՞ր ոչ խօսիս
ընդ իս։

Իսկ Թագուհին լուեալ զձայն որդոյ
արքային ուրախացաւ յոյժ և ասէ. եր–
թայց և տեսից զնա. և ընտրեաց ՚ի կու–
սիցն զգեղեցկատեսիլսն և առեալ ընդ
իւր գնաց առ նա։ Իսկ կայսրն տեսե–
ալ զԹագուհին նստոյց մերձ առ որդին
իւր։ Իսկ հարցեալ Թագուհին ցկայ–
սրն և ասէ ա՞յս է որդին քո։ Ասէ կայսրն
այո՛ այս է. և ոչ գիտեմ զինչ եղև սմա որ
ոչ խօսի ընդ իս։ Ասէ Թագուհին.



տո՛ւր

տուր ինձ հրաման և ես տարայց զնա 'ի
սենեակն իմ և խօսեցայց ընդ նմա և
նա խօսեսցի ընդ իս ։ Ասէ կայսրն։ արի
կաց յոտին որդեակ իմ և գնայ ընդ մօր
քու ։ Եւ մանուկն ելեալ երկրպագեց
հօրն և գնաց ընդ յետնամօրն ։
Եւ յետ տանելոյն զնա Թագուհին
'ի սենեակն իւր հրամայեաց ամենեցուն
'ի բաց գնալ յիւրմէն. և առեալ զձե-
ռանէ մանկանն նստոյց մերձ առ իւր ։
Խօսի և ասէ. ով սիրելի իմ դիոկղե-
տիանոս լուեալ էի զհամբաւ գեղեցկու-
թեան քո. և այժմ տեսանելով տեսի և
ծանեայ դէմ յանդիման զգեղեցկութիւն
քո. և անձն իմ սիրեաց զքեզ յոյժ ։
Արդ ով սիրելի իմ դիոկղետիանոս
ուրախ լեր ընդ իս. զի մեր սիրոյ քոյ պա-

 հեցի

հեցի զկուսութի̄ իմ. զի դու շատացեալ
հանդիցես՝ ի կուսութի̄ս իմ։ աղաչեմ զքեզ
խօսեաց ընդ իս. և ասա ինձ զոր ինչ և
կամիս. և կատարել պատրաստեմ զա̄մ
կամս քո։ Զայս ասացեալ և գիրկս
արկեալ զմանկամբն կարէր համբուրել
զնա. և մանուկն դարձուցեալ զերեսն
իւր ոչ ետ ուր̄ նմա համբուրել։ Ասէ Թա-
գուհին. ահա խնայուցեր զիս ով սի-
րելի իմ դիւկզետրիանոս. եկ զի ննջես-
ցուք ի միասին և ուրախ լինիցուք։ Եւ
մանուկն հայէր խոժոռ յերեսս Թա-
գուհւոյն։ Ասէ Թագուհին. ով սի-
րելի իմ դիւկզետրիանոս եթէ պատկա-
ռիս ես՞ ոչ համարձակիս խօսել լը ընդ իս։
ահա կայ թուղթ և թանաք. առ և
գրեա և ծանո ինձ զկամս քո եթէ լինի
ինձ

ինձ յոյս առ ՚ի վայելել զսէր քո ։

Ե՛ս մանուկն առեալ զթուղթն՝ գրե-
աց այսպէս. ո՛վ թագուհի ո՛չ կամիմ ես
պղծել զտունն և զանկողին հօր իմոյ.
քանզի ոչ ինչ լինի ինձ շահ. այլ չարա-
չար մեղքէ առաջի այ. աղաչեմ զքեզ
մի՛ բռնադատեր զիս. զի այդ գործդ
որ դու կամիս ինձ զէնէ և փառաւոր.
և ամօթ ՚ի մարդկանէ. ո՛չ կարեմ գոր-
ծել ես այդ գործդ։ և ետ զթուղթն

առ. թագուհին ։

Յորժամ էառ թագուհին զթուղթն
՚ի ձեռանէ մանկանն և ընթերցաւ,
ինքըն ճչեաց մեծաձայն և պատառեաց
զհանդերձսն և զբաճկոնն. և ըզընգամբն
ճանկեաց զերեսն և եհան արիւն. և
բացեալ զգլուխն փետեաց զհերսն. և

 սկսաւ

սկսաւ աղաղակել և ասել աղաչեմ զձեզ
մի՛ ով օգնեցէք ինձ. զի կամի այս որդի
արքային սպանել զիս չարեօք. ծանուցէք
տեառն իմոյ գալ առիս և տեսանել
զեղկելիս: Եւ ծանուցին ծառայքն
արքային:

Եւ կայսրն եմուտ առ Թագուհին և
ասէ. ով սիրելի տիկին իմ զի՞նչ գոր-
ծես. ընդէ՞ր այդպէս ճչես և լաս. ի՞նչ
պատահեցաւ քեզ: Ասէ Թագուհին.
տէր իմ արքայ ողորմեա ինձ. զի սա չէ
որդի տեառն իմոյ արքայի. այլ սա չարէ և
անզգամ. և բարուք շնացող: Յորժամ
բերի զդա 'ի ներքս և ջանայի խօսե-
ցուցանել, յանկարծակի սկսաւ ձեռն
արկանել 'ի յիս. և կամէր ընդ իս մե-
ղանչել: Եւ իբրև ես ոչ կամէի պա-
տառե

տուեաց զհանդերձս իմ․ և արիւնեաց
զերեսս իմ․ և այսպէս խայտառակեաց
զիս․ զոր տեսանէ տէրն իմ արքայ ։
Նա՛ տեսեալ կայսն զերեսս թագու-
հայն արիւնաթաթախ և զհանդերձն
պատառեալ հաւ՛ատաց ։ Նա՛ բարկա-
ցեալ ասէ տարէ՛ք կախեցէ՛ք որ ո՛չ տե-
սանէ աչս իմ զայդպիսի անաւակ որդին ։
Նա՛ լո՛ւեալ նախարարացն զան ․ առ-
կայսրն և ասեն․ ա՛րքայ յաւ՛իտեա՛ն կաց ։
Որդին քո միամօ՛րէ քեզ․ և ո՛չ ունիս
ա՛յլ որդի որ ժառանգ լինիցի քեզ․ չէ՛
արժան որ առանց քննուե̅ սպանցես զոր-
դին քո վ̅ս փոքր ինչ բանի ։ զի որդին
քո ո՛չ խօսի․ ոչ գիտես ապա տէր մեր
արքայ թէ արժանէ մահու թէ ոչ ։
Այլ պա՛րտէ արգելուլ զնա ՚ի բանտ

մինչև

մինչև 'ի վաղեան օրն. և արասցես դա-
տաստան իրաւամբք. և եթէ գտանիցի
մահու ինչ արժանի մեռցի։

Զի մի' ասիցեն ժողովուրդքն թէ
կայսրն սրտմտեալ առանց իրաւանց և
դատաստանի հրամայեաց սպանանել ըզ
միամօր որդին իւր։

Իբրև լուաւ կայսրն զայս 'ի Նախա-
րարաց իւրոց չիջաւ տակաւին մի բար-
կութի̄ նր̃ և ասէ. տարէք արգելէք
զնա 'ի բանտն մինչև 'ի վաղեան օրն.
զի լինիցի դատաստան և իրաւամբք մեռցի։

Եւ թագուհին իբրև լուաւ թէ ոչ
ըսպանանեցին զորդի արքային, սկսաւ
ճչել և լալ և վայ տալ անձին։

Եւ այնպէս ահագին ճչէր որ լսելի
եղև ամենեցուն.. և ծանուցին կայսերն։

Յայնժամ ելեալ կայսրն ՚ի գահոյիցն իւր եմուտ առ թագուհին. և տեսա-նէր զի յոյժ անմխիթար լայր: Ասէ կայսրն. ով սիրելի տիկին իմ զի՞նչ եղև քեզ որ այդպէս անմխիթար լաս: Եւ թագուհին անկեալ առ ոտս ա-րքային և ասէ. մի թէ ոչ գիտես զինչ արար նզովեալ որդին քո. որ՞ք կամէր բռնադատել և լլկել զիս. ո՞չ դու իսկ տէրդ իմ տեսեր. և ասացեր թէ կո-րուսից զնա դառն մահու՛ամբ. և նա դեռ ևս կենդանի է

Ասէ կայսրն. մի այն արգելի զնա և ձգեցի ՚ի վաղւն զի կամիմ քննութ առնել առաջի նախարարացն իմոց. և թէ գտանիցիմ ՚ի նմա վնաս ինչ մահու-յայնժամ հրամայեմ չարաչար սպանանել զնա:

Ասէ թագուհին. եթէ որդին քո ճանաչէ կենդանի յայնժամ եղիցի քեզ ող եղև ծառի միոյ պտղատուէի ՚ի մոլոր արմատոյ նորին: Ասէ կայսրն. պատմեա ինձ զառակդ զայդ: Ասէ թագուհին. պատմեմ քեզ զառակս զայս. բայց լուր ՚ի միտ առ: Եւ սկսաւ ասել:

❋❋❋❋❋❋❋

*Առաջին առակ թագուհոյն. որ հաւանեցոյց զկայսրն սպանանել զորդին:

Կայր ՚ի քաղաքի միում այր մի. և ունէր գեղեցիկ դրախտ մի և էր ՚ի մէջ դրախտին ծառ մի երևելի. որ ամ յամէ տայր զպտուղս յոլովս և պտուղ նորա այնպիսի զօրութիւն ունէր որ ամ̃ ցաւոց դեղ լինէր բայց ՚ի հոգւոց: Եւ եղև յաւուր միում եկն տէր այգ



ոյն

ոյն 'ի պարտէզ իւր․ և նայեցեալ 'ի վր̅
ծառին ետես որ ահա փոքր ճիւղ մի
ելեալ էր ընդ արմատն։ և կոչեալ զայգ-
էգործն և ասէ․ դարմա՛ն տար ճղոյս այս
որիկ․ զի յուսամ 'ի սմանէ առաւել առ-
նուլ պտուղ քան 'ի ծառոյն մեծ է։
Ս՛ յետ աւուրց դարձեալ եկն տէր
այգոյն 'ի պարտէզ իւր․ և նայեցեալ
ետես զծառին ճիւղն որ ո՛չ էր աճեալ։
կոչեաց զայգէգործն և ասէ․ վ̅ն էր ոչ
աճէ ճիւղս այս ո՛վ այգէգործ։ Պատաս-
խանի ետ այգէգործն և ասէ․ ծառս
մեծ և բարձր է յոյժ․ ո՛չ թողու ծագել
արև 'ի վր̅ սորա․ վ̅ն ա՛յն ոչ աճէ ։
Ասէ տ̅ր այգոյն․ հրթեա՛ զճիւղսն ծա-
ռոյն զի ծագեսցէ արևն 'ի վր̅ սորա ։
զայս ասացե̅լ գնաց և արր̅ այգէգործն այնպ̅

 Ս՛

Եւ դարձեալ եկն տէր այգւոյն. եւ նայեցեալ ետես զի այժմ եւս ոչ էր աճեալ ճիւղն: կոչեաց զայգէգործն եւ ասէ ընդէ՛ր եւ այժմ ոչ աճէ ըստ կամաց իմոց:

Ասէ այգէգործն. ոչ է զարմանք որ ոչ աճէ զի բարձրութի ծառին ոչ թողուդալ անձրեւ 'ի վր սորա. վս այնոր ոչ աճի:

Ասէ տէր այգւոյն. հատ զծառն մեծ. զի լաւ է ճիւղն քան զծառն մեծ: զայս ասաց եւ գնաց: եւ այգէգործն եհատ զծառն. եւ նոյնժամայն չորացաւ եւ ճիւղն:

Եւ յետ աւուրց ինչ դարձեալ եկն տէր այգոյն 'ի պարտէզ իւր. եւ տեսեալ չորացեալ զծառն ճիւղովն ապուշ մնայ: քանզի զօրութի նորա 'ի ծառոյն էր յորժամ հատին զծառն չորցաւ եւ ճիւղն:

Ասէ թագուհին. լուա՛ր տէր իմ ար-



քա

քայ զբան ծառայն որ անիմաստ խորհր-
դով խօսուր չորասցէ ծառն. որ և աղքատք
և ցածր քիրք նզովեալքն զչորացնօղն ծառոյն:
Ասէ արքայն. ում նմանեցուցեր ըզ
ծառն զայն: Ասէ թագուհին. ծառն
մեծ և երևելի դուես. թէ աղքատք
թէ ցածագարք՝ ամենեքեան ՚ի տիրութին
քո խնդան. և ամ տկարք և տնանկք
խրատով քո ապրին: Նա՛ որդին քո
ջանայ հարթել զճիւղս քո. այսինքն ըզ
զօրութիս քո. և յետոյ խափանէ զքեզ
ոչ այգէգործն զծառն. և թագաւորե-
սցէ ՚ի տեղի քո: և ոչ կարէ թփէորել.
ոչ ճիւղն որ չորացաւ ընդ ծառոյն:
Բայց խափանի թագաւորութի քո.
և դու ընդունիս անէծս յաղքատաց և
տնանկաց. զի խոստովր սպննել զնա և ոչ
սպաներ



Ասէ

Ասէ կայսրն. լաւ առաւել ասացեր. զի ոչ կարէ որդին իմ այնչափ առնել որպէս այդ չէ գործն զծառն զայն զի ընդ լուսանալ առաւօտուն առանց քննութեան և առանց դատաստանի տամ սպանանել ։

Ասէ թագուհին. թէ սպանանես 'ի հանդիստ լինիցիս. և խաղաղութեամբ վայելեսցես զթագաւորութիւն քո ։

*****

*Առաջին անգամ փանէլն [illegible] 'ի հաց. և [illegible] զնա ։

Ե վաղիւ անդր նստեալ կայսրն 'ի դահոյսն իւր. և հրամայեաց դահճապետին իսկոյն առժամայն տանել զորդին իւր 'ի տեղի սպանման փողով ազդեցուն ։ Եւ հանեալ դահճապետն զորդին արքային 'ի բանտէն կապ-



եաց

եաց զձեռսն 'ի յետս. ո՞չ օրհնէ մահա-
պարտաց։ Ո՜ եւ տաձայնել առաջինորա
մունետիկս ասելով. թէ ով ոք կամի
մեղանչել ընդ յետնամորն այսպիսի մահ-

ուամբ մեռցի։

Ո՜ լռեալ ժողովրդոյն ողբալով մե-
ծաձայն աղաղակէին եւ ասէին. աւա՜ղ
աւա՜ղ եւ հազար վախ մեամօր որդոյ կայս-
երն. որ տանին 'ի զուր սպանումն։
Յայնժամ պանցիլեաս դպրապետն սրբ-
թաց երկվարոք եհաս նոցա եւ ասէ. մ-
շտապիք սպանանել զդա. զի յոյս ունիմ
առ ած որ երթամ առ կայսրն եւ աղա-
տեմ զդա։ Ո՜ ժողովուրդքն փութա-
ցուցանէին զդպրապետն եւ ասէին. մեք
արդելցուք զդահիճսն. այլ դու փութա-
փրկել զմանուկն զի մի 'ի զուր մեռանից-

Ո՜

Ասէ մանուկն այլ խանհարեցոյց զգլու-
խոյն վարժապետին իւրոյ. իբր թէ կա-
մէր ասել յիշեա զիս առաջի հօր իմոյ։
Ասէ դպրապետն գնաց 'ի պալատն և
եմուտ առ արքայն. և ողջունեաց մեծա-
պատուով։ Ասէ կայսրն բարեւ բ̃ ասէ.
ով չար ծեր՝ ոչ լինիցիս դու ողջ։
Ասէ դպրապետն. տէր ողջուն ծա-
ռայեցի և ոչ մահու։ Ասէ կայսրն. ուստ
է զմ խօսք քո։ ետու զորդին իմ 'ի ձեզ
լեզուաւ և խօսուն. ուսուցանել և դաս-
տիարակել. արդ փոխանակ իմաստուն և
հանճարոյ պապանձեալ եղև։ և յաւել
չարիս ևս զայս զի կամիցէ բռնադատել
և սկել զտիկինն իմ. վ͞ա այնր գործոյ
ահա մեռանիս այսօր. և զձեզ իսկ կորուսից
դառն մահուամբ։ Ասէ դպրապետն.



պապա

պապանձումն որդւոյ քո 'ի մէնջ ոչ է. զի ընդ մեզ խօսէր ուղիղ. այն է գիտող թէ վասն է՞ր լուռ կայ։ Սա՛ որ ասացեր թէ կամեցաւ բռնադատել զկինն իմ ճշմարիտ ասեմ քեզ արքայ զի սուտ է բանդ այդ. զի գիտեմ զնա որ զայդպիսի իրս ոչ գործէ նա ։ Սա՛ թէ վս բանի կնոջ քո սպանցես զմիամօր որդին քո դառնագոյն լիցի քեզ քան զայն որ եղև զինաւորի միոյ. որ վս բանի կնոջ իւրոյ սպան զշուն իւր. որ ապրեցուցեալ էր զորդին իւր 'ի մահուանէ ։

Ասէ կայսրն. ասա՛ զառակդ զայդ զի լսեցից։ ասէ դպրապետն. ոչ ասեմ և ոչ աշխատիմ. զի մինչ ես պատմեցից դուցէ սպանցես զորդին քո անդ. և զի՞նչ շահ լինիցի 'ի պատմութենէս։ Սա՛ թէ կա-

մէս զի պատմեցից զառակս, նախ դարձո զորդին քո 'ի մահուանէ և ած 'ի բանտ և յորժամ լուիցես յինէ զառակն իմ եթէ հաճոյ լինիցի առակս տեառն իմում, ապրեցո զորդին քո. և եթէ ոչ սպան զնա։ Եւ հրամայեաց կայսրն դարձուցանել զմանուկն 'ի բանտ՝ մինչև պատմեսցէ դպրապետն զառակն։ Եւ սկսաւ ասել այսպէս։

*********

*Առակ առաջին դպրապետին պատմելոյ. զոր առասցելոյն և փրկեաց զմանուկն 'ի սպանմանէ։

Զինուոր մի կայր զօրաւոր և անուանի յոյժ. և ունէր որդեակ մի փոքր տղայ. և միամօրէր ամէ որդին քո. և յոյժ սիրէր զնա։ և երեք նաժիշտք ծառայէին նմա։ Առաջինն դիեցուցանէր և կերակրէր։ Երկրորդն լուա

նար

նար և զգեցուցանէր։ Եւ բորբոքն սորէր
և քննեցուցանէր։ Արդ զինուորն այն
ունէր այլ ևս շահին մի, եւ շուն մի․ և
սիրէր զնոսա։ Եւ շունն այն այնպիսի
լաւութին ունէր որ զինչ տեսանէր ՚ի
վայրի ընթանայր զկնի նորա․ և ոչ դառ֊
նայր դատարկ մինչև ըմբռնէր։ Եւ յոր
ժամ ըմբռնէր կանգնէր ՚ի վր տըտանն
և հայէր․ մինչև եկեալ տէրն առնոյր
զորսն ՚ի նմանէ։ Այլև շունն այն ունէր
բնութի զայս ինչ։ զի իմանայր զլինելոյն․
և յորժամ կամէր տրն ուրեք երթալ
եթէ բարի էր ճանապարհն այն գայր
շունն և երկիցս խաղայր առաջի նորա․ և
եթէ չար լինէր ճանապարհն ոչ գայր
և ոչ խաղայր․ այլ տրտում և տխուր հայ֊
էր։ և տրն այնու ճանաչէր զչարն և զբարին։



Եւ

Եւ շահէնն այն ունէր սովորութի՛ այսպ·
զի յորժամ յորս ելանէր տէրն իւր, ա-
մենեւին դատարկ ո՛չ դառնայր· այլ հա-
նապազ թռուցեալ ըմբռնէր զթռչունս
եւ բերէր առ տէրն իւր:

Եւ յաւուր միում կոչեցեալ եղեւ 'ի
խաղս առ զինուորակիցսն իւր եւ բազումք
ժողովեցան 'ի խաղն այն: Եւ գնաց զինուորն
եւ տիկինն ընդ նմա· եւ աղախինայքն եւս·
եւ մնաց տղայն միայն 'ի յօրօրոցին:

Եւ շունն պահէր զտղայն· եւ ննջէր
շունն ընդ որմով օրրոցայն· եւ բազան նս-
տէր 'ի վ՟ր ձողին: Եւ տանն որմն պա-
տառեալ էր· եւ կայր օձ մի 'ի ներքոյ
որմին· եւ տեսեալ օձն որ ձայն մարդոյ
ոչ ելանէր· այլ միայն գայր ձայն շնչոյ
ելանելոյ տղայն 'ի յօրոցացն: եւ հա-
նեալ

նեաւ զգլուխն ՚ի ծակէն դուրս ետես
և աՀա ո՛չ ոք էր ՚ի տանն. բայց միայն
տըղին շնչոյ ձայնն որ ննջէր ՚ի մէջ
օրոցին. և ելեալ օձն գայր ընդ օրոցք
տըղային զի սպանցէ զնա: Տեսեալ բա-
զային որ ելած օձն ՚ի ծակէն դուրս.
և նայէր շանն. և ետես զի շունն խոր
՚ի քուն էր. և թռեաւ բազեն շառաչ-
մամբ թևոցն: Որ իսկոյն զարթեաւ
շունն ՚ի ձայնէ թևոցն. և իբրև եբաց
զաչսն ետես զօձն ՚ի վր օրոցացն. և
բարկացեալ շունն անկաւ ՚ի վր օձուն.
և օձն պատատեցաւ ընդ շանն: Օձն
ջանայր սպանանել զտղայն. և շունն ջան
այր սատակել զօձն: Եւ այնչափ կռուե-
ցան ընդ իրարս եւ վէրս ետուն միմե-
անց՝ որ քարխնթեալք եղեն շուրջ զօ-
րանօքն:

Եւ սրտմտեալ շունն յարեաւ ՚ի վե՛ր օձուն։ եւ ՚ի պատերազմելն ընդ միմեանս, կործանեցաւ օրոցք տղային. եւ վնաս ո՛չ եղեւ տղային։ Եւ շունն այնչափ ջանաց մինչեւ սատակեաց զօձն. եւ նստէր ընդ պարսպօք օրանին. եւ լիզէր զվէրս իւր։ Յետ այնորիկ փաղփաղակի վճարեցաւ խաղն. եւ եկին նաժիշտքն ՚ի տուն յառաջ քան զտիկինն. եւ տեսին զօրոցքն կործանեալ. եւ շուրջ զօրոցքն լի՛ արիւն։ կարծեցին թէ շունն զտղայն կերեալ է։ եւ անմիտ կանայքն ո՛չ կանգնեցուցին զօրանն զի տեսցեն տղայն կա՛յ թէ ոչ։ Եւ ասեն ընդ միմեանս եկայք փախիցուք. ապա թէ ոչ սպանանէ զմեզ տէրն մեր փոխանակ տղային։ Եւ իբրեւ փախչէին պատահեցան տիկնոջն իւրեանց։

Ասէ

Ասէ ցնոսա տիկինն. զի՞ է ձեզ, զի՞նչ եղև ձեզ։ Ասեն նաժիշտքն. զսիրելի որդին տեառն մերոյ կերեալ է շունն. արդ վայ է մեզ թէ զի՞նչ լինիցիմք։

Եւ լուեալ տիկնոջն՝ անկաւ յերկիր ի վեր երեսաց խուռոց առ դրան սենեակին. լայր և կոծէր զանձն ասելով. ո՜հ թէ զի՞նչ արարից ընդ որդեակս իմ։ Եւ նոյնժամայն եկեալ զինուորն եւ տեսանէ զկինն իւր զի լայր աղիողորմ և նաժիշտքն ընդ նմա. և հարցեալ զի՞ է ձեզ ընդէ՞ր լայք։ Ասէ տիկինն. վայ է մեզ. զի շունըն որ սիրէիր կերեալ է զմիամօր որդեակն քո։ Յորժամ լուաւ զխօսս զայս ի տիկնոջէն իւրմէ եմուտ ի սենեակն ուր էր տղայն. և շունն իբրև ետես զտէրն իւր յարեաւ ընդ առաջ նորա և



փաղ

փաթաթէր զերեսն ընդ ոտս նորա և ուրախանայր առաջի նորա․ իբր թէ սպանեցի զօձն և ապրեցուցի զտղայն քո․ արդ արժանի իցէ պարգևաց։ Եւ տէրն նորա հանեալ զսուրն էզարկ և կոտրեաց ընդ մէջ․ և սատակեցաւ շունն։ Եւ գնացեալ ՚ի յօրրոցք տղային ետես զտղայն զի կենդանի էր և անվնաս։ Եւ ետես մերձ ՚ի յօրրոցքն օձ մի սատակեալ․ և եկեալ առ շունն նայեցեալ ետես զի էր վիրաւորեալ յոյժ․ և ծանեաւ զի շունն սպանեալ էր զօձն և զտղայն ապրեցուցել։ Եւ տեսեալ բազային որ այնպիսի անիրաւութիւն գործեաց տէրն իւր, նոյն ժամայն ճչեց և կտրեց զպարանն ՚ի յոտից և թռեաւ գնաց և այլ ոչ եկն առ տէրն իւր։ Եւ ասէ զինէորն․ ասա թէ զինչ

 գործ

գործեցի լսելով կնոջ իմում․ և անկայ
՚ի մեղս մեծամեծս ։ Եւ ելեալ բոկ
ոտամբ գնաց յանապատ․ և անդ ապաշխար
եաց զամ աւուրս կենաց իւրոց ։

Եւ յաւարտիլ առակին ասէ դպրապետն
ցկայսրն․ լուա՞ր որդեակ զոր ինչ ասացի
քեզ։ Ասէ կայսրն․ լուայ և ՚ի միտ առի
և յոյժ հաճոյ եղև ինձ բանն քո ։ Ասէ
դպրապետն․ ճշմարիտ ասեմ քեզ որդեակ
եթէ վասն բանի կնոջ քո սպանցես զորդին
քո, դառնագոյն լիցի քեզ բանն քան որ
եղև նմա։ Ասէ կայսրն լուայ առակս ասա-
ցեր․ և վասն քո բանիդ ոչ սպանից զորդին
իմ այսօր։ Ասէ դպրապետն․ եթէ ոչ
սպանանես, շնորհակալ եմ քեզ․ որ վասն
բանից իմոց՝ կեանս շնորհեցեր այսօր
որդւոյ քում։ Եւ երկրպագեալ արքային և գնաց



Իբրև

Իբրև լուաւ թագուհին թէ մանուկն
դեռևս կենդանի է, նստաւ ՚ի վ՜ր մոխ
րոյ լայր լալիւն մեծ և ոչ կամէր ՚ի վեր
նայել. և ծառայքն ծանուցին կայսերն
Եւ լուեալ կայսրն գնաց առ թագու
հին և ասէ. զի՞ այսպէս տրտումես և
անմխիթար լաս։ Ասէ թագուհին. մի
թէ ո՞չ գիտես դու թէ որպիսի ամօթ
և նախատինք արար ինձ նզովեալ որդին
քո. և դու խոստացար սպանանել զնա.
և ահա դեռևս կենդանի է։ Ճշմարիտ
ասեմ քեզ. զի լինելոց է քեզ ՚ի յորդւոյ
քումմէ ամ՜ եղև հովուէ ի մտումն ընդ վա-
րազի խոզոյ։ Ասէ կայսրն. աղաչեմ զքեզ
ով սիրելի տիկին իմ, պատմեա ինձ զա-
ռակդ զայդ։ Ասէ թագուհին. զի՞նչ
շահ ինձ պատմելն իմ. յերեկեան օրն

 այլ

այլ պատմեցի քեզ առակ մի և ոչ ինչ շահեցայ։ Արդ պատմեցից քեզ առակ մի. եթէ 'ի միտ առցես՝ բազում շահս օգտիս։ Եւ ասաց այսպէս։

*Առակ երկրորդ. զոր ասաց թագուհին վասն հաւատոյն և վասն վարազ խոզին. զոր հաւանեցաւ կայսերն յօժարել տղանանել զորդին։

Թագաւոր մի էր յերկրի միում. և ունէր անտառ մի մեծ մայրեց. և կայր 'ի նմա ծառ բազում լի պտղօք։ Եւ կայր 'ի մէջ անտառին վարազի խոզ մի զօրեղ յոյժ. և շրջէր 'ի մէջ անտառին. ուտէր զպտուղն ծառոց։ Եւ ոչ ոք կարէր գնալ 'ի յանտառն այն կտրել փայտ. այլ և զգնացեալսն 'ի վ͞ր իւր խողխողէր խոզն և կորուսանէր։ Մինչև թ͞գրն ձանձրացեալ 'ի նմանէ



հրամա

հրամայեց քարոզ կարդալ ընդ ամ՟ թա-
գաւորութ՟ն իւր և ասել. եթէ ոք սպան-
ցէ զխոզ զայն տաց նմա զդուստրն իմ
՚ի կնութ՟ի. և յետ մահուան իմոյ ժա-
ռանգեսցէ զաթոռ թագաւորութ՟ե իմոյ։
Եւ՛ ոչ ոք էառ համարձ՟ն. զի երկնչէին
՚ի զօրեղութ՟է խոզին։ Եւ՛ էր ՚ի ժա-
մանակին այնմիկ հովիւ մի ոչխարաց. խոր-
հեցաւ ընդ միտս իւր և ասէ. եթէ սպան-
նիցեմ ես զխոզն զայն ոչ միայն ինձ լինի
բարի, այլ ամ՟ սիրելեաց և բարեկա-
մաց իմոց։ Այլ նախ և յառաջ գնացից
առ թագաւորն և տեսից թէ՝ եթէ
սպ՟ննիցեմ ես զխոզն տա՞յ ինձ զդ՟ստրն իւր
Եւ՛ գնացեալ հովիւն՝ եմուտ առ թա-
գաւորն և ասաց։ Հզօր և մեծ թ՟գր.
եթէ սպանանեմ զխոզն զայն, տա՞ս ինձ



զդուստր

զխոստացեալդ։ Եւ թզրն երդուեաւ
եւ ասէ. ով հովիւ, եթէ կորուսանես
զխոզն զայն, ոչ թէ միայն տամ զդուստրս
իմ, այլ եւ զթագաւորութիս տամ քեզ.
որ յետ մահուան իմում դու թագաւո
րես ի տեղի իմ։

Յայնժամ ելեալ հովիւն յերեսաց ար-
քային. եւ էառ զգաւազանն ի ձեռն իւր
եւ ելեալ գնաց յանտառն այն ուր էր խոզն։
Եւ տեսեալ զնա խոզն փախեաց ի մէ-
նջ. եւ հովիւն փախեաւ եւ ել ի ծառ մի.
եւ եկեալ խոզն սկսաւ ատամամբն փորել
զտակ ծառոյն եւ կամէր կործանել զծառն։
Եւ ետես հովիւն զի անկանի ծառն
ի գետին, հատանէր ձեռօքն զքաղ-
ցրահամ պտուղն որ կայր ի ծառն եւ ար-
կանէր նմա։ եւ խոզն տեսեալ զպտուղն

 եթէ ոչ

եթող զծառն և ուտէր զպտուղն․ մինչև
հանգեաւ և ընկողմնեցաւ առ ծառովն։
Եւ տեսեալ հովիւն զի ընկողմնեցաւ
խոզն մեղմաբար էջ առ նա․ և մին ձե-
ռամբն զբուռն հարեալ էր 'ի ծառոյն՝
և միւսովն քերէր զթիկունս խոզին։ զի
թէ կամեսցի խոզն հարկանել զնա փա-
խիցէ դարձեալ 'ի ծառն։ Եւ այնչափ
քերեաց մինչև ննջեաց խոզն և եղև
խոր 'ի քուն։ Յայնժամ եհան հովիւն
զսուրն իւր և սպան զխոզն։

Եւ այնու գործովն էառ զդուստր
թգ՛րին․ և յետ մահուան նորա ժառան
գեաց զաթոռ նորա։

Եւ ասէ թագուհին ցկայսրն․ լուա՞ր
արքայ և 'ի միտ առե՞ր։

Ասէ կայսրն․ այո 'ի միտ առի զոր ինչ


ասացեր

տառացէր ։ Աւէ թագուհին. Ահէկնեցէց
քեզ զառակս։ Մարագոյն վայրենաշէ
զօրեղութին յոյժ ցուցանէ զզօրութի քո.
որ ո՛չ օք կարէ կալ հակառակ հրամանաց քոց
Նա՛ հոգւոյն ցուցանէ զնշովեալ որդին
քո. որ գաւազանաւ իմաստութե՛ իւրոյ
դիմեալ է ՚ի վր քո. ով հոգւոյն այն քե-
րելով զլթիկունս խողին ննջեցուց և
սպան զնա։ Նմանապէս և վարժպտքն
նշովեալ որդւոյ քո քերեն զքեզ քաղ
ցրաբան առ։կօք եւսլտօք իւրեանց մինչև
սպանցեն զքեզ. և զորդին քո թագաւո
րացուցանել կամին ՚ի տեղի քո ։
Աւէ կայսրն. ո՛չ տացէ ած զայն օրն որ
ըսպաննէ զիս որդին իմ. ով հոգւոյն զխոզն
արդ ահաւասիկ ո՛չ միայն նա կենդանի.
և մն սրտի քո տամ չարաչար սպանանել զնա

 Աւէ

Ասէ թդուհրն. եթէ նմանանես մեծ լաւուն հանդիպի քեզ. զի նա չէ արժանի որ միայն կենդանի. այլ պատուոյ և պատուհասի արժանի է։

Իբերորդ անգամ փանէին շուրջ էր արքայէն 'ի հաւ. և Ջէնը ուլոս ըղպրակրէին գալ հատանէին և ատալոյ ծրեկէին շիա։

Իյերկրորդում աւուրն նստեալ կայրն 'ի գահոյսն իւր և կոչեաց բարկութ[եամբ] զդահճապետն և ասէ. երթ հան զորդին իմ 'ի բանտէն. և տուր առ ժամայն հատ զգլուխ նորա. և հեռացո զգլուխն 'ի մարմնոյ նորա ծ կանգուն։ Եւ եկեալ դահճապետն եհան զորդի արքային 'ի բանտէն. և կապեաց զձեռս 'ի յետս նորա իբրև մահապարտի. և անցոյց ընդ մէջ քաղաքին



և միան

և մուծեալ երկին առաջի նորա ձայնէր և ասէր

Ո՛վ ոք որ կամի մեղանչել ընդ յետնա-
մորն իւրոյ՝ այսպիսի մահուամբ մեռցի։

Եւ լուեալ ժողովրդոցն՝ ափսոսալով
ասէին. ո՜հ ո՜հ ահա ՚ի զուր տանին ըզ
միամօր որդի արքային ՚ի մահ և սպանանեն։

Յայնժամ չենթուլոս դպրապետն որ ըն
թաց երխվարան՝ եհաս նոյ և ասէ. մի՛
շտապիք սպանանել զդա. քանզի յայս
ունիմ առ ած որ փրկեսցէ զդա այսօր
՚ի մահուանէ։ Եւ սաստեաց դահճա-
պետին և ասէ. ընդէ՞ր կապեցեր ըզձեռս
դորա. մի թէ մահապարտ է որդի ար-
քային. և ետ արձակել զձեռսն։ Ասէ
դահճապետն. ո՛վ դպրապետ հրաման
սաստիկ է թագաւորին թէ չարաչար
սպան զնա. արդ և թէ կարօղես փրկել

 զդա

զդա երթ առ կայսրն և աղաչեա՛ ՚ի
մանկուանէ. և ես սաստ արգելից զդա։
Եւ մանուկն որք առաջնոյն աղաչէր
զվարժապետն իւր փրկել զինքն ՚ի մանկ
ուանէ։ Եւ ժողովուրդքն առաքել
փութացանէին զդպրապետն և ասէին
Ո՛վ բարի դպրապետ. յէրէկեան օրն
ընկերն քո աղաչեաց այսօր դու երթ
առ կայսրն և աղաչեա՛։ Եւ դպրապետն
ընթացեալ եմուտ ՚ի պալատն. և եկաց.
առաջի կայսերն. երկրպագեաց և ող
ջունեաց զնա մեծաւ պատուով։
Ասէ կայսրն. ո՛վ չար ծեր մի՛ մնասցես
կենդանի։ Ասէ դպրապետն. տէ՛ր պար
գևս առնուլ ՚ի քէն ակն ունէի և ոչ
անարգանս։ Ասէ կայսրն. սուտ է ամ
բան քո. ետու զորդին իմ ՚ի ձեզ լեզու



աւ

ած և խօսուն ուսուցանել և դատախարա
կել զնա. և արդ եղև պապանձեալ փո-
խանակ իմաստուն և հանճարոյ։ յածել
ես զչարիս զայս. զի կամեցան բռնադա
տել և լլկել զկինն իմ. վն այն պատճառի
մեռանին նա այսօր։ Եւ զձեզ խիկ զամենես
եան կորուսից դառն մահուամբ։ Աւէ
դպրապետն. ուէր արքայ՝ ասացեր թէ
որդին իմ պապանձեալ եղև. և թէ մն
ծեր եղև ած է որ գիտէ. բայց խօսելոց
է 'ի ժամանակի իւրում։ Նա՛ որ ասացեր
թէ կամեցան բռնադատել զկինն իմ,
այդ ամենայնիւ սուտ է։
Քանզի կինն քո եթէ կրեալ լինէր զնա
ինն ամսիւ յորովայնի իւրում, այդպիսի
փնաս ոչ դնէր 'ի վերայ նորա։
Արդ զայս ասեմ քեզ ո՛վ արքայ. եթէ մն

բանի կնոջ քո սպանանել զմիամօր որդին
քո, դառնագոյն պատահեսցէ քեզ քան
զայն որ պատահեցաւ զինուորի մերոյ. որ
վասն կնոջն իւրոյ անմեղ դատապարտեցին
'ի մէջ հրապարակին: Ասէ կայսրն. ասա՛
զառակդ զայդ թէ վասն է՞ր եղև այդպէս:
Ասէ դպրապետն. ո՛չ ասեմ և ո՛չ աշխա
տիմ 'ի զուր և դատարկ. գուցէ եղեցի
զի մինչ ես պատմեցից զառակս սպանցի
որդին քո անդր. և զի՞նչ շահ լինիցի 'ի
պատմութենէս: Արդ եթէ կամիս լսել
զառակն իմ, նախ դարձո՛ զորդին քո 'ի
մահուանէ 'ի բանտ. և ես պատմեմ զառակս
Եթէ հաճոյ լինիցի քեզ առակս ապրե
ցո՛ զորդին քո. և թէ ոչ սպա՛ն զնա:
Եւ հրամայեաց կայսրն դարձուցանել
զորդին իւր 'ի բանտ մինչ պատմեսցէ

դպրապետն շառաւիղն։ Եւ է սկսանէ առակ
այսպէս։

*Առակ երրորդ Պողպատեան· զոր առաց Հռովմայեցին, որ է որ զկայծն անձին՚ի Պապաղաբիւթեան։

Ի քաղաքի միում էր զինոր մի
ծեր· զոր առեալ էր մատղաչ
աղջիկ մի ՚ի կնութիւն իւր·
(այլ տէր իմ արքայ առեալ է կին մատղաչ)
և յոյժ սիրէր զնա։ և զբալանիքն ոչ
ուտիք հաւատայր։ Այլ և տմ գիշեր
փակէր զդուռն· և զբանալիսն պահէր
՚ի ներքոյ բարձի իւրում։ Եւ է զինոր
որն այն ծեր էր· և ոչ ունէր կարողու
ամուսնութեան կատարել զկամս կնոջ իւրոյ
վասն այն անզգամ կինն սիրէր զայլս։ Եւ
տմ գիշեր յորժամ ննջէր այրն իւր



(առնոյ

առնոյր զբալանիսն գաղտ եւ բանայր ըզ
դուռն եւ երթայր առ սիրառն իւր որ
կատարէր զկամս նորա. եւ լցեալ զհեշտութի̃
եւ զցանկութի̃ մարմնոյն իւրոյ դառնայր
առ այրն իւր: Նա՛ ՚ի գիշերի միում
յորժամ ննջեաց այրն, եւ կինն եւ գնաց
ըստ սովորութե̃ իւրոյ առ սիրառն իւր:
Նա՛ զարթուցեալ այրնն ՚ի քնոյն՝ ոչ
եգիտ զկինն իւր մերձ ինքեան: Նա՛
ելեալ ետես զդուռնն բաց. եւ փակե̃լ
պնդեաց. եւ ելեալ ՚ի վերի դարպասն
հայէր ՚ի պատուհանէն. զի տեսցէ զգալն
նորա. Նա՛ յետ խօսելոյ հա՛ւուն դար
ձա՛ւ կինն փութալով ՚ի տուն. զի մի եկ
եալ պահապանքն գտցեն զնա արտաքս:
Նա՛ կայր ՚ի քաղաքին այն սահման այս
պիսի. զի յորժամ երեկոյ լինէր յետ

երիցս անգամ հաւուն խօսելոյ հնչեցու-
ցանէին զանկակս ։ Եւ յետ հնչեցու-
ցանելոյ զանկակին եթէ զոք գտանէին
արտաքոյ ըմբռնէին և տանէին 'ի բանտ
և վաղիւն դատապարտէին զնա 'ի մէջ
հրապարակին առաջի ամենայն 'ի նախատինս
Եւ եկեալ կինն եգիտ զդրունսն փա-
կեալ. զահի հարաւ և խորհէր թէ զինչ
արասցէ. և յետոյ փութահացեալ բախէր
զդուռն։ Ասէ այրն. ո՛վ չարեաց մա-
կարդ չար կին. այս քանիցս անգամ փոր
ձեցի զքեզ. որ եղեալ յանկողնոյ իմոյ
երթեալ պոռնկիս ընդ այլում։
Ասեմ քեզ ըստոյգն. կացցես դու այդր
մինչև պահապանքն եկեալ գտցեն զքեզ
և տարցեն 'ի բանտ. և 'ի վաղիւն դա-
տապարտեսցեն զքեզ 'ի մէջ հրապարակին

 Ասէ

Ասէ կինն. ո՛վ տէր իմ վ̄ն էր ասես
զայդ. ասեմ քեզ զճշմարիտն. Յորժամ
նստէի ես ընդ քեզ 'ի յանկողնին, եկն
աղախին մօր իմոյ կոչեաց զիս եւ ասէ.
փութա՛ մերկ առ մայրն քո զի յետի շունչնէ
Եւ ես ո՛չ կամեցայ զարթուցանել ըզ
քեզ 'ի քաղցր քնոյդ. եւ գնացի առ մայրն
իմ. տեսայ եւ փութով դարձայ առ քեզ.
եւ այնչափ փութով ընթացեալ եկի որ
վաստակեալ 'ի ճանապարհին տկարացայ
յուժոյս: Արդ աղաչեմ զքեզ բա՛ց ինձ
զդրունսն զի մտից 'ի ներքս. զի մի՛ ե-
կեալ պահապանքն գտցեն զիս: Ասէ
այրն. ճշմարիտ որ ո՛չ բացից մինչեւ եկեալ
պահապանքն առցեն զքեզ: Ասէ կինն
տէր իմ աղաչեմ զքեզ բա՛ց զդուռն եւ ա՛ռ
զիս 'ի ներքս. զի ամօթ եւ նախատինք


առնես

առնես զիս. քեզի և ծնողաց իմոց՝ և ազգականացս: Ասէ այրն. ՚ի միտ ած թէ քանիցս անգամ պղծեցեր ըզանկողին իմ պոռնկութ՟բ քով. լա՛ւ է քեզ աստ չարչարիլ մարմնով վ՟ս մեղաց քոց և մի՛ ՚ի դժոխս: Ասէ կինն. ո՛վ սիրելի տէր իմ վ՟ս սիրոյ այնորիկ որ խաչեցաւ վ՟ս մեր ողորմեա՛ ինձ և առ զիս ՚ի ներքս:

Ասէ այրն. դուր կաղաչես. զի այդպէս մնալոց ես առ աչի դրանդ մինչև եկե՟լ պահանպանքն առցեն զքեզ: Ասէ կինն. ո՛վ տէր իմ, գիտես զի ո՛չ է հեռի ջըրհորն ՚ի դրանէս. եթէ ոչ բացցես ըզդուռն և առցես զիս ՚ի ներքս, ընկեցից զիս ի ջրհորն և խեղդեցայց: Ասէ այրն փաղձուց պարտէր քեզ խեղդիլն: Ասէ կինն. եթէ կամիս զխեղդիլն իմ խեղդից



Արդ

Որդ մինչ խեղդեալ չէ մարդ̃կց կտակ
Սյախ եւ յառաջին յանձն առնեմ զխստ̃յ
զհոգի իմ. եւ 'ի ձե̃ռս կոյսն մարիամ. եւ յամ̃
սբս: եւ զմարմին իմ յորժամ հանցեն 'ի
հորոյն թաղեսցեն յեկեղեցւոջ սրբուհ
ւոյն վառվառեայ: եւ զամ̃ ինչս զոր ունիմ,
դու գիտես տէր իմ. որպ̃ եւ կամիս այնպ̃
արասցես: Եւ զայս ասացեալ գնաց մերձ
'ի ջրհորն. եւ էր առ ջրհորովն վէմ մե
ծ. զոր առեալ երկոքին ձեռամբն
էարկ 'ի ջրհորն:

Եւ լուեալ այրն զձայնըն քարին յատակ
ջրհորին կարծեաց թէ կինն ընկէց
զինքն 'ի հորն. եւ ասէ աւաղ թէ զինչ
գործեցից. զի կինն իմ խեղդեցաւ:
Եւ փաղփաղակի իջեալ ընթացաւ 'ի
ջրհորն. եւ կինն թաքեաւ յետոյ կողմանէ

դրանն. և իբրև ել այրն եմուտ կինն 'ի ներքս և փակեաց զդուռն 'ի ներքուստ և ել 'ի դարպասն։ Եւ զնուէորն կանգնեալ 'ի վր ջրհորին աղաչէր զկինն և ասէր լալով. վայ ինձ որ կորուսի զկինն իմ։ չար էր ժամն որ ոչ բացի զդուռն։

Եւ կինն ծիծաղելով ասէ. ով նզովեալ ալևոր զինչ գործես մինչև ցայսվայր 'ի դուրսդ. մի թէ սակաւ էր քեզ չարչատանալ մարմնով իմով. որ զամ գիշեր գնաս 'ի բոզատունն պոռնկիլ ընդ նոսա։

Եւ այրն լուեալ զձայն կնոջն ասէ. օրհնեալ է ած. և գոհութի այ որ ողջ ես

Արդ բաց զդուռն զի մտից 'ի ներս ընդէ՞ր փակեցեր զդուռն. զի ես կամէի սակաւ մի խրատել զքեզ և երկեցուցանել. և ապա բանալ զդուռն։



Ասէ

Ասէ ցնա կինն. եթէ ոք փորեսցէ
խորխորատ ընկերի իւրոյ ինքն իսկ ըն-
կեսցի ՚ի մէջ նորա։ Դու ոչ կամէիր բա-
նալ զդուռն ինձ, և ոչ ես բացից քեզ.
մինչև առցեն զքեզ պահապանքն։
Քանզի ես ոչ էի ՚ի մէջ չարեաց զոր
ասացեր ՚ի վր̅ իմ։ ոչ ասեն առակացն թէ
սևացեալն մրով մրձոտէ և զայլս ։
Այսինքն չար ոք զա̅մ ոք չար կարծէ
այնպէս և դու շնացող գոլով զմ̅ասն քո
՚ի վր̅ իմ բառնաս ։
Շնորհ ասեմ քեզ զի այդր մնալոցես
դու մինչև առցեն զքեզ պահապանքն ։
Ասէ այրն. ո՞չ երկնչիս դու յայս. ընդ էր
շնորհես զայդպիսի բանս ՚ի վերայ իմ։
Ծերացայ ՚ի քաղաքիս այս ՚ի մանկու-
թենէ. և մինչև ցայժմ ոչ եղև անուանդ


այդ

այդ ՚ի վ̃ճ իմ զոր դու առես։ Մի՞թէ
վաղուց նախատեն զիս ՚ի մէջ հրապա-
րակին մի թէ ոչ լինի ամօթ ինձ և քեզ։
և նախանձ աց մ̃րոց մինչև յաւիտեան.

վա՛յ աղաչեմ զքեզ բա՛ց զդուռն։

Ասէ կինն. ո՛չ բացից մի՛ աշխատ առներ
զիս. և մի՛ աղաչեր ինձ ՚ի զուր։ լա՛ւ է
քեզ աստ չարչարիլ վ̃ն մեղաց քոց. քան
թէ ՚ի դժոխս։ Տես զինչ ասէ իմաստ
ունն. երեք բան ատելի է անձին իմոյ
Աղքատ հպարտն Ստախօս մեծատունն
և Ծեր պոռնիկն։ ով և դու իսկ ես
ծեր և շնացող։ Այլև այս մեծ ողորմութի
է ինձ որ տանջիս աստ մարմնով և մի՛ տես-

ցես զտանջանս յաւիտենականս։

Ասէ այրն. ով սիրելի տիկին իմ. ա̃ծ
ողորմած է և գթած. և ոչ խնդրէ այլ



ինչ

ինչ բայց միայն զղջանալ. վա՜յ ինձ սիրուն
աղաչեմ զքեզ բաց զդուռն զի մտից 'ի
ներքս. և այլ ո՛չ արարից զայդ զոր ասես
'ի վերայ իմ։ Ասէ կինն նշանակելով
ասէ. ո՛վ արար զքեզ վարդապետ և քա-
րոզօղ. եթէ զայդ գիտէիր որ ած ողոր
մած է, ընդէ՞ր ոչ բացեր զդուռն ինձ։
Ճշմարիտ ասեմ քեզ՝ ո՛չ առից զքեզ 'ի
ներքս։ Ասէ մինչդեռ նա զայս խօսէր
հնչեցուցին զզանկակն։ Ասէ այրն. ա՛հա
հնչեցուցին զզանկակն. բաց զդուռն զի
մի եկեալ պահապանացն գտցեն զիս։
Ասէ մինչդեռ խօսէր եկին պահապան
քըն և գտին զնա արտաքս։ Ասէ ասեն
ցնա. զինչ գործես աստ 'ի ժամգիշերիս
Ասէ լուեալ կինն զձայն պահապանացն
ասէ ցնա. ո՛վ եղբարք իմ աղաչեմ զձեզ՝

առէք զդա այտի և արարէք դմա ըստ
մեղաց իւրոց • զի ամ գիշեր թողեալ
զիս երթայ ընդ բոզս ։ Եւ այսչափ
ժամանակ համբերեցի և ոչ յայտնեցի՝
թերևս դարձցի 'ի գործոյն այնմիկ և
ոչ դարձաւ • մինչև ինքն զինքն մատնեց
Եւ պահապանքն առեալ տարան զնա
'ի բանտ • և 'ի վաղիւն անդր՝ դատապար
տեցին զնա ըստ օրինաց իւրեանց ։
Յայնժամ ասէ դպրապետն ցկայսրն • 'ի
միտ առե՞ր արքայ զառակս զայս զոր ասացի
քեզ ։ Ասէ կայսրն • այո՛ 'ի միտ առի • զի
նզովեալ և չար կինն այն՝ մատնեց զայրն
իւր դառըն տանջանաց 'ի զուր ։ Ասէ
դպրապետն • Ճշմարտիւ ասեմ քեզ արքայ
եթէ վասն բանի կնոջ քո սպանցես զորդին քո
դառնագոյն լիցի քեզ քան զինաւորին այն ։



Ասէ

Ասէ կայսրն. ամէն ասեմ քեզ դպրա-
պետ. ո՛չ սպանից զորդին իմ այսօր վասն
բանի քոյ: Ասէ դպրապետն. եթէ լուծի
ցես խրատոյ իմոյ և ոչ ըսպանցես զորդին
քո, մեծ բարութիւն հանդիպելոցէ քեզ:
Զայս ասաց դպրապետն և երկիրպագ-
արքային և գնաց:

Իբրև լուաւ թագուհին թէ այսօր
և ոչ մեռաւ որդի արքային, եմուտ ՚ի
սենեակ իւր և լայր անմխիթար. կոծէր
զանձն առելով. վա՜յ ինձ զի ո՛չ կարացի
խնդրուածք մի կատարել տալ արքային
իմոյ: այսպիսի աղիողորմ և բարձր ճչիւ
լայր և հառաչէր. մինչև ծառայքն ծա-
նուցին արքային: Նա՛ ելեալ կայսրն՝
գնաց առ նա և ասէ. ո՛վ սիրելի տիկին
իմ վասն է՞ր այդպէս անողորմ լաս:

Ասէ Թագուհին. եթէ սիրելի լինէի քեզ զխնդրուածս իմ կատարէիր. և դարձեալ թէ ոչ էի սիրեցեալ զքեզ ՚ի բոլոր սրտէ ոչ էր ինձ կսկիծ. բայց իմ վէրս խիստ մեծ է զի ՚ի մէջ նախատանաց թողեր զիս. և ոչ սպաներ զնզովեալ որդին քո. որ այսպիսի խայտառակեաց զիս զոր աչօքդ իսկ տեսեր տ͞ր իմ արքայ: Այլ ունկնդիր ես եղ͞ել վարժապետաց որդւոյ քո. և ոչ գիտես թէ նոքա ինչ կու խորհին քեզ: Բայց ես առաւել կու սիրեմ զքեզ և կամիմ զառողջութ͞ի քո և դու ոչ գիտես: Ապա լինելոց է քեզ այնպ͞ս որ͞պ եղև զենէորի միոյ. որ որդի իւր գլխատեաց զինքն: Ասէ կայսրն. ասա ինձ ով սիրելի Թագուհի իմ. թէ ի՞նչ պատճառի համար արար

 այնպիսի

այնպիսի անողորմ բան հօր իւրոյ։

Ասէ Թագուհին. առեմ քեզ առակս ազնուագոյնս, և դու տ̃ր իմ լաւ ՚ի միտ առ

Եւ սկսաւ ասել.

********

Իններորդ առակ Թագուհւոյն. որ հաւանեցոյց զհայրն ազատանել զորդին։

Ի քաղաքի միում կայր անուանի զինուոր մի. և ունէր որդի մի և դուստր երկու։ Եւ զինուորն այն սիրէր զխաղս. մինչև զամ ինչս իւր և զստացուածս մսխեաց ՚ի խաղս. և աղքատացաւ յոյժ. Եւ ՚ի յայնմ ժամանակին նստէր ՚ի նոյն քաղաքին կայսր օգդաւիանոս անուն. որ մեծացաւ ընչիւք քան զամենեսեան որ յառաջ քան զնա էին. Եւ ժողովեաց բազում ոսկի

և արծաթ․ և շինեաց բ̃ աշտարակ․ զմինն
է լից ոսկւով, և զմիւսն արծաթով․ և
յանձնեաց ընդ̃ պահապանացն ։

Իսկ զինւորն այն որ աղքատացաւ կոչ-
եաց զորդին իւր և ասէ․ որդ ահաւասիկ
աղքատացայ ես․ և կամիմ վաճառել զըղ-
ժառանգութիւն իմ զոր ունիմ․ և թէ վա-
ճառեսցես կորիցես դու և քորքդ ընդ քեզ
յետ մահուան իմոյ։ Ասէ որդին ցհայրն
արդ խորհեաց թէ զինչ արասցուք՝ զի
լինիցիմք ՚ի բարի կեանս․ և ժառանգ-
ութիւն մեր ոչ վաճառեսցի։ Ասէ հայրն․
որդեակ գիտեմ զի կայսրն ունի բ̃ աշտա-
րակս․ մինն լի ոսկով և միւսն լի արծա-
թով․ երթիցուք և գողասցուք անտի
և ոչ վաճառեսցուք զմլքերս ։

Եւ ՚ի գիշերին այնմիկ եկեալ գնացին

 յաշտար

յաշտարակն հանել ոսկի. և մտեալ 'ի
ներքս որ չափ որ կարացին բառնալ առ-
ին և դարձան: Եւ 'ի վաղիւն տեսին
պահապանքն աշտարակին զի բացեալ էին
զաշտարակն և գողացեալ էին 'ի յոսկւոյն
և փաղփաղակի գնացին առ կայսրն և պատ-
մեցին նմա. թէ պատառեալ են զաշտա-
րակն և գողացեալ են յոսկւոյն:
Ասէ կայսրն. չէ ինձ փոյթ. 'ի ձեզա-
նէ գիտեմ ես զոսկին: Եւ պահապանքն
ելեալ յերեսացն արքային խորհէին թէ
զի՞նչ արասցեն:
Եւ ասէ միւսն 'ի նոցանէ. եկայք արաս-
ցուք այսպէս. առցուք պղինձ մի մեծ՝ և
թաղեսցուք 'ի ներքուստ կողմանէ աշ-
տարակին. և լցցուք 'ի մէջ նորա սոսինձ:
և թէ դարձեալ գայցէ գողն՝ անկցի 'ի

պղինձն

պղնձին և սուսերին ոչ թողուցու զնա
ելանել անտի ։ և արարին այնպէս ։
Եւ յետ սակաւ ինչ աւուրց դարձեալ
աղքատացաւ զինւորն այն. և կրկին եկն
հանդերձ որդւովն առնուլ ոսկի յաշտա
րակէ անտի . և երթայր հայրն ընդ
առաջ, և որդին զկնի ։ Եւ իբրև եմուտ
՚ի ներքս և խոր թաղեցաւ մինչ ցպա-
րանոցն, աղաղակեաց ՚ի ձայն մեծ և ասէ .
որդեակ իմ մի՛ դադարես այսր . քանզի այլ
ոչ կարես ելանել ։ Ասէ որդին եկից
և փրկեցից զքեզ. և եթէ ես ոչ կարեմ
օգնել բերից և զայլս զի օգնեսցեն . և
հանիցուք զքեզ այտի ։ քանզի եթէ գտցեն
զքեզ այտր զամենայն զմեզ կու սպանանեն ։
Ասէ հայրն. մի՛ տացէ Աստուած զայն օրն կի
դիտասցէ ոք թէ ոչ եմես. արդ լաւ է



ինձ

ինձ միայնոյ թուանիլ և ոչ ձեզ ամենեցուն
Ա՛ռ զսուրդ և հատ զգլուխ իմ. զի
յորժամ գտցեն զիս առանց գլխոյ ոչ ոք
կարէ ճանաչել թէ ով իցեմ։ Ասէ
որդին բարւոք ասացեր հայր. և հանեալ
զսուրն էհատ զգլուխ հօրն և էարկ ՚ի
հոր մի։ Եւ երթեալ ՚ի տունն պատ
մեաց քերցն զեղեալ գործն և նոքա
լուեալ զմահ հօրն իւրեանց սկսան ողբալ լալ
և կոծալ։ Եւ ՚ի վաղիւն անդր եկեալ
պահապանացն տեսին մարդ մի մեռեալ
՚ի մէջ պղնձին. և գլուխն չկայր. և
գնացեալ պատմեցին արքային։
Եւ հրամայեաց կայսրն զի զմարմինն
զայն կապեսցեն ՚ի յագի ձիոյ միոյ և շր-
ջեսցուսցեն փողոցէ ՚ի փողոց. և յոր տանէ
լուիցեն ձայն լալոյ ՚ի նմանէ մարդն այն։


Եւ

Եւ արարին այնպէս որպէս հրամայեաց
կայսրն. և շրջեցուցին զնա փողոց փողոց։
որև եկեալ հասին առաջի դրան նորա։
Եւ դստերացն տեսեալ զհայրն իւրեանց
լային դառնապէս։ Եւ իբրև իմացան
պահապանքն շրջեցուցանողք դիոյն նոցա,
իսկոյն որդի մեռելոյն առեալ դանակ
ծակեաց զերակ ձեռին իւրոյ որ ելար-
իւն յոյժ սաստիկ։ և ՚ի քննել նոցա ասաց
որդին թէ վս իմ լան քորերքն իմ։
Ան որոյ հաճանեցեալ նոցա խօսիցն նր
դարձան և շրջեցուցանէին զմարմինն ընդ
քաղաքն ամ։ Եւ իբրև ոչ գիտացին թէ
ուստի էր, տարեալ կախեցին ՚ի փայտէ։
Արդ նզովեալ որդին մէկ որ սպանեաց
զհայր իւր, և երկու զի ոչ հանգոյց ըզ
մարմին նորա ՚ի հող տապանին ։



Եւ

Տէ՛ ասէ Թագուհին. տէ՛ր ՚ի միտ առ ե՞ր զառակս որ պատմեցի քեզ: Ասէ կայսրըն. այո՛ ՚ի միտ առի:

Ասէ Թագուհին. երկնչիմ տէր իմ արքայ գուցէ և քեզ պատահեսցէ դառնագոյն քան զնորայն:

Ասէ կայսրն. լա՛ւ առակ ասացեր ո՛վ սիրելի տիկին իմ. որդին այն նզովեալ էր որ եհատ զգլուխ հօրն իւրոյ. և զմարմին նո՛ր ևս ո՛չ եդ ՚ի գերեզմանի: Ճշմարիտ ասեմ քեզ ո՛վ Թագուհի իմ. զի ո՛չ կարասցէ որդին իմ առնել այնպէս որպէս նա արար. քանզի ընդ լուսանալ առաւօտուն տամ սպանանել զնա:

❀❀❀❀❀❀❀❀

*[illegible]



Խ[illegible]

Ի յերրորդում աւուր գայ Նոտէ կայսրն ՚ի գայհոյսն իւր. և կոչեաց ըզ դահճապետն և ասէ հա՛ն զորդին իմ ՚ի բանտէն. և անցո՛ ընդ մէջ քաղաքին փողով ազդեցուե. և տա՛ր տպան զնա ուր մահապարտն. և հեռացո՛ ըզ գլուխ ՚ի մարմնոյն Է կանդուն ։ Եւ եկեալ դահճապետն եհան ՚ի բանտէն զորդին արքային. և կապեաց զձեռս ՚ի յետս որպէս մահապարտի. և ետ ձայնել առաջի նորա մունետիկս ասելով. Թէ ով ոք մեղանչել կամի ընդ յետնամօրն իւրոյ

այսպիսի մահուամբ մեռցի ։

Եւ մինչդեռ տանէին եհաս դպրապետն որընթաց երիվարաւ. որում անուն էր Գալթոն։ Եւ տեսեալ զորդին արքային որ այնպիսի խեղճ և ողորմելի տանէին



՚ի մահ

բարկացեալ դահճապետին և ասէ. ընդ-
էր այդպիսի կապեր էք զորդի արքային
և ետ արձակել զձեռս։

Ասէ դահճապետն. ո՛վ դպրապետ հրա-
ման թղթերն սաստիկ է. և թագուհուն
ևս առաքել. մեք զի՞նչ արասցուք։

Ո՛ ժողովուրդքն որ շուրջն կային՝
ողբալով աղաղակէին և ասէին. ո՛վ բարի
դպրապետ փութա՛ առ կայսրն և աղա-
տեա՛ զորդի արքային և զաշակերտսն քո.
ո՞չ ընկերքն քո աղատեցին։ Ո՛ մանու-
կքն անմեղունչ խնամարհեալ երկիրեպագ
վարժապետին իւրոյ. ո՞չ թէ կամէր
ասել աղատեա՛ զիս ՚ի մահուանէ։

Ասէ դպրապետն. դիրեցէք դուք ՚ի
տեղիս այս մինչ ես երթայց առ կայսրն.
զի յոյս ունիմ առ ած որ փրկէ մզգա այսօր

՚ի մահուանէ ։ Ե՛ւ գնաց դպրապետն
շտապով ՚ի պալատն. եմուտ առ կայսրն.
և մեծ պատուով ողջունեաց զնա ։
Ասէ կայսրն ՚ի չորիս լինիցիս դու ։
Ասէ դպրապետն. տէ՛ր պարգևի ակն
ունէի ՚ի քէն և ոչ բարկանալոյ ։
Ասէ կայսրն. ո՛չ ծառայեցեր՝ նոյնպէս
և ունիցիս ։ քանզի ոչ պարգևի ծառայե
ցեր այլ դառն մահու ։ Ետու զորդեն
իմ ՚ի ձեզ լեզուաւ և խոստումն. ուսուցա
նել և դաստիարակել. այժմ եղև պա
պանձեալ փոխանակ իմաստուն և հանճարոյ
Յաւէտ ես զչորիս զայս որ կամեցաւ
բռնադատել և սպանել զկինն իմ ։
Վասն այն գործոյն մեռանի ահա այսօր.
և ձեզ ես չարչարանք կազմեմ, որ աչօք
ձերովք տեսանէք զմահ ձեր ։


Ասէ

Աւէ դպրապետն․ տէր իմ արքայ՝ զոր
առաջեր թէ պապանձեալ եղև որդին
իմ, այն այ է դատաստան. զինս է միայն
որ խլից լսել տայ և համրոց խօսել. և
գիտեմ որ ոչ է պապանձումն լեզուի որ
դոյ քո ճշմարիտ։ թէ պէտ կամի խօսիլ
ապա զի չէ ժամանակ։ Եւ զոր առաջեր
թէ կամեցայ բռնադատել և սկել
զկինն իմ, մի՛ հաւատար տէր իմ արքայ.
զի այդ զրոյր է 'ի վերայ նորա։ Եւ ոչ հա-
ւատամ. վասն զի չկոյ այլ ինչ չարագոյն 'ի
վերայ երկրի քան զչար կանայս. և գիտեմ
ցուցանել թէ ոչ լեալ են կանայք սուտք
և զրախօսք։ Եւ դու եթէ կամիցիս
վասն բանի կնոջ քո սպանանել զորդեակն
քո, լինելոց է քեզ ողբ եղև ումեմն որ. վասն
բանի կնոջ իւրոյ սպան զորդին անձեղն իւր

Ասէ կայսրն. ասա ինձ թէ ո՞վ սուտա-
խօսք են և զրախօսք կանայք. ասա և զմ̃
անձեզինդ: Ասէ դպրապետն. ո՛չ ասեմ
և ո՛չ աշխատիմ. զի մինչ ես պատմեցից
զառակս զորդին քո անդ սպանցեն. և՞
զինչ շահ լինիցի 'ի պատմութենէս :
Եթէ կամիս լսել զառակն իմ, նախ
դարձո՛ զորդին քո 'ի բանտ. և ես պատ
մեցից զառակս: Եթէ լիցի հաճոյ կամաց
քոյ առակս՝ ապրեցո՛ զորդին քո. և թէ
ոչ նոյնժամայն սպան զնա :

Եւ հրամայեաց կայսրն դարձուցանել
զորդին իւր 'ի բանտ. մինչև պատմեսցէ
դպրապետն զառակն: Եւ դարձուցին
զորդի արքային 'ի բանտ: Եւ սկսաւ
դպրապետն ասել
այսպէս:



Առակ

* Առակ իփրոփէ փիրապետին. զոր ասաց ճշան անձ-ճեղին ՚ի յուշ ոսկանեան՝ խորամանկութեանն կնոջն ։

Ի քաղաքի միում էր այր ոմն ազնուական և անուանի յոյժ. և ունէր բանձեղ մի զոր ուսուցեալ էր լեզու եբրայեցերէն. որ իբրև զմարդ ուղիղ խօսէր ։

Եւ՛ անձեղն այն զոր ինչ տեսանէր կամ լսէր պատմէր զա͞մ տ͞ն իւրոյ։ Եւ՛ այրն այն ունէր կին մատղաշ և գեղեցիկ յոյժ նման թագուհոյն քո ։ Եւ՛ կինն այն ոչ սիրէր զայրն իւր. այլ ատէր զնա և արհամարհէր և սիրէր զայլս։ Եւ՛ յորժամ գնայր այրն ՚ի վաճառականութիւն, նոյն ժամայն կոչէր կինն զսիրաւոն իւր. և ննջէին ընդ իրեարս և պոռնկէին ։ Եւ՛ յորժամ գայր այրն նորա, պատմէր



նմա

նմա անձեռն զնամ. թէ այսպէս պտուղն
կեցաւ կինն քո։ Եւ այնչափ եղև մինչև
զամ քաղաքն լուան զպտունկուն կնոջ նորա։
Եւ մեր այնորիկ այրն բազում անգամ
խրատէր զկինն և ասէր. ընդէ՞ր գործես
զայս։ Ասէ կինն. քանզի լուցի ինձ տէր
իմ գործել զայդ. այլ դու համատաս
նզովեալ անձեղին. զի քանի որ նա կեն-
դանի է մեք 'ի խաղաղութե ոչ լինիմք.
քանզի դու համատաս սատութե նորա։
Ասէ այրն. ով կին դու ոչ գիտես որ
նա սուտ ոչ խօսի. այլ զոր ինչ տեսանէ
և լուէ զայն խօսի։ Եւ յաւուր միում
եղև, զի և այրն իւր ըստ սովորութե
իւրում և գնաց 'ի վաճառականութի։
Եւ կինն յղեալ կոչեաց զսիրաւն իւր
զի եկեսցէ առ նա։ Եւ իբրև երեկոյ
եղև

եղև, եկն սիրաւն իւր՛ և բախէր զդուռն

Ապա կինն եկեալ եբաց զդուռն և ասէ.
Մի՛ երկնչիր արի՛ մտայ ՚ի ներքս. զի ոչ
ոք կայ աստ որ տեսանէ զքեզ: Ասէ
սիրաւն. ո՞յ սիրելի իմ. անծեղն տեսանէ
և պատմէ ամենեցուն:

Ասէ ցնա կինն եթէ և մի երկնչիր զի յայսմ
գիշերիս առնից զվրէժս իմ ՚ի նմանէ:
Ապա լուեալ անծեղն զխօսս նոցա և ասէ.
ո՜վ երկելի այր դու նենգաւս ամ իմաւ.
և ննջես ընդ կնոջ նորա. Թէ պէտ ՚ի խա-
ւար գիշերիս ոչ տեսանեմ զձեզ, այլ
լսելով զձայնն ձեր գիտեմ թէ զինչ
գործէք. և յորժամ եկեսցէ տէրն իմ,
պատմեցից նմա զամենայն:

Ասէ սիրաւն. ո՞չ ասացի քեզ թէ ան
ծեղս այդ խայտառակէ զմեզ. ահա լսես



զինչ

զինչ ասէ։ Ասէ ցնա կինն մի՛ երկնչիր·
Էկ ընդ իս զի 'ի սենեկի գնասցուք և
ննջեսցուք։ և գնացին ննջեցին 'ի միա
սին զգիշերն ողջոյն 'ի սենեկի անդ։
Եւ 'ի հաւախօսին ել կինն և կոչեց
զմինն 'ի յաղախնեացն իւրոց և ասէ. Էլ
'ի տանիսն և արա ծակ 'ի վ՟ր գլխոյ ան
ծեղին. մ՟ծ աճել 'ի վ՟ր բոլորի ծա-
կոյն. զի հողն և աճաղն տանիսին իջցէ
'ի վ՟ր գլխոյ անծեղին. և ջրձգեա ջուր
'ի վ՟ր նորա։ Եւ աղախինն արար այնպ.
մինչ զի եղև անծեղն կիսամահ։ Եւ
յառաւօտու պահուն ել սիրաւն և գնաց
Եւ յայնմ աւուրն եկն վաճառականն 'ի
տուն իւր. և տեսեալ զանծեղն ասէ.
ո՞վ անծեղ ո՞չ կեաս։ Ասէ անծեղն տ՟ր
իմ, զինչ որ լուեայ և տեսի պատմեցից քեզ։


Ային

Ալէն քո 'ի գիշերիս յայսմիկ եբեր առ ինքն զսիրաւն իւր. և ես անարգելով անարգեցի զնա և ասացի նմա. թէ յոր ժամ գայցէ տէրն իմ պատմեցից նմա զամ և նա ոչ ինչ համարեալ զբանս իմ, եմուտ 'ի սենեակն քո և ննջեաց ընդ կնոջ քում:

Ո՛ թէ զկեանքս իմ հարցանես հազիւ զերծեալ եմ 'ի մահուանէ. զի այնչափ անձրև և կարկուտ եկն 'ի վր իմ զգիշերն ողջոյն, մինչ զի կիսամահ արար զիս:

Իբրև լուա զայս կինն, ասէ ցայրն. զարմանամ ես ընդ խելս քո. զի հաստատ դու այդ ստախօս անձեզիդ. և ահա կասէ թէ 'ի գիշերիս եկն անձրև և կարկուտ. որ և յայսմ գիշերիս պա՛րզ էր երկինքն քան զամ գիշերս. ո՛չ անձրև եկն և ո՛չ կարկուտ. և թէ ինձ չես հա

ճառաւորեր ըլթ հօրց զդրացին և զմամնըդ։
Ասէ ե ընկալայրն գնայ ե հարց զդրացին։
և նորա ասէն. Ճշմարիտ որ պօրզ էր այս
գիշերս քան զամ գիշեր։ Ասէ ե կեաւ
այրն՝ ասէ ցկինն. Ճշմարիտ եղեր՝ որ գի-
շերս այս պորզակայ եղած է քան զամ գիշեր
Ասէ ցնա կինն. ով բարի և սիրելի այր
իմ. Ճշմարիտ ասեմ քեզ՝ զի անձեղդ այդ-
ստախօս է. և սուտ խօսելովն՝ ձգեաց ՚ի
մէջ մեր աղմուկ և այսպն արար զմեզ ՚ի
քաղաքիս ասա. և անկաք ՚ի լեզու ամնցուն
Ասէ գնաց այրն առ անձեղն և ասէ.
ով անձեղ մի էր խաբեցեր զիս. և սուտ
խօսեցար ընդ իս. և մոռացար զբարերա-
րութիւն իմ, յորժամ ես ձեռնամբ իմով կերա
կրէի զքեզ։ Ասէ դու քո սուտ խօսե-
լովն արկեր չարութիւն ՚ի մէջ իմ և կնոջ
իմոյ։

խմոյն. արարեր զմիզ զլրուց քաղաքիս ։
Ասէ անձեղն. գիտէ ա̄ծ որ յիստուտն
ոչ կայ. այլ զոր ինչ տեսայ և լուայ զայն
ասեմ ։ Ասէ այրն. սուտ խօսեցար ընդ իս
որ ասացեր թէ կայամ գիշերիս անձրև
և կարկուտ եկաւ. և ստոյգ քո խռովեցու-
ցեր զիս ընդ կնոջ իմոյ ։ Եւ բարկացլ
այրն էառ զանձեղն և էհատ զգլուխն
նր. և մեռաւ անձեղն ։
Իբրև ետես կինն ուրախացաւ և ասէ.
ցայրն իւր. արդ այժմ խնդրու է լմ իշխեմք
. զի լաւ արարեր որ սպաներ զանձեղն ։
Եւ այրն հայեցեալ սուտ և անդ ետես
՚ի վր̄ բունոյ անձեղին որ ծակ մի կայր
ծակեալ ՚ի տանիսէն. եդեալ սանդուղ
ելաւ ՚ի տանիսն. և ետես անդ ամեն
ջրոյ. և եզերն աղաղ և փոշի ։



Եւ

Սա՛ գիտաց այնու որ կրկին արարեալ էր
զայն. և աւաղեաց յոյժ զանձեզն. որ վս՟
բանի կնոջ իւրոյ՝ սպան զայնպիսի լաւ
և պատուական անձեզն: Սա՛ նոյնժա-
մայն այրն այն փախաւեաց զամ՟ ինչս իւր
և գնաց յաշխարհ հեռի. և այլ ո՛չ դար-
ձաւ առ կինն իւր:

Յետ այնորիկ ասէ դպրապետն ցկայսրն.
լո՛ւա՞ր արքայ զոր ինչ ասացի քեզ:
Ասէ արքայն. այո՛ լո՛ւայ և ի միտ առի:
Ասէ դպրապետն. եթէ վս՟ բանի կնոջ
քո սպանանես զորդեակն քո դառնա-
գոյն պատահեսցէ քեզ՝ քան զնորայն:
Ասէ արքայն. լաւ ասացեր ո՛վ
բարի դպրապետ. և սակաւ մի բարկու-
թ՟ սրտի իմոյ շիջաւ. այսօր վս՟ բանիդ քո
ո՛չ մեռանի որդին իմ:



Ասէ

Ասէ դպրապետն. և ես շնորհակալ եմ
քեզ որ ունկնդիր եղեր առակի իմոյ և
ապրեցուցեր զորդին քո այսօր ։
Եւ ողջունեաց զարքայն ասելով. որհ
նութի̅ իմ ՚ի վր̅ արքայիս իմոյ անպակաս
եղիցի. զայս ասաց դպրապետն և գնաց։
Իբրև լուաւ թագուհին թէ այսօր
ևս ապրեցաւ մանուկն ՚ի մահուանէ ,
սկսաւ ճչել և լալ և բարձր աղաղակել.
որ լսելի եղև ամենեցուն ։ Որ կոծէր
զանձն ասելով. արդ զինչ արարից . առ
ո՞ երթայց. կամ ո՞ւմ հարցից։ Յարքայ
էս իմմէ ոչ գտի մի ինչ մխիթարութի̅ .
արդ վա՛յ է ինձ որ անուանեալ կոչիմ
թագուհի . լաւ էր որ մեռեալ էի քան
թէ այս կէտս բերեալ եղէ ։ և ծառայ
քըն եկեալ ծանուցին արքային ։

Սա՛ եղեւ կայսրն գնաց առ նա և ասէ.
ընդէ՞ր այդպէս ճչես և լաս :

Ասէ Թագաւ. Հինն. դու ես կայսր Հռոմայ և ես դուստր եմ մեծազօրու արքայի կին քո։ արդ թողեր զիս ՚ի ձեռն որդւոյ քոյ նր զօձելոյ որ վերաճուցեալ և նախատեաց զիս. և այժմ և զրուց արար զիս բոլոր Հռոմայ. որև ոչ էր որդ իմ արքայ իսկ զխօսակ է և աչօք քովք տեսեր. և խոստացար ամփոփանել զնա. և աՀա դեռևս կենդանի է

Սա՛ ինչպէս դադարիմ ՚ի լալոյ. կամ ՚ի վր երկրի կենդանի կենալոյ : արդ լաւ է ինձ մեռանիլ, քան թէ այսպիսի վշտաւ և նախատանօք կեալ: Ասէ կայսրն յօժար է ի առնել զխնդիր դայդ և սպանանել ապա յերէկ կէսօրն եկն զպատիժ մի որդւոյն իմոյ առ իս և պատմեց ինձ առ ան

մի և

մինչև հաւանեցոյց զնա․ վասն այն ձգեցին զնա
'ի վաղւըն ։

Ասէ Թագուհին․ դու անչափութենէն կը
լինելոց ես դպրապետացորդոյ քո, մինչև
պատահեսցէ քեզ այնպէս որպէս պատահեաց
Թագաւորի միոյ յիմաստասիրաց իւրոց․ որ
նոցա էր համձնեալ զքաղաքն ։

Ասէ կայսրն աղաչեմ զքեզ ո՛վ Թագու-
հի իմ, պատմեա՛ ինձ զառակդ զայդ թէ
որպէ՞ս եղև։ Ասէ Թագուհին․ վասն է՞ր
'ի զուր աշխատիմ․ եթէ գիտէի որ լի-
նելոց էր ինձ սակաւ մի շահ՝ պատմէի
քեզ զառակս։ Ասէ կայսրն․ զինչ շահ
կամիս լինել քեզ․ մի թէ ազնիւ արարի
գիտես զորդին իմ․ այլ միայն երկարեցի
զկեանս նորա մինչ 'ի վաղեան օրն վասն
բանի դպրապետին ։

Ասէ

Այս թագուհին՝ բանք դպրապետացն քեզ մահ գուշակէ և բանքն իմ, փրկէ զքեզ ՚ի մահուանէ ։ Արդ լուր բանից իմոց և ՚ի միտ առ զառակս իմ և պահեա ՚ի սրտի քում, զի բարի լինիցի քեզ ։

Եւ սկսաւ ասել զառակս զայս ։

* Զրուցատրէ առակ թագուհոյն. զոր ասաց ջահան ուղիղն թագաւորին և քօթն իմաստասիրաց նորա. որ կախարդեցին զլոյս աչաց նորա ։

Ի ժամանակի միում, կայր թգ̅ր մի մեծ և անուանի յոյժ և ունէր իմաստասէրս եօթն ։

Եւ թգ̅ր այն յանձնեալ էր զերկիրն իւր նոցա և նոքա վարէին զամ̅ երկիրն հրամանաւն իւրեանց ամ̅ և այժմ դու ։ և առանց նց̅ բան ինչ ոչ առնէր որպէս և այժմ դու ։

 Արարին

Արարին իմաստասէրքն կախարդութե̃
Թգ̃րին այսպէս. զի քանի որ ՚ի պալատն
էր տեւանէր զլոյս. եւ յորժամ ելանէր
՚ի պալատէն խաւարէր լոյս աչաց նորա։
Եւ մեծ այնպիսի արարին զկախարդութի̃ս
զայս զի ըստ կամաց իւրեանց իշխեսցեն
երկրին։ Եւ յաւուր միում փորձէին
զինքեանս եթէ կարասցեն բժշկել ըզ
կայսրն որ դարձեալ տեսցէ զլոյս եւ ոչ
կարացին։ Այլ հրաման առեալ էին
՚ի կայսերէն. զի եթէ ոք տեսանիցէ երազ
տացէ նոցա լիտր մի ոսկի զի մեկնեսցեն
զերազն։ եւ եթէ ոչ բերցէ ոք կրկնա
պատիկ տուգանս տացէ արքային։ Եւ
այսու բանիւ բազում գանձս ժողովեցին
Եւ յաւուր միում նստէր Թգ̃րն այն
ընդ Թգ̃հոյն իւրոյ. եւ էր տրտում յոյժ։



Աւէ

Ասէ թագուհին. տէր արքայ ընդէ՞ր
տրտում ես: և պատմէ. Ցարքայն վ̃ կուրուծ
իւրոյ: Ասէ թագուհին. արա՛ ըստ խրա
տու իմոյ և առողջասցիս դու: Ունիս
եօթն իմաստասէր ՚ի տան քում. զոր
իմաստութ̃ իւրեանց փարեն զա̃մ իրկիրն
որ ՚ի ներքոյ տէրութ̃ քո: Կոչեա՛ զնո̃
և ասա՛ սպառնալեօք. յորժամ որ կեն լա–
նեմ ի պալատէս վ̃ էր ոչ տեսանեմ զլոյս:
Արդ հրաման իմ այս է զի արասջիք ինձ
դեղ. որ յորժամ ելանեմ ՚ի պալատէս
՚ի դուրս տեսանեմ զլոյս. և զփառան ձեր
թողում: զիտեզե կծայես որ դուք արարիք
ինձ զայս: Ապա թէ ո՛չ հանձն առնուք
բժշկել զիս, հրամայեմ զձեզ զամենեան
չարաչար մահուամբ կորուսանել:
Յետ այնորիկ կայսրն ըստ խ̃րատու կնոջն

կոչեաց

կոչեաց զիմաստասէրքն առ ինքն և ասէ։
Ո՛վ իմաստասէրք հարցից ձեզ բան մի և
դուք տուք ինձ պատասխանի ։ Ասեն
իմաստասէրքն հրամայէ արքայ. և լու
ցուք զխօսս տ՟ն մերոյ. և տացուք պ՟տխնի։
Ասէ արքայն. յորժամ որ կե լանեմ ՚ի
պ՟տէս ՚ի դուրս, վ՟էր զլոյս ոչ տեսանեմ
Ասեն իմաստասէրքն ո՛չ գիտեմք ։
Ասէ կայսրն ըստ խրատու կնոջն. լու՜
եա՛լ է իմ որ արարեալ էք կախարդութի՟
ինձ. յորժամ որ կե լանեմ ՚ի դուրս՝ վ՟
այն ոչ տեսանեմ զլոյս ։ Արդ զճ՟ասըն
ձեր թողից՝ եթէ դարձեալ առնուցուք
ինձ հնարս զի տեսից զլոյսն յորժամ որ
կե լանեմ ՚ի դուրս։ Ապա թէ ոչ զձեզ
զամենեսեանդ դառն և չար մահուամբ
կո՟րսնե լցեմ զօգուտն ձեր դուք գիտէք։

 Ասեն

Ասեն իմաստասէրքն. արքայ յաւիտե՛ն
կեաց. զո՛ւր է այդ ’ի վ͞ր մեր. մեք ’ի բան
էդ այդմէկ բնաւ խապար ո՛չ ունիմք ։
Ասէ արքայն. ես ո՛չ գիտեմ այդպիսի
խօսք. այլ հրամանն իմ այս է որ բժշկէք
զիս ’ի յախտից իմոց ։ Ասեն իմաստասէրքն.
տէ՛ր մեր արքայ՝ թուլացո՛ զմեզ մինչև
’ի տասն օր. զի խորհեսցուք և պատաս
խանի բերցուք արքայիս մերոյ ։ Ասէ
կայսրն. եղիցի ըստ խնդրոյ ձերում ։
Եւ նոքա ելեալ յերեսաց արքային
խորհէին թէ զինչ արասցեն. և ո՛չ կարէ
ին գտանել հնարք մի ։ Եւ տրտմեալ
ասեն ցմիմեանս . եթէ ոչ բժշկեսցուք
զկայսրն մեք ամենեքեանս մեռանիմք ։
Շրջէին ’ի մէջ քաղաքին այսուր տրտը
մութ. և եկին շուրջ գալով ’ի փողոց մի.
Եւահ՛

և մինչ տղայք փոքրիկ խաղային ՚ի մէջ
փողոցին։ Եւ այր ամենեկեան առ իմաս
տասէրսն և ասէ տեսեալ եմ երազ՝ մեկ-
նեցէք զերազն իմ վասն՛ որ իմաստա
սէրք. և ես տաց ձեզ մէկ լիտր ոսկին։
Յայնժամ փոքր մանկունքն որ կու խա-
ղային անդ, մինն ՚ի նոցանէ յառաջ եկ-
եալ ասէ ցայրն այն մի՛ տար զոսկին դոցա
զի գողք խաբեբայք են. այլ դու ասա
ինձ զերազն քո և ես պատմեցից քեզ։
և իմաստասէրքն ակնարկէին ՚ի հեռաս
տանէ։ Եւ այրն սկսաւ պատմել այսպէս։
Տեսի յերազի իմում զի եկանէր աղբիւր
ջրոյ ՚ի մէջ անդաստանի իմում. և յոր-
դեալ յոյժ. մինչև ելից զա̃մ անդաստանն
ջրով։ Ասէ մանուկն գնա ՚ի տուն քո.
և առ փետատ մի. և փորեա զտեղին զայն

յորում ելանէր ջուրն. և գտանիցես բազում գանձս. փարթամանաս դու և ազգատոհմն քո ամենայն:

Նա նոյն ժամայն փութացաւ այրն. և եկեալ փորեաց զտեղին զայն. և եգիտ բազում գանձս յոյժ. և փարթամացաւ ինքն և ամենայն ազգատոհմն իւր:

Նա դարձաւ այրն առ տղայն. և տայր նմա Ը լիտր ոսկի վասն իրաւ մեկնելոյ զերազն իւր: Նա տղայն ոչ էառ զոսկին ի ձեռն. այլ ասէ քաւ լիցի ինձ առնուլ ոսկի ի քէն. այլ միայն աղօթեա վասն իմ:

Տեսեալ զայս իմաստասիրացն որ իմաստ ունէին մեկնեաց զերազ զայն, ասեն ցնա. ով սիրելի մանուկ դու զի՞նչ անուն քո

Ասէ մանուկն անուն իմ կոչի Եէրիլոս:

Ասեն իմաստասէրքն. տեսանեմք որ



իմաստ

իմաստութիւն քո մեծ է յոյժ. և արդ հար-
ցանեմք քեզ բան մի։ Ասէ եէրիլնոս.
ասացէք ինձ զպատճառն, և ես տամ ձեզ
պատասխանի ։ Ասեն իմաստասէրքն.
Թագաւորին մերում աչքն կուրացեալ է
և Թէ բժշկես զնա, մեծամեծ պարգևս
առնուս 'ի մեզանէ ։ Ասէ եէրիլնոս։
բնաւին չի տեսանէր Թէ աչաց ցաւ
ունի։ Ասեն իմաստասէրքն. ոչ այդպէս.
այլ քանի որ 'ի պալատն է կու տեսանէ.
և յորժամ 'ի պալատէն 'ի դուրս կելանէ
նոյն ժամայն այլ ոչ կարէ տեսանել ։
Ասէ ցնոսա եէրիլնոս. երԹայց և տե-
սից. և ապա հրամանաւն այ բժշկեցից ։
Ասեն իմաստասէրքն. եկ ընդ մեզ որ
տարցուք զքեզ առ Թագաւորն. և ե-
լեալ գնացին 'ի միասին առ կայսրն ։

 Ասէ

Ասէ ցնա կայսրն. զի՞նչ արարիք. և
զի՞նչ պատուիրեցի ես ձեզ:
Ասեն իմաստասէրքն. ահա բերաք բը
ժիշկ մանուկ մի որ կատարէ զկամս քո:
Ասէ կայսրն ցիմաստասէրսն. գիտէ՞ք
ստուգի՞ որ կարէ այդ մանուկդ զկամս իմ:
Ասեն իմաստասէրքն. այո գիտեմք զի
կարօղ է. և փորձել եմք ճշմարիտ զիմաս
տութիւն դորա: Ասէ կայսրն. բարի է զոր
ասէքդ: Եւ դարձաւ կայսրն առ մանու
կըն և ասէ. զի՞նչ է անուն քո մանուկ դու:
Եւ նա ասէ. անուն իմ կոչի Եէրիլնոս
որ և ծառայ քո է: Ասէ կայսրն. կարօ
ղես զիս բժշկել յախտից իմոց: Ասէ
Եէրիլնոս. ծառայ քո ոչ գիտէ զցաւս քո
այլ հրամայեսցէ արքայ իմ, և ես կա-
րողանամ զօրութն այ բժշկել զքեզ:
Ասէ

Աւէ կայսրն իմնեցուի եւ ցաւն այնէ որ յորժամ եղանեմ ՚ի պանդխտէս դուրս ոչ կարեմ տեսանել զլոյս։ Աւէ երկինս հրեշտակացն ՚ի բացգնալ։ Ո՜ հրեշտակաց կայսրն ամենեցուն արտաքս եղանել եւ փակել զդրունն։ Աւէ երկինս մոյծ զիս ՚ի սենեակն քո յորում ննջես դու ՚ի գիշերի. եւ անդ պատմեցից քեզ թէ զինչ առնելոց եմ։ Ո՜ երբ մահն ՚ի ներքս տեսեալ մանուկն զմահիճս արքային. եւ հրամայեաց ծառայիցն փութով հանել ՚ի դուրս զմահիճս արքային եւ ասէ ցկայսրն. այժմ տեսանիցես զհրաշս որ է ՚ի ներքոյ սորա։ Ո՜ երբ հանին զմահիճսն ՚ի դուրս տեսին ՚ի ներքոյ նորա ակն աղբերոյ. եօթն առաջի բղխեալ բաժանեալ եռայր։ Աւէ մանուկն ցը



կայսրն

կայսրն • տէր իմ արքայ • ահա որ չափ աղբիւրս 'ի ներքոյ մահճի քո է եօթն գնացիւք իւրովք ոչ կարես տեսանել զլոյս։ Ասէ կայսրն• որպիսի հնարիւք կորուսանել մարթ է զաղբիւրդ գնացիւքն իւրովք հանդերձ։ Ասէ մանուկն• եթէ ըստուգիւ կամիս տեսանել զլոյս մինչև ոչ գլխատեսցես զեօթն իմաստասէրսն քո ոչ կարես տեսանել զլոյս։ Զանզի նոքա արարին զկախարդուխս զայս ան իմոյ արքայի• զի համարձակ իշխեսցեն

'ի վերայ երկրի քո։

Եւ նոյնժամայն հրամայեաց կայսրն սպանանել զնո• որ և 'ի գլխատելն իսկոյն կորեաւ աղբիւրն գնացիւքն իւրովք։ Ասէ մանուկն ցկայսն• այժմ ելանեմք դուրս 'ի պալատէս • և տեսանեմք որ

կա-

կու տեսանես թէ ոչ։ Եւ նոյնժամայն
կայսրն ետուր զարգարել երկու ձիս. և
նստաւ ՚ի մինն արքային, և միւսն մանուկն
և ելանել ՚ի դուրս. և տեսանէր արքայն
զլոյս համարձակ. և ուրախացաւ յոյժ. և
դարձաւ խնդութբ ՚ի պալատն իւր և
Ածուի շնորհեց մանկանն որդ իշխանի միոյ
Եւ ասէ թագաւորին կայսրն. լուր ով
արքայ և ՚ի միտ առեր զառակս իմ։
Ասէ կայսրն. ճշմարիտ ասեմ քեզ ով
թագաւորի իմ. լաւ առակ ասացեր ։
Ասէ թագաւորին. Տանիր արքայ զի և
դպրապետքն որդւոյ քո նոյնպէս կամին
առնել քեզ սուտ առակօքն իւրեանց։
Եւ այնչափ խաբեն զքեզ մինչև ժամ
պարապոյ գտեալ սպանանեն զքեզ. և
թագաւորեցուցանեն զորդի քո նզովեալն

 ՚ի տեղի

՚ի տեղի քո։ Եւ նա ո՛չ կարասցէ թշնամել.
յայնժամ կործանի թշնամին ՚ի քո և ընդդու-
նիս զու զանձն։ Ասէ կայսրն. ո՛չ թո-
ղից զքեզ զի առնիցեն ինձ այնպէս. այլ ընդ-
ունիմ առ օտն առ զի նա անպատճառ սպանանել։

*********

* Չորրորդ [illegible]

Ե չորրորդում աւուրն նստեալ կայսրն ՚ի գահոյսն իւր, և հրամայեաց կոչել զդահճապետսն առ ինքն։ Եւ յորժամ եկն առ ցնա կայսրն. հա՛ն զորդին իմ ՚ի բանտէն և տա՛ր սպան զնա։ և հեռացո՛ զգլուխն ՚ի մարմնոյն ՚ի կանդուն։ Այնպէս և թագուհին յառաջնմէ ազդեալ էր դահճապետին. Թէ յորժամ տանիցես զորդին

արքային սպանումն, ամ մահապարտի ոչ
առնես նմա այլ ինչպէս արարցես ։
Եւ եկեալ դահճապետն եհան զորդի
արքային ՚ի բանտէն. և ետ զձեռսն ՚ի
յետսն կապել ոչ մահապարտի. և մու-
նետիկն յառաջուցն ձայնէր և գընայր
ասելով. ով ոք որ կամի նայ մի զանցել ընդ-
յետնամօրն իւրոյ այրիք մահ՛մբ մեռ՟նի
Եւ. այսպիսի նախատանօք առեալ տանէ-
ին ՚ի տեղի սպանմանն ։ Եւ յորժամ
տանէին զնա տեսեալ ժողովրդեանն ա-
ղաղակէին մեծաձայն և ասէին . ա՛ւաղ
ա՛ւաղ և հազար ա՛ւաղ զմիամօր որդի կայս-
երն որ ՚ի զուր տանին ՚ի սպանումն ։
Եւ մինչդեռ տանէին էհաս նոցա չոր-
րորդ դպրապետն ( որում անունն էր
մալխիօրախ ) սրընթաց երիվարաւն

 իւրով ։

իւրով։ Նա՛ տեսեալ զորդի արքային
այնպիսի խեղճ և ողորմելի որ տանջէին 'ի մէջ։
Յայնժամ բարկացեալ դպրապետն դահ-
ճապետին և ասէ. ընդէ՞ր այդպիսի կա-
պեր ես զորդի արքային։ և ետուր արձա-
կել զձեռս նորա։ Ասէ դահճապետն.
ով դպրապետ հրաման սաստիկ է թագա-
ւորին. և մեք զի՞նչ արասցուք։
Նա՛ ժողովուրդքն որ շուրջն կային
ողբալով աղաղակէին և ասէին. ով բարի
դպրապետ փութա առ կայսրն և աղա-
չեա զորդի արքային զաշակերտն քո. ով
և ընկերքն քո ազատեցին։ Նա՛ մանուկն
իբր աղերսելով երկիրպագ վարժապե-
տին իւրոյ. ով թէ կամէր ասել ազատեա
զիս 'ի մահուանէ։ Ասէ դպրապետն.
դադարեցէք դուք 'ի տեղիս այս մինչ
եւ աս

եւ առ կայսրն երթայց. զի յոյս ունիմ
առ ած որ փրկեմ զգձ՛ այսօր 'ի մահուանէ
Եւ ընթացեալ եմուտ 'ի պալատն. եւ
Ածա՛ պատուով ողջունեաց զկայսրն։
Եւ կայսրն խօսի բարկութբ եւ ասէ.
'նզովեալ ծեր գտցէ զքեզ չարն վասն
խաբէութե քո զոր խաբեցեր զիս։ Ասէ
դպրապետն. տէր իմ արքայ պարգեւ ակն
ունէի 'ի քէն եւ ո՛չ այդպէս բարկանալոյ.
եւ կամ վս էր խաբեցի զտէրն իմ արքայ։
Ասէ արքայն. քանզի եւտու զորդին իմ
'ի ձեզ յստակ զրուց եւ խօսօղ. արդ ահա
ւասիկ համրացեալ է։ Եւ եւս չարագոյն
այն է որ փոխանակ իմաստութե եւ հանճա
րոյ կամեցա՛ բռնադատել եւ լլկել զ
կինն իմ. վս այնր գործոյ մեռանի ահա
նա այսօր. եւ դուք ամենեքեան կորիցէք

ընդ նմա։ Ասէ դպրապետն. գիտէ ամ
որ ո՛չ լինի խաբէութի առաջի արքային.
յայտ է թէ մն էր ոչ խօսի որդին քո.
սակայն խօսել լոցէ վաղվաղակի. այլ զի չէ
հասեալ ժամն իւր։ ապա թէ համբերես
և ոչ սպանանես լսել լոցես զխօսս նորա ։
Ասէ՛ որ ասացեր թէ զկինն իմ կամեցաւ
բռնադատել՝ յայդմիկ ո՛չ է պատշաճ հա-
ճատալ կնոջ։ Ասէ՛ թէ մն բանի կնոջ
քո սպանանես զորդիդ՝ երկնչիմ թէ
պատահեսցէ քեզ այնպէս որպ պատահեց
ծեր զինուորի միոյ ՚ի կնոջէն իւրմէ ։
Ասէ կայսրն. ո՞վ դու չար ծեր. կամիս
առնուլ ընդ իս այնպէս, որպ երբեմն ե-
օթն իմաստասէրքն արարին ու մեծն կայսեր
Ասէ դպրապետն. տէր ո՛չ կամիմ ես
առնել քեզ բան չար. զի թէ միում կամ

 յոդուածք

յոգունք չե՛ն առնեն սկյն ոչ ամքե՛ն այնու-
չարե՛ն զի միոյն չարգծու՛ի զմիւսոյն բարե-
գործու՛ի ոչ ապականէ. այլ իւրքնչիւր
գործ՚ի վե՛ր գլխոյ գործողին է եթէ բա՛ի
եթէ չար։ քանզի ՚ի մէջ ամէն ազգի
գտանի բարի և չար։ Այլ ես զայս
ասեմ քեզ. եթէ վա՛ բանի կնոջ քո տա-
ցես այսօր սպանանել զորդին քո, յայն
ժամ պատահեսցէ քեզ չար։ Ասէ եթէ
ոչ ունկընդիր լինիցիս ինձ, յետոյ ապա-
շաւեսցես այլ ոչ հասանես։ և ես առակաւոր
խօսիւք հաստատեցից զբանս իմ։
Ասէ կայսրն. ասա զառակդ թէ ո՞րպէս է։
Ասէ դպրապետն. ոչ ասեմ և ոչ աշ-
խատիմ. զի մինչ ես պատմեցից զառակս՝
գուցէ զորդին քո անդ սպանցեն. և զինչ
շահ լինիցի ինձ ՚ի պատմութենէս։

Նա՛ եթէ կամիս լսել զառակիս՝ նախ դարձո՛ զորդին քո ՚ի մահուանէ ՚ի բանտ և ես պատմեմ քեզ զառակս: Թէ և է հաճոյ լիցի քեզ առակս՝ ապրեցո՛ զորդին քո · և թէ ո՛չ՝ սպա՛ն զնա: զի ՚ի ձեռս քո է թէ սպանանես և թէ կեցուցանես:

Յայնմ ժամու հրամայեաց կայսրն դարձուցանել զորդին իւր ՚ի բանտ մինչև պատմեսցէ դպրապետն զառակն:

Նա՛ սկսաւ ասել:

*Առակ չորրորդ դպրապետին· զոր ասաց վասն կնոջ [illegible] որ կամէր սիրել զքահանայն:

Ի քաղաքի միում կայր զինուո՛ր ծեր· արդար և երկիւղած յոյժ և մեռա՛ւ կինն նր· և մնացեալ բազում ժամանակս այրի· և ո՛չ կամէր առնուլ



նուլ

նուլ կինն: Յետոյ եկեալ սիրելիքն իւր
և բարեկամքն ձեպեցին զնա. որ էառ
աղջիկ մի 'ի կնու՟թն իւր: որդ՟ նախարարքն
քո քեզ արարին: և էր գեղեցիկ յոյժ.
զի 'ի դստերացն հռոմայեցւոց էր: և
այրն սիրէր զնա: և կացեալ ընդ իրեար
ամս երեք և ոչ եղև զաւակ նոցա:
Ի յաւուր միում ել կինն եւ գնաց
'ի ժամ առաւօտեան. և պատահեալ նմա
մայրն իւր ողջունեաց զնա և ասէ. դու-
ստր իմ զիա՞րդ կեաս. և զիա՞րդ է այրն
քո ընդ քեզ: Ասէ դուստրն ցմայրն. ո՛չ
է բարի այրն իմ. զի յորժամ ննջեմք
որպ՟ կոճղ անկանի 'ի վր՟ մահճին. և բը-
նաւ ո՛չ առնում 'ի նմանէ մխիթարու՟թ
մարմնական զուգակցու՟թ: վասն այնորիկ
կամիմ սիրել զայլս զի կատարեսցէ զփա-

փագ ցանկութեան իմոյ ։ Ասէ մայրն ·
դուստր իմ մի՛ արասցես զբանդ զայդ ·
զի մեղք մեծ է ։ Ահա ես և հայր քո բա-
զում ժամանակս բնակեմք և զայդ ոչ
գործեմք ։ Ասէ դուստրն · մայր իմ ձեզ
չէ՛ զարմանք եթէ ոչ գործէք զայդ · վն
զի երկոքեանդ տղայ հասակաւ լցեալ
էք զպարտս մխիթարանաց · և ոչ էիք ոպ զայրն
իմ զրկեալ յամէ · որ կարողութ̄ եւս ոչ
ունի շարժելոյ · այլ նման փայտի ընկնի
՚ի մահիճն և ննջէ մինչև ՚ի լոյսն ։ վն
այնորիկ խորհեցայ ես սիրել զայլ ։
Ասէ մայրն · ասա ինձ զո՛վ կամիս սիրել
Ասէ դուստրն · զքահանայն եկեղեցւոյս
այսորիկ ։ Ասէ մայրն · վն է՞ր զքահանայն
սիրես և ոչ զզինւորս · կամ զա՛յլ ոք · զի
փոքր լինէր մեղքն ։ Ասէ դուստրն ·



եթէ

եթէ զինու՞որս սիրեմ կամ զմ՛յլ ոք վաղ
վաղակի թողեալ զիս խայտառակէ առա
ջի ամենեցուն. և լինիմ ամօթ և ՚ի նա-
խատինս: բայց քահանայն թագուցանէ.
մ̃ զի յայտնել ո՛չ կարէ. այլ և հանապազ
ընդ իս լինի. և զինչ որ խնդրեմ տայ ինձ
Ասէ մայրն. լո՛ւր դուստր իմ խրատու-
իմոյ ե՛ւ բարի լինիցի քեզ. զի ծերք
բարկացողք և խստասիրտք լինին. փոր
ձեա՛ զնա մէկ երկու անգամ և արա՛ վը
նաս առաջի նր̃. եթէ թողցէ քեզ
զվնասն քո զոր առնես, յայնժամ սիրես-
ցես զո՛վ ոք և կամիս: Ասէ դուստրն.
ո՛չ կամիմ այդչափ երկար համբերել:
Ասէ մայրն. համբերեա՛ դուստր իմ
եթէ կամիս զօրհնութի̃ս առնել:
Ասէ դուստրն. վասն օրհնութե̃ քո



տան

տան ջերցայց և համբերելոց այլ և ս ժամանակ
մի. բայց ասա ինձ թէ որպ՟ փորձեցից զնա
Աւէ մայրն. եթէ կայ այնպիսի ծառ
՚ի մէջ դրախտին որ առաւել լսիրէ այլ
քո քան զա՟մ ծառ, կտրեա զնա. և յոր
ժամ գալու լինի այր քո ՚ի դրուէ, ձգեա
զայն ՚ի փուռն ՚ի մէջ կրակին. և դիր
աթոռ յանդիման նորա. որ այր քո նստի
և տեսանէ զնա ՚ի մէջ կրակին։ և թէ
թողու քեզ զխասն զայն յայնժամ սիրե
ցես զքահանայն։ Աւէ դուստրն. արա—
րից զայդ ա՟մ. և գնաց ՚ի տուն իւր ։
Աւէ այրն. վասն էր յուշացար այդ չափ.
և ուրէիր մինչև ցայժմ։
Աւէ կինն. յեկեղեցին էի և աղօթս
առնէի ՚ի դէմ սուրբ պատարագին.
և յետոյ խօսէի ընդ մօրն իմում։
Աւէ

Ասէ այրն․ և ինձ հաճելի է բանդ այդ որ ամէն առաւօտու երթիցես յեկեղեցին և խնդրեսցես զարքայութիւնն այ։ Յետ այնորիկ ելեալ այրն գնաց ըստ սովորութեան իւրոյ յորս։ Եւ եղեւ կինն աստ ցայգէգործն ով եղբայր գնա յայգին և կտրեա ծառ մի և բեր․ զի վառեցից զփուռս զի օրս ցուրտ է․ և այրս ցրտացեալ գայ ՚ի յորսոյն․ վասն այն վառեցից աճելի զի ջերմասցի։ Եւ եղեւ այգէգործն էառ զկացինն և գնաց յայգին և տիկինն զկնի նր։ և մտեալ ՚ի յայգին ժողովէր զխուռնս յայսկոյս և յայնկոյս․ մինչև եկն ՚ի ծառն այն որ յոյժ սիրէր այրն իւր։ և աստ ցայգեգործն կտրեա զծառս զայս։ Ասէ այգէգործն․ ոչ կարեմ կտրել զդա․ զի տէր իմ յոյժ սիրէ

 զծառդ

զծառդ զայդ ։ Եւ առեալ զկայենն կինն ՚ի ձեռանէ այգեգործին ինքն իւր ձեռօքն կտրեաց զծառն զայն. և եբեր ՚ի տուն վառելոյ ։ Եւ իբրև երեկոյ եղև յորժամ մերձ եղև գալ առն իւրոյ նոյն ժամայն վառեաց զծառն ։

Եւ եկեալ այրն նորա ՚ի տունն . և կինն ընթացեալ եդիր ալթոռ յանդիման հրոյն զի ջեռասցի ։ Եւ նստեալ այրն ջեռնոյր. և նայեցեալ ետես զծառն սիրեցեալ իւր այրեր ՚ի մէջ հրոյն ։ Կոչեաց զայգեգործն և ասէ . ընդէ՞ր կտրեցեր զծառըդ զայդ

Ասէ այգեգործն. տիկինն հրամայեաց

Ասէ կինն. ես արարի և պատրաստեցի զհուրս զի դու եկեալ ջեռասցիս .

Եւ այրն խոժոռեալ աչօք հայեր ՚ի կինն և ասէ . ով անըզգամ և չար կին վասն էր

 արարեր

արարեր զայդ․ զի գիտէիր որ ես սիրէի
զծառս զայս և դու կտրեցեր զնա ։
Եւ կինն սկսաւ լալ և ասել․ ես վասն
բարութե քո արարի զի ջեռացիս դու ․
արդ վասն փոխարինի բարութե անարգես
զիս ։ զայս ասէր և լայր դառնապէս ։
Ասէ այրն դադարեա՛ 'ի լալոյդ․ այժմ
թողցի քեզ վնասդ այդ զոր գործեցեր
բայց պատուիրեմ քեզ մի՛ ևս իշխեսցես
առնել միւսանգամ այդպիսի ինչ ։
Եւ 'ի վաղիւն անդր ել կինն և գնաց
յեկեղեցին․ և պատահեց նմա մայրն իւր
և ողջունեցին զմիմեանս ։ Ասէ դուստրն
ցմայրն իւր․ փորձեցի զայրն իմ և արարի
զոր ինչ պատուիրեցեր ինձ․ կտրեցի զ
ծառն զայն և այրեցի զնա․ և այրն իմ
ետես զվնասն իմ և բարկացաւ ։

 Իբրև

Իբրև ես սկսայ լալ եթող ինձ զմանն
իմ զոր առարի. և արդ կամիմ սիրել
զքահանայն եկեղեցւոյս։ Ասէ մայրն.
դուստր իմ միւսանգամ ես փորձեա՛. զե
ծերք միանգամ թողուն, և 'ի միւսումն
կրկնապատիկ հատուցանեն։ Ասէ դու-
ստրն. ո՞չ կարեմ համբերել մայր իմ։
Ասէ մայրն. ո՞վ սիրելի դուստր իմ.
առաջի անգամն համբերեցեր վասն օրհ
ուն իմոյ, և այժմ համբերեա՛ վասն օրհ
նուն հօր քո. և միւսանգամ փորձեա՛
զայր քո եթէ այժմ ես թողցէ և ոչ
անարգեսցէ զքեզ զապա սիրեա՛ զքահնյն
Ասէ դուստրն. տանջանք մեծ է ինձ
այդչափ երկար համբերելն. այլ վասն
օրհնուն հօր իմոյ համբերեցից և փոր-
ձեցից միւսանգամ. բայց ասա՛ ինձ թէ

 որպէս

որպէս փորձեցից։ Ասէ մայրն. զխոտես
զի այրն քո սիրէ զփոքրիկ շունն. սպան
զնա առաջի աչաց նորա. և թէ թողցէ
զվնասն քո ապա կարող ես սիրել զքահանայն
և զայս ասացեալ գնացին ՚ի տուն իւրեանց։
Իսկ իբրև երեկոյ եղև զարդարեաց
կինն զմահճիճս առն իւրոյ. և այրն նորա
նստէր առ հրովն. և շունն որ սփոփեալ էր
խաղայր ՚ի վերայ անկողնոյն։ Իսկ յան
կարծակի առեալ կինն զշունն առաջի
տեառն իւրոյ էհար ընդ դրան յորմն.
որ յղեղ գլխոյն հեղաւ և սատակեցաւ։
Իսկ տեսեալ այր նորա այն. սկ̃ նզովել զ
՚ի մէջ կանանց. և չարդ ՚ի մէջ կենդա֊
նեաց. Ո զինչ գործեցեր առաջի աչաց իմոց
Ասէ կինն. զինչ որ վասն շահու քո առ֊
նեմ և բարեկամութիւն ցուցանեմ քեզ

ամենայնն ոչ ինչ է առաջի քո. և համա֊
պազ անարգես զիս։ Տեսանես զի զար֊
դարեցի ըզմահիճս քո դիպակ անկողնօք
և նա ել ՚ի վերայ նորա շաղախեալ ոտիւք։
Ասէ այրն. դու ո՞չ գիտես որ ես առա֊
ջել սիրեմ զշունն քան զդիպակ անկող֊
նինն քո։ Ասէ կինն. զամենայն բարութիւն որ
՚ի վերայ քո առնեմ, ոչ ինչ համարեալ
առաջի քո. և զայս ասացեալ սկսաւ լալ
և եղուկ տալ անձինն։ Ասէ այրն. դա֊
դարեա՛ ՚ի լալոյդ. և այժմ ես թողից
քեզ զվնասդ. և մի՛ այլ ես գործեսցես
այդպիսի վնաս ինձ։ Ասէ կինն յօժա֊
րութեամբ կատարէի զկամս քո եթէ գիտէի
թէ՞ զինչ խորհուրդ սրտի քո։ Նա
այրն այլ ո՛չ խօսեցաւ և ելեալ ննջեց։
Նա ՚ի վաղիւն ելեալ կինն գնաց յեկե֊

 ղեցին

ղեցին. և եգիտ անդ զմայրն իւր և ասէ.
բարի լոյս քեզ մայր իմ: Ահա կտրեցի
զխօսս քո վասն օրհնութե(ան) քո և վասն օրհ
նութե(ան) հօր իմոյ. որդ այժմ սիրեմ զքա_
հանայն. բաւական այսչափ համբերելս
տանելի այլ ոչ կարեմ համբերել: զի բ̃
անգամ փորձեցի զայրն իմ. և յորժամ
բարկացաւ ինձ ես սկսայ լալ. և նա նոյն
ժամայն եթող զջ̃ան իմ: Ասէ մայրն.
գիտացիր դուստր իմ զի ծերք դժուա_
րաբնութք լինին. մի և երկու անգամ
թողուն, բայց յետոյ տանջողիկ խնդրեն
զվրէժ. փորձեա զնա երրորդ անգամ
Ասէ դուստրն. զո՞ւր է ասելդ քո մայր
իմ. այլ ոչ կարեմ համբերել և լռել քեզ:
Այսչափ ժամանակէ որ կայր իմ ես սակս
քահանային այնորիկ. և բորբոքի սիրտ

 իմ. և կամ

իմ. և կամ ես 'ի տանջանս. և դու բնաւ ոչ խորշեաս ինձ: Ասէ մայրն. այս մի անգամ այլ արա՛ զխօսս իմ և փորձեա՛ զնա. և թէ թողցէ քեզ զմնասն քո, տէրն վկայ լինի դուստր իմ ես ձեռօք իմովք ուխտեցից զքեզ քահանային: և այլ ոչ նեղեցից զքեզ: Ասէ դուստրն շատ նեղեցեր զիս մայր իմ. և ես որչափ կարեմ համբերել այդչափ երկար 'ի սէր քահանային: արդ ասա՛ թէ որչափ փորձեցից զայրն իմ այս անգամ այլ: Ասէ մայրն 'ի յայս կիրակէիս առնելոցէ այր քո ընդունելութի մեծ. և հրամայեսցէ զզինուորակիցս բազումս 'ի ճաշ: Յորժամ եկեսցեն ամենեքեան և նստիցին 'ի ճաշ, եկ և դու նիստ և ընդեա՛ զդաստառակ սեղանոյն ընդ մէջ քո և ել յանկարծակի և

գնա. զի ցրուեսցի սեղանն առաջի թագ
մականին ։ և թէ այր քո ոչ խոսեսցի և
թողցէ քեզ զվնասս զայս և ոչ առաջ
նոցն, յայնժամ կարօղես սիրել զքենին ։
և զայս ասացեալ գնացին 'ի տունս իւրեանց։
Եւ իբրև կերակրի եղև եկին առ նա
'ի ճաշ ամենայն զինուորականքն իւր ։
Եւ իբրև գրին զսեղանն և բազմեցան
ամենեքեան և բերին զճաշն, եկեալ և կինն
բազմեցաւ ընդ նմա 'ի սեղանն. և առեալ
զդաստառակ սեղանոյն գաղտ 'ի նոցանէ
կապեաց 'ի գօտի իւր։ Եւ առէ այրն.
ով մոլորամիտ կին՝ մոռացար բերել զդ
դանակս իմ. արդ որով կերայց հաց ։
Եւ կինն փութալով ել զի բերցէ զդ
դանակն։ Յայնժամ վերացաւ դաստա
ռակն ընդ նմա՝ և կործանեցաւ սեղանն.

 և ցրուե

և ցրուեցոյց ներ կուրն. և հեղաւ գինին
և կլթղայքն արծաթէ անկան յերկիր ։
Նա տեսեալ այր նորա բարկացաւ յոյժ ·
բայց վասն բազմականացն չասաց նմա ինչ ։
Նա հրամայեաց աղախնեացն դարձեալ
կերակուր պատրաստել. և ոչ տրտմեցոյց
զերեսս իւր ։ և դարձեալ դրին սեղան ·
և բերին կերակուր ։ կերան և արբին
և ուրախացան յոյժ ։

Նա ՚ի վաղիւն անդր՝ ել այր նորա և
գնաց ՚ի շուկայն. և եգիտ բժիշկ մի. և
ասէ ցնա. եղբայր՝ գիտես արիւն առնել ։
Ասէ բժիշկն այո՛ քաջ գիտեմ ։ Նա
առեալ զնա եբեր ՚ի տուն իւր և ասէ
ցկինն իւր՝ արի կաց ՚ի մէջ. զի բերի
քեզ բժիշկ մի որ առցէ ՚ի քէն արիւն
զի բազմացեալ է արիւնդ՝ և խելքդ ցրու

 եալ

Եւալէ Թող զի ելցէ արիւնդ ՚ի քէն և
խեղքդ ժողովի ՚ի գլուխդ քո ։

Ասէ կինն. մինչև ցայժմ ոչ եմ առեալ
արիւն . և այժմ ևս ոչ կամիմ առնուլ ։

Ասէ այրն . ոչ կամիս գիտել թէ այս
երիցս անգամ զինչ գործեցեր դու ընդ իս

Նա՛ բռնութ̃ կալեալ կապեաց զձեռս
նր̃. և ետուր ծակել զերակսն երկուին
ձեռացն. և արիւնն հեղոյր ոպ̃ զառու ։
և այնչափ եթող՝ որ մինչև ուշաթափե
ցաւ կինն ։ Նա՛ յետ այնորիկ տարեալ
եդ ՚ի վր̃ մահճին և ասէ . կաց ՚ի վերայ
մահճիդ մինչև ստասցիս լաւ բնութ̃ի ։
և ելեալ գնաց այրն ՚ի յորս ։

Նա՛ կինն նուաղեալ ՚ի զօրութ̃է կո–
չեաց զմինն ՚ի յաղախնեացն և ասէ . փու
թեա՛ և գնա՛ առ մայրն իմ և ասա՛ ցնա



որ շու

որ շուտով եկեսցէ․ զի աՀա մեռանիմ ։
Եւ գնաց աղախինն և պատմեաց մօրն ։
Եւ իբրև լուաւ մայրն՝ եկն խնդալով
առ նա ։ Իբրև ետես աղջիկն զմայրն՝
ասէ ցնա․ ով քաղցրիկ մայր իմ․ հաղեա՛
զերծեալ եմ 'ի մեռանելոյ․ զի բազում
արիւն հեղաւ յինէն ։ Ասէ ցնա մայրն․
չասացի՞ քեզ թէ ծերք խիստ դժուա-
րանութք կու լինին։ այժմ կամիս սի-
րել զքահանայն։ Ասէ դուստրն․ սատա
նայք թող սիրեն զքահանայն այլ և զա-
մենեսեան․ այսուհետև ոչ զոք սիրեմ
բայց միայն զայրն իմ ։
Յայնժամ ասէ դպրապետն ցկայսրն․
տէր իմ արքայ 'ի միտ առեր և հաւա-
նեցար զառակս իմ։ Ասէ ցնա կայսրն․
'ի մէջ առակաւոր բանիցս զոր լուայ

այս առաւել հաճոյ թուեցաւ ինձ ։
Զի ընդունել կինն այն՝ երիս փեսայս արար
առն իւրոյ. եւ առանց կարծեաց զչորրո-
րդն կատարելոցէր զչար խորհուրդ սր
տի իւրոյ ։ Ասէ ցնա դպրապետն . մի
այն առեմ քեզ զի զգո՛յշ լինիցիս ՚ի կնոջէ
քումմէ. զի մի՛ պատահեսցէ քեզ խստա
գոյն քան զնորայն եթէ մի բանի կնոջ
քո սպանցես զորդին քո Ասէ կայսրն.
ամէն առեմ քեզ ո՛վ դպրապետ ո՛չ միւսա
նի որդին իմ այսօր երթ ՚ի խաղաղութի ։
Ասէ դպրապետն. շնորհակալ եմ քեզ
տէր իմ արքայ. որ մի առաքի իմոյ ապ-
րեցուցեր զորդին քո . եւ օրհնութի իմ
անպակաս եղիցի ՚ի վերայ քումմէ .
զայս ասացեալ դպրապետն եւ գնաց ։
Յետ այսր ամի իբրեւ լուաւ թագուհին

 Թէ

Թէ այսօր ևս ոչ մեռաւ որդի արքային․ յայնժամ եմուտ ՚ի սենեակն իւր և ժողովեաց զա̃մ զգեղեցկագոյն զգեստս իւր և զա̃մ զպիտոյսն․ և հրամայեաց ծառայից իւրոց հա̃մտել զկառս և զգրաստս զի առ հայր իւր երթիցէ ։

Իսկ վերակացուացն տեսեալ ծանուցին արքային թէ վաղիւն թագուհին գնալոց է առ հայրն իւր։ Իսկ կայսրն լուեալ զայս եմուտ ՚ի սենեակ թագուհոյն և ասէ․ ո՛վ սիրելի տիկին իմ ու՞ր կամիս գնալ։ Ասէ թագուհին․ առ հայրն իմ։ Ասէ կայսրն․ վս̃ է՞ր։ Ասէ թագուհին․ զի բարութ̃բ վայելեսցի զկեանս իմ։ Ասէ ցնա կայսրն․ ես կարծէի թէ ո՛չ զոք սիրես առաւել քան զիս․ արդ ո՛չ զատուցեալ կամիս և հեռանալ յինէն․

 Ասէ

Ասէ թագուհին. Ճշմարիտ է որ քան զիմ առածել կու սիրեմ զքեզ: Այլ վասն այնորիկ կու հեռանամ 'ի քէն, զի մի՛ ուսից զչարչարանօք մահն քո որ առնելոց է քեզ որդին քո: զի լաւ համարիմ զմահն քո 'ի հեռուստ լսել քան թէ առաջի աչաց իմոց տեսանել:

Ա՛յ զի այն քան ունկնդիր լինելոց ես զվարդապետաց որդւոյ քո, մինչև պատահեսցէ քեզ այնպէս որպէս պատահեաց ոգդաճիանոսի կայսեր: որ վասն ագահութեան իւրոյ կենդանւոյն թաղեցին զնա նախարարքն նորա. լցեալ ոսկի ընդ կոկորդանն:

Ասէ կայսրն. ո՛վ սիրելի տիկին իմ պատմեա ինձ թէ ինչ կերպիւ եղև:

Ասէ թագուհին. ես բանից քոց այլ ո՛չ հաւատամ և ո՛չ պատմեմ քեզ առակս. այլ

 'ի բաց

՚ի բաց հեռացայ ՚ի քէն։ Արդ կայսրն
քաւ լիցի քեզ առնել զայդ. և գնալ
առ հայրն քո. և զիս առանց թագուհի
թողուլ։ Արդ թագուհին ճշմարտիւ
պարտէր որդւոյ քո կորընչել և մի՛ մնալ
կենդանի թէ ես թագուհի էի կայսեր
և դուստր տիեզերընկալ արքայի. որ այսպիսի
նախատեաց զիս. որ աչօք քո տեսեր և
խոստացար սպանանել զնա և ոչ սպաներ
Արդ այժմ իրի ոչ ես հաւատամ այսու
հետև խօսից քոց զի ստախօս երևեցար.
և չէ պարտ թագաւորաց ստախօս լինել։
Արդ կայսրն. ով սիրելի տիկին իմ. ա-
մենից որ տէարք են պարտ է ունկնդիր
լինել բանից. և հաւատարիմ քննել. զի
մի թիւր գայցէ բննն և ամօթ մեծ է զլցի
Արդ որոյ աղաչեմ զքեզ զի պատմեսցես
ինձ

ինձ բան ինչ շահաւէտ և օգտակար. ոգ-
ւոյ ՚ի մէջ բանիցս այսոցիկ կարացից առ-
նել իրաւունս: Ասէ թագուհին պատ-
մեցից քեզ առակ մի այլ. բայց արդ այսու-
հետեւ մի՛ ևս լուիցես դպրապետաց քոց

Նա՛ սկսաւ ասել այսպէս:

* Հինգերորդ առակ թագուհւոյն. զոր ասաց վասն օգտաշահութեան կայսերն ագահութեան:

Ի քաղաքի միում կայր հզօր թա-
գաւոր մի. և էր անուն նորա
Օգդաւիանոս կայսր. և էր նա
ինքնակալ ոգ և դու: և էր յոյժ ագահ
և ընչասէր. և ամ ուսումք ոչ ինչ կերպի-
ւրոյցս առնէին առաջի իւր համարտայր:
ոգ դու որ հաստատես վարժապետաց նզո-
վեալ որդւոյ քո: Յորոյ ժամանակին ա-



բարին

բարին քաղաքացիքն հակառակութ՟ի և բազում թգրս թշնամի յարուցին ՚ի վր քաղաքին այնմիկ ։

Նա՛ յաւուրսն յայնոսիկ կայր ՚ի քաղաքն այն դպրապետ մի վերկիլեոս անուն. որ հռչակեալ էր իմաստութ՟ և հանճարով ընդ ամ երկիր. ևս առաւել կախարդական արուեստիւ։ Իսմանէ խնդրեցին քաղաքացիքն զի իւրով իմաստութ՟ն գտցէ հնարս ինչ որով կարասցեն ընդդէմ ունել թշնամեացն։ Եւ նա կախարդական արուեստիւն արար հնարս այսպ։ Հրամայեաց շինել աշտարակ մի. և ՚ի վր աշտարակին քանդակել զամ ազգաց պատկերս երկրօքն հանդերձ որ կայ ՚ի մէջ աշխարհիս. կերպիւ կերպիւ պատերազմիւն։ Նա՛ ՚ի միջին արար պատ

 կեր

տկեր մի որ ՚ի ձեռին իւրում ունէր
ոսկի խնծոր մի։ Եւ ազգաց պատկերքն
որ շուրջ զաշտարակաւն էին ունէին ՚ի
ձեռս իւրեանց զանկակս. և իւրաքան
չիւր պատկերք զդէմս իւրեանց յայն
երկիրն ունէին յորոյ անուանե դրօշել էին
Եւ ո՛ր երկիր որ կամէր ապստամբիլ
և հակառակ կալ այն քաղաքին յայնժամ
պատկերն այն որ յանուն նորա էր նկարել
հնչեցուցանէր զզանկակն. և զօրքն քա-
ղաքին այնու նշանաւ դիմէին ՚ի նա. և
հարկանէին զերկիրն այն մեծաւ յաղ
թութեամբ։ Եւ այսպիսի հնարիւք
ամ երկիր ամենևին ոչ իշխէին ընդդէմ
կալ այն քաղաքին. որ զաշտարակն զայն
կանգնեալ էր փիլիսոփայն վերգիլէոս
պատկերօքն հանդերձ։



Յետ

Յետ այնորիկ այլ եւ արար հնարս իմա
տասէրն վերգիլէոս. զի 'ի տեղի մի բա-
ցարձակ 'ի մէջ քաղաքին արար հուր ան
ջէր . որ միշտ աղքատք ջեռնուին ։
Եւ առ հրովն արար աղբիւր ջրոյ. զի
աղքատք ընպեսցեն եւ լուացին։
Եւ առ ընթեր նորա արար պատկեր
մի կանգուն. եւ գիր 'ի վերայ նորա այսպէս.
Թէ ով ոք հարկանէ զիս առից 'ի նմանէ
զվրէժ իմ վաղվաղակի։ Եւ պատկերն
այն եկաց այնպէս 'ի բազում ժամանակս։
Յետ այնորիկ եկն դպիր մի. եւ ընթե
ցաւ զգիրն զայն եւ ասէ. ՞ զինչ վրէժ
առնելոցես դու յինէն ։
Ես գիտեմ թէ հարից եւ կործանեցից
զքեզ՝ գտանեմ 'ի ներքոյ ոտից քոց գան
ձըս բազումս ։ եւ վերացուցեալ զձեռն՝

 եհար

եհար զպատկերն։ Յորժամ եհար ան-
կաւ պատկերն. հուրն շիջաւ. ջուրն ցա-
մաքեցաւ. և գանձ ոչ գտաւ։ Եւ տե-
սեալ զայն աղքատացն անխնայելով առեն.
տացէ տր զի նա ինքն կորիցէ որ կորոյս
զպատկերս. և եհան ՚ի մէնջ զայնպիսի
խնդութիւնս մեր։

Յետ այնորիկ ժողովեցան ՚ի միասին
թագաւորք երեք. որ մեծ նեղութիւն
կրէին ՚ի յայն քաղաքէն յորում աշտա-
րակն կայր. և ասեն՝ Ո՞րպիսի բանիւք
կարեմք առնուլ զվրէժս անտի։

Եւ ոմանք ՚ի նոցանէ ասէին անշահէ
մեզ փորձել. զի որ քան աշտարակն այն
կայ պատկերոջն, ոչ ինչ կ̃րսցուք առնել։
Եւ լուեալ զայս զինուորք երեք և ասեն
զի՞նչ կամիք տալ մեզ եթէ կործանես-

 ցուք

ցուք զաշտարակն հանդերձ պատկերօքն
և դուք կարասջիք պատերազմիլ ընդ նմա։
Ասեն ցնա թագաւորքն. զինչ որ կամի
ցիք տամք ձեզ։ Ասեն զինուորքն. արդ
տուք մեզ յառաջմէ չորս ամսան լի ոսկի
զի երթիցուք մեք ՚ի քաղաքն այն. և
յորժամ կործանեսցուք զաշտարակն յայն
ժամ կամք ձեր է զոր ինչ արժանն է
տուք մեզ։ Ասեն թագաւորքն. զինչ
կամիք առնել զայն չորս ամսան ոսկին։
Ասեն զինուորքն. զայս Դ ամսան ոսկին
հնարիւք նոցա տամք և ապա կարողանամք
կործանել զաշտարակն զայն։ Յայնժամ
ետուն նոցա չորս ամսան լի ոսկի։

Յետ այնորիկ առեալ զինուորացն զչորս
ամսան ոսկին եկին ՚ի քաղաքն այն. և ունէր
քաղաքն այն չորս դուռն։ և թաղեցին

 դաշտ

գաղտ զամէն մէկ աման 'ի մէկ մէկ կգուռն

Յետոյ մտեալ 'ի քաղաքն գնացին առ կայսրն. և մեծաւ պատուով ողջունեցին զկայսրն։ Ասէ ցնոսա կայսրն. յաղագս որոյ իրաց եկեալ էք դուք աստ։

Ասեն զինուորքն. տէր արքայ մեք յերկրէ հեռաստանէ եմք. և մեք եմք երազատեալք. և երազն մեր ոչ այլ ինչ ցուցանէ, բայց միայն ոսկի և գանձս թաղեալ 'ի ներքոյ երկրի գտանեմք։ Իբր լուեալ զհամբաւ բարերարութեանդ քո եկեալ եմք առ քեզ. և եթէ հաճոյ թուեսցի տն մերում արքայի ծառայել մեզ ծառայեսցուք առաջի քո։ Ասէ կայսրն նախ փորձեմ զձեզ. և եթէ գտանիցեմ ուղղութիւն 'ի ձեզ պարգևս մեծամեծս առնուցուք յինէն։ Ասեն զինուորքն. պարգևս ոչ

խնդրեմք ՚ի քէն. այլ միայն զկէս ոսկւոյն
զոր գտանեմք ։ Ասէ կայսրն. բարի է
զոր առնէքդ. և կոչեաց զնոսա յընթրիս ։
Եւ յետ ընթրեացն ասեն ցկայսրն.
տէր եթէ կամիս ՚ի գիշերիս այս երի
ցագոյնն մեր հայեսցի երազ. և վաղիւն
պատմեսցուք քեզ ։ Ասէ կայսրն գնացէք
խաղաղութ. տացէ ած ձեզ երազ բարի.
զի կարասցուք գտանել զանձս ։
Եւ նոքա գնացին ուրախութ յօթևանս
իւրեանց ծաղր առնելով զկայսրն ։
Եւ ընդ առաւօտն եկին առ կայսրն.
և ասէ երիցագոյնն ՚ի նոցանէ ։ Արքայ
յաւիտեան կաց. տեսի երազ բարի զի
ամանս մի լի՛ ոսկով թաղեալ կայ առաջի
դրան քաղաքիս. երթիցուք անդր.
գտցէ և տէրութիւն քո ընդ մեզ ։

 Ասէ

Ասէ կայսրն երթայց և տեսից թէ
ճշմարիտ իցէ զոր ասէքդ։ Եւ բերէ եկին
'ի դուռն քաղաքին, ասեն զինուորք ցկայ
սրն հրամայեա տէր զի բրեսցեն զտեղիս
զայս։ Եւ յորժամ բրեցին հանին զոսկին
զոր ինքեանք թաղեալ էին։ զոր տեսեալ
կայսրն ուրախ եղև յոյժ. և ետ նոցա զկէս
ոսկւոյն։ Յայնժամ ասէ երկրորդն ցկայ
սրն տէր իմ արքայ քոյին աղօթիւքդ՝
վաղիւն ես հայեցեմ երազ։ Ասէ կայսրն
տացէ տէր ած ձեզ երազ բարի։ Եւ
ընդ առաւօտն եկեալ առ կայսրն և ասեն
յերկրորդում դուռն այլ քաղաքիս կայ
սման ինչ լի՛ ոսկով։ Եւ ելեալ կայսրն
գնացին 'ի միասին 'ի տեղին այն. և եցոյց
կայսերն զտեղին ոսկւոյն։ Եւ կայսրն
հրամայեաց բրել զտեղին այն. և յորժամ

թրեցին նոյնժամայն հանին զսակին զոր ինքեանք թաղեալ էին։ Եւ տեսեալ կայսրն ուրախ եղև յոյժ. և ետուն զկէս ոսկոյն։ Յայնժամ առէ կրսերագոյն զեն ոճորն որէ երրորդն. տէր իմ արքայ ՚ի գիշերիս այս ես հայեցայց երազ։ Ասէ կայսրն. տացէ ձեզ տր ած բարի երազ. և օրհնեալ է ժամն այն որ դուք եկիք աստ։ Եւ ընդ առաւօտն եկին առ կայսրն և ասեն արքայ յաւիտեան կաց. գանձ բազում կայ ՚ի յերկրի քում։ Ասէ արքայն որպէս։ Ասեն զինուորքն. յերրորդում և ՚ի չորրորդում դրունքն քաղաքիս կան ամանք լիք ոսկւով։ Ասէ կայսրն՝ երթիցուք և տեսցուք թէ ճշմարիտ է։ Ասեն զինուորքն. այս գայցէ տրուիդ քո ընդ մեզ։ Եւ իբրև եկին ՚ի դուռն



Երրորդ

երրորդ բրեցին եւ հանեցին աման լի ոսկով ։
Եւ գնացին ի չորրորդ դուռն, անտի այլ բրել հանեցին աման լի ոսկով. եւ ուրախացաւ թագաւորն յոյժ. եւ ետուն զկէսն։ Եւ ասէ կայսրն ցխորհրդսն իւր. ոչ երբէք լուեալ է իմ կամ տեսեալ այր արդարախօս որպէս զդա։
Եւ նոքա առեալ զկէսս ոսկոյն գնացին յօթեւանս իւրեանց։ Եւ ի վաղիւն կոչեաց զնոսա կայսրն ի յընթրիս իւր եւ մեծարեաց զնոսա։ Եւ յետ բազում խօսից ասեն զինուորքն ցկայսրն. մինչեւ ցայսվայր տեսաք իւրաքանչիւրոք զիւր երազ. արդ այժմ կամօքն քոյ ի միասին երազ մի հայեսցուք եւ ի ձեռն երազոյն այնորիկ ունիմք յոյս որ գտանեմք զանձս բազումս։
Ասէ կայսրն. տացէ ձեզ տր ած երազ բարի եւ շնորհաւոր ։



Եւ

Եւ նոքա ելեալ յերեսաց արքային գնացին ուրախութեամբ ծաղր առնելով զկայսրն: Եւ ընդ առաւօտն եկին առ կայսրն և ասեն ցնա. Արքայ յաւիտեան կաց. և աւետիս տեառն արքային մերոյ: Ասէ կայսրն. Որպիսի: Ասեն զինաւորքն. տեսաք երազ կերպիւ նման միմեանց. զի ՚ի ներքոյ հիման այն աշտարակին յորում պատկերքն են՝ անչափ ոսկի կայ որ ՚ի ցիր և ՚ի համարք մտնուլ անկար է. և որչափ գրաստ որ կայ ՚ի քաղաքս, միայնգամայն բառնալ ոչ կարեն: Ասէ կայսրն. քաւ լիցի ինձ կործանել զաշտարակն զայն. որ պատկերօքն զգուշացուցանէ զմեզ ՚ի թշնամեաց մերոց: Ասեն զինաւորքն. տէր արքայ երբ գտեր զմեզ սուտս առաջի քո: Ասէ կայսրն. ոչ երբէք ա-

ռեմ.

սեմ թէ սուտ էք. այլ միշտ արդարախօս
և ճշմարիտ: Ասեն զինուորքն տ̅ր արքայ
հաճոյ մեզ. և մեք հնարիւք փորեմք
զբոլորս աշտարակին. և առանց կործան
ման և վնասու առնումք զսկին անտի:
Բայց պարտ է ՚ի գիշերի առնել զայն
զի մի տեսցեն քաղաքացիքն և ուժգնութ̅
եկեալ ՚ի վերայ մեր՝ առցեն զսկին ՚ի
ձեռաց մերոց: Ասէ կայսրն. բարի է
զոր ասէքդ. երթայք շնորհիւն տ̅յ. և
ես ընդ առաւօտն եկից առ ձեզ:
Եւ նոքա ուրախութեամբ գնացին:
Եւ ՚ի մէջ գիշերին սկսան փորել.
մինչ զի աշտ̅րկն մերձեցաւ ՚ի կործանումն:
Յետ այնորիկ լուցին հուր զաշտ̅րկաւն.
և ինքեանք փախեան ՚ի քաղաքէն. և
սկսաւ այրել աշտ̅րկն մինչև կործանեցաւ



Եւ

Եւ ընդ առաւօտն յորժամ տեսին մե-
ծամեծքն զաշտարակն կործանեալ տըրտը
մեցան յոյժ ։ և գնացեալ առ կայսրն՝ ասեն
ցնա․ տէր վ͞ս քո կործանեցաւ աշտ͞րկս
այս․ յորմէ ունէաք զգուշութ͞ի ՚ի թշնամեաց
Ասէ կայսրն․ երեք խաբեբայ արք
եկեալ ասացին ինձ․ եթէ բազում ոսկի
կայ ՚ի ներքոյ հիման աշտարակին․ որ
չափ որ ամ͞ գրաստ կայ ՚ի քաղաքիս՝ միան
գամայն բառնալ ոչ կարեն զհամայնն ։
Եւ ուխտեցին ինձ թէ առանց կործա
նելոյ աշտարակին՝ հանեմք զոսկին ՚ի
ներքուստ իմաստութ͞բ մերով ։ Ասեն
ցնա նախարարքն և քաղաքացիքն․ եթէ
այդպիսի ցանկութ͞ն ունիս ոսկւոյ , այժմ
կատարեսցուք զցանկութ͞ն քո որ կորու
սեր վասն այն զգուշացուցանօղն մեր ՚ի
թշնա

թշնամեաց մերոց ։ Եւ նոյն ժամայն
յափշտակեցին զկայսրն ․ կռեցին ընդ-
կոկորդն նորա ոսկի ․ և կենդանոյն թա-
ղեցին զնա ։ Յետ այնորիկ ոչ բազում
աւուրց անցելոյ 'ի վերայ, եկեալ թշնամիքն
պատերազմեցան ընդ քաղաքացիսն և
յաղթեցին նոցա ։

Յայնժամ ասէ թագուհին ցկայսրն ․
տէր արքայ 'ի միտ առեր զոր ինչ ասացի
քեզ ։ Ասէ կայսրն ․ այո 'ի միտ առի ․
բայց պատմեա զէութիւն աշտարակին ։
Ասէ թագուհին ․ աշտարակն այն պատ-
կերօքն անձն և զօրութիւն քոյ ․ որ ոչ
ոք կարէ 'ի թշնամեաց քոց առնել քեզ
վնաս ։ Տեսանես զնզովեալ որդւոյ քո
զդպրոցոքն որ խորհին կործանել զքեզ
'ի ձեռն սուտ առակացն իւրեանց որ

պատմին քեզ ։ Եւ՛ դու մեծաւ՛ ունին
դրուք լսես նոցա՝ զոր սկսեալ են բերել
շուրջ զաշտարակաւ՛ մարմնոյ քո ։
Եւ՛ յորժամ տեսանիցեն զքեզ զանզգուշ
յայնժամ սպանել կործանիցեն զքեզ ։
Ասէ կայսրն. ով Թագուհի լաւ՛ առակ
ասացեր ինձ. այսուհետև ոչ կարեն կոր
ծանել զիս ումեք զաշտարակն զայն. մինչ որոյ
աշխատանաց այսօր մեռանիցին նոքա ։
Ասէ Թագուհին. եթէ այդպէս արաս
ցես իմաստուք առնես . և կացցես դու
երկար 'ի կեանս և հզօր եղիցիս ։

* ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՓԱՆԻԼՆ ԶՈՐԴԻՆ ԱՐՔԱՅԻՆ 'Ի ՄԱՀ. ԵՒ ԶԱՒՀԱՍԱՆԵԼ ՅՕՒԷՏ ՓՈՂՐԱՂԷՓԻՆ ԵՒ ԱՌԱԿՕՔ ԾԻՐԻԼՆ ՆՈՐԱ ։

Ի վաղիւն ելեալ կայսրն և նստաւ՛ 'ի գահոյսն իւր. և իսկոյն կոչեաց

 զդահճս

զդահճապետն և ասէ․ հա՛ն զորդին իմ
՚ի բանտէն․ և առժամայն տա՛ր սպան զնա
առանց պատճառանաց։ Եւ՛ եկեալ դահ
ճապետն էհան զորդի արքային ՚ի բան
տէն և հրամայեաց կապել զձեռսն ՚ի
յետոյ։ Եւ՛ մտանէ տիկին ընդ առաջն
ձայնէր և գնայր ասելով․ եթէ ոք մե-
ղանչել կամի ընդ յետնամորն՝ այսպիսի
մահուամբ մեռանի։ Եւ՛ յորժամ լուան
ժողովուրդքն եթէ այսօր եւս մատնեցի
որդի արքային ՚ի մահ, սկսան լալ․ և
ողբալով ասէին ո՛հ ո՛հ աւա՛ղ և աւա՛ղ
որ զուր կու գնայ ՚ի մահ։ Եւ՛ մինչ
դեռ տանէին եհաս հինգ ե՛րդ դպրապետն․
որում անուն էր յովսէփոս սրընթաց
երիվարաւն։ Եւ՛ տեսեալ զորդի ար-
քային այնպիսի խեղճ և ողորմելի սաս-

 տեաց

տեաց դահճապետին և ասէ. ընդէ՞ր այդ-
պէս կապերէք զորդի արքային. և ե-
տուր արձակել զնա: Եւ որդի արքային
տեսեալ զվարժապետն իւր երկիրպագ-
նմա. իբր թէ կամի ասել յիշեա՛ զիս
առաջի հօր իմոյ. զի ահա՛ զուր կու գնամ
'ի մահ: Եւ ժողովուրդքն առաւել
եւս աղաչէին զդպրապետն զի շուտով
երթիցէ առ կայսրն և աղաչեսցէ զորդի
արքային: Ասէ դպրապետն դահճապետին
կաց դու աստ և մի շտապիր սպանանել
զդա. զի յոյս ունիմ առ ա͞ծ որ այսօր ապ-
րեցուցանեմ զդա: Եւ զայս ասացեալ
գնաց 'ի պալատն. և եմուտ առ կայսրն.
և հեզութեամբ ողջունեաց զնա:
Ասէ կայսրն. տացէ ա͞ծ քեզ չարիք զի
ունիցիս ընկերօքդ հանդերձ. որ կար-

 ծէք

Ծնէք նենգել զիս ոմն այն երեք զենձուրքն
նենգեցին ումեմն կայսեր. և կործանեցին
զաշտարակն պատկէ բոքն։ Ասէ դպրապետն
տէր իմ արքայ նոքա ոմն նենգեցին եւ ոչ
գիտեմ այլ զայսգ իտեմ որ քո թ̃գրուեգ
ես ոչ եմ ծառայն լայնպէս զորդու կործես
Ասէ կայսրն ով անիմաստ ես տու զորդին
իմ 'ի ձեռք յստակ և լաւ զրուցանել զի-
մաստուն հանճարն. փոխանակ իմաստուն
յաւել չարիս իսկ եւ զայս որ կամեցաւ բըռ-
նադատել և աղել զկինն իմ։ Ասէ
դպրապետն. խօսիլն որդոյ քո 'ի ձեռն
իւրէ. թէ խօսի և թէ լռէ։ բայց
լսելոցես զձայնն յետ երիցաւուրցն թէ
մինացէ կենդանի։ Եւ որ ասացեր
թէ կամեցաւ բռնադատել զկինն իմ,
այդմ ես ոչ հաւատամ. և միտք իմ ոչ


վկայէ

վկայէ. և կին իմաստուն այդպիսի բան
ո՛չ խօսի. զի որդիեակն քո իմաստուն
զօրով այդպիսի անպատեհ բան գործէ՞.
քա՛ւ լիցի ՚ի նմանէ: Այլ զայս ասեմ
քեզ. եթէ տացես սպանանել զորդիեկն
քո վ(ասն) բանի կնոջ քո՝ դառնագոյն պա-
տահեսցէ քեզ քան որ պատահեաց բոք-
րատեսի ընդ կալենոսի թուին իւրոյ.
որ ՚ի պիտոյական ժամուն եղև վրէժ յնդ
՚ի վ(ասն) բոքրատեսի: Ասէ կայսրն զայդ-
ես ևս կամէի լսել վ(ասն) բոքրատես թէ
ո՞պ եղև: Ասէ դպրապետն. եթէ կամիս
լսել զբոքրատեսի առակն, դարձո՛ զոր-
դին քո ՚ի բանտ. և ես պատմեցից զբանս
իմ. յայնժամ խղճմտանք քո արասցէ դատ
թէ սպանելոց ես՝ թէ ոչ:
Ապա հրամայեաց կայսրն դարձուցանել

զործքն իւր 'ի բանտ՝ մինչև պատմեսցէ
դպրապետն զառակն ։

Եւ սկսաւ առակ այսպէս ։

********

*Առակ հինգերորդ դպրապետին. զոր ասաց ճգնա բա-
փեան բժշկին. և կալենոսի թոռին նորա:

Ի քաղաքի միում կայր ոմն իմաս
տասէր. որ էր անուանի յոյժ
որում անունն էր բուքրատէս
և էր ճարտար բժիշկ. որև էանց զամենե
քումբք արուեստիւն իւրով: Եւ ու-
նէր թոռն մի. որում անունն էր կալենոս.
և յոյժ սիրէր զնա: Եւ կալենոսն. այն
յոյժ սրամիտ էր. և հանապազ կասկած էր
արուեստին զի կարասցէ ուսանիլ 'ի պապ
ուն իւրմէ: Եւ բուքրատէս տեսեալ
զջանն նորա՝ թագուցանէր 'ի նմանէ

 զարուես

զարուեստն. զի երկնչէր ՚ի սրտէ մտաց
նորա թէ ուսանիցի զարուեստն բժշկութե՟
և անցցէ զնովաւ ուսմամբն իւրով:

Եւ կալենոս ծանեաւ զկամս պապոյն
իւրոյ. և առաւելս ջան եդեալ ուսաւ
զարհ՟. և եղև կատարեալ բժիշկ. և հայէր
բոքրատեսի որ ոչ հաճոյանայր ինքն նմա
Եւ ՚ի ժամանակին այնմիկ թագաւորն
մաճարաց առաքեաց հրեշտակս առ բոք
րատէս. զի եկեսցէ առնա և բժշկեսցէ
զորդի իւր: Իսկ բոքրատէս ոչ կամեցաւ
գնալ պատճառելով զծերութին. այլ գը
րեաց թուղթ և առաքեաց զթոռն իւր
զկալենոս փոխանակ իւր. զի գիտէր զնա
կատարեալ արհեստիւ բժշկութեան:
Որ բժշկեսցէ զորդի արքային. կամ
թէ ոչ կարասցէ բժշկել սպանցի անդ.:

Որեւ ուղեւորեցաւ կալէնոս և գնաց յեր
կիրն Մաճառաց. և մտեալ առ Թագաւորն
Մեծաւ պատուով ողջունեաց զնա ։
Եւ Թգրն բազում հարկիս արար կա–
լենոսի. բայց սքանչացաւ մտ ոչ գալոյն
բոքրատէսի ։ Եւ կալենոս պտսխանի
ետ և ասէ. ծերէ և բան ծանր կայ ՚ի
մտ. վս այն ոչ կարաց գալ ։ այլ փոխանակ
իւր առաքեաց զիս. և ես շնորհիւն այ
բժշկեցից զորդին քո ։ և հաճոյ եղև
Թագաւորին պատասխանին կալենոսի ։
Եւ եմուտ կալենոս առ որդի արքային.
և իբրև ետես զգոյն նորա, ասէ ցԹգրն
և ցԹագուհին. պիտոյ է զի տեսից զեր
կուցունցդ այլ զջուր. զի ես լաւագոյն
կարացից ճանաչել զպատճառ հիւանդութե
մանկանս ։ և Թագուհին խոստացաւ առ–

 նել

նել զայն 'ի վաղուէ՛ն։ Ո՛ւ իբրեւ ետես
զջուր երկուցունցն, ասէ կալեննոս ցթա-
գուհին. հրամայեա՛ աղախնեցդ արտաքս
ելանել. և ունիմ բան ծածուկ ասել
քեզ։ և արար թագուհին վաղվաղակի։
Ասէ կալեննոս. ո՛վ թագուհի աղաչեմ
զքեզ արդ ասա՛ ինձ ըզ ճշմարիտն ո՛վ է
հայր մանկանս այսորիկ։ Ասէ թագուհին
հայր գորատէր իմ արքա՛յ է։ Ասէ կա-
լեննոս. ո՛չ է արքայն հայր մանկանս։
Ասէ թագուհին. եթէ գիտենայի զայդ
ուղիղ սրտէ ասացեալ գլուխ քո 'ի քէն
հատեալ լինէր։ Ասէ կալեննոս. ես ըզ
ճշմարիտն կասեմ զի ո՛չ է թագաւո՛րն հայր
սորա։ բայց ես եկեալ եմ աստ զի պարգև
օք պատուէ՛իցիմ. և ո՛չ թէ գլխատիցիմ։
եթէ ես աստ ունիմ գլխատիլ յանձն
առնեմ

առնեմ զքեզ տ͞ր ու գնամ. և դու քզգտէք
ձեզ զի մայլ բժիշկ: Լուեալ թագուհոյն
զայս և ասէ. ով սիրելի բժիշկ մի՛ գնար.
զի ունիմ 'ի քեզ պատմել զծածուկ խոր-
հուրդ իմ. բայց զիս մի՛ խայտառակեսցես
Ասէ կալենոս. քա՛ւ լիցի ով թագուհի
մ͞ն էր խայտառակեմ զքեզ: Ասէ թա-
գուհին. 'ի ժամանակի միում պորտանկա
ցեալ թագաւորին գեսպաններն առ մեզ.
և յազգ մանէ չարին 'ի նմանէ յղացայ ըզ
մանուկս զայս: Ասէ կալենոս Ճշմարիտ է
զոր ասեսդ: մի՛ երկնչիր այսուհետև.
կամօքն տ͞յ բժշկեցից զորդին քո: Յայն
ժամ եբեր մանկանն ուտել միս ցլոյ և ջուր
ըմպելոյ. և ողջացաւ մանուկն: Եւ իբ-
րև ետես թ͞գրն զորդին իւր ողջացեալ
յայնժամ խիլաթեաց զբժիշկն. և ես ա-

 ռաւել

ւանել թագուհին խիլաթեաց զնա ։
Եւ կալենոս գաղտ պատուիրեց թա-
գուհւոյն. թէ կուզես որ մանուկն հնազ
առողջ մնայ մի ցլոյ կերցուր. և ջուր
ըմպել լոյտուր. զի այլ կերակուր չէ պարտ
զորա ուտել ։ Եւ կալենոս ողջունել
զթգրն և զթագուհին, և ել՝ ի ճանապարհ
և եկն առ բոքրատէս պապն իւր ։ Եւ
բոքրատէս համբուրեաց զկալենոսն և
ասէ. ողջացուցեր զմանուկն ։ Ասէ կա-
լենոս. այո ողջացուցի ։ Ասէ բոքրատէս.
ի՞նչ ցաւ ունէր ։ Ասէ կալենոս. ես ըզ-
ցաւն ոչ գիտեմ. այլ ետու նմա կերա-
կուր մի ցլու. և ջուր ՚ի յարբումն ։
Ասէ բոքրատէս. մի թէ բոզ էր մայր
նորա ։ ասէ կալենոս այո ։ Յայնժամ
բոքարատէս նախանձեցաւ կալենոսին և

 ասէ

ասէ ընդ միտս իւր․ եթէ սամիայ կեն
դանի ի մանուանն կորնչի․ արդ պա՛րտ է
սմա կորնչել և մի՛ ինձ։ և յայնմ օրէ իւր֊
հերբստանանել ըզնա։ Աստորոյ և յաւուր
միում կամեցաւ գնալ ՚ի պարտէզն իւր
բոքրատէս մի ծաղկանց․ և կոչեաց ըզ
կալենոս և ասէ․ սիրելի որդեակ իմ, եկ
երթիցուք ՚ի պարտէզն ժողովել զծաղ
կունս։ ասէ կալենոս ահաւասիկ եմ հայր
իմ։ Եւ ելեալ գնացին երկուքեանն իմիասին
Եւ իբրև մտին ՚ի պարտէզն ասէ բոք
րատէս․ եթէ հոտ ծաղկի իմանամ լաւ
և զօրաւոր, խոնարհեաց և կտրեաց զնա
՚ի գետնոյ ։ և կալենոս արար այնպէս ։
Եւ իբրև գնացին ևս ՚ի ներքսագոյն
պարտէզն ասէ բոքրատէս․ կայ այս ինչ
ծաղկի հոտ որ գոյնն ընդ ակնոյէ․ որս


նեմ

նեփ եւ գիտ զնա զի թագուոր իբրաց պիտոյէ։
եւ կալեննոս զտեալ եւ խոնարհեցաւ զե
հասոյն զծաղիկն։ Իսկ թագաւորն հա–
նեալ զնետն ՚ի հեռաստ կողմանէն եհար
կաղենսաի· որ եմուտ մինչեւ ՚ի սիրտն· եւ
նոյնժամայն մեռաւ ՚ի տեղւոյն յայնմիկ։
Յե՛տ ոչ թագուոր աւուրց հիւանդա
ցաւ թագաւորս մինչեւ ՚ի մահ· եւ էր
փորացաւ· եւ ոտք ջուր հեզոյր որովայնն·
եւ անկեալ դնէր ՚ի մահիճս· եւ ոչ կարէր
բժշկել զինքն։ Յե՛տ լուեալ աշակերտն
նր, եկին առ թագաւորս զի օգնեսցեն
վարժապետին իւրեանց· եւ ոչ կարացին
օգնել ինչ։ Ասէ թագաւորս աշակերտաց
իւրոց· բերէք ինձ ամանս լի ջրով։ Եւնոքա
բերին։ եւ ասէ ածէք ՚ի ներքս յայս ինչ
ծաղկանց զոր ասացի ձեզ։ Եւնոքա լցին



ասէ

և ասէ. ծակեցէք զսամանն և արարէք
մինչև հարիւր ծակս զի հեղցի ջուրն։
և արարին այնպէս և ոչ հեղաւ ջուրն։
Նա՛ ասէ բոքրատէս ահա՛ որդեակք իմ
վրէժխնդրութիւն հաս ինձ. որ յայտնի տեսանէք
զի է հարիւր ծակս լայն և ընդարձակ. և
մի զօրութեանց ծաղկանցն որ ՚ի ներքս կայ՝
չթողուն որ կաթ մի ջուր ելանէ։
Արդ ես ոչ եթէ միայն զայդ ծաղկուն
սրդ. այլ և ես ՚ի բազում ծաղկանց արբել
եմ դեղ յաղագս փարատելոյ զցաւս իմ.
և դուք ամենեքեան ես աշխատել ոչ
կարացէք բժշկել զիս ՚ի ցաւէս։
Սիրելի թոռն իմ կալենոս զոր սպանանի
եթէ էր նա կենդանի յոյժ բարի լինէր
ինձ. և ողջացուցանէր զիս. ահա վրէժխն
դրութիւն որ եկն ՚ի վերայ իմ։ և զայս ասացեալ


դարձոյց

գործոյց զի ընտանիք իւրոյն եւ համ զոգ ին
Ասէ դպրապետն կայսրն. տէր ՚ի միտ
առեր զասացեալս իմ: Ասէ կայսրն այո
լաւ ՚ի միտ առի: Ասէ դպրապետն. ինչ
լաւ էր եթէ կալեալս կենդանի մնացեալ էր:
Ասէ կայսրն. ապաքէն յոյժ բարի լինե
լոց էր զի կալեալս թէ կենդանի լինէր
բռնաւորէս դեռեւս ոչ մեռանէր :
Սո՞ արդար դատաստանին այ ըսպեզա
նիքն ոչ եղեն օգնական. եւ ոչ կարացին
աշակերտքն փրկել զնա ՚ի հիւանդութենէն
Ասէ դպրապետն. յաղագս որոյ ասեմ
քեզ ով արքայ զի խստագոյն պատահեսցէ
քեզ եթէ վս բանի կնոջ քո սպանցես
զմխամօ բորդ ինքո. որ ՚ի դէպ ժամու օգ—
նեսցէ քեզ Ասէ կայսրն. ամէն ասեմ
քեզ ոչ մեռանի այսօր որդին իմ


Ասէ

Ասէ գպրապետն. եթէ զայդ արասցես բարի լինելոց է քեզ. որ վ̃ առակի իմոյ ապրեցուցեր զորդին քո. և ես շնորհակալեմ քեզ. և օրհնութի̃ իմ անպակաս եղիցի 'ի քեզանէ։ զայս ասաց գպրապետն

և ողջունեալ զկայսրն գնաց։

Իբրև լուաւ թագուհին թէ այսօր և ոչ սպանաւ որդի արքային իսկոյն պատառեաց ըզ պատմուճան իւր ճչելով. և դժգոհալով զարքայէ ասէ. վայ է ինձ որ եկեալ եղէ ես 'ի սահման այս. և թէ ո՞րպէս է թագաւորութի̃ 'ի տան հօր իմոյ. և ես աստ միայն կամ 'ի տրտմութիս և 'ի նախատինս։ Իբ՟ լուեալ կայսրըն զաղաղակ թագուհոյն եմուտ առ նա և ասէ. սիրելի տիկին իմ, պատճառն ինչ է որ այդչափ տրտմեցուցեր ես զանձն քո. և ո՛չ



դադա

գագարես ՚ի լալոյդ։ Ասէ Թագուհին
զի՞ որպ կարացից լռել. զի անուանեալ
դուստր թգրի և կին կայսեր. և կրեցի
այսքան նախատինս ՚ի ներքոյ ձեռաց քոց.
և աղաղակեցի առ քեզ այսքան և դու
բնաւ ինձ ոչ խղճացեր։

Ասէ կայսրն. վասն էր ասես զայդ. և ինչ
պակաս է քեզ։ Ասէ Թագուհին. մի թէ
ոչ գիտես որ ինչ արար ինձ նզովեալ որդին
քո. և դու աչօք քո տեսեր որև վկայ
իսկ պիտոյ չէ. և զի խոստացար ինձ և
հաւատացուցեր զիս թէ կորուսանեմ
զնա. և եւս ոչ կարացի ընդունիլ զայդ առ
՚ի քէն. զի առնէիր զկամս իմ։ Ասէ
կայսրն. ով Թագուհի ոչ գիտեմ ես թէ
զինչ արարից. շաբաթ մի է որ դու ջա-
նաս ըսպանանել զորդին իմ, և դպրպտքն

 ջանան

ջանան ապրեցուցանել զնա. և ես ոչ գի-
տեմ թէ յոր կողմն դառնիմ. և որ է ՚ի
ձէնջ ճշմարիտն. ես ոչ կարացից իմանալ:
Ասէ Թագաւորին. դու առաւել հաւա-
տաս դպրապետացդ քոց՝ քան ինձ. բայց պա-
տահեսցէ քեզ այնպէս՝ որպէս պատահեաց
Թագաւորին Մծ. յիշխանէ Լուրմէ. որ էր
սենեկապետ նր: Ասէ Կայսրն. աղաչեմ
զքեզ ով Թագաւոր՝ պատմեա ինձ զառակդ
զայդ. զի և ես կարացից շահել բան ՚ի
քեզանէ: Եթէ համանիմ առակիդ՝ առ
ժամայն տամ սպանանել զնա: Ասէ Թա-
գաւորին. զոր ինչ առնեմ ես ըստ կամաց
քոց, բայց դու գիմ կամք ոչ երբէք հա-
ճեցուցանես: Բայց աղաչեմ զքեզ զի
լաւ հայեսցիս զխօսս իմ. և այլ մի՛ ունկն
դիր լինիցիս դպրցն որդւոյ քո: Եւ սկսա-
ասել այսպէս:  Աեց

*Վ Էփեսոսի տառ Թագաւորոյն զոր առաց ժամանակ գր գ-
շէրտ Թագաւորին. և ժամանակ կնոջ սենեկապետի նորին :

Ի քաղաքին մէռում կայր Թգր ոմն ջրգողեալ և անմաքուր . և կանայքն ոչ կամէին գնալ առ նա այլ արհամարհէին զնա : Եւ Թգ՛րն այն խորհեցաւ առնուլ բռնութե ՚ի հռոմայ զմարմինքն սբց առաքելոցն պետրոսի և պօղոսի վս բժշկութե իւրոյ: Եւ յոր ժամ ել ՚ի ճանապարհ և եկն ՚ի քաղաքմի, կոչեաց զսենեկապետն իւր որ էր յոյժ պատուական նմա և ասէ : Ո՛վ սիրելի սենեկապետ. ՚ի քեզնէ բան մի խնդրեցից ոչ գիտեմ թէ կարող ես կատարել : Ասէ սենեկապետն. հրամայեա տէր իմ արքայ՝ և ես առժամայն կատարեցից : Ասէ արքայն. խնդրեա կին մի գեղեցիկ



-ւնդ

ընդ որում ես ննջեցից 'ի գիշերիս։

Ասէ սեննեկապետն. տէ՞ր կանայք ամ գիտեն զի չրգողեալ և ուռուցեալ ես դու. վ̃ այն ո՛չ կամին գալ առ քեզ. եթէ ոչ տացես մեծամեծ պարգևս։ Ասէ թագաւորն. մի թէ ո՞չ լիցէ իմ մեծութի. խնդրեսցէ կինն այն՝ զինչ և կամեսցի. և ես տաց նմա մինչև ՟Ռ դահեկան։

Եւ սեննեկապետն այն՝ էր ագահ և արծաթասէր. վասն որոյ և լեալ յերեսաց արքային՝ եկն առ կինն իւր և ասէ. տիկին իմ սիրելի՝ այժմ 'ի ձեռս քո է հաճոյն քո և կամք. եթէ կամեսցիս 'ի գիշերիս յայսմիկ առնուցուս ՟Ռ դահեկան զի կինն էր գեղեցիկ յոյժ։ Ասէ կինն. պատմեա ինձ թէ ո՞րպիսի իրօք։ Ասէ այրն. տէրն իմ արքայ խնդրէ կին մի ու-



նել

նել առ իւր 'ի գիշերիս . և զի գիտես
դու որ անմաքուր է . և կանայք ոչ կամին
գնալ առ նա . և ինձ խոստացաւ տալ ռ̅
դահեկանս . վս̄ որոյ սիրելի իմ տարայց
զքեզ 'ի մահիճ նր̄ 'ի գիշերիս . և ընդ
առաւօտն ելեալ գայցես . և 'ի մի գիշերի
շահիս հազար դահեկանս : Ասէ կինն.
և թէպէտ չեցէր ընդոշեալ՝ այլ մաքուր
եւ իցէ՝ քաւ լիցի ինձ պղծել զայդ ա-
ռաջի այ̄, և անկանիլ 'ի մեղս մեծամեծս:
Ասէ այրն . երդնում յա̄ծ՝ եթէ ոչ
արարից ես զկամս իմ, ոչ ունիս յինէն բա-
րու ի զա̄մ աւուրս կենաց իմոց: Եւ կինն
լուեալ զայս՝ երկեաւ յոյժ . և առ ահուն
խոստացաւ նմա զանձն իւր ակամայ կամօք:
Եւ երկեալ սենեկապետն առ թգ̄ւրն
և ասէ . տէր՝ կալայ կին մի 'ի վարձու
 գեղեցիկ

գեղեցիկ յոյժ. և կամի զի տայցես ռ̅ գա-
հեկանս: այլ և ոչ կամի գալ ՚ի ցերեկի.
այլ ՚ի գիշերի կամի գալ՝ և ընդ առա-
ւօտն կանուխ գնալ. զի մի՛ ոք գիտասցէ զնա
Ասէ ցնա Թագաւորն. խիստ բարի:
Եւ իբրև երեկոյ եղև՝ եբեր սենե-
կապետն զկինն իւր ՚ի մահիճս Թգ̅ւորին.
և փակեալ զդրունսն՝ ել և գնաց: Եւ
մտեալ Թագաւորն առ նմա ՚ի մահիճն՝
զարմանս ետես ՚ի նմանէ: Եւ ՚ի հաւա-
խօսին՝ եկեալ սենեկապետն առ Թգ̅րն
և ասէ. տէր արքայ՝ լոյսն մերձ է. Թէ
արձակէիր զկինն և տայիր զհազար դա-
հեկանն որ ելանէր՝ լաւ է. զի մի՛ ոք ՚ի
մարդկանէ տեսանիցէ զնա: Ասէ Թգ̅րն
ամէն ասեմ քեզ՛ զի գեռևս ոչ ելանիցէ
կինս աստի. վս̅ զի յոյժ հաճոյ եղև ինձ:

 Եւ

Եթէ լուեալ զայս ունենեկապետն՝ տրտմ
եցաւ յոյժ. էանց պահ մի՝ և դարձեալ եկն առ
Թագաւորն և ասէ. տէր արքայ սկսեալ է լոյսն՝
արձակեա զդա։ Ասէ Թագաւորն՝ ոչ արձակեմ.
Ել դու արտաքս և փակեա զդուռն։ Եթէ
ունենեկապետն ել և գնաց տրտում յոյժ. Թուէ
էր թէ շունք ևս խածատեցին զինքն. և
կոծէր շրջէր աստ և անդ՝ մինչև ծագեց
լոյսն արեգական։ Եւ դարձեալ երրորդ անգամ
եմուտ առ Թագաւորն և ասէ. տէր արքայ՝ լոյս
է. և կինն ամօթի հորկսէ եթէ ոչ տեսցէ
զնա. փութով արձակեա զդա։ Ասէ Թա
գաւորն ոչ արձակեմ փութով։ Եթէ լուեալ
ունենեկապետն զխօսս արքային՝ այլ ոչ ևս
կարաց ժուժել և ասէ. տէր արձակեա
զդա զի կին իմ է։ Յորժամ լուաւ Թագաւորն
ասէ. բայց զպատուհանն զի տեսից զոր


ասեսդ

ասեստգ · ենաեբաց զպատուհանն · և տե-
սեալ թագաւորն զի կենդն նորա էր ։
Եւ ասէ · ով նզովեալ այր՝ վ̃ս սակաւ-
ինչ փողու խայտառակեցեր զկեանս քո · և
բերիր առ իս առանց գլխուն · փութա՛
ե՛լ յերկրէ իմմէ որ ի ներքոյ ոտին
իմոյ է ։ և թէ այսօր ոչ ելանիցես՝ չարա-
չար մահուամբ մեռանիցիս ։ Եւ փախեաւ
սենեկապետն յերեսաց արքային · և այլ

ո՛չ երեւեցաւ առաջի նորա ։

Յետ այնորիկ թ̃գրն չու արարեալ գնաց
ի Հռոմ · և պաշարեալ պահէր զնա ի
բազում աւուրս · մինչև Հռոմայեցիքն
կամեցան տալ նմա զոսկերաց ս̃բց առաքե-
լոցն պետրոսի և պօղոսի ։ Եւ էին յայնմ
ժամանակի ի Հռոմ իմաստասէրք եօթն ·
ոմ̃ և քոյդ · որ իմաստութ̃բ իւրեանց զ̃մ

 քաղաքն

քաղաքն 'ի ձեռին ունէին: Յայնժամ եկին հռոմայեցիքն առ իմաստասէրսն և ասեն. զինչ արարուցուք՝ զի քաղաքս 'ի մէջ մեծ նեղութեան է. և ցուցանէ թէ՝ կամ տացուք զքաղաքս, կամ զմարմին սուրբ առաքելոյն: Ասէ առաջին դպրապետն. ես պահեմ զքաղաքս և ըզ մարմին սրբոյն օր մի՝ որ ոչ մտանի 'ի ձեռս նոցա: Եւ ամենայն դպրապետքն կորգաւ զայս ասացին Ոչ և քո որդոյ դպրապետքն խոստա-ցեալ են որդւոյ քո այսպէս: Եւ իբրև թագաւորն ըսկսաւ արտաքուստ ճակատել ընդ-քաղաքին՝ յայնմ ժամու ել առաջին դըպ-րապետն 'ի քաղաքէն 'ի դուրս. և սկսաւ իմաստութեամբ խօսել ընդ թագաւորին. մինչև դադարեցոյց զթագաւորն 'ի պատերազմելոյ ընդ քաղաքին: Եւ այսպէս ամենայն իմաստա-



սէրքն

սերքն կարգած ընծայնաւորարին․ մինչև եկն
կարգն ՚ի յետին դպրապետն ։

Իսկ յետ օծման երրորդում աւուրն ամենայն քաղաքացիքն եկեալ առ եօթնում դըպրապետն և ասեն․ ով սիրելի դպրապետ՝ արդ թագաւորն երդուեալ զի ՚ի վաղիւն ունիցի զքաղաքս․ և եթէ ունիցի՝ մեք տմքեանս մեռանիմք։ արդ՝ ապրեցո զմեզ ողջ և ընկերակիցքն քո արարին ։

Ասէ դպրապետն․ մի՛ վախէք․ զի վաղիւն գործ մի գործեմ ես՝ որ փախիցէ թագաւորն տմզօրոքն իւրովք։ Եւ ՚ի վաղիւն իբրև սկսաւ թագաւորն տալ զպատերազմ ընդ քաղաքին, զգեցաւ դպրապետն ազգ մի հանդերձ․ որ պէս պէս թռչնոց փետրով յօրինեալ էր․ սիրամարգի, արծուոյ, ջայլամու, և այլ թռչնոց․ և էառ երկու

սուսերս փայլունս՝ երկու ձեռսխուր. և
ել՝ 'ի բարձր աշտարակն մի միայն յանդգ. նման
Թագաւորին. և այր և անդր շրջեալ՝
փայլեցուցանէր զինքն ըստ փայլակն. մինչ
զի զարմանային ունէին սուսերքն զփայլ
ուածան. եւ առաւել ինքն ։

Եւ զօրք Թգրին տեսեալ զայն 'ի բա-
նակէ խուրեանց՝ ասեն ցԹգւրն. տէր՝
տեսե՞ր զսքանչելին որ է 'ի վր. աշտարակին
Ասէ Թագաւորն շատ զարմանք է այդ-
զոր տեսանեմ ես. այլ Թէ զի՞նչ կամի
լինիլ ոչ գիտեմ ։ Եւ նոքա ասեն. անձն
է քրիստոնէից որ 'ի յերկնից իջեալ. և
կամի սուսերօքն այնմիկ զմեզ զամն կոտո-
րել եԹէ յամեսցուք աստ ։ Եւ Թգրն
տեսեալ՝ երկեաւ. և ասէ զի՞նչ արասցուք
Ասեն զօրքն. եկայք փութով փախիցուք

 'ի տեղո

Ի տեղւոջէս՝ զի մի՛ ածցեն նոցա կատարեսցէ զմեղ սրով. և սկսան փախչել Թագաւորն և ամ̃ զօրքն ընդ նմա։ Իսկ տեսեալ Հըռօմայեցիքն զփախուստ նոցա՝ առեալ ըզ զօրականսն իւրեանց՝ ընթացան զկնի նոցա. և զբաղում ՚ի նոցանէ կոտորեցին. և ըզ թագաւորն նոցա սպանին. և ոմանք ՚ի նոցանէ մազապուրծ փախեալ զերծան։ և այսպիսի պատճառաւ յաղթեցին ամենայն զօրքն ՚ի

յաւուր միոջէ։

Յայնժամ ասէ Թագուհին ցկայսրն ՚ի միտ առե՞ր զասացեալս իմ։ Ասէ կայսրն այո ՚ի միտ առի։ Ասէ Թագուհին. Ոչ ապաքէն լուար վասն իշխանին՝ թէ որպէս սիրեցեալ էր ՚ի Թագաւորէն. և վասն ցանկութեան սակաւ ոսկոյ՝ ամնթի հարեալ կորոյս զկեանս իւր և իւրքն վտարեցաւ յերկրէն

Այնպէս և որդին քո փառս ցանկանալո
տէրութեան և իշխանութեան քո՝ կամի խայտա-
ռակել զքեզ և կորուսանել․ զի ինքն
թագաւորեսցէ 'ի տեղի քո։ Այլ դու
այնպէս արա՝ որպէս արար թագաւորն այն
իշխանին իւրոյ։ Եթէ ոչ կամիս ըս-
պանանել՝ աքսորեա զնա և արտաքսեա
յերկրէ քումմէ․ զի այլ մի՛ երևեսցի
առաջի քո․ և դու եղիցիս 'ի խաղաղութեան։
Լուար և զայն թէ որպէս թագաւորն այն
պաշարեաց զքաղաքն․ և որպէս նեղեցաւ 'ի
զօրապետացն որ եթող զքաղաքն 'ի ձե-
ռանէ․ և ինքն ըսպանել եղև պատճառ մոք-
մից աւերի․ և զօրքն յաղթահարել ես։
Այսպէս և զօրապետք որդւոյ քո՝ կամին
քեզ այնպէս առնել խորամանկութեամբ
իւրեանց․ և խաբել զքեզ՝ յետոյ սպանանել

 և թագա

և թգ՜որցուցանեն զորդին քո ՚ի տեղի քո:
Ասէ կայսրն. ամէն ասեմ քեզ՝ ո՛չ լինի այդպէս. քանզի ընդ լուսանալ առաւօտուն տամ զնա սպանանել:

*Վեցերորդ անգամ փոխեցին զորդին արքայէն ՚ի մահ. և Նէօդաս դպրապետն առակօք փրկեցին զնա:

Ե վաղուէն ելեալ կայսրն՝ նստէր ՚ի գահոյսն իւր. և իսկոյն կոչեաց զդահճապետն և ասէ. հա՛ն զորդին իմ ՚ի բանտէն. և առժամայն տա՛ր սպան զնա առանց պատճառանաց. և հեռացո՛ ըզ գլուխ նր՜ ՚ի մարմնոյն վաթսուն կանգուն. Նոյնպէս և թագուհին ստիպէր զդահճապետն և պարգևս տայր և ասէր. մի՛ յապաղեր սպանանել զնա: այլև պտուէրս իմ քեզ այս լիցի՝ զի չարչար մահուամբ

 կորուս

կորուսցես զնա. և եթէ արասցես այնպէս, բազում մ. ծու թն հատուցանեմ զքեզ. Իսկ եկեալ դահճապետն՝ եհան զորդի արքային ՚ի բանտէն. և հրամայեաց կապել զձեռսն ՚ի յետս նորա. և քարոզն առաջի նորա կարդայր և երթայր ասելով. եթէ որ ոք զանցանել կամի յետ նամորն հետ՝ այսպիսի մահուամբ մեռանի: Իսկ յորժամ լուան ժողովուրդքն եթէ այսօր ևս մատնեցաւ որդի արքային ՚ի մահ, սկսան լալ և ողբալ. և ասէին՝ ո՛հ ո՛հ աւաղ և ռ աւաղ որ ՚ի զուր կու գնայ որդի արքային ՚ի մահ: Իսկ մինչդեռ տանէին, եհաս վեցերորդ դպրապետն. որում անուն էր կղէոպաս՝ որ ընթացեալ երիվարաւն իւրով: Իսկ տեսեալ զորդի արքային խեղճ և ողորմելի՝ առժամայն սաստեաց դահճապետին և ասէ.



ընդէր

ընդէ՞ր այդպէս ։ կոչեր էք զորդի արքային
մի՛ թէ մանհապատրոտ լիցէ ։ և ետուր արձա
կել զնա ։ Ասէ դահճապետն ։ ով դպրա-
պետ՝ հրաման սաստիկ է թագուհոյն ։
արդ ես զի՞նչ արարից ։ և դպրապետն ոչ
տայր թոյլ խօսել դահճապետին ։ Եւ
որդի արքային տեսեալ զվարժապետն իւր՝
երկիրպագ նմա ։ իբր կամէր ասել թէ
յիշեա՛ զիս առաջի հօր իմոյ ։ զի ահա՛ զուր
կու գնամ ՚ի մահ ։ Եւ ժողովուրդքն
ևս առաւել աղաչէին զդպրապետն զի
շուտով երթ լիցէ առ կայսրն և աղաչեսցէ
զորդի արքային ։ Ասէ դպրապետն դահճա-
պետին ։ կաց դու աստ և մի՛ շտապիր սպա-
նանել զդա՛ ։ զի յոյս ունիմ առ ած որ այսօր
ապրեցուցանեմ զդա՛ ։

Եւ զայս ասացեալ՝ գնաց և եմուտ ՚ի

 պալատն

ղտն. և մտեալ առ կայսրն՝ յերկիրպագ
նմա. և հեզուբ ողջունեաց զնա: Ասէ
կայսրն. պատահեսցէ քեզ աւուրք չարեց
Ասէ դպրապետն. գիտէ ած որ ո՛չ այդմ
բանի ծառայեցի քեզ. այլ յուսայի առա
ջելաբար պարգևս առնուլ ՚ի տեառնէս
իմմէ. և մի՛ լսել այդպիսի բան: Ասէ
կայսրն սրտեցիք ինձ. զի ետու զորդին
իմ ՚ի ձեզ լեզուաւ և խոստուն. և արդ
եղև համր: այլ ես չարագոյն այնէ՝ որ
կամեցաւ բռնադատել և լսել զկինն իմ.
վմյ ահա մեռանի այսօր. և ձեզ չարչարինք
ներ կազմեմ, որ աչօք ձերովք տեսանէք
զմահ ձեր: Ասէ դպրպտն. այն զոր ասա_
ցեր թէ պապանձեալ է՝ ես գիտեմ որ
ո՛չ է լռոյք պապանձումն ՚ի նմա. զի կարէ
խօսիլ՝ բայց չէ ժամանակ. զի ժամանակս

լուեալ է նմա. և յետ երկուց աւուրց լուէի
ցես զխօսս նր եթէ մնացէ կենդանի:
Նաև որ ասայեր թէ՝ զթագուհին իմ
կամեցաւ բռնադատել, ընդ այդմ յոյժ
զարմացեալ եմ. զի այր իմաստուն ես դու
և վասն բանի կնոջ քո հաճեալ լինիս և
հաւատաս նմա:

Նաև եթէ վասն բան կնոջ քո սպանցես
զորդին քո՝ պատահեսցէ քեզ որպ պատա
հեաց զինուորի միոյ. որ հաւատաց բանի
և խրատու կնոջ իւրոյ. և յետոյ կապել
եղև ամեհի ձիոյ ագի. և կախեցաւ 'ի
փայտէ: Ասէ կայսրն. մծ սիրոյն քո ասամ
զառակդ զայդ. զի կարացից ելանել յըն-
կղմանէս յայսմանէ: Ասէ դպրապետն.
ոչ ասեմ և ոչ աշխատիմ 'ի զուր. եթէ
կամիս լսել զառակն իմ, նախ դարձո զոր


դին

գլխն քո՛ ի մահուանէ․ և ած զնա՛ ի բանտն․
և ես պատմեցից քեզ զառակս․ ապա եթէ
հաճոյ թուեսցի քեզ՝ ապրեցո զորդին քո․
և թէ ոչ՝ սպան զնա։ Յայնժամ հրամայեաց
կայսրն դարձուցանել զորդին իւր ի բանտ։
Եւ դպրապետն սկսաւ առաջի ամենեցուն
ասել զառակս այսպէս ։

*********

*Առակ․ Հնգետասաներորդ Դպրապետին զոր ասաց վասն կնոջ [illegible]

Ի քաղաքի միում էր կայսր մի․ և ունէր երկու զինուորս քաջ մարտիկս․ և յոյժ սիրէր զնոսա։ Եւ ի նոյն քաղաքին՝ էր մի ծեր զինուոր մի․ և ունէր կին մատղաշ և գեղեցիկ յոյժ․ որպէս զթագուհին քո․ և յոյժ սիրէր զնա։ Եւ կինն այն էր երկեցօղ․ մինչ զի ըստ

թշնամու ինքն ձգէր ՚ի տուն իւր. քաղցր ձայ-
նիւն իւրով. որ եւ յոգունց եղեւ ցանկացեալ.
Յաւուր միում նստեալ երգէր ՚ի տանն
իւրում մերձ առ ճանապարհաւն. եւ հայէր
զանցաւորս ճանապարհին. եւ սկսաւ քաղ-
ցրաձայն եղանակել յոյժ. եւ զամենեան ըզ-
մայլեցուցանէր: Եւ ՚ի պատահմանէն
եկեալ անցանէր զինուոր մի յարքունական
պալատէն ՚ի դրանէ նորա. եւ լուաւ զքաղցր
եղանակ նորա. եւ ամբարձեալ զաչս իւր՝ պշուց
մամբ հայէր ընդ նա. եւ բորբոքեցաւ ՚ի
սէր նորա. եւ եմուտ առ նա ՚ի տունն. եւ
սկսաւ խօսիլ ընդ նմա եւ առնել զանկարգս.
եւ ասէ՝ զինչ տաց քեզ սիրտ իմ զի նն-
ջեսցես ընդ իս գիշեր մի: Ասէ կինն.
տուր ինձ հարիւր դահեկան եւ ննջեցից
ընդ քեզ գիշեր մի: Ասէ զինուորն.

յօժար եմ տալըռ · բայց միայն ասա թէ
յորում ժամու եկեցաւ քեզ ։

Ասէ կինն · յորժամ ժամ ունիցիմ, ծա-
նուցից քեզ ։ Եւ զինուորն ողջունել
զկինն՝ գնաց զպալատն · 'ի միտ ունելով
զխոստումն նորա ։

Յերկրորդում աւուրն նոյնպէս նստեալ
առ պատուհանն և քաղցր ձայնիւ եղանա
կէր · և 'ի պատուհանէն եկեալ անցանէր
երկրորդ զինուորն՝ ընկեր առաջին զինուորին
և լուեալ զձայն նր՝ բորբոքեցաւ 'ի սէր
նր · և ըսկսաւ խօսել ընդ նմա զանպատեհս ·
և ասէ՝ սիրելի՛ զինչ տաց քեզ զի կա-
րացից խաղալ ընդ քեզ ։ Ասէ կինն ·
հարիւր դահեկան ։ Ասէ զինուորն ·
յօժար եմ տալ քեզ զհարիւր դահեկանն
կամ այլ աւելի պարգևս · բայց ասա ինձ

 թէ

Թէ յորում ժամու ելից առ քեզ եւ
կատարեցից զուխտն իմ։ Ասէ կինն. յոր
ժամ ժամ՝ ունիցիմ, ծանուցից քեզ. Երթ
այժմ ’ի սենեակն քո՝ զի չէ ժամանակ ։
Նա զինուորն գիրկս արկեալ ողջունեաց
զնա. եւ գնաց ’ի պալատն իւր ։
Յերրորդում աւուրն նոյնպէս նստեալ
առ դրան եւ քաղցր ձայնիւ եղանակէր .
եւ երրորդ զինուորն որ էր ընկեր առաջին
զինուորացն՝ եկն եւ էանց ընդ նոյն ճանա
պարհաւն. եւ լուեալ զձայն նր՝ այնպէս
զմայլեցաւ ’ի սիրոյն՝ համարելով թէ
մեռանելոց իցէր եթէ ոչ խօսեսցի ընդ
նմա ։ Նա մտեալ ’ի տունն՝ խօսի ընդ
կնոջն եւ ասէ. զի՞նչ տաց քեզ որ կատա
րես զկամս իմ։ Ասէ կինն ճ̃ դահեկան։
Ասէ զինուորն յօժարեմ տալ քեզ ըզ

 հարիւր

հարիւր դահեկանն. բայց ասա ինձ թէ
յորում ժամու եկից առ քեզ: Ասէ կինն
ես զգուշացուցանեմ քեզ զ ժամն որ առնից
վրդովմանց լինիցի. դու երթ այժմ՚ի
ունենեակն քո: Սա՛ զինուո՞րն համանել
խօսից նր. ողջունեալ զնա գնաց՚ի պալատն
Սա՛ նոքա երեքեանն այսպիսի գաղտ
նիւք՚ի միմեանց՝ ու խօսեցին ընդ կնոջն
Սա՛ կինն այն խորամանկ և լի՛ ամենայն
չարեօք՝ և յորժամ երեկոյեցաւ եկն այր
իւր՚ի տուն, ընդ առաջ ել առն իւրում
և ասէ. բարի եկիր սիրելի տէր իմ.
ու իմ բան ինչ ծածուկ խօսել ընդ քեզ:
եթէ արասցես ըստ բանից իմոց՝ մեծու
կու հանդիպիմք. զի ահա աղքատք եմք:
Ասէ այրն. որպիսի իրօք: Ասէ կինն.
երեք զինուոր որք յարքունական պալատէն



եկին

եկին առ իս՝ մի ըզկնի միոյ գաղտ ՚ի միմեանց
Եւ իւրաքանչիւր ոք ՚ի նոցանէ խոս-
տացան եղեն ինձ տալ հարիւր դահեկանս
զի կատարեցից զկամս նոցա։

Արդ լինէր այնպէս որ առնէի զոսկին
՚ի նոցանէ և չի՛ ննջէի ընդ նոսա, մեծ
իմաստունն էր։ Ասէ այրն. զինչ որ քեզ
հաճոյ է՝ այն և ինձ է հաճոյ։ Ասէ կինն
տամ քեզ զլ՛ խորտ մի. զառաջինն զինն որն
կոչեցից յերեկոյին՝ դահեկանօքն. և
զերկրորդն՝ յերկրորդ պահուն գիշերոյ
և զերրորդն՝ ՚ի հաւախօսին։ Եւ յոր
ժամ նոքա եկեսցեն առ իս՝ յայնժամ դու
կացցես յետոյ դրանն և սուր մերկ ՚ի
ձեռին քում. և որ ոք ՚ի նոցանէ որ մը
տանէ մի հետ ընդ միոյ հարցես և սպան
ցես. և այնպէս առնումք զոսկին։


Ասէ

Ասէ այրն. երկնչիմ եթէ ոք 'ի մարդ-
կանէ զայս գիտասցէ՝ և չարաչար մահու-
ամբ սպանցեն զմեզ: Ասէ կինն. մի եր
կնչիր. ես ինքնին խորհեցայ զգործդ զայդ
և ես կատարեցից զդա: Զայս լուեալ
այրն և ասէ. զամ ինչ զոր դու ասիցես
ինձ՝ ես առնեմ զայն:

Յայնժամ յղեաց կինն և կոչեաց զառաջին
զինուորն զի փութով եկեսցէ առ նա.
և նա իբրև լուաւ եկն վաղվաղակի:
Ասէ կինն. սիրելի իմ եթէ կամիս վայե
լել զսէր իմ, եկեսցես յերեկոյին և
բերցես զսակրն ընդ քեզ. և կտրեսցես
զկամս քո: Ասէ զինուորն. պատրաստ եմ
առնել զայդ. և գրկեալ զկինն՝ համբու-
րեաց և գնաց: Յետ այնորիկ առաքեաց
առ երկրորդ զինուորն զի եկեսցէ. և

 նա եկն

նա եկն փաղփաղակի․ և նր և զնոյն բանն
ասաց․ և ժամադիր եղև զի եկեսցէ յեր
կրորդ պահու գիշերոյն։ և նա ուրախութ
գրկեալ համբուրեաց զկինն և գնաց։

Դարձեալ առաքեաց առ երրորդ զինուորն
զի եկեսցէ առ նա․ և նա փաղփաղակի եկն
և նորա և զնոյն բանս ասաց․ և ժամադիր
եղև նմա զի եկեսցէ ՚ի համախօսին․ և
նա ուրախութ գրկեալ համբուրեաց զնա
և գնաց։

Եւ իբրև երեկոյ եղև, եկն առաջին
զինուորն և բախէր զդուռնն։ և այթկնոջն
ոչ պատուիրեալ էր՝ կայր յետոյ դրանն
և եբաց զդուռն և իբրև եմուտ՝ եհար
և սպան զնա։ և մարմինն նր քարշեցին ՚ի
ներքս ՚ի նսեմ սենեկին։ Եւ յերկրորդ
պահու գիշերոյն՝ եկն երկրորդ զինուորն


և զնա

և զնա այլ այնպէս սպանին. և զմարմին նո՛ր
քարշեցին առ միւսոյն մօտ 'ի նոյն սենեկին
Նա՛ 'ի հաւաքսոյն՝ եկին երեք զինուորն
և զնա այլ այնպէս սպանին. և զնո՛ր մարմինն
ևս քարշեցին մօտ առաջնոյն 'ի նոյն
սենեկին : և այսպէս արարեալ՝ առին
զոսկիքն 'ի նոցանէ :
Նա՛ իբրև այս այսպէս եղև, ասէ ցնա այրն
ով սիրելի կին իմ, եթէ գտցեն զմարմին
դոցա աստ առ մեզ , յայնժամ չարաչար
մահուամբ սպանցեն զմեզ. զի ո՛չ է հնար
եթէ ոչ խնդրեսցի այս 'ի պալատէն ար
քունի թէ զի՛ նչ եղև նոցա :
Ասէ ցնա կինն. ես սկսայ զգործս և ես
կատարեցից զդա. դու մի՛ ինչ հոգար .
դեռևս ո՛չ գիտես զհնարս խորամանկ կնանց
Նա՛ կնոջն կայր եղբայր մի հարազատ.


և էր

ւէր գիշեր րաստահքաղաքի։ այնուհետեւ Սո՛
իւրեւ ելին պահապանքն շրջել զքաղաքաւն,
եւ կինն եւ կա՛ գտեցա՛ առ գլխոյ տանն
իւրոյ. եւ ետես զնե զքոյր իւր որ անցանէր
ընդ այնու։ կոչեաց զնա եւ ասէ. ունիմ խոր-
հուրդ ինչ ծածուկ ասել քեզ. մօտ ՚ի
ներքս եւ պատմեցից քեզ։ եւ իբրեւ եմուտ,
ընկալաւ զնա սիրով այր նորա. եւ նըս-
տաւ առ հրաւէր։ Յայնժամ ասէ ցնա կինն
ով սիրելի եղբայր իմ. ո՛յոք պատճառ
կոչելոյս զքեզ զիմ. զի զծածուկ խորհուրդ
սրտի իմոյ յայտնեցից քեզ։ Յանցե ալ
գիշերիս զինուոր ումն եմուտ աստ. եւ վե-
ճեալ ընդ տեառն իմում՝ սկսաւ անար-
գել զտէր իմ. եւ տէրն իմ բարկացեալ
սպան զնա. եւ արդ մարմին նորա անկեալ կայ
՚ի ներքին սենեկի։ Սիրելի եղբայր իմ.

հարազատ. 'ի քեզնէ զատ չունիմ զոք յոյս
զի եթէ մարմին նորա գտանիցի աստ՝
չարաչար մահուամբ սպանցեն զմեզ ։
Վ̃ որոյ աղաչեմ զքեզ՝ զի առեալ ըզ-
մարմին նր̃ աստի և տարցես զնա 'ի տեղի
ուրեք զի մի՛ գտանիցի աստ ։ և վասն այլ
երկուցն ոչ ինչ աստց նմա ։
Ասէ եղբայրն. ծանր բան ասացեր ինձ
քոյր իմ. բայց սակայն օգնեցից քեզ ։
Դի՛ր զնա 'ի պարկ մի. և ես առեալ տար-
այց զնա և ընկեցից 'ի ծով. զի մի՛ երբէք
երևեսցի մարմին նր̃։ Եւ լուեալ զայս
կինն ուրախացաւ. և առեալ զմարմինն
առաջին զինուորին՝ եդ 'ի պարկ մի և
ետ ցեղբայրն. և նա փաղփաղակի ընթա-
ցաւ և ընկէց 'ի ծովն. և դարձաւ առ
քոյրն և ասէ. բեր ինձ բարեհամ գինի


վասն

վասն փրկելոյս զքեզ: Ասէ քոյրն. տէր
ած հատուսցէ քեզ զբարին եղբայր իմ.
և առեալ ամանն զի բերցէ գինի, իսկոյն
՚ի մտանելն ՚ի սենեակն ուր գէշքն էին
աղաղակեաց մեծաձայն և ասէ. փառք
մարգարտին այ. տեսէք զմեծ զարմանքս
որ զինուորն ընկեցեալ ՚ի ծով՝ դարձեալ
եկեալ է աստ: Եւ եղբայրն լուեալ
զայս զարմացաւ յոյժ. և ասէ՝ տուր ինձ
տանիմ. և տեսից եթէ միւսանգամ գայցէ
Եւ առեալ զմարմին երկրդ զինուորին
կարծելով թէ առաջինն է. և տարեալ
զնա առ ափն ծովուն՝ և կապեաց վէմ մի
մեծ ՚ի պարանոցն և ընկէց զնա ՚ի ծով.
որ ձայնն հասանէր ՚ի քաղաքն: Եւ
դարձաւ առ քոյրն իւր և ասէ. արդ՝
տուր ինձ անուշ գինի. զի այժմ առանց

կարծեաց փրկեցար։ Ասէ քոյրն. որ հն-
եալ լինէր գու յայ. և եմուտ 'ի սենեկն
ուղղի բերդէ գինի. և ճչեաց բարձր ձայնիւ
և գոչելով աղաղակեաց և ասէ. ո՛հ ո՛հ ո՛հ
թէ ողջ վայ եկն ինձ. ահա՛ դարձեալ
եկեալ է զինուորն առա։ Եւ լուեալ
զայս եղբայրն և ասէ. մի թէ սատանայ
իցէ զինուորդ այդ. որ անգամ մի ընկեցի
'ի ծով և ել. և յերկրորդումն վէմ կա-
պեցի 'ի պարանոցն և ընկեցի 'ի ծով, և
դարձեալ ել։ արդ տուր ինձ զդա՛ և
երրորդումն տարայց։ Եւ առեալ զերրորդ
զինուորն՝ կարծելով թէ առաջինն է.
և ելեալ հանդէպ քաղաքին՝ եդ 'ի մէջ
փոսի միոյ. և կուտեալ փայտ 'ի վերայ նո-
վառեաց հուր մեծ. և այրեաց զդ զինուորն
և ինքն հեռացեալ 'ի հրոյն դիտէր նա



Եւ

Ապա ուրեմն սատարական զինուոր հեծելոյ ի մէջ
անցանէ ը ընդ այն· որ առաւուցեալ ի ցըր
տոյն՝ էին և չեւանոյր· կանգնելով յեզեր
հրոյն ։ Ապա տեսեալ սորա զզինուորն
կանգնեալ՝ եկեալ եհարց զնա և ասէ·
Ո՞վ ես դու որ կանգնեալ կաս։ և նա ասէ·
զինուոր եմ մեծ ազգէ ։ Ապա սա ասէ
ցնա· ոչ ես դու զինուոր՝ այլ սատանայ
ես դու· զի առաջին անգամն ընկեցի ըզ
քեզ ի ծով և ելեր· և յերկրորդ անգամն
վէմ մի մեծ կապեալ ի պարանոցդ ընկեցի
ի ծով, և դարձեալ ելեր· և յերրորդ
անգամն ի հուրս ընկեցի զքեզ՝ և ահա
ողջ այրեալ՝ կանգնեալ կաս ։ Ապա զայս
ասացեալ՝ յափշտակեաց զնա և ընկէց ի
հուրն հանդերձ երիվարաւն և այրեաց
զնա։ և ինքն դարձաւ առ քոյրն իւր· և



պատմեաց

պատմեաց նմա զա՛մ թէ ո՛վ այրեաց զնա
՚ի հուրն երկվարուէն. և ասէ՝ բե՛ր այժմ
զանուշահամ գինի զի արբից ։

Նա՛ լուեալ քոյրն նորա ասէ. զինուորն
այն որ ՚ի վր̃ ձիոյն էր՝ օտար ամ̃. էր։ և
փաղփաղակի ելեալ ետ նմա գինի. և նորա
ըմպեալ զգինին. և գոհացեալ զնմանէ՝ ել
և գնաց։ Նա՛ յետ ոչ բազում աւուրց՝
զինուորն ծեր բարկացեալ կնոջ իւրում
եհար ապտակ ընդ երեսն. և կինն սրտը
մտեալ ասէ առաջի ամենեցուն ։ Ո՛վ
թշուառական այր. մի թէ և՞ զիս կամիս
սպանանել՝ ո՛պ սպաներ զերիս զինուորսն։
Լուեալ զայս մարդիկն և պատմեցին ար-
քային. և արքայն բերեալ առաջի իւր
զնոսա՝ զրուցել ետուր թէ ո՛պ սպանին
զերիս զինուորսն և առ ինն դ̃ ճ̃ դահեկանն։



Նա՛

Նա՛ իբրեւ ըստուգեցաւ առ աչս բազմու-
թեան Ճշմարիտն, հրամայեաց կայսրն որ
կապեցին զերկոքեանն ՚ի միասին զայրն
եւ զկինն ամ. հի ձիոյ ագի ․ եւ տարեալ
՚ի տեղի սպանման՝ կախեցին զփայտէ ։
Յետ այնորիկ ասէ դպրապետն ցկայսրն
տէ՛ր՝ ՚ի միտ առե՞ր զառակս զայս ։ Ասէ
կայսրն. այո՛ ՚ի միտ առի՝ զի նզովեալ էր
կինն այն քան զամենեսեան. որ ինքն սա-
տակեցոյց էր չար մահուամբ՝ եւ սատակե-
ցաւ. բայց զայրն իւր՝ անմեղ մատնեաց
՚ի սպանումն ։ Ասէ դպրապետն. ըստոյգ
ասեմ քեզ արքայ՝ դառնագոյն քան զնա
լինիցի քեզ՝ եթէ վասն բանի կնոջ քո
սպանցես զորդին քո ։ Ասէ ցնա կայսրն.
Ճշմարիտ ասեմ քեզ ո՛վ դպրապետ՝ զի
որդին իմ այսօր ո՛չ մեռանի ։

Ասէ դպրապետն. շնորհեալ եմ 'ի քէն զանէ որ վ͞ս առակի իմոյ ազատեցեր զորդիդ քառասօր 'ի մահուանէ ։

Եւ իբրեւ լուաւ թագուհին՝ թէ որդի արքային այժմ եւս ողջ ապրեալ, սրտմտեալ նման գիշահարի՝ ընթացաւ առ կայսրն եւ ասէ. վա՜յ է ինձ այսօր. արդ լաւ էր ինձ մեռանիլ՝ քան թէ զայսպիսի կեանս կրել ։ Եւ կամիմ՝ այժմ դեղ ըմպելեն մեռանիլ՝ քան թէ կենդանի մնալ եւ զայսպիսի վիշտս կրել. զի նախատինք եղայ 'ի մէջ ազգին իմոյ՝ եւ դու ո՛չ կ͞տրեցեր զկամս իմ ։ Ասէ ցնա կայսրն. ա͞ծ պահէ զքեզ այդպիսի չար. կնքեա՛ զքեզ նշանաւ տ͞ր խաչին եւ համբերեա՛ սակաւ մի ։ ունիմ յոյս առ ա͞ծ՝ զի գործքդ այդ 'ի ծայր ելանէ ։ Ասէ թագուհին. գիտեմ զի ծայրն 'ի

 չար

չար կատարեսցէ. զիշխանութիւն իմ և քեզ լինիցի։ Այլ զայս ասեմ քեզ՝ զի պատահելոցէ քեզ այնպէս՝ որ պատահեաց թագաւորի ումեմն ՚ի զինուորէն իւրմէ։ Ասէ կայսրն աղաչեմ զքեզ ով սիրուն սիրելի թագուհի իմ. ասա ինձ թէ որպէս եղև նոյա։ Ասէ թագուհին. ասեմ քեզ և զայն մի յորդոր սրտիւ. և դու բազում օգուտ ունիցիս եթէ լռիցես ինձ։ Եւ նա սկսաւ ասել այսպէս։

*[illegible] առակ թագուհւոյն. [illegible]

Ի քաղաքի միում կայր թագաւոր մի. և սիրէր զթագուհին իւր յոյժ և պահէր զնա ՚ի մէջ ջամուր աշտարակի միում. և զփականս դրանն առ ինքն



պահէր

պահէր. և վն այնորիկ յոյժ վշտանայր կինն

Եւ էր զինուոր մի քաջամարտիկ և
ուժեղ յստար երկիր. և ետես նա երազ
՚ի միում գիշերի. որ էր տեսիլն նր այսպ.
Որպէս թէ թագուհի մի յոյժ գեղեցիկ
և ցանկալի քան զամենեսեան. զոր տեսեալ
տպաւորեցաւ գեղեցկութիւն յերեսացն ՚ի
սիրտ նր ։ Եւ թագուհին այլ ետես
երազ ՚ի նոյն գիշերին. զի տեսանէր ըզ
զինուորն զայն . իբր թէ խօսէին ընդ
միմեանս ։ Եւ զարթեաւ ՚ի քնոյ թա-
գուհին. և ցանկայր տեսանել ըզ զինուորն ։
և զինուորն այլ ցանկայր տեսանել ըզ
թագուհին զայն. վն փորձելոյ զերազն ։
Եւ յետ տեսանելոյ երազին՝ ոչ կամե
ցաւ դադարիլ յերկրի իւրում և ոչ օր
մի զինուորն այն . այլ եկեալ ՚ի խնդիր

 թագու

Թ̃գհոյն զի գտցէ զնա զոր ետես յերազին

Նա՛ հեծեալ ՚ի ձի՝ շրջէր զբաղում թագաւորութիւնս. մինչև եկն ՚ի քաղաքն այն յորում կայր թագուհին բնակեալ ՚ի մէջ աշտարակին. և զկայ ուե̄լ բնակեցաւ ՚ի քաղաքն այն։

Նա՛ յաւուր միում շրջէր զինուորն այն շուրջ զաշտարակաւն. ոչ գիտելով թէ անդ իցէ թագուհին զոր յերազին տեսեալ էր։ Նա՛ թագուհին ըստ սովորութե̄ իւրում ընկողնեալ էր ՚ի պատուհանի աշտարակին և հայէր յանցորդս ճանապարհին։ Նա՛ զինուորն ամբարձե̄լ զաչս իւր՝ ետես զնա. և իսկոյն ճանաչե̄ց թէ նա էր զոր ՚ի յերազի ետես. և սկսաւ սակաւ սակաւ արձակել ձայնս և երգել եղանակաւ ։



Նա՛

Եթէ ի քուն լսէ թագաւորին զձայն մը,
և հայեցէ՝ լինի նա և ծանուցանէ զինքն որ լի բարկե
տեսեալ էր։ Եթէ զինուորն այն յետ
այնուրիկ համապատոր անցանէր շուրջ ըղ
պարսպած աշտարակին և եղանակէր քաղ
ցրաձայն. և գխոտէր թէ ընդ մր մտանիցէ
և խօսեցի ընդ թագաւորին։ Եթէ թա
գաւորին իմացեալ զկամս նր թէ խօսակ
ցիլ խնդրէ ընդ ինքեան՝ գրեց թուղթ
և ընկէց ՚ի վեր բուստ աշտարակէն առ նա։
Եթէ զինուորն բացեալ զթուղթն ըն
թերցած. և ծանեաւ զկամսն նր և ուրախ
եղև յոյժ։ Եթէ սկսաւ արշաւել և խա
ղալ ՚ի խաղս. մինչև համբաւն նր եհաս
յականջս թագաւորին։ Եթէ թագաւորն
կոչեաց զնա և ասէ. ով զինուոր բարու
լուծել և մեղ քուն թէ կամիս ընկերս ՚ի յի



Պատա

Պատասխանի ետ զինուորն և ասէ. տէր իմ արքայ՝ բնակիմ առ քեզ ամ սիրով և յօժար կամօք. եթէ տայցես ինձ տեղի առ պարսպաւ քով զի շինեցից ինձ տուն բնակութե. և եթէ լինի տէառն իմոյ կոչել զիս՝ 'ի գիշերի կամ 'ի ցերեկի, փութով ժամանեցից առ քեզ ։ Ասէ ցնա թգրն կատարեցից զխնդրուածս քո և տաց քեզ պարսպաւ իմով տեղիք զի շինեսցես քեզ տուն բնակութե որպէս և կամիս դու.

Յետ այնորիկ յորժամ կատարեաց զինուորն այն զտունն ընդ պարսպաւ աշտարակին յորում կայր թագուհին, խօսեցաւ ընդ մի ճարտարացն և ասաց. արա դու ինձ գաղտ դուռ մի յայտ իմաստութբ. որ չիմարասցէ ոք տեսանել 'ի մարդկանէ և ես տաց քեզ զոր ինչ և կամիս ։

Եւ իբրև արարճալուրն այն ըզ դուռն
դալը, անդէն եհար զինչորն զճարտսպուն
և սպան զնա․ և զմարմին նր թաղեց 'ի տան
իւրում զի ոչ ոք իմացի և կամ թգրն իմացի
Յետ այնորիկ եմուտ զինչորն ընդ դու
ռըն առ թգուհին և խրով ողջունեաց զնա
Եւ թագուհին տեսեալ զնա՝ զարմացաւ
և ասէ․ ընդ ո՞ր մտեր այսր։ Ասէ զինչորն
սէր քո եբեր զիս աստ․ և մտի ընդ գաղտա
գողի դուռն զի ա՛րի 'ի ներքոյ պարսպի աստ
վըզի կամիմ լինիլ ընդ քեզ։ և քանզի դու
այն ես որ յերկրի իմում տեսի յերազի․ և
ահա որոնել գտի զքեզ։ Ասէ ցնա թագու
հին․ մի՛ տայցէ զայդ Ած որ անկայց 'ի մեղս
առաջի Ած իմոյ արքայի և կատարեցից
զկամս քո․ քանզի լիցի ինձ առնել զբանդ.
զայդ ։ Ասէ զինչորն․ եթէ կամաւ



քոյ

քով և սիրով ոչ տեսցեմ զանձն քո՝ 'ի
սուր իմ մաշեցից զքեզ։ Եւ նա երկու-
ցեալ 'ի մահուանէ՝ ննջեաց ընդ նմա. և
զինուորն կտրեալ զկամս իւր ել և գնաց
Յետ այնորիկ խորհէր Թագուհին ընդ-
մտի իւր և ասէր. եթէ ծանուցից զայս
արքային իմոյ՝ յայնժամ պատահեսցէ ինձ
մեծամեծ չարիս. զի ես ինքնին խայտա-
ռակիմ. և տէր իմ արքայ բարկասցի յոյժ
և զինուորն խայտառակեսցէ զիս։ և վս՟
այն ոչ ասաց ինչ ումեք։ Եւ յորժամ
կամէր զինուորն մտանէր առ նմա և կատա-
րէր զկամս իւր և ելանէր։ և սիրեցին
զմիմեանս յոյժ անասելի ։

Յետ այնորիկ 'ի բազում սիրոյն, ետ նմա
Թագուհին մատանի մի ազնիւ. որ տու-
եալ էր նմա Թագաւորն 'ի նշան սիրոյ։

Եւ պինտաւորն այն 'ի խաղս ապարանին
առնայր յաղթութի̅ւ յոյժ . վ̅ս որոյ յոյժ
սիրեցեալ եղև յաչս արքային . և արար
զնա սենեկապետ . և կարգեաց զնա 'ի վ̅ր
ամ̅ երկրին որ էր ընդ տէրութ̅բ իւրով:
Եւ յաւուր միում կամեցաւ արքայն
ելանել 'ի յորս . առաքեաց հրաւիրակս
առ սենեկապետն և ասէ . պատրաստ լի-
նիցիս ընդ իս ելանել 'ի յորս: Եւ նա
նոյնժամայն պատրաստեցաւ և ել ընդ
արքային 'ի յորս . և շրջեցալ զօրն ողջոյն
և եկեալ իջևանեցան 'ի ձոր մի . և զին
ուորն այն յանդիման արքային նստէր . և
մատանին 'ի մատն ն̅ր կայր զոր առեալ էր
'ի թագուհւոյն . և զձեռն իւր ձգեալ
դնէր հանդէպ արքային: Իբրև ետես
արքայն զմատանին՝ իսկոյն ծանեաւ զնա
և ասէ

և ասէ ընդ միտս իւր՝ մատանիս այս՝ նը
մանէ մատանոյն իմոյ զոր տուեալ եմ
Թագուհոյն իմոյ 'ի նշան սիրոյ։

Նո՛ նոյնժամայն զարթեաւ զինուորն 'ի քնոյ անտի. և գիտաց որ արքայն տեսեալ է զմատանին. և իսկոյն արար զինքն ոպ̃ հիւանդի. և ասէ ցարքայն՝ տէր իմ արքայ հիւանդութիւն անկաւ 'ի վր̃ իմ. արդ ձեռպեմ երթալ 'ի տուն։ Ասէ ցնա արքայն՝ երթ. և նա հեծեալ 'ի ձի՝ եկն 'ի տուն իւր. և եմուտ առ Թագուհին ընդ գաղտագունոյն և ասէ Ա'ռ զմատանին զոր ետուր ինձ. զի ետես արքայն զմատանին 'ի ձեռս իմ. և քանզի գիտեմ զի յորժամ եկեացէ՝ իսկոյն հարցանէ լոցէ զմատանին. մի այն յառաջ ջեցիես քան զարքայն գալառ քեզ զի մի յամօթ կրեսցուք



և եր

և ետ զմատանին և գնաց ։ Յետոյ եկեալ արքայն 'ի պալատն իւր՝ եմուտ առ Թագուհին և ասէ ․ ով սիրելի տիկին իմ, ու՞ր է մատանին այն զոր ետու ես քեզ 'ի նշան սիրոյ քո․ ցոյց ինձ զնա ։

Ասէ Թագուհին․ ահա կայ 'ի տփին․ և ես այլ բազում ժամանակէ որ չեմ 'ի մտոս գրեալ ։ Ասէ ցնա արքայն բե՛ր զի տեսից զնա Ասէ Թագուհին ․ զի՞նչ եղև քեզ որ այսչափ ժամանակէ ոչ հարցանէիր՝ և այժմ կամիս տեսանել ։ Ասէ արքայն ․ եթէ ոչ տեսից զմատանին՝ ճշմարիտ ասեմ քեզ որ դու այսօր մեռանիս ։

Նա Թագուհին ելեալ նոյնժամայն եբաց զտուփն․ և հանեալ զմատանին՝ ետ ցարքայն և ասէ ․ ահա մատանին առ և տե՛ս ։

Նա տեսեալ արքայն զմատանին և ասէ ․

որպէս նման է մատանիս մատանւոյն որ տեսայ ՚ի ձեռն սենեկապետին իմոյ. և բարկացայ ՚ի վերայ քո. և կարծեցի զքէն չար: զի գիտէի ես թէ այլ ուրեք ոչ գտանի այնպիսի մատանի: Ասէ թագուհին. ով տէր՝ ոչ է զարմանք եթէ նմանեսցի մատանի մատանւոյ. և մատանին քո նմանեսցի մատանոյն սենեկապետին քո: և որ խորհեցար վերայ իմ և կարծեցեր զինէն չար, թողցէ քեզ տէր Աստուած զյանցանքն զայն:

Եւ յետ ոչ բազում աւուրց՝ ասէ զինուորն ցարքայն. տէր իմ արքայ՝ կին մի սիրեր եմ ես յերկրին քում. և այսօր առնելոց եմ ընդունելութիւն կնոջն այն. և աղաչեմ զտէրն իմ զի նստիցի այսօր ՚ի սեղան իմ. և կերիցէ ընդ իս և ընդ կնոջ իմոյ զոր սիրեմ ես և եղիցի ինձ փառք առա

Ասէ Թգ̃րն. արարից զկամս քո՝ և ցուցից զսէրն իմ զոր ունիմ առ քեզ։ Իսկ զինուորն ուրախացեալ՝ գնաց ընդ գաղտ դուռն և եմուտ ՚ի պարպասն և ասէ ցԹգ̃ուհին զգեցիր պատուական զգեստ. զի այսօր ՚ի սեղան իմ ուտելոց ես ճաշ հնդ̃րձ արքային։ Ասէ ցնա Թագուհին. կամք քո եղիցի՝ ընդ իմ պատրաստ մտ̃ սրտի քո։ Իսկ յոր ժամ պատրաստեցաւ ճաշն՝ եկն Թգ̃ւորն ՚ի տուն զինուորին. յետ նորին եկն և Թգ̃հին։ Իսկ իբրև ետես զնա Թգ̃րն՝ ասէ ցզին֊ ուորն. ո՞վ է դա այդպէս գեղեցիկ և հաճոյ աչաց հայելեաց հարս գեղաշէն։ Ասէ զինուորն. տէր իմ արքայ՝ դա է զոր ես սիրեմ. և նստոյց զնա առ ընթեր Թգ̃րին։ Իսկ Թգ̃րն հայէր աստ և անդ. խորհէր ընդ միտս իւր թէ ո՞վ ոմանէ կինս այս



Թագ

Թագուհւոյն իմոյ. և խաբէր զինքն ամրու̃ն աշտարակին. և առաւել հաւատայր բա-
նիցն զինուորին քան յաչաց իւրոց:

Եւ սկսաւ Թագուհին խօսիլ ընդ արքային և ասէ. տէր իմ արքայ հրամայէ կե՛ր զինչ որ ա̃ծ տուեալ է մեզ: Եւ արքայն լուեալ զձայն նո̃ր՝ ասէ ընդ միտս իւր. փառք քեզ ա̃ծ՝ թէ ո̃չ կինս այս 'ի տեսս և 'ի խօսս՝ 'ի գործս և 'ի շարժմունս՝ ամե̃ն իրօք նմանէ կնոջ իմոյ: և ամրու̃ն աշտարակին խաբէր զնա. և ո՛չ իշխէր ասել թէ կին իմ է կամ ոչ. այլ աղաչէր զզինուորն զի փութով եղիցի ճաշն. քանզի փութայր մտանել 'ի պալատն իւր և տեսանել եթէ իցէ Թագուհին 'ի դարպասն: Ասէ զինուորն. տէր՝ մի՛
շտապիր 'ի կարօտանաց:

 Ասէ

Ասէ թգ̃րն. գործ ինչէ իմ 'ի պլ̃տն՝
վ̃ այն շտապիմ գնալ: Ասէ թագուհին
տէր իմ արքայ աստ ուրախացի, և թա
գուհին քո անդ ուրախացի 'ի դարպասի
իւրում: Ասէ արքայն ցզինուորն. ժո՝
ղովեա զսեղանս: և նա արար ըստ հրամանի
արքային: Եւ իբրև ժողովեցին զսեղանն
արքայն գոհացեալ զնմանէ՝ ել և գնաց
'ի պալատն իւր: և զինուորն ընդ գաղտ
դուռն եմոյծ զթգ̃ուհին 'ի դարպասն իւր:
Եւ թագուհին յորժամ եմուտ 'ի դար
պասն իւր, առժամայն հանեալ յանձնէ
իւրմէ զհանդերձն՝ նստաւ առ պատու
հանն և հայէր յանցորդս ճանապարհին:
Եւ թգ̃րն յորժամ եկն 'ի պալատն,
ոչ նստաւ 'ի դահոյսն իւր. այլ առժամայն
եմուտ առ թագուհին. և ետես զի նա


տեալ

տեալ էր Թագաւորին ՚ի պատուհանն ·
և գրկեալ համբուրեաց զնա և ասէ · ո՛վ
սիրելի տիկին իմ այսօր ես մեղանչեցի քեզ
Ասէ Թագուհին · ո՛րպիսի իրօք ասա ինձ
զպատճառն ։ Ասէ Թ̃րն · գնացի այսօր
՚ի տուն զինուորին իմոյ և կերայ ճաշ ընդ-
սիրողի նր̃ · ՚ի ծննդենէ մօր իմոյ մինչև
ցայժմ ո՛չ երբէք տեսի զոր տեսայ այսօր
անդ ։ զի ՚ի տեսս ՚ի խօսս ՚ի գործս և ՚ի
շրթմունս ա̃մ իրօք նման քեզ էր կինն այն
մինչ զի փութացայ տեսանել զքեզ ։
Ասէ Թագուհին օրհնեալ է ա̃ծ՝ այժմ
ես մեղայ տէր իմ արքայ · մի թէ ո՞չ գի-
տես զամբու̄ի աշտարակիս՝ որ ո՛չ ոք կարէ
մտանել աստ կամ ելանել · այլ և զայս ոչ
գիտես որ զփականս դռանն դու ինքնին
ունիս ։ Այլ և միտք մարդոյ վկայէ · զի


մարդ-

մարդ մարդոյ նման լինի․ և չէ զարմանք։ ապա յայնժամ մատանին զինուորին՝ նմանեցաւ մատանւոյն քո։ Ասէ թագաւորն․ ճշմարիտ ասես թագուհի իմ․ այլ և յայն ժամ վասն մատանւոյն մեղայ ես քեզ ։

Յետ այնորիկ յորժամ էանց աւուրք բազում, եկն զինուորն առ արքայն և ասէ․ տէր իմ արքայ՝ բազում ժամանակ եղև զի ծառայեցի քեզ․ արդ աղաչեմ զտէրդ իմ զի տացես ինձ հրաման որ երթամ՚ի սեպհական երկիրն իմ։ Ասէ արքայն․ տամ քեզ հրաման զի երթայցես ։ բայց լաւ էր եթէ ոչ երթայիր․ զի ոչ ունիմ քեզ նման բարեկամ՚ի յերկրի իմում։ Արդ եթէ խնդիրք ունիս՝ խնդրեա․ և կատարեցից զխնդրուածս քո ։ Ասէ զինուորն․ վասն բազում ծառայութեան իմոյ որ

 ծառայ

Ծառայեցից քեզ՝ զայս կու խնդրեմ ՚ի տեառնէ իմմէ. զի զկնի զայն զոր կու սիրեմ և տէրդ իմ իսկ տեսեր զնա, կամիմ զի առցեմ ՚ի կնու̃ի ինձ և պսակեցից ՚ի մէջ եկեղեցւոյն ։ Եւ աղաչեմ զտէրդ իմ զի զշնորհս զայս արասցես ինձ՝ որ դու քոյին ձեռամբն տացես զնա ինձ առաջի ամենեցուն. և եղիցի այն ինձ փառք և պատիւ ՚ի մէջ առաջի ամ̃ ժողովրդեանն և գիտասցեն թէ ՚ի պալատէ քումմէ առից զնա ինձ ՚ի կնութիւն ։

Ասէ ցնա թգ̃ւորն. սիրելի զինուոր իմ ար̃իցքեզ զդ և կատարեցից զկամս սրտիքո Եւ զինուորն ժամ ետ թէ յորում աւուր այս լինիցի ։ Եւ իբրև եհաս օրն այն և եղև ժամ, եկն թգ̃ւորն յեկեղեցին. և բազմութիւն ժողովրդեանն ընդ նմա ։

Եւ զինուորն յառաջագոյն խրատեալ էր զթագուհին՝ զի ժողովեսցէ զա՟մ ինչս ՚ի գանձարանէ թ՟գ՟որին. եւ եդէ ընդ գաղտ դուռն զոր արարեալ էր ։ Եւ եկեալ զինուորն եւ թ՟գ՟ուհին յեկեղեցին Եւ քահանայքն զգեստաւորեալ եւ յուջ եկեալ ասեն. ո՞վ տայ զկինս՝ զինուորիս այս Ասէ թ՟գ՟րն . ես տամ ։ Եւ առեալ զձեռանէ թագուհոյն եւ ասէ . սիրելի տիկին՝ դու յոյժ նմանես թագուհոյն իմոյ. վ՟ս այն յոյժ սիրեմ զքեզ. այլ եւ պալատէ իմմէ՝ կին զինուորի իմոյ լինիցիս զայս ասացեալ՝ տայ ՚ի ձեռն զինուորին զկինն Եւ քահանայքն պսակեցեալ՝ օրհնեցին զնա Եւ յետ պսակին՝ ասէ զինուորն ցար-քային. տէր իմ արքայ՝ նաեւ պատրաստական է ընդ. որում երթալոց եմ ։

Արդ աղաչեմ զքեզ զի նստիցիս ընդ իս ՚ի կառս. և խրատես զկ̃նն իմ օգտակար բանիւք առաջի ամենեցուն. Թէ որ̃չ պարտ է նմա այսուհետև սիրել զիս առաւել քան զամենեսեան։ Նաև Թգ̃ւորն արարից զայդ ես վս̃ քո։ Եւ նստան ՚ի կառս և գնացին խմխասին ՚ի նաւն. և բազմու̃թ ժողովրդեանն ընդ նմ̃։ վս̃ զի յոյժ սիրէր զնա Թագաւորն. և տրտմէր վս̃ բաժանելոյն ՚ի նմանէ։ Եւ իբրև եկին մերձ ՚ի նաւն, ասէ Թագաւորն ցԹագուհին. սիրեցեալ տիկին՝ լո՛ւր խրատու իմոյ և բարի լիցի քեզ Արդ այժմ սա՛ է այր քո. պա՛րտ է քեզ զի սիրեսցես զնա որ̃չ զանձն քո. զի ա̃ծ զայն պահանջէ ՚ի քէն. զի դու ամենայնիւ ա̃մ իրօք հաւատարիմ և հնազանդ լինիցիս նմա

 Զայս

Զայս ասացեալ՝ ետ զնա ՚ի ձեռն զին
ւորին և ասէ. երթ լիցէք խաղաղութեամբ և
Տէր եղիցի ընդ ձեզ։ Եւ զինուորն էառ
զթագուհին. և երկրպագեալ արքային
մտին ՚ի նաւն։ Եւ նաւապետն բարձրա
ցոյց զառագաստն. և զի հողմն յաջողակ էր՝
գնայր նաւն արագօրէն։ Եւ թագաւորն
եկաց առ ափն ծովուն և հայէր. մինչև
աներևոյթ եղև նաւն յաչաց նորա. և ապա
դարձաւ ՚ի պալատն իւր։ Եւ իբրև ե-
մուտ ՚ի դարպասն և ոչ եգիտ անդ զգ
թագուհին, տրտմեցաւ յոյժ. և շուրջ
եկեալ աստ և անդ՝ եգիտ զգաղտ դուռն
ընդ որ ելեալ էր թագուհին. և ասէ՝
վա՜յ է ինձ. ընդ որում յուսայի ես և առա
ւել սիրէի՝ նա էառ զկինն իմ յինէն
և փախեաւ։



Եւ

Նա՜ լայր դառնանօքս և ասէր . մի՞ թէ
խելագարեցա՞յ ես. որ յաչաց իմոց ո՛չ հա
ւատացի՝ և խօսից զինուորին խաբեցայ։
Յետ այնորիկ ասէ թագուհին ցկայսրն.
տէ՛ր՝ ՚ի միտ առե՞ր զասացեալս իմ։ Ասէ
կայսրն. այո՛ ՚ի միտ առի։ Ասէ ցնա թա
գուհին. արդ ո՞չ թէ՞ գրն այն հաւատայր
զինուորին այնմիկ, նոյնպէս և դու հաւա
տաս վարդապետաց նզովեալ որդւոյ քո.
որ այսպիսի որոգայթս պատրաստեն քեզ
խաբէութեամբն իւրեանց ։ Զի ես
որ կինքն եմ, ո՛չ հաւատաս ինձ քան թէ
նոցա հաւատաս. որ այսպիսի նախատինս
արար ինձ և խայտառակեաց զիս. որ դու
տէրդ իմ արքայ ինքնին տեսեր Այլ
զայս տեսանես՝ զի դեռ ևս օգնեն բանիւք
նզովեալ որդւոյ քո ։

Յորժամ երկիցես՝ զի մի՛ լինիցիս նման
Թ·գրին այնմիկ զոր առաջի քեզ զայդ տամ։
Ասէ կայսրն՝ ոչ լինի. այլ ՚ի վաղիճն
անպատճառ տամ սպանանել զնա։ Ասէ
Թագուհին. եթէ այդպէս առնես՝ մեծ
իմաստութիւն է քեզ. զի չէ պարտ նմա
կենդանի մնալ։

[illegible]

Յեօթն երրորդում աւուրն
ելեալ կայսրն նստէր ՚ի
գահոյսն իւր. և հրամայեաց
կոչել զդահճապետն. և ասէ՝ երթ հան
զորդին իմ ՚ի բանտէն և տար սպան զնա.
և հեռացո՛ զգլուխն ՚ի մարմնոյն նորա տուծիդ մի
Ասէ Թագուհին յառաջ քան կոչել զդահ


ճապետն

ճապետն՝ ետ նմա բազում պարգևս. իբր
թէ նման մահապարտի սպանցէ զնա ։
Յայնժամ եկեալ դահճապետն՝ եհան զորդի
արքային ՚ի բանտէն. և ետ զձեռսն ՚ի
յետոյն կապել որպէս մահապարտի. և մու-
նետիկն առաջի իւր ձայնէր ասելով.
եթէ ոք կամենայ մեղանչել ընդ յետնա
մօրն իւրոյ, այսպիսի մահուամբ մեռանի.
Յայնժամ թագուհին հայէր ՚ի պատուհանէն.
և ուրախանայր ընդ միտս իւր թէ այսօր
կու կորընչի որդի արքային ։ Յայնժամ այս
պիսի նախատինօք՝ տանէին զորդի արքային
՚ի մահ. և նա աղէկոտոր սրտիւ երթայր ։
և ժողովուրդքն ափսոսելով ասէին. աւաղ
աւաղ և ո՜հ աւաղ որ այլվի տանին զորդի
արքային ՚ի զուր սպանմանն ։
Յայնժամ եօթներորդում դպրապետն յորում

մուծին էր յուղակիլմ, հեծեալ որընթաց
երիվարաւն նոյնժամայն եհաս նց և ասէ.
զի՞նչ գործէք: և բարկացեալ դահճպտին
ասէ. ընդէ՞ր այդպէս նախատինք ես արեր
զորդի արքային և ետուր արձակել զձեռսն
Ասէ դահճապետն ո՛վ բարի դպրապետ ո՛
չ գիտեմ թէ զինչ արարից. զի հրաման
թագուհոյն սաստիկ է. եթէ կարող ես
ազատել՝ ես արդելից զսա աստ. և դու
գնա առ կայսրն և ազատեա՛:
Իսկ ժողովուրդքն աղաղակէին և ասէին
փութամ առ կայսրն և ազատեամ զաշակերտն
քո՝ որ ընկերքն քո արարին: Իսկ որդի
արքային երկիրեպագ վարժապետին իւրոյ.
իբր կամէր ասել թէ ազատեա զիս ՚ի
մահուանէ: Իսկ դպրպտն փութանակի
եկն առ կայսրն. և երկրպագեալ Ա.ծա

 պաշտ

պատուով ողջունեաց զնա։ Ասէ կայսրն ած կորեւցէ զբարիքն ՚ի քէն։ Ասէ դպրապետն. տէ՛ր արքայ զի՞նչ գործ գործեցի որ այդպիսի բան խօսիս ընդ իս։ Ասէ կայսրն. ետու զորդին իմ ՚ի ձեզ՝ ճարտար լեզուաւ ՚ի բանս եւ ՚ի խօսս. եւ այժմ համրացեալ է։ Ետու զորդին իմ ՚ի ձեզ՝ զի պարկեշտ վարս ուսանիցի. եւ նա զկինն իմ կամեցաւ լլկել։ վն այնր գործոյն ահա մեռանի նա այսօր. եւ զձեզ զամենեսին դառն մահուամբ կորուսից։ Ասէ ցնա դպրապետն. տէր արքայ՝ ունկն դիր բանից իմոց եւ երկնամիտ լեր։ ասացեր թէ որդի իմ պապանձեալ է։ Ասէ կայսրն այո։ Ասէ դպրապետն. զանձն իմ եդից ՚ի մահ՝ եւ ընկերքն իմ ամ. եթէ ոչ խօսի ՚ի վաղուէն յառաջ քան զօթներորդ ժամն

 առաջի

առաջի ամենեցուն։ Ասէ կայսրն. եթէ
տեսից և շատ է ինձ։ Ասէ դպրապետն
պղլմ՛ ունիցի կենդանութի եթէ ոչ է ցէ
՚ի փառսուդ՝ որ անիրաւ զրպարտեց զնա
թագուհին քո։ Այլ զայս ասեմ քեզ.
եթէ տացես սպանանել զորդին քո մի
բանի կնոջ քո՝ պատահեսցէ քեզ այնպէս
զոր պատահեց զինչ որ իւմեմն. որ մեռաւ
մի կնոջ խորոյ։ Ասէ կայսրն. աղաչեմ
զքեզ ասա ինձ զառակդ զայդ։ Ասէ
դպրապետն. մի էր ՚ի զուր աշխատիմ և
ասեմ. զի մինչ ես պատմեցից զառակս՝ զորդին
քո սպանցեն։ Եթէ կամիս լսել զառակն
իմ, նախ դարձո զորդին քո ՚ի բանտէ. և
ես պատմեմ զառակս ազնուագոյնս ։
Յայնժամ խղճմտանք քո դատեսցէ մի
նի. կամ սպանանել կամ կեցուցանել զնա։

 Ասէ

Ասէ կայսրն. դարձիր 'ի տուն և ոչ 'ի բանտ. առաքել վասն բանին այնորիկ՝ զոր ասացեր թէ՝ 'ի վաղիւն խօսել լսէ առաջի ամենեցուն: Եւ դարձուցին զմանուկն 'ի տուն և պահապանս եդին նմա. և դպրապետն սկսաւ ասել զառակս զայս:

*Առակ եօթներորդ · զոր ասաց Յովհաննէս Դպրապետն և ցուցանէ զհնարսն · և խոստովանեցուցանէ զերկոսին նորա:

Ի քաղաքի միում՝ էր զինուոր ոմն ազատազն. և ունէր կին գեղեցիկ. որ զթագուհին քո և յոյժ սիրէր զնա առաւել քան զամ. մինչ զի ամենեւին առաջի ինքն ուրեք զգուշութիւն ոչ առնոյր: Եւ յաւուր միում խաղային այրն և կինն իմաստին խաղս ոսկոր կամ վէգս. և զինուորն այն ունէր 'ի ձեռին



իւրում՝

իւրում դանակ մի փոքրիկ. և կինն 'ի
խաղալն ընդ նմա՝ զարկոյց զձեռն իւր ընդ-
դանակն և վերաւորեաց զփոքրիկ մատն.
և ել սակաւ մի արիւն: Իբրև տես այրն
զարիւնն 'ի ձեռն կնոջն՝ անկաւ և ուշա-
թափեցաւ. ոպ՟ թէ ոք հարկանիցէ ըզ-
կառափ նորա: Եւ կինն ջուր ցանեաց
յերեսս նո՟ զի ուշաբերիցի փութով.
և նա եբաց զաչսն և ասէ կոչեցէք փու-
թով զքահանայն. զի ահա մեռանիմ վս՟
արեան կնոջ իմոյ: Եւ ծառայքն ըն-
թացան կոչել զքահանայն՝ զի եկեալ
հաղորդեսցէ զնա. բայց առաւել հոգա-
լոյն վասն սակաւ մի արեան կնոջ իւրոյ՝
մինչև եկեալ էր քահանայն՝ մեռաւ:
Եւ բարեկամքն նո՟ կոծ էին և աւաղէին
զնա որ 'ի զուր մեռաւ. և կինն լայր դառնապ՟



և ասէր

և ասէր՝ վա՜յ ինձ. արդ զինչ լինիցիմ ես ու։
այսուհետև նման տատրակի միացի անայր։
Եւ տարեալ թաղեցին զնա մեծաւ պատ-
ուով. և կինն անկեալ 'ի վերայ գերեզմանին
լայր անմխիթար։ Եւ ազգատոհմք նորա
կամէին զնա տանել 'ի տուն իւր. այլ նա
երդմամբ ասէր ցնոսա. եթէ 'ի տեղւոջէս
յայսմանէ ոչ ուրեք երթայց. այլ աստ
մնացից վերայ սիրոյ առն իմոյ։ Ասեն ցնա
բարեկամքն. ով բարի տիկին՝ մի թէ
այդպէս առնելովդ՝ շահ մի լինի՞ հոգւոյ
նորա. որ աստ անկեալ կաս. լաւ է զի եր-
թիցես 'ի տուն քո և արասցես ողորմութիւն
վասն հոգւոյ նորա։ Ասէ ցնոսա կինն. չա՛ր է
խրատն ձեր զոր ասէք ինձ. զի ես 'ի տե-
ղւոջէս յայլ ուրեք ոչ շարժեցայց։ այլ
աստ մնացից վերայ սիրոյ առն իմոյ. զի նմ


վասն

վասն սիրոյ իմոյ մեռաւ: Եւ տեսեալ բարեկամացն թէ ոչ կամի գնալ 'ի տունն՝ արարին նմա խուղ մի փոքրիկ 'ի վերայ գերեզմանի առն նր. և բերին առ նա անդ կերակուր և զամենայն պէտս նորա:

Յայնմ ժամանակին սահման կայր 'ի քաղաքին յայնմիկ և յամենայն թագաւորութեն նր. եթէ գող մի որ կախիցեն՝ քաղաքացի մի պահէր որ պահեսցէ զկախեալն. զի մի եկեալ ընկերքն գողասցեն զմարմին նորա:

Եւ թէ անփոյթ արարեալ պահապանն գողացուսցէ զմարմին կախելոյն, զամ ինչս նր յարքունիս տուգանել. և զինքն եւս 'ի տեղի նր կախել: Եւ յաւուրսն յայնոսիկ կախեալ եղև գող մի. մերձ 'ի գերեզմանի զինուորին այնմիկ: և քաղաքացի մի կարգեալ պահապան՝ առ 'ի պահել զգողն. որ էր



գրացի

գրացի զինուորին. և էր այրի։ Որ և ըզգե-
ցեալ զրահ. և առեալ զէնս. և հեծեալ 'ի
ձի՝ ել հանդէպ քաղաքին 'ի պահել զկինն։
Իսկ 'ի մէջ գիշերոյն՝ եղև ցուրտ և
պարզ յոյժ. և սառնայր այրն որ պահա-
պաններ. և ոչ կարէր ժուժել։ և հայե-
ցեալ ետես զի հուր ինչ ցոլայր 'ի տե-
ղւոջէն ուր էր կինն 'ի վերայ գերեզմանի
զինուորին. և գնացեալ անդ բախէր ըզ
դրունսն։ Ասէ կինն. ո՞վ է այդ որ յայս
ժամու եկեալ է աստ։ Ասէ պահապանն.
սիրելի տիկին՝ ես եմ դրացի քո. և պահա-
պանեմ 'ի գիշերիս վերայ գողուն. և սառու-
ցեալ եմ 'ի ցրտոյ. բայց զի սակաւ մի ջեռ-
նուցում հրոյս. զի ոչ կարեմ ընդ իմանալ
ցրտոյս։ Ասէ կինն. մուծանէի զքեզ 'ի
ներքս՝ բայց երկնչիմ զի անպատշաճ խօսս

 խօսիս

խօսիս առաջի իմ։ Այս պահապանն․
երդնում հաստատութ̃ զի զբանս զորս դու
կարծես ո՛չ բնաւ խօսեցայց առաջի քո․
այլ սակաւ մի ջեռայց և գնացից։ քանզի
լուեալ եմ վս̃ քո՝ որ կին ողբ̃ ես․ և վս̃
սիրոյ առն քո բնակեալ ես աստ։

Եւ կինն եբաց զդուռն․ և եմոյծ զնա
'ի ներքս․ և նա սկսաւ ջեռնուլ։ Եւ
իբրև ջեռաւ՝ այս պահապանն ցկինն․
տիկին բարի՝ մի՛ չար թուեսցի եթէ
ասից ինչ քեզ։ Այս կինն․ ասա՛ և ես
տաց քեզ զպատասխանին։ Այս պհպանն․
սիրելի տիկին՝ դու կին գեղեցիկ ես
փառաւոր և ընչաւէտ․ լաւ էր քեզ 'ի
տան քում բնակիլ և ողորմութ̃իս առնել
վս̃ հոգւոյ առն քո՝ քան թէ աստ բնակել
և լալով ցկեանս քո անցուցանել։

 Այս

Ասէ կինն. եթէ գիտացեալ էի որ զայդ-
խօսէիր՝ ոչ մուծանէի զքեզ ՚ի ներքս։
բայց զայս ասեմ քեզ՝ զոր ոմանց ասացի.
և դու լաւ գիտես թէ ո՛րպէս սիրէր զիս
այրն իմ. և վասն սիրոյ իմոյ մեռաւ՝ տեսեալ
սակաւ մի արիւն ՚ի ձեռս իմ. նոյնպէս
և ես վասն սիրոյ նորա կամիմ մեռանել աստ։
Լուեալ զայս պահապանն՝ ողջունեաց
զնա և գնաց տեսանել զգողն։ Իբրև հայե-
ցեալ ետես զի գողացեալ էին զմարմինն
կախեալ. և երկեաւ յոյժ և ասէ. վա՛յ ինձ
որ կորուսի զամենայն ինչս իմ. արդ զի՞նչ արա-
րից. կամ առ ո՛ երթայց հարցանել խրատ։
Գնացից առ մբ կինն և ՚ի նմանէ ուսայց
զխրատս։ Եւ եկն առ նա և ասէ. տի՛կին
բարի՝ ես եմ պահապանն որ աստ առ քեզ
չեռայ. այժմիկ ունիմ ծածուկ բան ինչ



ասել

ատել քեզ· աղաչեմ զքեզ՝ վս՛ տյսխրուն
բա՛ց ինձ զդուռն: Տէ՛ կինն է բացող
դուռն· և նր մտեալ 'ի ներքս և ասէ·
բարի տեղին՝ խնդրեմ 'ի քէն ուսանիլ
բարի խրատ: Զ սահմանեն երկրիս գլուեա
թէ ոչ պարտէ պահել զկախեալ· և եթէ
գողասցեն՝ յայնժամ պահողն կորուսցէ
զամ ինչս իւր· և զինքն 'ի տեղին կախես
ցեն: Տէ՛ ես մինչ աստ ջեռայ՝ գողացել
են զպողն 'ի կախաղանէն: Ա՛ս որոյ աղա
չեմ զքեզ՝ խրատ ինչ ուսո՛ ինձ թէ զի՛նչ
արարից· վս՛ զի զրկիմ յամ ընչից իմոց· և
զիս 'ի տեղին կախեսցեն: զայս ասացեալ
անկա՛ւ առ ոտս կնոջն և աղաչէր:
Ասէ ցնա կինն· ցա՛ւ է ինձ վս սահմանի
քաղաքիս· որ այսպիսի հաստատեալ են:
Տէ՛ արդ՝ լո՛ւր խրատու իմոյ և ո՛չ կորուս

ցես զինչս քո և 'ի մահուանէ ես ազատեցից
Ասէ պատասխանին. ասա՛ սիրելի տիկին.
զի զամենայն զոր ինչ և ասիցես դու՝ արարից
ես ըստ խրատու քո զի վասն այն եկեալ եմ
առ քեզ՝ որ քոյին խրատովդ ազատեցայց
'ի փառաւս յայսմանէ: Ասէ կինն. ահա՛
դու կին ոչ ունիս. եթէ զկին առնես 'ի
կնութիւն քեզ, տամ քեզ խրատ:
Ասէ պատասխանին. այժմ գտայ շնորհս
առաջի քո. որ կամիս ելանել 'ի գերեզ
մանէս՝ ունելով զիս քեզ այր: Ասէ՛ յօժա
րութ. արարից զինչ և ասիցես. զի դու ոչ
հայեցիր յաղքատութիւն իմ և սիրեցեր զիս
Ասէ ցնա կինն. ես միայն զքեզ կամիմ
և ոչ զայլ ոք: Ասէ պատասխանին. ես այլ
ոչ զոք կամիմ քանի որ դու կենդանի ես:
Ասէ կինն. այրն իմ որ մեռաւ վասն սիրոյ

 իմոյ

իմոյ. որ և դու իսկ գիտակ ես. զնա յերե
կեան օրն թաղեցին. հա՛ն զնա ՚ի գերեզ
մանէն և տար կախեա՛ ՚ի տեղի գողոյն որ
ազատիս ՚ի մահուանէ։ Ասէ պահապանն.
որպէս կամիս՝ այնպէս եղիցի։ և բացին զգ
երեզմանն և հանին զմեռեալն։ Ասէ
պահապանն. երկնչիմ յոյժ. զի գողոյն այն
մէկ ՚ի վերի կողման երկու ատամն հատեալ
էր. և եթէ զդա կախեսցուք՝ ատամամբն
ճանաչիցեն թէ ո՛չ է այն։ Ասէ կինն.
առ քար և հա՛ն զատամն դորա։ Ասէ
պահապանն. սիրելի տիկին այր քո սիրելի
էր ինձ և ընկերակից և բարեկամ էր ՚ի
կենդանութեան իւրում. այլ և նախատինք է
ինձ որ հատանեմ զատամունս մեռելոյն։
Ասէ կինն. ես հանեմ զատամունս դորա
վասն սիրոյ քո։ և առեալ քար եհան վերի



զատա

զատամունս։ Մուելոյն և ասէ․ տար կախեա՛
զդա այժմ։ Ասէ պահապանն․ դեռևս
երկնչիմ կախել զդա՛․ զի գողն այն ունէր
վէր մեծ ՚ի գլուխն իւր․ և զերկոսին
ականջսն ո՛չ ունէր։ Եթէ գտանիցեն զդա՛
առանց վիրաց և ականջօք ասիցեն թէ
ո՛չ է այն․ և ինձ ամօթ մեծ եղիցի։
Ասէ կինն․ հա՛ն զսուրդ և հա՛ր զգլուխ
դորա․ և հարթեա՛ զականջսն։ Ասէ
պահապանն․ սիրելի տիկին ո՛չ հանեցի
զատամն այնպէս և զայս այլ դու արասցես։
Ասէ կինն․ տո՛ւր ինձ զսուրդ քո և ես
արարից վս՟ սիրոյ քո․ և նա ետուր։ Եւ
նորա առեալ զսուրն արար վէր մեծ ՚ի
գլուխն նր՟․ և կտրեաց զերկոսին ականջսն
և ասէ․ արդ տար կախեա՛ զդա։ Ասէ
պահապանն․ ունիմ ա՛յլ ևս երկիւղ․ զի

 գողն

դուզն այն ոչ ունէր երանս։ Եւ եթէ զդա
երանսոք տեսանիցեն ճանաչիցեն թէ ոչ է
այն։ Ասէ կինն. ոչ եմ տեսեալ այր երկրին
չոր քանզի զքեզ յ'իմ երկրի. արդ կորեամ
զերանս գորա և տար կախեամ։ Ասէ
պահապանն. ով սիրելի տիկին՝ դու լաւ
գիտես որ առ անց երանից այր՝ չէ կորեալ
մարդ. Եւ եթէ կորեցից զերանս գորա,
նոյնպէս և ինձ պատահի. վն այն և զայդ
եւս դու արասցես։ Ասէ կինն. ճշմարիտ է
զոր առես. և ես վն սիրոյ քո զամ ինչ առ-
նեմ։ Նոյնժամայն առեալ զսուրն՝
կտրեաց զերանս մեռելոյն որ էր տէր
իւր և էարկ շանցն։ Եւ ասէ՝ արդ տարեալ
կախեսցես զայրդ տեղեղեալ դիմօք յ'ինքովս։
Ասէ պահապանն. այդպէս արարից։ Եւ
տարեալ կախեաց զմեռեալ 'ի տեղի գողոյն

 և այրե

և ապրեցաւ պահապանն։ Յետ այնորիկ
ասէ կինն. ո՛վ սիրելի իմ արդ ազատեցար
յամ͞ տրտմութ͞ է. եկ երթիցուք յեկեղե
ցին. և առաջի ամ͞նեցուն ասացես զիս ՚ի կնութ͞ի։
Ասէ պահապանն. ուխտ եդեալ եմ ա͞յ
որ դու քանի կենդանի ես՝ ես այլ կին
ո՛չ առից։ Ասէ կինն. վ͞ն էր։ Ասէ
պահապանն. ո՛վ թշուառական ընդոյնելդ
՚ի մէջ կանանց. ո՛վ առաջէ քեզ նմանն որ
զովեալ և զչար կինն ՚ի կնութ͞ի ինքեան։
Զի այր քո որ մ͞ս սիրէ արեամբ քո զանձն
եդուր ՚ի մահ, և դու այդպէս խայտա
ռակ արարեր զնա։ զատամունսն թափե
ցեր. զգլուխն վիրաւորեցեր. զականջսն
կտրեցեր. և զերանսն հատեալ՝ շանց ըն
կեցեր։ և ես մ͞ն այդպիսի կին առից զքեզ
՚ի կնութիւն զի և ինձ զայդ արասցես։



Ո՛չ

Ո՛չ թողից զքեզ կենդանի՝ զի մի ուսանս
զամ գործեսցես զայդ. և զայս ասացեալ՝
եհան զսուրն իւր և կտրեաց զգլուխ նորին:
Յետ այնորիկ ասէ դպրապետն ցկայսրն.
տէ՛ր արքայ ՚ի միտ առ՛ր զասացեալսն իմ:
Ասէ կայսրն. այո՛ ՚ի միտ առի: զի վասն
ամ չարեաց կանանց զոր լուեալ էի՝ դա
չարագոյն էր քան զամ և նզովեալ: Սակայն
ո՛վ դպրապետ՝ եթէ զձայն որդւոյ իմոյ
լուէի որ խօսէր, և թէ մեռանէի՝ ո՛չ էր
ինձ կսկիծ: Ասէ դպրապետն. ած պահէ
զքեզ ՚ի մեռանելոյ: արդ տուր զորդին
քո ՚ի յիս. և ՚ի վաղիւն՝ ժողովեսցեն առ
քեզ ամ իշխանք քո և ամ կուսակալքն քո
Եւ մեք ընկերօքս հանդերձ՝ բերցուք
զորդին քո ՚ի քեզ. և լուիցես զձայն որդւոյ
քո. նոյն և ամ իշխանք և կուսակալքն քո:

 Բան

Քանզի յոյս ունիմ առ քեզ՝ զի ՚ի վաղ-
իւն յայտնելոց է ճշմարիտն ՚ի մէջ Որդւոյ
և Թագուհոյն քո. որ անիրաւ զրպարտեց
Թագուհին զորդին քո ։
Ա՟ նոյնժամայն հրամայեաց արքայն՝
տալ զորդին ՚ի ձեռն յովակիմ դպրպետին։
Ա՟ էառ դպրապետն զորդի արքային
և գնաց առ ընկերսն իւր։
Ա՟ Թագուհին իմացեալ որ ոչ սպանաւ
որդի արքային, յայնժամ ասէ ցբարեկամսն
իւր. արդ զի՞նչ արարից՝ զի այսօր է̄ օր է
որ ջանացի սպանանել զորդի արքային և
ոչ կարացի. ահա եհաս ժամ զի ՚ի վաղիւն
խօսելոց է. և ես ոչ գիտեմ զի՞նչ արարից
զի երկնչիմ թէ ՚ի կենացս ելանեմ։
Ա՟ բարեկամքն Թագուհոյն մխիթա-
րէին զնա և ասէին. մի՛ երկնչիր ով

թագուհի՝ զի՞նչ առնելոց է քեզ որդի
արքային։ Եւ կայսրն՝ մտեալ երբեմն կայսրն
առ թագուհին եւ ասէ. ահա որդին իմ
ի վաղիւն խօսելոց է ընդ սիրելի թագու-
հի իմ. եւ յայնժամ տեսցուք թէ ի ձէնջ
ո՞րն է ճշմարիտ։ Ո ի այսօր եօթն օր է
որ դուն ջանացիր սպանանելոյ զորդին իմ,
եւ դպրապետքն ջանացին ապրեցուցանել.
ահա վաղիւն տեսցուք ած ինչ կաջողէ։
եւ թագուհին ինչ ոչ խօսեցաւ։

************

Յութերորդում առաւօտն ժողովումն դպրապետացն. եւ առանձնաւորութիւն արքային եւ թագուհւոյն ժողովելոց [illegible] առ կայսրն եւ [illegible]։

Յութերորդում առաւօտն ժո-
ղովեցան եօթնեքին դպրա-
պետքն իմաստնին. հարցանէին
որդւոյ արքային եւ ասէին. եղե՞ քեզ ժամ
խօսելոյ։

Ասէ որդի արքային․ այժմ եհաս ինձ
ժամ խօսելոյ և ապրեցուցանելոյ զիս և ըզ
ձեզ այսօր․ և դուք մնա՛ մի տրտմիք թէ
զի՞նչ խօսելոց եմ՝ ՚ի ժամուն այնմիկ ։
Եւ դպրապետքն զգեցուցին նմա զբե
հեզեայ պատմուճանն․ և բազմեցուցին
զնա ՚ի վերայ ոսկիակազմ երիվարի ։ Եւ
ել ՚ի նոցանէ յառաջ երթային ժ̃ ժ̃․ և
երեքն զկնի՝ ոսկիակազմ երիվարօքն ։
Եւ փողովք ազդեցուն՝ որընկօք եւ
թմբկօք և ամարուէ՛ստկնօք և բազում
ժողովրդովք և մեծաւ՛ փառաւո՛րութեամբ
և խնդութեամբ եկին առ կայսրն ։
Եւ կայսրն լուեալ զձայնն ուրախեաւ՝
ասէ ցնոս որ շուրջն կային՝ զի՞նչ է այդ զոր
լսեմ ես ։ Եւ նոքա ասեն․ ա՛րքայ յաւէ՛ի
տեան կաց՝ որդին քո գայ առ քեզ․ զի

այսօր առաջի քո և առաջի ամ՟ նախարարաց
քոց խօսեսցի ։ Եւ նոյնժամայն մտեալ ՚ի
պալատն. որ և դղրդեցաւ պալատն։ Եւ
մտեալ յառաջ դպրապետքն առաջի կայս
երն. և ողջունեցին զնա մեծաւ պատուով։
Եւ կայսրն մեծարեաց զնոսա ։
Եւ զկնի վարժապետացն՝ եկն որդի ար-
քային առաջի հօրն. երկիրպագ նմա և ասէ
Ողջ լեր գորովագութ հայր իմ և տէր
արքայ։ Եւ դարձեալ ողջունեաց զմեծա
մեծսն և ասաց. ողջոյն ընդ ձեզ իշխանք
հօր իմոյ մեծամեծք բոլոր հռօմայ ։
Իբրև լուաւ արքայն զձայն որդւոյ իւրոյ՝
՚ի մեծ խնդութենէն անկաւ յաթոռոյ
իւրմէ. և դարձեալ նստուցին յաթոռն իւր
Եւ զորդի արքային՝ նստուցին մերձ առ
հայրն իւր և ամ՟ մեծամեծք և իշխանք եկեալ

 երկրպա

երկրպագեցին որդւոյ արքային ։ Եւ որդի արքային կամէր խօսել ընդ հօրն իւրում, բայց՚ի ժողովրդենէն ոչ լինէր լսելի բան նր։ Եւ կայսրն հրամայեաց ծառայից իւրոց զի ոսկի և արծաթ ցանեսցեն ՚ի փողոցսն . որ այնու զնասցեն ժողովուրդքն անտի. և ինքն կարիցէ լսել զխօսին որդւոյ իւրոյ։ Սակայն ժողովուրդքըն ՚ի խնդութե բանից որդւոյ արքային՝ ոչ հայէին յոսկին և արծաթն . և ոչ ոք շարժեցաւ ՚ի տեղւոջէն իւրմէ ։ Եւ տեսեալ կայսրն որ ոչ շարժեցաւ ժողովուրդն՝ հրամայեաց քարոզ կարդալ և ասել զի լռեսցեն ամենեքեն և եթէ ումեք ձայն լսելի լինիցի, նոյնժամայն սպանցեն զնա։ Եւ իբրև լռեցին ժողովուրդքն ամենեքեն որ ոչ մնաց խօսէ ինչ.

 ասէ

սուէ որդւոյն ցկայսրն· Տէր արքայ՝ ո՛չ
խօսեցայց մինչեւ գայցէ թագուհին քո աստ։
Աղաչեմ զքեզ՝ զի հրամայես կոչել զնա
աստ առաջի քո և առաջի նախարարաց քոց·
և ամ կուսանքն և սրինորդքն իւր եկես
ցեն ընդ նմա։ Եւ՛ իսկոյն հրամայեաց
կայսրն կոչել զթագուհին զի ժամանեսցէ
ընդ ամենայն կուսանօքն իւրովք։ Եւ՛
եկին ծառայիցն ծանուցին զհրաման արքային
Եւ՛ ելեալ թագուհին ժողովեաց զամ
աղջկունսն իւր· և եկեալ առ կայսրն խռո֊
վեալ անձամբ եւ՛ տրտմեալ սրտիւ՛։
Յորժամ ետես որդի արքային զթագուհին
յայնժամ բարկութեամբ ասէ ցթագուհին·
կոչեցես դու այդր առաջի ամ ժողովրդեանդ
և առաջի ամ մեծամեծաց հօր իմոյ· և
ամ կուսանք քո՝ կարգաւ՛ կայցեն ընդ քեզ·

զի ամենեքեան տեսցեն զձեզ․ զի ունիմ բան ինչ խօսելոյ ։ Յայնժամ կանգնեցաւ Թագուհին հանդէպ արքային․ և ամ աղջկունքն կարգած կային առ ընթեր Թագուհւոյն

* [illegible]

Յայնժամ ասէ որդի արքային ցհայրն իւր․ տէր արքայ՝ ամբա՛րձ զաչս քո և հայեա՛ց 'ի կուսանսն Թագուհւոյ քո․ և առաւել ընդ այն որ գեղեցկագոյնն է զգեցեալ քան զամենեսեան․ և կայ առ ընթեր Թագուհւոյն կանանց պատմուճանաւ ։ Ասէ կայսրն․ այո՛ գիտեմ որդեակ իմ․ տեսանեմ և ճանաչեմ զնա՝ զի նա է 'ի մեր ամցուն

ամենեցուն. և յոյժ սիրէ զնա թագուհին և գովէ զնա ինձ՝ թէ լաւէ քան զամենեան: Ասէ որդին. հայր իմ աղաչեմ զքեզ՝ հրամայեա՛ մերկացուցանել զնա առաջի ամենեցուն. և ցուցից քեզ զորբութի թագուհոյն քո՝ թէ աղջիկ ունի յանկողնի իւրում: Եւ լուեալ կայսրն զխօսս որդւոյն իւրոյ՝ զարմացաւ և ասէ. որդեակ իմ ամօթ մեծ է մերկացուցանելն զկինն առաջի ժողովրդեանն: Ասէ որդին. հրամայեա՛ հայր իմ մերկացուցանել. և եթէ ոչ հրամայես ծառայից քոց մերկացուցանել՝ ես ինքնին մերկացուցից զնա: Եւ առ ժամայն հրամայեաց կայսրն մերկացուցանել. և իսկոյն մերկացուցին զնա անդ: Եւ իբրև մերկացուցին՝ տեսին ամենեքեան զի ոչ է աղջիկ, այլ երիտասարդ մանուկ:



և զարմա

և զարմացան ամենեքեան. վարժապետքն
և իշխանքն թէ որպէս ծանեաւ զնա որ
երիտասարդն էր: Ասէ որդին ցհայրն
տէր իմ արքայ՝ երիտասարդդ այդ՝ հա
նապազ պոռնկէր յանկողնի քում ընդ
թագուհոյն քո. և չէ զարմանք որ առաւել
սիրէ զնա և գովէ զնա քեզ: Իբ̂ տե-
սեալ կայսրն զայս՝ յամօթոյն իւրոյ ո̃չ
խելագար եղև. և հրամայեաց զի առժամայն
այրեսցեն հրով զթագուհին և զերիտասարդն:
Ասէ որդին. տ̃ր իմ արքայ և հայր իմ
սիրելի՝ թող այժմ զդասս զի ասասցեն
զճշմարիտն զոր ինչ վնաս եդին ՚ի վր̃ իմ:
Ասէ կայսրն. ով սիրելի որդեակ իմ,
՚ի ձեռս քո ետու զդատաստանս դոցա. զի
դու իմաստնագոյն ես քան զիս: Ասէ
որդին. ոչ ես և ոչ դու՝ այլ օրէնքն

դատաստանին դատեսցեն զդոքա. եթէ
խոստովանեսցին զստութիւնս իւրեանց։
Զի յորժամ հրամայեցեր ինձ գալ առ
քեզ, յայնժամ ամ փարթամութքն իմ հայե
ցան յաստղն և ես ընդ նոսա հայեցայ. և
տեսաք՝ զի եթէ յեօթն օրն այն թէ
խօսէի բան մի՛ մահու մեռանէի. և վս
այն պատճառի 'ի լուռ կայի։ Եւ թա
գուհին քո որ ասաց քեզ թէ բռնադատել
կամեցած զիս, ստեաց քեզ յայտնի է։
Զի յորժամ առ ընթեր քո նստանէի
և եկն թագուհին՝ և հարցեալ քեզ թէ
ո՞յր է որդին քո՝ և դու ասացեր այն է
և ոչ խօսի, յայնժամ էառ զիս հրամանաւ
քո և տարաւ զիս 'ի սենեակն իւր և հրա
մայեաց ամենեցուն 'ի բաց գնալ իւրմէ
և սկսաւ խօսիլ ընդ իս այսպէս։

 Սիրել

Սիրելի իմ գիրկղէտրիանոս՝ զկուսութ̃
իմ վասն քո պահեալ եմ. լուեալ էի զզ
համբաւ գեղեցկութ̃ քո՝ արդ այժմ տե
սայ և ծանեայ զգեղեցկութ̃ի քո. Եկն ինչեւ
ցուք իմխասին. և կամէր համբուրել զիս
և ես հեռանայի ՚ի նմանէ։ Եւ յորժամ
այս այսպէս եղև, ետուր թուղթ և թա
նաք և ասաց. գրեա ՚ի վր̃ թղթին և
ծանո ինձ զկամս քո. ահա խևացուցեր
զիս ով սիրելի իմ գիրկղէտրիանոս։ Եւ
իմ առեալ զթուղթն՝ գրեցի այսպէս.
ով թագուհի՝ ոչ կամիմ ես աղծել զտուն
և զանկողին հօր իմոյ. ոչ ինչէ ինձ շահ
այլ մեծամեծ մեղք է առաջի Այ̃. և ետու
զթուղթն ՚ի ձեռս նորա։ Եւ իբրև
էառ նա և կարդաց, նոյնժամայն ցտեաց
զերեսս իւր. և պատռեաց զհանդերձսն իւր.

 և

և զվնասն ՚ի վերայ իմ առաց։ Եւ լուեալ
կայսրն զայսոսիկ ՚ի յորդւոյն իւրմէ՝ խռո-
ժուեալ նայէր դէպ ՚ի թագուհին և ասէր։
Ո՞վ թշուառական՝ ո՛չ բաւականացար
առ սիրառն քո․ այլ և կամեցար զորդեակն
իմ ձգել ՚ի մեղս։ Եւ թագուհին անկեալ
խնդրէր ողորմութիւն։ Ասէ ցնա կայսրն․
ո՛վ նզովեալ կին՝ դու ո՛չ մի մահու ծա-
ռայեցեր, այլ բազում։ Նախ և առաջ
պոռնկեցիր առաջի իմ և պղծեցեր զանկողին
իմ։ Երկրորդ, զոր կամեցար զորդին իմ
ընդ քեզ ձգել ՚ի մեղս ։ Երրորդ՝ որ
զուր վնաս եդեր ՚ի վր̃ նր̃։ Չորրորդ՝
զի յորդորեցեր սպանանել զնա ։
Եւ թագուհին լայր և խնդրէր ողորմութիւն։
Ասէ կայսրն․ իրաւունքն ցուցանէ քեզ
թէ ո՛չ պարտէ ողորմել քեզ ։

 Ասէ

Ասէ որդին · տէր արքայ գիտես՝ զի
վս՟ մատնելոյն նմա զիս՝ անմեղս տարեալ
եղէ ա՟մ աճուրս 'ի կախաղանն · այլ ա՟ծ
փրկեաց զիս մինչև ցայսօր 'ի ձեռն վար
ժապետաց իմոց։ և այսօր փրկեաց զիս տ՟ր՝
ես և զվարժապետքն իմ։ Եւ՞ թէպէտ
կամքն ա՟յ՝ լինէր այնպէս որ թ՟գ՞որէի
և տիրէի 'ի կենդանութե քում որպէս
թագուհին զրպարտեաց զիս, սակայն ես
պատուէի և 'ի մեծարանս պահէի զքեզ ·
ո՟չ վայելէ որդւոյ մեծարել զհայր իւր։
և դու առանց աշխատանաց լինէիր 'ի
հանգստեան։ Այլ և ուսուցանէիր զիս
թէ ո՟չ վարեցից զթագա՞ւորութիւն իմ ·
և ըստ կամաց քոց առնէի զա՟մ՝ զոր 'ի քէն
ուսանէի։ Որպէս զինուոր ոմն որ զորդի
իւր ընկէց 'ի ծով · այլ ա՟ծ փրկեաց զնա

 և եղև

և եղև թգ՟ւոր եգիպտացւոյ · և եգիտ
զհայր և զմայր իւր․ և պահէր ՚ի պատուի
որ քան կենդանիս էին։ Թէպէտ նոքա
ընկեցին զորդին իւրեանց ՚ի ծով, այլ նա
ոչ արհամարհէր զնոսա․ այլ մեծարէր և ՚ի մէջ
փառաց պահէր։ Ասէ կայսրն․ ով քաղցրիկ
որդեակ իմ․ օրհնելէ ժամն այն որ դու
ծնար յերկրի․ զի լուեալ ՚ի քէն բան իմաստուն
Արդ՝ եօթնեքին վարժապետքն քո
գեղեցիկ առակօքն իւրեանց ապրեցուցին
զքեզ․ և այժմ դու ասասցես մեզ գեղեց
կագոյն առակ մի և զոր արձակուսցես զմեզ ։
Ասէ որդին · հայր իմ՝ հրամայեա զի
լռեսցեն ամենեքեան մինչև պատմեցից ըզ
բանս իմ։ Եւ հրամայեաց կայսրն զի
լռեսցեն․ և իբրև լռեցին ամենեքեան՝
սկսաւ որդին արքային ասել։


Առակ

Առակ Դ. Խօսկէ փիլիսոփայն Արքայ որդւոյն Առաջեաւ
՚ի ըստ ամենայն հրապարակին։

Այր 'ի քաղաքի միում յեգիպտական սահմանին զինուոր մի և ունէր որդեակ մի միամօր. որպ և դուն զիս ունիս. և յոյժ սիրէր զնա։ Եւ 'ի տղայութեան հասակին առաքեաց զնա առ իմաստասէր ոմն. որպէս և դուն զիս ետուր վարժապետաց իմոց. զի իմաստասցի և դաստիարակեսցի իմաստութեան ածումն։ Եւ մանուկն էր սուր մտօք. աճէր և զօրանայր օրըստօրէ իմաստութեան արուեստին. և եղև բուն իմաստասէր. եղեալ առ վարժապետն ամս է։ Յաւուր միում կամեցաւ հայր նորա բերել զմանուկն։ Գրեաց առ նա թուղթ և ասէ. 'ի հասանել քեզ նամակիս՝ եկեսցես առ իս։

 Եւ

Ո՜ մանուկն հնազանդեալ հրամանի
հօրն իւրոյ՝ եկն առնա ՚ի ժամադրեալ օրն
Ո՜ ուրախացան ծնօղք նր՟ ՚ի գալն նր՟.
և մանուկն էր յայժ գեղեցիկ տեսլեամբ
և իմաստուն ։ Ո՜ յաւուր միում նս
տեալ էին հայրն և մայրն իւր ՚ի սեղանն.
և մանուկն կանգնեալ կայր առաջի նոցա
և ծառայէր ։ Ո՜ յանկարծակի եկն
պիւղպիւլ մի և նստաւ ՚ի վր՟ դստիկոնի
որահին և կարդայր քաղցրաձայն ։ Ո՜
այնչափ քաղցր կարդայր որ զմայլեցաւ
զինուէ սրն և ասէ. ՚ի չափ ծերութ՟ հասայ
և այսպիսի քաղցր եղանակ ոչ եմ լուեալ ։ և
երնի այնմիկ որ գիտէ զլուծն և զխոստ դր՟ ։
Ասէ որդին ցհայրն իւր. տր իմ եւ սիրելի
հայր՝ գիտէ ծառայքո զխօսս դորա. բայց
երկնչիմ մեկնել առաջի քո. զի մի՛ չար

Թողեսցի առաջի ձեր ։ Ասէ հայրն ․
առա՛ որդեակ իմ զի տեսից և իմացայց․ և
վասն է՞ր բարկանալոց եմ քեզ ։
Ասէ որդին․ պիւլպիւլս այս՝ վ՛ն իմ խօսի
և այսպէս ասէ ՚ի կարգալն իւրում ։ ոչ
թէ լինելոց եմ ես մեծատուն և անուանի
յոյժ․ զի ծնողքեան ՚ի պատուէ ունիցեն զիս
Եւ հայր իմ հարազատ՝ ջուր արկցէ
լուանալ զձեռս իմ․ և մայր իմ զդաստառակ
առեալ ՚ի ձեռին իւրում տայցէ ձեռացս իմոց ։
ահա այսպէս որ երգնէ և կու խօսի պիւլպիւլն ։
Յայնժամ սրտմտեալ մայրն իւր և ասէ․
մի՛ հասցես յօրն այն որ ես և հայր քո
ծառայեսցուք քեզ ։
Ասէ որդին․ ես զհասանելն և չի հա
սանելն ոչ գիտեմ․ այլ զխօսս պիւլպիւլին
մեկնեցի առաջի ձեր․

 և ահա

և ահա՛ւասիկ եմ զոր ինչ առնել ցուցէք ինձ։
Ս՛էր մայրն նորայ այնպիսի՝ որպ թագուհին
քո ինձ է. և կամէր սպանանել զմանուկն.
և հայրն ոչ կամէր զի միամիտ էր. այլ թոյլ
տայր ասելով. համբերեա՛ կին՝ տեսցուք
վերջն ուր կու դադարի։ Ս՛ կինն էր
անհամբեր որպ զթագուհին քո. ետուր
բերել փայտեայ տապան մի. և ձիւթով
ամրացուցին 'ի ներքուստ և արտաքուստ
և եդին զմանուկն 'ի մէջ նորին. սակա՛ ինչ
կերակրոց և ըմպելոց. և ամրացուցին ըզ
բերանն. և ետուր ընկենուլ զնա 'ի ծովն.
և ասաց՝ ահա՛ թող մեծացուցանէ զքեզ զ
պիւլպիւլն։ Ս՛ փայտեայ տապանն լողայր
'ի մէջ ծովուն և հանդիպեցա՛ նաւ՛ի միոյ.
և նաւ՛ապետն կարծեաց թէ նաւ՛ ընկղ-
մեալ է. և ասաց թէ՝ ջրոյ կամ գինւոյ ամանէ
Ս՛

Եւ ուղարկեաց զսպասաւորն զի երթեալ
բերցեն զփայտեայ տապանն. և իբրև ՚ի
վեր առին և բերին ՚ի նաւն, նաւապետն
բացեալ զբերան տապանին՝ ետես զմանուկն
և զարմացաւ ։ Եւ ասէ ցմանուկն. ով
եդ քեզ ՚ի փայտեայ տապանիս. և մանուկն
պատմեաց կարգաւ զամենայն նաւապետին
Եւ նաւապետն դարմանեաց զմանուկն
մինչև գնացեալ հասին յեգիպտոս. զի անդ-
գնային։ Եւ յորժամ հասին ՚ի յեգիպտոս
վաճառեց նաւապետն զմանուկն նախարարի
միոյ արքային եգիպտացւոց ։ Եւ նախա
րարն այն յոյժ սիրեաց զնա վասն յաջողակ
լինելոյն յամենայն բանս իւր ։

Եւ յայնմ ժամանակին թագաւորն եգիպտացւոց
կոչեաց զամենայն նախարարսն իւր և զամենայն
մեծամեծս և իշխանս իւր՝ վասն իրիք ինչ

խորհրդոյ։ Եւ զի ժողովեցան առ նա ամենայն
իշխանքն և նախարարքն ՚ի պալատն արքունի։
Եւ նախարարն այն որ առաջ ել էր զմանուկն
՚ի նաւապետէն՝ տեսանէր որ յոյժ իմաստութեամբ
շարժէր՝ հագոյց նմա պատմուճանս գե-
ղեցիկս. և առեալ ընդ իւր գնաց։
Եւ տեսեալ թագաւորն որ ժողովեցան առ
նա ամենայն իշխանքն, եկն և նստաւ յատեանն։
Յայնժամ ասէ թագաւորն ցիշխանսն իւր.
սիրելի իշխանք իմ և մեծամեծ նախարարք
իմ. գիտէք զպատճառն կոչելոյն իմ զձեզ։
Ասեն նախարարքն՝ ոչ գիտեմք. այլ
հրամայեսցէ արքայ՝ և մեք տացուք պատասխանի
Ասէ թագաւորն սիրելիք իմ եթէ ուտիցեմ
եթէ ըմպիցեմ, եթէ նստիցիմ և եթէ
կանգնիցիմ, երեք ագռաւք սեաւք միշտ
թռուցեալ աղաղակեն զկնի իմ հանապազ
անդադ

Անդադար ձայնիւ. և ահացուցանեն զիս
'ի հայելն իմ զնոսա։ Եւ մինչդեռ արքայն
խօսէր ընդ նախարարաց իւրոց եկին աղուէքն
և սկսան աղաղակել. և ասէ արքայն՝ ահա եկին
Եթէ ոք գիտասցէ զպատճառ աղաղակի
դոցա, թէ վասն էր աղաղակեն զկնի իմ
հանապազ. և եթէ հալածեսցէ ոք զնոսա
զի մի՛ այլ երևեսցին ինձ և ոչ լուիցեմ
զձայն աղաղակի նոցա, երդնում 'ի թա-
գաւորութիւն իմ որ տաց նմա զդուստրն
իմ 'ի կնութիւն և յետ վախճանի իմոյ՝
թագաւորեսցէ 'ի տեղի իմ։ Եւ աղուէքն
աղաղակէին և ահացուցանէին զամենեսեան
Եւ ոչ ոք գտաւ անդ 'ի նախարարացն
պատասխանի առնել արքային. քանզի ոչ
կարէին հալածել զաղուեսն և ոչ իսկ
ճանաչէին զխօսս նոցա։



Յայն

Յայնժամ մանուկն ասէ ցտէրն իւր.
գիտենայի եթէ արքայ կատարէր ըզ
խոստմունսն իւր, ես թարգմանէի զայն։
Ասէ ցնա տէր իւր. եթէ կարես պատ
մել ստուգիւ՝ ես ծնուցից արքային վ̃ք.
Ասէ մանուկն տէր՝ զանձն իմ փոխան
տաց եթէ ոչ թարգմանեցից ստուգիւ։
Նա՛ նախ̃րն որ էր ը̃ր մանկանն եկեալ
առ արքայն՝ երկիրպագ և ասէ. տէր
իմ և հզօր արքայ՝ գիտեմ ոչ̃ մանուկ որ
գիտէ թարգմանել զայդ. եթէ տացես
նմա զոր խոստացարն։ Ասէ ցնա թ̃գրն.
երդնում ՚ի թ̃գ̃ որութիւ իմ որ զ̃մ
ինչ զոր խոստ̃ցայ բնիւ կ̃տրեցից գործով։
Նա՛ դեռևս աղաղակէին առաւ̃քն։
Նա՛ նախարարն լռէ եալ զայս յարքայէն
կացոյց զմանուկն առաջի արքային։


Նա՛

Ի՜ տեսանել արքային զմանուկն՝ ասէ ցնա·
ով պատանեակ՝ կարես պատասխանի առնել
առ այս։ Ասէ մանուկն· այո՛ կարող եմ
տէր իմ և հզօր արքայ։ Ասէ արքայն·
զի՞նչ աղաղակեն դոքա։ Ասէ մանուկն
Թարգմանութի դոցա այս է որ հետևել
են արքայիս իմոյ և աղաղակեն Թախանձանօք
Ագռաւքդ այդոքիկ՝ են արու և էգ·
և երրորդն ձագ դոցա է։ Ի ժամանակի
միում եղև սով սաստիկ· որ մարդ և անասու
ունք և Թռչունք մեռանէին ՚ի սովու·
և ձագ դոցա՝ նստէր ՚ի վերայ բունոյն։
յայնժամ մայրն նր Թողեալ զձագն իւր՝
Թռուցեալ գնաց յերեսաց սովուն· և այլ
ոչ եկն առ ձագն իւր։ Ի՜ հայր իւր՝
սնոյց զնա մեծաւ ջանիւք· զի Թռուցել
յոգս՝ զոր ինչ և գտանէր կերակուր ինքեան


զայն

զայն ոչ ուտէր · այլ բերէր ձագոյն · և ինքն սոված մնայր։ և այնչափ կերակրէց զձագ իւր՝ մինչև թռուցցին։ Եւ յորժամ էանց սովն՝ եկն մայր նորա և կամէր բնակիլ և ընկերակցիլ ընդ նոսա · և այրն նորա որ էր հայր ձագոյն՝ ոչ թողոյր զնա ասելով· Թէ ուր ՚ի ժամ սովուն ի բաց մեկնեցար ՚ի մէնջ այժմ ես մի՛ ուրախասցիս ընդ մեզ։ Ասէ ցնա էգն · ես ցաւօք ծնայ՝ և կամիմ վայելել ՚ի սէր նորա· զի իմ է ուրախանալ և ընկերակցիլ ընդ ձագոյն՝ և ոչ արուին։ Ասան այն զկնի արքայիս թռուցեալ աղաղակեն անդադար· զի դատաստան արասցես ՚ի մէջ նոցա · թէ ո՞ ՚ի նոցանէ ունիցի ընկերակցութիւն ձագոյն։ Արդ տէր իմ և հզօր արքայ՝ իրաւունս արա և հատ զվճիռ նոցա · զի գիտասցեն թէ ո՞ ՚ի

 նոցանէ

նոցանէ ունիցի զձագն . և այլ ոչ երևին
քեզ ագռաւուքդ ։ Մինչև ցայսվայր՝ ոչ
աղաղակէին ագռաւուքն ։

Ասէ թ գիրն . յորժամ մայրն եթող զձագն
իւր ՚ի ժամ սովուն և գնաց, այժմ ես ՚ի
բացկացցէ ՚ի նմանէ ։ Եւ եթէ ասիցէ
զնեղութիւն ՚ի ժամ ծնանելոյն, այն նեղութիւն
եղև նմա ցնծութիւն յորժամ ետես զզաւակ
իւր . այլև պատճառ ծննդեանն նորա հայրնէ .
և յաւէտ որ մնոյց զնա և կերակրեաց ՚ի
ժամ սովուն . և ինքն նուաղէր և կայր սովեալ ։
Վասն որոյ հրամայեմ ձագոյն լինել ընդ
հօր իւրում . և մայրն նորա մի ունիցի մասն
ինչ ՚ի նմանէ ։ Լուեալ զայս ագռաւուքն
միաձայն աղաղակեցին . իբր թէ շնորհա
կալ եղեն յարքայէն . և թռուցեալ հե-
ռացան յերկրէն այնմանէ ։

Յայնժամ ասէ թգ̃րն ցմանուկն. որդեկ
զի՞նչ անուն քո: Ասէ մանուկն. անուն
իմ աղեքսանդր կոչի: Ասէ թագաւորն
որդեակ իմ աղեքսանդր՝ այսուհետեւ մի՛
զ:ք անուանեսցես քեզ հայր՝ բաց յինէն.
զի զդուստր իմ տաց քեզ ՚ի կնութի̄. և
յետ վախճանի իմոյ՝ դու լինիցիս թգ̃ւր
՚ի վերայ երկրին եգիպտացւոց:

Եւ մանուկն աղեքսանդր՝ երկիր եպագ
արքային. և բնակեցաւ առ արքային ժամա
նակ ինչ. և ամենեքեան սիրէին զնա:

Յետ այնորիկ մանուկն աղեքսանդր արար
հեծեալս. և արշաւե̃լ առնէր պատերազմ
և յաղթէր ամենեցուն: Եւ ո՛չ ոք իշխէր
մարտնչիլ ընդ նմա. և կամբաւական լինել
իմաստութ̃ն նորա: և ամ̃ոք հարցանէր խրատ
և ուսանէր ՚ի նմանէ:



Այր

Այր ՚ի ժամանակին յայնմիկ կայսր ոմն
որ կոչէւր անուամբ տիւրոս. որ անցե՟լ
էր իմաստութ՟ և մեծութ՟ զա՟մ թագաւորս
երկրի. և նստէր յաղէքսանդրիայ. և համ
բաւ նորա տ՟րծե՟լ էր ընդ ա՟մ տիեզերս։
Եւ եթէ ոք կամէր ուսանիլ մարդաւա
րութ՟ի. և տեսանել մեծազարդ գեղեցկութ՟ի
ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականա
նաց՝ գային առ նա և ուսանէին մարդա‿
ւարութ՟ի. քանզի ա՟մ ինչ գտանէր առ նա։
Աղէքսանդր լուեալ զկայսրն տիւրոս՝
եկն առ արքայն և ասէ. հայր՝ ա՟մ աշխարհ
գովէ զտիւրոս կայսրն. զկարգ և զսահման
ն՟ր. զի ցանկալի ասեն լինիլ զսահման ՚ի
պալատնորա։ Արդ աղաչեմ զքեզ՝ եթէ
հաճոյ թուեսցի յաչս քո՝ առաքեա զիս
առ նա. թերևս կարացից ուսանիլ իմաս

 տութ՟ի

տուն իմ և 'ի նմանէ: Ասէ ցնա Թագաւորն.
և ինձ հաճոյ է այդ առ ընդ քեզ բարեկամ
ակն և արծաթ և գինս. մինչ զի այդ լիցի
ինձ անուն, և քեզ շահ: Բայց պատշա-
ճաւոր համարիմ զի նախ առցես զդուստր
իմ՝ և ապա գնասցես: Ասէ Աղէքսանդր.
տէր իմ արքայ և հայր սիրելի՝ համբերեա
սակաւ մի ժամանակ. և յորժամ դարձայց՝
յայնժամ մեծաւ պատուով առից զդուստրն
քո 'ի կնութիւն ինձ: Ասէ Թագաւորն. որպ
հաճոյ է քեզ՝ այնպէս արա որդեակ իմ:
Յայնժամ արքայն գրեաց հրովարտակ և
ետ 'ի ձեռն Աղէքսանդրի: Եւ Աղէք
սանդր երկրպագեալ արքային՝ և առեալ
ընդ իւր գանձս բազումս՝ և ծառայս աղախինս
և քաջամարտիկս՝ և եկն յԱղէքսանդրիա՝
գնաց 'ի դուռն արքունի: և դռնապանն
եմուտ

եմոյծ զնա 'ի ներքս ։ Իսկ նա մտեալ երկիրեպագ կայսերն. և ողջունեաց զնա մեծաւ պատուով. և ետ զհրովարտակն 'ի կայսրն Իսկ կայսրն հարցանէր զաղեքսանդր և ասէ. ո՛րդեակ՝ յորմէ՛ երկրէ ես դու. և զի՞նչ է բանն քո աստ առ իս ։ Պատասխանի ետ աղեքսանդր և ասէ. տէ՛ր իմ արքայ՝ որդի եմ արքային եգիպտացւոց. և ժառանգ աթոռոյ նորա. և եկեալ եմ ծառայել քեզ՝ եթէ գտից շնորհս առաջի մեծութեան քո Քանզի ընդ ամենայն աշխարհ հռչակի համբաւ մեծութեանդ. և շնորհք գիտութեան քոյին. և ես կամիմ ծառայել 'ի պալատի քում։ Իսկ կայսրն ընթերցեալ զհրովարտակն և իմացեալ զկամս նորա՝ ասէ ցնա. որդեակ իմ, զի՞նչ անուն է քո։ Իսկ նա ասէ ցնա

աղեքսանդր կոչի անուն իմ ։

Ասէ կայսրն. որդեակ իմ աղեքսանդր՝ տացէ քեզ ա̃ծ ունել զկարիս. և զո՛յս ծառայութիս կու պատրաստեմ քեզ. զի ա̃մ ա՛ւուր դո՛ւ պ̃տստես զճաշ իմ։ Պ̃տսխանի ետ աղեքսանդր և ասէ. տէր՝ պ̃տրաստեմ կատարել զկամս քո։ Եւ՛ նոյնժամայն սենեկապետն արքայի՝ եցոյց նըմա դարպաս մի. զի անդ լինիցի հ̃նրձ ծառայիւքն իւրովք։ Եւ՛ աղեքսանդր զա̃մ ինչ իմացաւ թէ առնէր առաջի կայսրն. և ա̃մքն սիրէին զնա։ Յետ այնորիկ ո՛չ յետ բազում աւուրց եկն որդի արքային խորայէ լացոց. որում անուն էր լութֆիկ։ Որև նա ևս էկ-եալ էր զի ծառայեսցէ կայսերն. և ուսանիցի կարգ և սահման։ Որև զնա ընկալաւ մեծաւ պատուով կայսրն հարց̃է զանուն նորա և զտոհմ և զերկիր նորա։

Եւ՛

Եւ նա պտասխանի տուեալ ասէ . անուն
իմ կոչի լուլթֆիկ. որդի ծառային ձերոյ՝
արքային խորայէ լացոյ։ Ասէ ցնա կայսրն
կարգեալ եմ զաղէքսանդր զի բերցէ ճաշ
առաջի իմ. արդ կամիմ և զքեզ զի դու
առցես բաժակ ՚ի ձեռին քում և տացես
ինձ գինի ՚ի սեղան իմ։ Ասէ լուլթֆիկն
տէր՝ պատրաստեմ կատարել զկամս քո ։
Եւ նոյնժամայն սենեկպտն եցոյց նմա
բնակութի ՚ի նոյն դարպասի յորում
բնակեալ էր աղէքսանդր ։ Եւ նոքա
երկոքեանն՝ լուլթֆիկն և աղէքսանդրն՝
յոյժ նմանէին միմեանց. դիմօք և շարժ
մամբ ՚ի բանս և ՚ի խօսս ամ իրօք. մինչ
զի ոչ ոք կարէր ճանաչել զնտ թէ որն է
լուլթֆիկն կամ աղէքսանդրն ։ Եւ նոքա
երկոքեանս՝ յոյժ սիրեցին զմիմեանս ։

Նա՛ էր աղեքսանդր յոյժ զօրեղ և վայելչ
բայց լութ փիկն՝ էր կամկար և անուշ։
այսու՛ իկ միայն ոչ էին նման միմեանց ։
Նա՛ կայսրն ունէր միայն դուստր մի միմօր
որ կոչիւր անունն փլօրէնցիա․ որև նա
էր ժառանգ կայսերն․ և հայրն նր՝ յոյժ
սիրէր զնա։ Նա՛ աղջիկն էր պարկեշտ
և գեղեցիկ յոյժ․ և էր առանձնակի ՚ի
դարպասի մի հանդերձ ծառայիւք և աղախ
նօք իւրովք ։ Նա՛ յամ ամուր ՚ի մեծա
մեծացն գայր ախորժակ թագաւորական․
և ՚ի նոցանէ բաժանէր կայսրն մասն ինչ՝
և ուղարկէր դստերն իւրոյ ձեռամբն
աղեքսանդրի ։ Նա՛ դուստր կայսերն՝
յոյժ սիրէր զաղեքսանդրն․ ոչ թէ վս
ծռուն, այլ վս իմաստուն․ զի իմաստութ
և շնորհօք առնէր զամենայն բան։

 Նա՛

Եւ յաճուր միում գործ մի մեծ լինէր աղէքսանդրի եւ 'ի ժամ ճաշոյն ոչ գտաւ անդ. եւ Լուլթֆինն ծառայէր փոխանակ նր։ Եւ յորժամ կերաւ կայսրն զյետին ախորժակ կերակուրն, առէ ցԼուլթֆինն կարծելով թէ աղէքսանդրն է. որդեակ՝ տարցես զայս յինէն դստերն իմոյ։ Եւ Լուլթֆինն՝ զեռեւս չէր տեսեալ զդուստրն կայսեր. եւ իբրեւ եմուտ 'ի դարպասն՝ երկիրպագ նմա եւ ողջունեաց զնա. եւ ետ նմա զկերակուրն եւ ասէ. հայր քո առաքեաց զայս քեզ։ Եւ իբրեւ ետես զնա դուստրն կայսեր, իսկոյն ճանաչեաց զնա զի ոչ էր աղէքսանդրն։ Ասէ Ֆլորէնցիայն. սիրելի իմ զի՞նչ է անուն քո. եւ ում որդի իցես դու։ Ասէ Լուլթֆինն անուն իմ կոչի Լուլթֆիկ. եւ որդի եմ



թագ

թդրեն խորայէ լայւոց. և ծառայ կայսերն։ Ասէ ցնա աղջիկն. ո՛ղջ լեր ՚ի տէր և երթ ՚ի խաղաղութե. և շնորհակալ լեր հօրն իմոյ յինէն։ Եւ լութֆին երկիր եպագ նմա և ել գնաց։ Եւ յորժամ լութֆին առ նմա էր՝ ո՛չ ոք էր առ կայսրն որ տայր նմա զբաժակն. և եկեալ աղէքսանդրն ետես զի ո՛չ ոք էր անդ՝ ծառայեց նմա փոխանակ լութֆիկին. ո՛չ նա փոխանակ նորա արար։ Յետ այնորիկ՝ անկաւ լութֆին ՚ի մահիճ հիւանդութեան մեծ։ Լուեալ աղէքսանդրի՝ եմուտ առ նա և ասէ. ո՛վ սիրելի իմ լութֆիկ զի՞նչ է այդ որ կաս ՚ի մահիճս։ Ասէ լութֆին հիւանդութի մեծ անկաւ ՚ի վերայ իմ. կործեմ թէ մեռանելոց եմ ՚ի հիւանդութենէս։ Ասէ աղէքսանդրն. Ճշմարտիւ՛ գիտեմ

ես

ես պատճառ հիւանդութե՟ քո. զի յերէկ
եան օրն փոխանակ իմ տարեր կերակուր
դստերն կայսեր. և տեսեր զնա և հայե
ցար 'ի դեղ դիմաց նո՟ր. և 'ի նմանէ խոցե
ցաւ սիրտ քո այդ է պատճառ հիւանդութե՟ քո
Ասէ ցնա լութֆին. եղբայր աղէքսանդր
եթէ բժիշկք համօրէն աշխարհի 'ի մի
վայր ժողովէին, ոչ կարէին ճանաչել զդ
ցաւս իմ որպէս դու ճանաչեցեր. և այս ոչ
միայն հիւանդութե՟, այլև մահու ես լինի
ինձ պատճառ: Ասէ աղէքսանդր. եղբայր
իմ լութֆիկ՝ լեր դու հաստատ. և ես
օգնեցից քեզ 'ի բանդ. մի՛ երկնչիր եղ
բայր իմ, զի զանձն իմ դնեմ 'ի վե՟ր քո և
կատարեմ զկամս քո. զի մի՛ 'ի զուր մեռանիցիս
Եւ ելեալ 'ի նմանէ՝ գնաց 'ի շուկայն.
և գնեաց իւր արծաթով դաստառակ մի

մետաք

մետաքսեայ ունէր թել և լի ախտմբք պա
տուճ ախտանօք. առանց խոստովանէ լութ ֆիկին
Ապա տարեալ առ աղջիկն և ասէ. ով
սիրելի և քոյր իմ ֆլօրենցիա՝ լութ ֆիկին
առաքեց զդատաստանս զայս քեզ պարգև
Ապա աղջիկն տեսեալ զայն և ասէ. ով
աղէքսանդր՝ ո՞ր կարաց գտանել լութ
ֆիկին զայսպիսի գեղեցիկ իրք. և մտ էր
առաքեաց զայս ինձ. զի ոչ երբէք ետես
նա զիս բայց մի անգամ։ Ասէ աղէքսանդր
որդի է թագաւորին իսրայէլացւոց և
զամենայն ինչ ունի ընդ իւր բաւական։
Ապա եթէ հարցանես թէ մտ էր առա
քեաց քեզ զպարգևս զայս ձեռամբ իմով,
այնպէս գիտասցես՝ զի մտ սիրոյ քո հի
ւանդացեալ է մարմ ի մահ. և եթէ հասանի
նմա մահ, դու մահապարտ լինիս։ մտ որոյ
ասեմ

առ մեզ զի փոքր ինչ մխիթարեսցես զնա
Ասէ աղջիկն. ո՛վ Աղեքսանդր՝ խրատով
քո կամիս զի ապականեալ տացես զկուսութիւն
իմ. քա՛ւ լիցի ինձ առնել զայդ. եւ ո՛չ
կամիմ ես շահել զայդպիսի գործ: ՚ի
բա՛ց գնա յինէն. եւ այլ մի՛ եւս յիշեսցես
առաջի իմ այդպիսի բան:

Սա՛ Աղեքսանդր երկրպագեաց նմա եւ
ել ՚ի շուկայն կրկին անգամ. եւ գնեաց
իւր արծաթ ոսկի ածելի գնով մարգարտով
ընդելուզեալ եւ ականբ պատուականօք
յօրինեալ մեկ լա՛ւ իր մի՛ առանց գիտութեան
լութփիկին. եւ տարեալ յերկրորդում օրն
յորժամ տարաւ ՚ի հօրէ իւրմէ ղախուր
ժակ կերակուրն՝ եդ զնա առաջի աղջկանն.
եւ ասաց թէ լութփի՛ն առաքեաց քեզ
զողջոյնս զայս:

Եւ աղջիկն տեսեալ զմեծագին պարգեւսն՝
սկսաւ ասել ցաղեքսանդր. զարմանամ ես
քեզ զի դու միշտ եւ հանապազ տեսանես
զիս՝ եւ վասն քո երբեք ինչ ոչ ասացեր։
Ասէ ցնա աղեքսանդր. այդպիսի իրք
ո՛չ պատահեաց ինձ ումեմն. եւ ինձ պա՛րտ է
սիրել զընկերն իմ իբրեւ զանձն իմ։ արդ
աղաչեմ զքեզ՝ վասն Աստուծոյ մի՛ տար նմա մատա
նել եւ կորիլ վասն քո 'ի զուր. սակայն մի
մխիթարեա՛ զնա։ Ասէ աղջիկն 'ի բա՛ց
զնա յինէն՝ զի այժմ ոչ տամ քեզ պատասխանի
Եւ ել աղեքսանդր յերեսաց նորա եւ գնաց
'ի շուկայն. եւ գնեաց այլ մեծագին պար
գեւ մի. եւ յերրորդում աւուրն յորժամ
տարաւ 'ի հօրէն իւրմէ զախորժակ կե
րակուրն, խոնարհեալ երկիր եպագ նմա.
եւ եդեալ առաջի նորա զմեծագին պարգեւսն՝
անկաւ

անկաւ յոտս նր̃ և ասաց. ո՛վ սիրելի իմ Ֆլօրէնցիա՝ պարգևս զայս լութֆիկն առաքեաց առ քեզ այրեցած սրտով: Եւ աղջիկն ծիծաղեցաւ և ասէ. կու զարմանամ ո՛վ աղէքսանդր սիրելի իմ որ այսչափ կու ջանաս վն̃ նր̃: Եւ երդուաւ աղէքսանդրն և ասաց. օն և օն ա̃ծ է կենդանի՝ եթէ ոչ մխիթարես զնա, 'ի սիրոյ քու նա 'ի զուր կու մեռանի. և դու մահապարտ կու լինիս: զի կարի՛ յոյժ վիրաւորել է 'ի քոյ սիրոյն. խեղճ և ողորմելի անկել կայ 'ի մահիճս. և հայր քո օրըստօրէ հարցանէ զիս թէ ո՞ւր կայ լութֆիկն: Ասէ աղջիկն. եթէ այդ̃պիցէ՝ վն̃ սրտի քո որթ աճեալ տուր լութֆիկինն. զի երբ կամիցի՝ գայցէ մօտցէ և ելցէ. և ո՛չ ոք խօսիցէ ն̃մա. զի բացեալ լիցին դրունք առ նա:

Եւ աղէքսանդրն յորժամ լուաւ զխօսս
ի Փլօրէնցիայէն ուրախացաւ յոյժ. եւ
խոնարհեալ երկիրպագ նմա. եւ ելեալ
գնաց առ Լուսթիֆիկն եւ ասէ. Եղբայր իմ
Լուսթիֆիկ աւետիս քեզ եւ ուրախ լեր.
զի հաստատեցի զսէր քո ընդ աղջկանն.
եւ յորժամ կամիցիս երթիցես առ նա. եւ
գտցես զնա պատրաստ. եւ ես ծառայիւ քո
իմովք պահապան լինիմ քեզ: Յորժամ
լուաւ Լուսթիֆիկն զխօսս յԱղէքսանդրէն
զարթեաւ որպէս ի քնոյ եւ ողջացաւ:
Եւ միւս գիշերին եմուտ առ աղջիկն
եւ ննջեաց ընդ նմա: Եւ ընդ այնմ օրէ
կապակցեցաւ հոգի Լուսթիֆիկին ընդ հոգ
ւոյ Աղէքսանդրի. եւ սիրեցին զմիմեանս յոյժ
Եւ Լուսթիֆիկն յամժամ երթայր առ
աղջիկն մինչեւ ամ բանն յայտնի եղեւ ի պալատին
Եւ

Սա՛ զինուո՛րքն ըսպառազինեալք պահէին զճանապարհսն. զի՚ի գիշերի իսպանցեն զնա: Սա՛ լուեալ աղեքսանդր եւ ՚ի միւս կողմանէ հանդերձ ծառայիւքն իւրովք եգեւ զանձն ՚ի վ̄ր ընկերին. եւ պատրաստ էր ՚ի մեռանիլ վ̄ն ն̄ր: Սա՛ թշնամիքն լութփիկին յորժամ տեսին զաղեքսանդր հանդերձ ծառայիւքն իւրովք զինուք եւ սուսերօք, ո՛չ կարէին մերձենալ առ լութփիկն: Սա՛ լութփիկն աներկիւղ մտանէր եւ ելանէր: Սա՛ աղեքսանդր ամ̄ իրօք ամ̄նի՛ նման էր լութփիկին. որ ո՛չ ոք կարէր ճանաչել զնոսա բայց յաղջկանէն:

*Հայրն Աղէքսանդրի Լ[illegible] գրեաց առ նա. զի փութով ժամանեսցէ առ ինքն:

Յետ այնորիկ եհաս ժամանակ աղեքսանդրի զի փութով հասցէ անդ



վասն

վ՟ն մահուա՛ն հօրն իւրոյ. զի թ՟գրեսցէ
՚ի տեղի ն՟ր: Նա՛ աղեքսանդր լուեալ
զայս պատմեաց զիւր գնալն լութֆիկին
և աղջկանն: Նա՛ իբրև իմացան զգնալն
աղեքսանդրի առ հայրն իւր կարի յոյժ
տրտմեցան: Նա՛ աղեքսանդր եմուտ առ
կայսրն և ասէ. տէ՛ր արքայ թուղթ եկեալ
է ինձ վ՟ն մահուա՛ն հօր իմոյ. վասն որոյ
աղաչեմ զքեզ զհրաման տուր ինձ երթալ
յերկիրն իմ և յաթոռն հօր իմոյ. զի
առանց հրամանի քո ո՛չ կարեմ երթալ.
թէ և կորուսից զժառանգութիւն իմ.
և ետ զթուղթն ՚ի կայսրն: Նա՛ կայսրն
առեալ զթուղթն՝ ընթերցա՛ւ և ասէ
ցաղեքսանդր. ո՛չ է ինձ հաճոյ գնալն քո.
զի չունիմ ոք իմաստուն առ իս իբրև զքեզ:
Նա՛ եթէ ոչ թողուցում զքեզ գնալ.

 թո՛ղի

Թուի թէ քեզ դժուարանք լինիցի ։
Վն՟ որոյ տամ քեզ հրաման երթիջիր
խաղաղութ՟․ և տէր եղիցի ընդ քեզ ։
Սա՛ կոչեալ կայսրն զսենեկպետն և ասէ
աղէքսանդր որչափ գանձի պէտս ունիցի
տացես նմա ։ Սա՛ առեալ ընդ իւր բա֊
ժական ոսկի․ և գոհացեալ զարքայէ եր֊
կիրպագ նմա․ և ողջունէլ զա՟մենեան որք
էին 'ի պալատի անդ ։ Սա՛ բազումք 'ի
նոցանէ լային և ողբային զգնալն նորա․ զի
ա՟մենեան սիրէին զնա։ Սա՛ լութֆիկն և
ֆլորէնցիայն ա՟մ ծառայիւք և աղախնեօքն
իւրեանց գնացին ընդ նմա մղոնս է՟ ․ և
կամէին այլ ևս երթալ։ և ո՛չ եթող զն՟ա
աղէքսանդր։ Յայնժամ երկոքեանն նոքա
լութֆիկն և աղէքսանդրն անկան զպարա
նոցէ միմեանց և լային ։


Ասէ

Ասէ Ֆլորէնցիայն․ ո՛վ սիրելի իմ Լութ
ֆիկ լմցորչափ և կարես։ Քանզի մեծ
բարեկամն մեր հեռանայ այսօր ՚ի մէնջ։
Եւ թէ չէր եղեալ նմ, ոչ երբէք
վայելէի իր գուզէ րն իմ։ Քանզի իւ ր
եան արծաթովն գնեաց ոսկով և մարգար
տով նկարեալ երեք մեծամեծ պարգևն
և ետ ինձ որպէս թէ դու ուղարկեալ ես․
զայս արար առանց գիտութեան քո ։
Ես հանապազ սպառազինեալ պահէր ըզ
քեզ ՚ի թշնամեաց քոց․ և արդ ահա այժմ
հեռանայ ՚ի մեզանէ։ Եւ զայս ասացեալ
նորս անկան յերկիր և լային դառնապէս։
Յարոյց զնոսա Աղէքսանդր ՚ի գետնոյն և
ասէ․ սիրելիք իմ մի՛ ողբայք զգնալն իմ
՚ի ձէնջ։ քանզի երթամ և ողորմութեան
թագաւորեցից անդ․ սակայն զձեզ



ոչ մոռա

ոչ մոռանամ թղթով և գրով ։ Բայց ունիմ ինչ ասել քեզ եղբայր իմ Լութֆիկ․ զի աւելի քան զչորս ամ է որ որդի արքային սպանիացւոց կամի ծառայել կայսեր․ և է անուն նր Սիգոն ։ Արդ՝ եթէ լուիցէ զգնալն իմ աստի, իսկոյն եկեսցէ նա աստ։ Ո՛ ծառայելոց է կայսեր և դու զգոյշ լեր մի՛ ինչ առնիցես առաջի նր վն դստերն կայսեր։ զի թէ լուիցէ և իմասցի զապականելն քո զկուսութին նր, վաղվաղակի ասասցէ առաջի կայսերն․ և դու չարաչար մահու՛ամբ մեռանիցիս ։ Ասէ Լութֆիկն․ ով եղբայր աղէքսանդր կէս հոգւոյ իմոյ․ լաւ եղև որ զգուշացուցեր զիս վասն այդորիկ բայց յառաջ քան զբաժանիլն քո ՚ի մէնջ խնդրեմ ՚ի քէն բան ինչ ։



Ասէ

Ասէ աղէքսանդր. խնդրեմ զինչ և կամիս
Ասէ լութֆիլկն. ունիմ առ իս պատուական մատանի մի որ տուեալ է ինձ մայրն իմ. աղաչեմ զքեզ զի զնա դնիցես 'ի մատն քո. և հանդերձ ընդ քեզ ունիցիս. և որքան տեսանես զնա 'ի մատն քո՝ միշտ յիշես զիս։
Ասէ աղէքսանդր բարի է եղբայր իմ լութֆիլկ. առ ես զմատանին քո յիշատակ անուան քո. բայց դու զասացեալս իմ 'ի միտ պահեա. և ես արդ երթայց յանձնառու լեալ զձեզ զայ

* Դինայն աղէքսանդրի յերկիրն էր. 'ի Բաղդադ [illegible]. և [illegible] արքային։

Եւ գնաց աղէքսանդր զճանապարհ իւր. և աղջիկն և լութֆիլկն դարձան 'ի պալատն իւրեանց։
Յետ այնորիկ՝ լուեալ սիդոն որդի արքային սպանիացւոց՝ եթէ գնաց աղէքսանդր



յերկիրն

յերկիրն իւր. եկն առ կայսրն և խնդրէր
ծառայել նմա։ Ասէ ցնա կայսրն. յառաջ
քան զքեզ էր առ իս մանուկ մի՛ որում
անուն էր աղէքսանդր։ արդ նա թագա
ւոր է եգիպտացւոց. և յոյժ ծառայեաց
ինձ իմաստութ̅ . և զկերակուրն իմ նա
պատրաստէր ինձ . արդ այժմ զտեղի նո̅
քեզ տաց։ Եւ՛ սիդոն շնորհակալ եղև կայսերն
Եւ՛ սենեկապան եցոյց նըմա զդարպասն
յորում բնակէր աղէքսանդր . զի ընդ
լուսթիկին բնակեսցին իմիասին։ Եւ՛
լուսթիկն ջանայր հեռանալ՛ի նմանէ.
պատճառելով զպատճառս բազումս. սակայն
ոչ եղև հնար. և ակամայ կամօք յանձն էառ
զհրաման սենեկապետին։ Տեսեալ սիդոն
թէ ոչ կամի լուսթիկն զնա առ իւր, ատե-
լութիւն կալաւ ընդ նմա։

Իսկ լութֆիկն տեսանէր զնա զի չար էր ընդ նմա. և բազում ժամանակս ոչ երթայր առ աղջիկն. և յետոյ դարձեալ գնայր՝ որպէս յառաջագոյն առնէր:

Զոր տեսեալ սիրողն՝ ուրախ եղև յոյժ. և լրտեսէր հանապազ: մինչ զի ըստուգիւ տեղեկացաւ որ ապականէր լութֆիկն զկուսութիւն աղջկանն. և պատճառ ապականութեան նորա՝ էր աղէքսանդր:

Յաւուր միում գովեաց կայսրն զբարութիւն և զյաջողակութիւն աղէքսանդրի:

Ասէ ցնա սիրողն. տէր՝ մի՛ այդպէս գովաբաներ զաղէքսանդր. վասն զի նա է՛ր դաւաճան քո: Ասէ կայսրն. որպէս: Ասէ սիրողն. դու ստոր մի ունիս միամօր՝ որ ժառանգ լինելոց է քեզ. լութֆիկն՝ գիտութեամբ աղէքսանդրի՝ ապականել է զկուսութիւն նորա.



և յոր

և յորժամ կամի մտանէ և ելանէ։ Իսկ յոր
ժամ լուաւ զայս կայսրն ՚ի սիրտ ունէ՝ տրտմե
ցաւ յոյժ։ Իսկ մինչդեռ զյս խօսէր սիրտն
ընդ կայսրն եմուտ Լութֆիկն ընդ պ՟տն։
Իսկ իբրև եմուտ՝ ետես զնա կայսրն. կո-
չեաց զնա առ ինքն և ասէ. զի՞նչ է այս որ լս
եմ զքէն. եթէ ճշմարիտ իցէ բանդ, չարա
չար մահուամբ կորուսից զքեզ։ Ասէ ցնա
Լութֆիկն. տէր արքայ ասա՛ ինձ թէ ինչ
բանէ. ք՟նզի ո՛չ գիտեմ ես ինչ։ Ասէ ցնա
սիրտն. ես մատնեցի զքեզ առաջի տ՟ն իմոյ
արքայի. քանզի դու ապականեցեր զմիամօր
դուստր նր՟. և արդ ևս ննջես ընդ նմա։ և ՚ի
նշան այդմիկ՝ յաւուր միում մարտնչեցայց
ընդ քեզ։ Ասէ Լութֆիկն. և ես պատ-
րաստեմ յաւուրն յայնմիկ մարտնչիլ ընդ
քեզ և զչար քո հանից ՚ի գլուխդ քո։

 Ս

Նա դարձեալ ասէ լուսթֆիկն ցկայսրն
տէր իմ, թէ վասն էր չարախօսեաց զիս
ախդոմն առաջի տեառն իմոյ ծանուցից ար-
քայիս իմոյ։ Նա ասէ կայսրն. որպէս ։
Ասէ լուսթֆիկն. յորժամ որ եկն սիդոմն
ծառայել քեզ, սեննեկապետն եցոյց նմա
զբնակութի̃ աղէքսանդրի . և ես ոչ կամե-
ցայ բնակիլ ի խխասին. զի լուեալ էի յա-
ռաջագոյն զչարութի̃ դորա. և սեննեկպ̃տն
ակամայ կամօք բնակեցոյց ընդ իս ։ վասն
այն ահա չարախօսեաց զիս առաջի տ̃ն իմոյ
Ասէ կայսրն . երբ այդ այդպէս իցէ՛
նշանակեմ ձեզ օր մարտի այս նիշ օր . և
տեսանեմ թէ ՚ի ձէնջ որն է ճշմարիտ ։
Նա յանձն էառ լուսթֆիկն։ Նա իբրև
այսպէս եղև այս, եմուտ լուսթֆիկն առ
աղջիկն և ասէ. այժմ եղէ որդի մահու.

որպէս ասաց ինձ աղէքսանդր՝ նոյնպէս եղև։
Քանզի սիդոն մատնեաց զիս առաջի հօր
քո՝ թէ ապականեալ եմ զքեզ. և հայր քո
բարկացաւ ինձ յոյժ։ Նաև սիդոն վասն
փորձելոյ զարդարութեան ճշմարտութեան՝
նշանակեաց օր մարտնչիլ ընդ իս. և ես
ոչ կարեմ կալ ընդդէմ նորա՝ քանզի տկա-
րեմ. և վասն տկարութեան իմոյ մեռանիմ։
Ասէ ցնա աղջիկն. եթէ այդպէս իցէ՝
և ոչ է հնար զերծանիլ, արա՛ ըստ խրա
տու իմոյ և եղիցի քեզ բարի։ Փութա՛
և գնա՛ առ կայսրն. և ասա՛ ցնա. թէ թուղթ
ուղարկեալ է ինձ հայրն իմ. քանզի հիւ
անդացեալ է. և գրեալ է թէ փութով
հասցես ինձ մինչդեռ կենդանի եմ։ և
խնդրեա՛ հրաման՝ զի տացէ քեզ երթալ
առ հայրն քո. և զօր մարտին յետ երկարեսցես

 յերթա

յերթալդ և գալդ։ Եւ յորժամ կայսրն
տացէ քեզ հրամանս երթալ, երթ իջիր
վաղվաղակի առ աղէքսանդր արքայ 'ի
ծածուկ՝ զի մի՛ ոք գիտասցէ։ Եւ աղա
չեմ զնա վասն ա͞յ և վասն սիրոյ մերոյ՝ զի
օգնեսցէ քեզ միուսանգամ. և ես կեն լաստ՝
պատերազմեսցի փոխանակ քո։ զի դուք
նմանէք միմեանց. և ոչ ոքէ որ կարիցէ
ճանաչել զձեզ և բաժանել միմեանց բաց
յինէն։ Թէ արասցես զայս՝ ապրեսցիս
'ի մահուանէ. և զպատիւ քո և զիմ յաւէտ լցես
Ասէ ցնա լուկթփիկն. լաւ խրատ ասացեր.
բայց երկնչիմ գուցէ թէ ոչ թողցէ
աղէքսանդր զթ͞գրն իւր և գայցէ աստ։
Ասէ աղջիկն. ոչ երբէք դարձոյց նա
զերեսս իւր 'ի մէնջ. վ͞ս որոյ յուսամ յա͞ծ
զի և այժմ ևս ոչ դարձուցանէ զերեսս իւր



վասն

վն̃ կենդանուե̃ քո։ Յայնժամ լութֆիկն
սահմանեց թուղթ մի. և ետուր ՚ի հաւա
տարիմ մի ՚ի ծառայից իւրոց և ասաց. բեր
այս ինչ օր զթուղթս զայս՝ յորժամ ես
սպասաւորեմ կայսերն ՚ի սեղանն. և տուր
առաջի ամ̃ցուն զկնքեալ թուղթս ինձ՞
և կամ սենեկպ̃տին։ Նա արար ծառայն
ըստ հրամանի տեառն իւրոյ. և եբեր
զթուղթն և ետ սենեկապետին։ Նա
սենեկապետն բացեալ զթուղթն կարդաց
և տեղեկացաւ. և ծանոյց լութֆիկին.
Լութֆիկն և սենեկապետն ծանուցին
արքային թէ հայրն հիւանդացեալ է.
և փութով խնդրէ զորդին զի տեսանիցէ։
Նա արդ խնդրէ յարքայէս հրաման զի
երթեալ տեսանիցէ զհայրն և դարձեալ
գայցէ Ասէ կայսրն՝ երթիցէ. բայց

 ՚ի ժամա

՚ի ժամադրեալ աւուրն եկեսցես։ Այս
լութփկն աղաչեմ զմեծութիւնդ քո տէր՝
զի յայլում աւուր տեսցես զմարտնչելն
մեր ընդ միմեանս. զի կարացից ժամանել։
Եւ կայսրն երկարեաց զօր մարտին և
ասէ. Նոյնեմց յանձն քո՝ զի եկեալ հասցես
՚ի ժամադրեալ օրն։ Եւ եթէ ո՛չ եկես
ցես՝ յարուցից ՚ի վերայ քո պատերազմ.
և քայքայեալ աւերեցից զերկիրն ձեր.
և զքեզ չարաչար տամ սպանանել։ Այս
լութփիկն. անպատճառ եկից ՚ի ժամա-
դրեալ օրն. թէ և կորուսից զժառանգութ
իմ. և երկիրեպագ արքային և ել։
Եւ փաղփաղակի հեծեալ ՚ի ձի՝ գնաց
յեգիպտոս. և ազդ արար զգնալն իւր
աղէքսանդրի. և ինքն կեցեալ ՚ի Թաքստի
Եւ արքայն աղէքսանդր լուեալ զգալուստ


Նորա

Նորա՛ ուրախ եղև յոյժ. և ել ընդ առաջ
Նորա: և իբրև ետես զնա, համբուրեաց
և ասէ. բարի եկիր սիրելի եղբայր իմ:
և առեալ եբեր 'ի պալատն իւր և արար
ընդունելութի՜ մեծ: և հարցեալ վասն
ֆըօրէնցիային թէ որպէս կեայ. և մե՜
արքային: Ասէ լութֆիկն. տէր իմ և
ընկերակից. այժմ մահ իմ և կեանն իմ
'ի ձեռս քո է: զի ոչ ասացեր մե՜ սիդոնի՝
նոյնպէս եղև. քանզի մատնեաց զիս առաջի
կայսերն՝ թէ ապականեալ եմ զդուստրն նր
Եւ կայսրն կարգեաց մեզ օր մարտնչիլ
ընդ միմեանս. զի փորձեսցի և յայտնեսցի
ճշմարիտն: արդ նա զօրեղ է քան զիս՝ և
ես տկար. ոչ կարեմ պատերազմիլ ընդ նմա
Եւ լուեալ զբանս ֆլօրէնցիայն՝ զայս
խրատ ետ նմա. զի եկեսցաւ քեզ խնդրել

 վասն

վասն օգնութե․ զի դու բազում անգամ
օգնեցեր ինձ․ և այժմ դարձեալ 'ի քէն
եղիցի ինձ օգնութի միայն՝ որ ոչ մոռանիմ
'ի զուր ։ Ասէ աղէքսանդր․ գիտէ՞ և
այլ ոք զգալուստ քո առ իս․ Թէ միայն
փլօրէնցիայն ։ Ասէ լուԹփինն․ ոչ ոք
գիտէ զգալն իմ առ քեզ՝ բայց 'ի փլօրէն
ցիայէն։ Զանզի հրաման առի 'ի կայսե
րէն՝ եԹէ երԹայց տեսից զհայրն իմ
զի հիւանդացեալ է․ և շուտ ասի եկից
առ քեզ։ Զի փլօրէնցիայն ասաց Թէ
դուք նմանէք միմեանց․ և ոչ ոք ճանաչէ
զձեզ բաց յինէն։ Իբրև զայս ասաց՝ ան
կաւ առ ոտս նորա և սկսաւ լալ։ Ա՛
րքայն աղէքսանդր՝ յարոյց զնա և ասէ․
ով սիրելի իմ ասա ինձ յորում աւուր
եդեալ է ձեզ ժամ մարտնչելոյ ։

 Ասէ

Ասէ լութֆիկն. այս նիշ օր մարտնչե լոց եմք։ Ասէ աղէքսանդր. այժմ կայսրն համարէ զօրն. և եթէ ես համիցեմ ըզ գիշերս զայս՝ անհնար է ինձ ժամանել ՚ի ժամադրեալ օրն։ Իսկ ես ՚ի վաղիւն առնելոց եմ զդուստր թագաւորին ՚ի կնութիւն. զի ՚ի ձեռն նորա թագաւորելոց եմ աստ։ և ամենայն նախարարք նորա եկեալ են ՚ի հարսանիս։ Իսկ եթէ մի հարսանեացս յամեցից աստ, կորիցես դու ՚ի յաւիտեան։ Բայց լաւ է ինձ թողուլ զթագաւորութիւն իմ և զկինն իմ. և զքեզ ոչ։ Իսկ առեալ զնա եմոյծ ՚ի սենեակն իւր. և հանեալ ՚ի յանձնէն զիւր հանդերձն՝ ագոյց լութֆիկին և զհանդերձն լութֆիկին զգեցաւ ինքն։ Իսկ եցոյց զամենայն դարպասն բոլորոյն և ասաց. արդ արասցուք այսպէս ։ ես եր-

թայց անդ և հասից 'ի ժամադրեալ օրն.
և դու նստիցես 'ի տեղի իմ որպ թգ՜ր։
բայց յորժամ մտանիցես 'ի մահիճ աղջկանն՝
հաստատարիմ լինիցիս ընդ իս ։

Եւ իբրև զայս ասաց՝ նոյնժամայն հեծեալ 'ի ձի գնաց առ կայսրն փոխանակ լութֆիկին։ Եւ լութֆիկն 'ի վաղիւն անդր փոխանակ աղէքսանդր թագաւորի (քանզի ո՛չ ճանաչէր զնա ոք) էառ զկինն աղէքսանդր թգ՜րին և արար հարսանիք։ և յորժամ եղև գիշեր և մուտ լութֆիկն 'ի մահիճն և բերին զթգ՜հին անդ առ նմա Յայնժամ լութֆիկն առեալ սուր մերկ՝ եդ 'ի մէջ իւրն և աղջկանն . զի մարմին աղջկանն՝ 'ի մարմին իւր ո՛չ հասցէ ։

Եւ թագուհին զարմանայր մ՜ի քանիս այսորիկ. բայց ինչ ո՛չ ասէր ընդ նա թէ մ՜էր



առնե.

առնես զայդ. և զա̃մ գիշեր այնչ̃ առաւ̃թ

մինչև եկն աղէքսանդր արքայ:

Իսկ յորժամ աղէքսանդր գնաց առ կայսրն փոխանակ լուսթֆիկին՝ ասէ ցարքայն. տէր զհայր իմ թողէլ ՚ի մահիճս հիւանդութ̃ե՝ եկի աստ վասն ժամադրեալ աւուրն:

Ասէ ցնա կայսրն. հա՛ տարիմ եղեր ՚ի բանիդ այդմիկ և յաւելեր զպատիւ քո:

Եւ լուեալ փլորէնցիայն զգալուստ նո̃ ուրախ եղև յոյժ. և զաղտ կոչեաց զնա առ ինքն: Իբրև ետես զնա համբուրեաց և ասէ. օրհնեալ է օր ծննդեան քո. արդ ասա ինձ թէ ո՞ւր թողեր լուսթֆիկն:

Եւ աղէքսանդր պատմեաց նմա զա̃մ զոր ինչ եղև. և թէ ո՞պ եթող զնա թգ̃որ փոխանակ իւր: Եւ յետ խօսիցն ողջունեաց զաղջիկն. և ելեալ գնաց անտի և

Թաւուտ'ի սենեակ լութՖիկին. իւր Թէ
'ինքն իցէ լութՖիկն ։ քանզի ոչ ոք էր
որ ճանաչէր զնա Թէ ոչ է լութՖիկն.
բաց 'ի Ֆլորէնցիայէն ։ Սոյն 'ի վաղիւն
անդ ըննախ քան զժամ մարտին՝ ասէ աղէք
սանդր ցկայսրն. սիդոնս այս զչարեալ ինձ
մատնեաց զիս քեզ. ո՞չ Թէ զդուստր քո
ապականեալ եմ ։ Արդ՝ փորձեցից զդա
այսօր 'ի մարտին դորա. և առից զվրէժ
իմ 'ի դմանէ ։ Ասէ սիդոնն. այո՛ ճշմարի
տէ զոր ասացի. զի դու ապականեցեր զդ
դուստր կայսերս. և կամիմ փորձել զայդ
'ի վերայ քո ։ Սոյն իբրև ասաց զայս՝
երկոքեանն 'ի միասին հեծան 'ի ձի. և
սկսան հարկանել զմիմեանս և մարտեան։
Սոյն եհար սրով աղէքսանդր Թգ՛որն
և կտրեաց զգլուխն սիդոնի. և տարեալ


ետ

ետ աղջկանն. և աղջիկն մեծաւ խնդութ̃
տարաւ առ հայրն և ասէ: Ահա հայր
իմ գլուխն այնորիկ որ ստուե̃ն ի բոյլ
ապականեալ եցոյցիս: Եւ կայսրն տե
սեալ զյաղտութ̃ին՝ կոչեաց զաղէքսանդր
առ ինքն՝ կարծելով թէ լութփիկն է
և ասէ. ով սիրելի լութփիկ՝ ապրեցու
ցեր այսօր զքեզ և զդուստրն իմ. և յաւե
լեր զպատիւ իմ: արդ սիրելի իմ եղիցիս
դու ՚ի յաւիտեան: Ասէ աղէքսանդր.
ա̃ծ է որ փրկէ զայնոսիկ որք յուսան ՚ի նա
Բայց զհայրն իմ թողե̃լ հիւանդ և եկի
վ̃ն կռուոյս. արդ աղաչեմ զմեծութ̃իդ՝
զի հրամանն տացես ինձ երթալ առ հայրն
իմ. և տեսանել զնա թէ ո̃պ եղև. և դ̃րձլ
փութով եկից: Ասէ ցնա կայսրն. եր
թ իջեր խաղաղութ̃. և դարձե̃լ փութով

եկեսցես. և 'ի կամս քո ունիցիս զամ ինչ:
Եւ աղէքսանդր ողջունեաց զարքայն.
և ելեալ գնաց զերկիրն իւր:
Եւ լուեալ Փիլիպն լուր զգալուստ աղէք-
սանդրի՝ ուրախ եղև յոյժ և ասէ. սիրելի
եղբայր իմ զինչ գործեցեր անդ. և որպ
եղև բանն: Ասէ աղէքսանդր. Երթ
առ կայսրն և ծառայեմ նմա որպ յառաջն
քանզի խոստացայ նմա փութով դառնալ
առ նա. և քո թշնամւոյն հատի զգլուխն:
Եւ լուեալ Փիլիպն շնորհակալ եղև նմա և
ասէ. ով սիրելի իմ աղէքսանդր՝ ես որպ
կարացից հատուցանել քեզ զփոխարէնս՝
փոխանակ այդ. ամ բարութեց քոց. որ բազմ
անգամ փրկեցեր զիս 'ի մահուանէ. ես
առաւել ասեմ՝ որ զամենեսեան անցոյց:
Ասէ աղէքսանդր. Երթ 'ի խաղաղութ


և տէր

և տէր եղիցի ընդ քեզ . է՛ ած յերկինս
որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գոր-
ծոց իւրոց ։ Եւ լութփիկն ողջունել

զնա, դարձաւ առ կայսրն ։

Եւ 'ի գիշերի միում աղէքսանդր նըս
տաւ յաթոռն իւր . և ո՛չ ոք գիտաց ըզ
գնալն և զգալն նր ։ Եւ իբրև երեկոյ
եղև՝ եմուտ աղէքսանդր 'ի մահիճն առ
թագուհին. և սկսաւ խաղալ ընդ նմա և
համբուրել ։ Ասէ թագուհին. հազի՛ւ
եհաս ժամ զի ցուցցես ինչ նշան սիրոյ
փոքր ի շատէ ։ Ասէ աղէքսանդր վն էր
ասես զայդ ։ Ասէ թագուհին. յայնմ օրէ
որ առե՞ր զիս՝ յամն գիշեր մերկ սուր դնէիր
'ի մէջ մեր. զինմ՝ հայցէ մտմնքս 'ի մտմն իմ ։
Եւ աղէքսանդր լուեալ զայս՝ ասէ ընդ
միտս իւր . թէ ընկերն իմ լութֆիկ՝

 հաւատա

համատորիմ եկաց ընդ իս։ Եւ դարձեալ
ասէ ցթագուհին. ո՞վ սիրելի տիկին՝ ես
ո՛չ արարի զայն վ՛՛ չարութե՛, այլ վ՛՛ փորձե
լոյ զքեզ։ Եւ թագուհին ասէ ընդ մեոս
խուր. դու արարեր զայդ ինձ, և ես առ լից
զվրէժ իմ 'ի քէն։ Եւ իսկոյն սկսաւ
սիրել զինուոր ոմն 'ի պալատէն և պոռնը
կէր ընդ նմա. և խորհէին սպանանել զթ
թագաւորն աղեքսանդր։ Եւ արբուցին
նմա մահադեղ. և դեղն ո՛չ մահացոյց զնա.
բայց բո՛ր գոլթոյ եղև ամ մարմին նորա։
Եւ տեսեալ նախարարացն թէ ո՛չ վայելէ
գոլթոյ թագաւորի՝ աքսորեցին զնա յերկրէ
անտի։

Եւ յայնմ ժամանակին՝ մեռաւ տիբերոս
կայսրն. և լութփիկն էառ զդուստր նր
'ի կնութի. և թագաւորեաց 'ի տեղի նորա։
Եւ

Եւ յետ ոչ բազում աւուրց՝ մեռաւ և թագաւորն Իսրայէլացոց. և Լութֆիկն տիրէց միանգամայն ՚ի վերայ երկրի նոցա. այսինքն՝ երկրի կայսեր, և երկրի հօրն իւրոյ։ Եւ լուեալ Աղէքսանդր՝ ասէ ընդ միտս իւր. արդ՝ ընկերն իմ Լութֆիկ՝ էառ զդուստրն Տիբերոսի ՚ի կնութիւն. և եղև կայսր ՚ի տեղի նորա և թագաւոր Իսրայէլի։ և ես յոյս ունիմ առ Աստուած զի երթայց անդ և մխիթարեցայց ՚ի նմանէ. որ հանապազ զանձն իմ գտանէի ՚ի վերայ նորա։ Եւ նոյնժամայն ելեալ ՚ի գիշերի և առեալ ցուպ ՚ի ձեռին՝ եկն առ Լութֆիկ ընկերն իւր որ եղեալ էր կայսր։ Եւ յորժամ եհաս ՚ի դուռն պալատին՝ ետես առ դրանն զի մի կողմն նստեալ էին աղքատք՝ և միւս կողմն գօթիք առնուլ ողորմութիւն. ինքն և



նստաւ

նստաւ ՚ի մէջ գրթուոյն։ Եւ եկեալ
կայսրն լութփիլ էանց. և Աղէքսանդր
ընդ այլ աղքատսն խնդրէր ողորմութ՟ի.
բայց ինչ ոչ էառ։ Եւ իբրև ժամ եղև
ճաշոյ և նստաւ կայսրն ՚ի ճաշ, և կին ար-
քայն Աղէքսանդր և սկսաւ բախել զդուռն
Եւ եկեալ դռնապանն հարցանէր զնա
թէ վասն էր բախէր զդուռն։ Ասէ
Աղէքսանդր ես բորոտեալս ՚ի գութուե
աղքատ. և արհամարհեալ յամենեցունց՝ ա-
ղաչեմ զքեզ վս՟ այ զի հասուսցես զբանս
իմ առ կայսրն։ Ասէ դռնապանն զի՟նչ է
խնդիր իմ քո։ Ասէ Աղէքսանդր. երթ ա-
ղաչեա զկայսրն և ասա ցնա յինէն՝ վս՟ այ
սիրուն և վս՟ Աղէքսանդր թգ՟րի սիրուն
հրամայեսցէ վս՟ իմ զի ես երթայց և նոր
տայց առաջի աչացնորա և կեր բայց ճաշն։


Ասէ

Ասէ գունապանն. զարմանամ քեզ զի
զայդպիսի իրս խնդրես 'ի ինէ իմմէ.
քանզի պալատն լի է իշխանօք. և թէ
տեսցեն զքեզ լի բորոտութբ՝ զարշեալ
ոչ կարիցեն ուտել կերակուր։ բայց որ
աղաչես զիս վս այ՝ ծանուցից տն իմում
զբանս քո։ Եւ մտեալ գունապանն առ
կայսրն և ասէ. տէր իմ և հզօր արքայ՝
բորոտ ոմն կացեալ առ դրանն և խնդրէ
'ի ձէնջ վս այ և վս աղէքսանդր թգրի
սիրուն՝ զի մտցէ 'ի ներքս և առաջի
աչաց քոց նստիցէ և ուտիցէ կերակուր։
Եւ լուեալ կայսրն զանուն աղէքսանդր
թգրին՝ ասէ ցգունապանն մոյծ զնա այսր
և կերիցէ ճաշ առաջի իմ։ Եւ գունպնն
իսկոյն եմոյծ զնա 'ի ներքս. և նա մտեալ
նստաւ 'ի վերայ գետնոյ առաջի կայսերն։


Եւ

Եւ կայսրն ուղարկեց նմա քաղցրահամ
կերակուր. և աղէքսանդր կերեալ զայն՝
կոչեաց առ ինքն զմինն ՚ի ծառայից կայսեր
և ասէ. սիրելի եղբայր իմ մ̃ծ տ̃յ սիրուն
երթ առ կայսրն և ասա ցնա. թէ աղքատն
այն բորոտ՝ աղաչէ մ̃ծ տ̃յ և մ̃ծ աղէքսանդր
թգ̃րի սիրուն տուցէ ինձ զինի իւր սկու-
տեղամբն։ Ասէ ցնա ծառայն. ո՛վ եղբայր
ո՛չ գիտես թէ զինչ խնդրես. վասն զի
անպատշաճ բանս կամիս ուզել. զի թէ մի
անգամ ըմպիցես դու զինի ՚ի բաժակէ
անտի զոր տէրն իմ ըմպէ, յաւէտ ևս ո՛չ
կարէ ըմպել ՚ի նմանէ բայց մ̃ծ աղաչանաց
քոց՝ պատմեցից կայսերն զբանս քո։
Եւ գնացեալ ծառայն առ կայսրն և ասէ.
տէր՝ թողութի շնորհեա ինձ զոր ինչ ասե-
լոց իցեմ տ̃ն իմում. բորոտն այն զոր նըա



աեալ

տեւալ կայ 'ի վ̄ր գետնոյ , խնդրէ վ̄րայ
և վ̄ր սիրոյ աղեքսանդր թագաւորին՝ զե
սկհումն զոր ըմպէ տէրդ իմ, տացես և նմա
գինի նոյն սկհովն ըմպել ։ Եւ լուեալ
կայսրն զանուն աղեքսանդր թագաւորին՝
զուարթ երեսօք հրամայեաց տալ նմա
անապակ գինի. և ծառայն տարեալ ետ ցը
բոլոսն ։ Եւ աղեքսանդրի առեալ գոհա
ցաւ զարքայէն՝ և ըմպեաց զբաժակն. և
իբրև ըմպեաց՝ համեալ զմատանին 'ի ձե-
ռանէն՝ արկ 'ի սկիհն. և ասէ ցծառայն
սիրելի եղբայր իմ տար զսկիհդ և զմա-
տանիս տեառնդ քում ։ Եւ ծառայն
առեալ տարաւ և ետ 'ի կայսրն ։ Եւ
կայսրն իբրև ետես զմատանին , իսկոյն
ճանաչեաց զնա՝ զոր ինքն տուեալ էր
աղեքսանդր թագաւորին 'ի նշան սիրոյ.


և խառ

Եւ խանդաղատեցաւ սիրտ նորա և ասէ ՚ի-
միտս իւր. կամ աղեքսանդր արքայ մեռեալ է
կամ բորոտ այդ գողացեալ է զմատանիս զայս։
Եւ հրամայեաց կայսրն ծառայից իւրոց
և ասէ. բորոտն այն մի՛ ելցէ ՚ի պալատէս
մինչև խօսեցայց ընդ նմա։ Եւ յետ ճաշոյն
առեալ կայսրն զբորոտն ՚ի մի կուսի որ էր ինքն
աղեքսանդր արքայն՝ և ասէ ցնա. երդմնե-
ցուցանեմ զքեզ յանձն կենդանի՝ ասա ինձ
թէ ո՞րպէս անկաւ մատանիս այս ՚ի ձեռն քո
Ասէ աղեքսանդր. տէ՛ր՝ մի թէ ճանաչես
զմատանիս զայս։ Ասէ կայսրն. ո՞րպէս չեմ
ճանաչեր՝ զի իմ է մատանիս այս. և ես
ետու աղեքսանդր թագաւորի ընկերին իմոյ
՚ի նշան սիրոյ։ Ասէ աղեքսանդր. այս
այն աղեքսանդրն է ահա որում տուեր ըզ-
մատանիդ ։

Եւ լուեալ զայս կայսրն պատառեաց·
զպատմուճան իւր եւ անկեալ յերկիր լայր
դառնապէս եւ ասէր· ով սիրելի իմ աղեք-
սանդր կէս հոգւոյ իմոյ զի որպ կամ ուստ
եղեւ վիրաւորեալ փափուկ մարմին քո:
Աւաղ աղեքսանդր· դու որ ունէիր ըզ-
մեծ սէրն քո ընդ իս եւ եղեալ էիր սուր
մերկ 'ի մէջ քո եւ 'ի մէջ թագուհոյն
կնոջ իմոյ, սակս այնորիկ բարկացաւ նա
յոյժ· եւ սիրեաց զզինուոր ոմն 'ի պալատէս
եւ պոռնկէր ընդ նմա: վայ պատճառ իդե-
զեցին զիս եւ արբուցին ինձ մահադեղ
թէ մեռանի, եւ ես եղէ այսպէս վիրաւոր-
եալ բորոտ· եւ յետ այնորիկ աքսորեցին
զիս 'ի թագաւորութենէս: Եւ լուեալ
զայս կայսրն յարուցեալ համբուրեաց զնա
եւ ասէ· վայ է ինձ կէս հոգւոյ իմոյ զի՞նչ

 արարից

տրարիցքեզ և կամ՚ոչ բժշկել տայց քեզ։
համբերեա փոքր մի և ես առաքեցից առ
ճարտար բժիշկս. զի եթէ հնար իցէ՝
բժշկեսցես զքեզ 'ի բորոտութենէդ։
Ո՛վ սիրելի իմ աղէքսանդր՝ մի՛ ումեք
յայտնեսցես զայս. ես առաքեմ թղթ հոյն
իմոյ փլօրէնցիային՝ զի մի՛ անկանիցի 'ի մե
տրտմութի։ Նա՛ նոյնժամայն ետ նմա
դարպաս մի առանձին. և զնամ պէտս նորա։
Նա՛ առաքեաց զծառայս իւր ընդ նմ
երկիր առ իմաստուն բժիշկն. զի առ նց
ինչ յապաղելոյ հասցեն առ նա։ Նա՛ նոքա
որընթաց երիվարաւ փութանակի ժո-
ղովեցան առ կայսրն. բժիշկք իմաստունք
համարով երեսուն. յոյժ անուանիք և
հմուտք արհեստից։ Զոր տեսեալ զնս
կայսրն. ուրախ եղև յոյժ. և ասէ ցնոսա.

 սիրելիք

սիրելիք՝ մէկ բարեկամ իմ վերաբերութիւն է
յոյժ. եթէ բժշկէք զնա 'ի վերացանուտ,
պարգեւս մեծամեծս առնուցուք յինէն ։
Ասեն բժիշկքն. տէր՝ զոր ինչ հնար է
և զխոտեմք՝ արասցուք։ և յորժամ տեսին
զցաւ նր ասեն. ոչ կայ դմա հնար ողջանա-
լոյ զի դորա մահադեղէ արբուցած ։
Զոր լուեալ կայսրն տրտմեցաւ յոյժ ։
և հրամայեաց կոչել զաղքատս և զկրօնաւորս
և զքահանայս զի աղօթս արասցեն վասն
նորա. զի 'ի ձեռն եղիցի բժշկութիւն նմա ։
Եւ ինքն կայսրն պահօք և աղօթիւք
խնդրէր յայ տալ յառողջութիւն աղէքսանդր
թագաւորին ։ Եւ 'ի միում գիշերի՝
աղէքսանդր կայր յաղօթս. և յաղօթելն
նր՝ ձայն եղեւ յերկնից առ նա և ասէ. ըղ
հնդեսին տղայքն կայսեր՝ որ ծնեալ է
նմա

նմա թագուհին՝ եթէ զենցէ ձեռամբն
իւրով և ոչ երկմտեցի՝ և արեամբն նորա
լուացէ զմարմինս քո, նոյնժամայն բժշկես
ցիս յախտէ քումմէ. և ես զեկցի մարմին քո
փափուկ իբրև զմատղաշ տղայի ։
Զոր լուծեալ զայս աղէքսանդր՝ ասէ
ընդ միտս իւր. ոչ է պիտոյ և ոչ է արժան
յայտնելոյ զայս ումեք. զի է որ զմին որդին
իւր զենցէ որպէս զգառն իմ, որ նա զհնգե
սին որդին զենցէ վսն իմ։ վսյ ոչ յայտնեց
ումեք։ Եւ կայսրն ՚ի գիշերի և ՚ի տուէ
ընջեան աղաղակէր առ տէր վսն առողջու
աղէքսանդրի։ Եւ ՚ի միում ժամու կաղ
արքային յաղօթս լուաւ ձայն յերկնից
որ ասէր. վասն է՞ր աղաղակես առ իս.
աղէքսանդր թագաւորն ինքն գիտէ զգ
գեղ առողջութեան իւրոյ։



Յորժա

Յորժամ լուաւ զայս կայրն գնաց առ
աղեքսանդր և ասէ. ո՛վ աղեքսանդր կէս
հոգւոյ իմոյ լուայ զբարբառ ՚ի յերկնից
որ դու ինքնին գիտես զդեղ առողջուե
քո և մ̃ն էր ինձ ոչ ասես։ Ասէն ասեմ
քեզ. ես կարծէի թէ զամ̃ ինչ քո յայտնես
ինձ. ո՛չ մի բան թաքուցանես յինէն։
արդ ասա ինձ ն̃տ է ո՛րպէս բժշկիս։ Ասէ
աղեքսանդր. ո՛չ է զարմանք որ թաքուցի
՚ի քէն զդեղ առողջուե իմոյ. մ̃ն զի յոյժ
դժուար թուեցի քեզ առնել զայն։
Ասէ կայսրն. ասա ինձ որպ̃ դժուար ինէ։
Ասէ աղեքսանդր. ո՛չ բերէ հմ̃բաւկուե
սիրտ ՚ի բերան առնուլ և յիշել զնա։
Եւ կայսրն բռնադատեալ երդմնեցոյց
զնա՝ զի պատմեսցէ նմա թէ ի՞ւ իւիք
լինելոց է նմա բժշկութիւն։


Ասէ

Այլ աղէքսանդր · անցեալ յառաջն
կայր յաղօթս. և լուաւ բարբառ ՚ի տեառնէ
այսպէս · եթէ դու զհնգեսին որդի իմ
քո զենցես և ոչ երկմտիցես և արեամբն
նոցա լուացես զիս, եղիցի մարմին իմ ող-
ջ էրն յառաջագոյն իբրև զմատաղաշ տղայի:
և ես վասն այն լռեցի և ո՛չ պատմեցի քեզ·
զի անհնար է սպանանել քեզ զորդի իմ
քո վա առողջութե իմոյ: Այլ կայսրն·
ո՛վ եղբայր աղէքսանդր թերահաւատեցեր
զիս· ո՞չ հաւատաս որ սպանանեմ ես զոր-
դեակն իմ վա առողջութե քո· ո՛չ թէ
զհնգեսինն միայն, այլ թէ լինէր և տասն
սպանանէի ի պատմնեսեան վասն քո:
Յետ այնորիկ կայսրն սպասէր գտանել
զժամ պարապոյ զի մի՛ անդ լիցի թգուհին:
Եւ իբրև գնաց թագուհին յեկեղեցին
 ամենայն

տն։ Նոյն աղախնօքն իւրովք, և մուտ կայսրն
՚ի սենեակ անդր ուր մանկունքն նորա
ննջէին հնգեքեանն միասին. և առեալ
զսուր զենեաց զհնգեսին որդիսն ձեռա
մբն իւրով. և ելից զարիւն նց յաման մի.
և առեալ եբեր աղէքսանդրի. և ասաց
շուտով լուա՛ զվէրս։ Ը՛ իբրև լուացվեցաւ
նոյնժամայն ճեղքեցաւ մարմինն. և անկան
ոճ կեղևանք ՚ի նմանէ. և սրբեցաւ մար
մինն նր. և եղև փափուկ իբրև զմարմին
տղայի։ Ը՛ տեսեալ լուԹֆիկն՝ ճանա
չեաց զնա. և անկան զպարանոցաւն միմեանց
և համբուրեցին զմիմեանս։ Ը՛ ասէ
լուԹֆիկն. ո՛վ աղէքսանդր՝ օրհնեալ
եղիցի ժամն այն որ սպաննեցի զորդիքն
իմ վս առողջուԹե քո։ Ը՛ նոյնժամայն
ագոյց նմա զգեստս Թգրկն. և իւղով անու

 շի՛

շինէ՛ է օծ զնա․ և ասէ՝ Եղբայր իմ, որ
քան Թագուհին որ ոչ է եկեալ յեկեղեցւոյն
գնացես յինէն մղոնս քսան․ և առաքեցես
առաջի քո հրեշտակս զի եկեալ հռչակեսցէ
զգալուստ քո: և ես մեծաւ պատուով
ելանեմ ընդ առաջ քո․ և դու եկեալ
բնակեսցես ընդ իս ի խաւարին՝ մինչև տէր
ած բացցէ քեզ զդուռն ողորմութեան․
Սա է աղէքսանդր բ․բ․րլի է խորհրդ պապ
Եւ նոյնժամայն գաղտ ի գիշերի եւ
բազում ամբոխիւք և գնաց մղոնս քսան․
և առաքեաց հրեշտակս առ կայսրն զի
ծանուսցէ նմա զգալուստն աղէքսանդր
Թղթին ի յեկեղեցւոյ: Եւ թագուհին
լուեալ ուրախեցաւ յոյժ և ասէ ցկայսրն
Եկ դու ընդ առաջ նր բազում զօրօք և ես
զկնի քո եկեցից ամ աղախնօքս և ծառայիւք


խմովք

իմովքս։ և զմահ տղայոց իւրոց ոչ գիտէր։
Սա՛ կայսրն եւ ամ․ծաւ զօրօք և ամ․ծաւ
պատուով ընդ առաջ նր․ և թ̃գհին գնէր․
և եկին առ․ աղէքսանդր թագաւորն։
Սա՛ տեսեալ զիմ․անս՝ անկան զպարա-
նոցէ․ և ցամ․ծ ժամս համբուրեցին զիմ․նս
Յոյնք և թագուհին․ և եկին ՚ի պալատն
արքունի։ Սա՛ յորժամ եղև ճաշ՝ բազմե
ցուցին զաղէքսանդր արքայն ՚ի մէջ
իւրեանց․ այսինքն՝ ՚ի մէջ թագուհւոյն
և կայսերըն։ Սա՛ թագուհին յոյժ ուրախ
եղև․ և զուարթ երես և պայծառ սիրտ
ցուցանէր նմա որչափ և կարէր․ և ինքն
ձեռամբ իւրով մատուցանէր նմա ուտել
ճաշ։ Տեսեալ դայն կայսրն ասէ ցթ̃գհին․
ով սիրելի տիկին իմ Փլորենցիա․ ուրախ
եմ ՚ի բանդ զոր դու առնես․ և սէր ցու-


ցանես

ցանես եղբօր մերում Աղեքսանդր արքայի։
Ասէ Թագուհին. տէր իմ, առաջե՛լ
ես քե՛զ արժանէ սէր ցուցանել վ̃ գալոյ
Թագաւորիս մերոյ Աղեքսանդրի. քանզի
ո՛չ այլ ինչ իրաց այլ միայն վ̃ այն զի 'ի
ձեռն սորա ետ մեզ Ա̃ծ համանիլ մեծութես
այսմիկ ։ Ասէ կայսրն. ո՛վ Փլօրէնցիա՝
լո՛ւր բանից իմոց. տեսե՛ր դու զբոլորոտըն
զայն՝ որ անցեալ յառաջ ընթացեալ կայր
առաջի մեր. և ըմպեցք գինի 'ի սկհոյն իմմէ
Ասէ Թագուհին. տեսի՝ որ ո՛չ երբեք
տեսեալ է իմ այնպէս գարշայր և վերաւո
րեալ որ̃ս այրն այն ։ Ասէ կայսրն. այն
Աղեքսանդր արքայ ինքն էր որ այժմ 'ի
միջի մերում նստեալ կայ ։ Ասէ ցնա
Թագ̃հին. քաւ լիցի և հեռի եղիցի յաղեք
սանդր արքայէ մերում այնպիսի աղտեղի կեր
պարանք։

Ասէ կայսրն. ճշմարիտ ասեմ քեզ ով
թագուհի՛ որ աղէքսանդր արքայ ինքն էր
Ասէ թագուհին. եթէ այն էր՝ ապա.
վասն էր ոչ ասացեր ինձ։ Ասէ կայսրն. վասն
այն ոչ ասացի քեզ որ չի վշտանայիր ։
Ասէ թագուհին. ապա ի՞նչ ինչ իրք եղե
ցեզ առողջութեան սորա։ Ասէ կայսրն. յոր
ժամ ստուգի իմացայ որ աղէքսանդր
արքայ ինքն էր, նոյնժամայն ետու կոչել
որչափ որ բժիշկ կայր. և նոքա յորժամ
տեսին զնա, ասացին թէ՝ նմա մահացեղէ
արբուցած՝ ճար չի լինիր ։ Յայնժամ
ապաւինեցայ յԱծ և իւր ամենակարող
զօրութիւնն. կոչեցի զաղքատս և զկրօնա
ւորս և ղքահանայս. և ետու նց պարգևս՝
զի աղօթս արասցեն վն նր։ Եւ ես այլ
պահօք և աղօթիւք խնդրէի յԱյ տալ սմա
առողջութի։



Եւ

Ո՜ յաւուր միում մինչ կայի յաղօթս
և աղաղակէի, նոյն ժամայն ձայն եղև առ իս
և ասաց. զի՞ աղաղակես՝ աղէքսանդր թ̃գրն
ինքնին գիտէ զդեղ առողջութե̃ իւրոյ։
Ո՜ յառաջմանէ ազդ եղե̃լեր եղբօրս
իմում. և սա յինէն թագուցեալ էր և
ոչ ասէր։ Ո՜ իմ եկեալ բռնադատեցի
զսա. և երդմնեցուցի մինչև պատմեաց ինձ
և ասաց թէ վ̃ն այն թագուցի՝ որ յոյժ
դժուարին է բանս։ Ո՜ իմ հարցաքննել
թէ որպէ՞ս։ և նա ասաց. եղբայր իմ եթէ
զհնգեսին որդեակն քո զենցես ձեռամբ
քով և նոցա արեամբն լուասցես զիս, նոյն
ժամայն բժշկիմ։ Ո՜ իմ սպասէ ի գտա-
նել ժամ պարապոյ՝ որ սպանանէի զնոսա.
և դու յորժամ գնացեր յեկեղեցին, նոյն
ժամայն սպանի՝ և արեամբն լուացի. յայն


ժամ

ժամ ձեղքեցաւ մորթ նոր և թափեցաւ
ամ կեղեւանք։ Ապա տեսի և ճանաչեցի
զնա. և ագուցի նմա բեհեզս թղթկան.
և ասացի՝ գնասցես և հեռասցիս մղոնս
քսան. և առաքեսցես հրեշտակս որ եկեալ
հռչակեսցէ զգալուստ քո. և ես ելանեմ
ընդառաջ քո. և եկեալ բնակեսցուք ի միասին.
Եւ արդ ո՞վ թագուհի իմ եթէ յառա
ջմանէ իմացեալ է իր, տայցէ՞ հրաման որ
սպանանել ի զօրգեկսն իմ վս առողջութեան նր
Աւէ թագուհին ընդէ՞ր փորձես զիս.
ո՞չ եթէ զհինգն այլ եթէ լինէր և տասն
տայի սպանանել վս առողջութեան արքայիս իմոյ
Զի եթէ հոգի սորա երթայր՝ այլ
ո՞չ դառնայր. բայց որդիքն իմ եթէ
մեռան՝ այլս տայ ած ինձ փոխանակ նց.
քանզի դեռևս ո՞չ եմ ծերացեալ։

 Զայս

Զայս լուեալ դայեակք մանկացն ողբա-
լով մեծաձայն մտին առ մանկունսն ՚ի
սենեակ անդր։ Եւ իբրեւ մտին՝ տեսին
զմանկունսն որք պարուեալ խաղային և
օրհնէին զԱծ. և ելեալ պատմեցին առա-
ջի կայսերն և առաջի ամենեցուն՝ թէ
մանկունքն կենդանի են և երգեն զերգս
օրհնութեան։ Եւ ամենեքեան
մտեալ ՚ի սենեակն՝ տեսին և
փառս ետուն Այ. որ այնպիսի
սքանչելիս արար առաջի
ամենեցուն ։

*Դ. նաւն Լ ուղարկէ կայսերն զօրօք յԵգիպտոս. և նուա-
ճէն զԵգիպտոս ընդ ձեռամբ Աղեքսանդրի. և այրէ ըզ
Թագուհին։

Յետ այնորիկ կայսրն բազում զօրս
գումարեալ՝ գնաց յեգիպտոս.
և ըմբռնեաց զԹագուհին աղեքսանդրի.
և հրամայեաց հրով այրել ընդ սիրուն իւրում։
Եւ ունէր կայսրն քոյր մի. եւ զնա
աղեքսանդրի ՚ի կնութիւն. և արքայ
աղեքսանդր՝ հնազանդեցոյց զերկիրն ՚ի
ներքոյ ձեռին իւրում. և կայսրն դարձաւ
յերկիրն իւր։ Եւ արքայն աղեքսանդր՝
իմաստութեամբ վարէր զերկիրն իւր.
և զԹշնամիս իւր զամ̃ կոտորեաց։
Յետ այնորիկ ՚ի միտ էած զհայր և զմայր
իւր՝ որ ընկեցին զինքն ՚ի ծով. և բնակութի
նոյ՝ էր ընդ հրամանաւ տէրութեան իւրոյ։
Առաքեաց առ նոսա հրեշտակս և ասէ.

 Թէ այս

թէ այս ինչ օր թագաւորն գայցէ առ ձեզ և նստիցի ընդ ձեզ 'ի ճաշ։ Եւ հրեշտակն գնաց 'ի սահմանն այն՝ ուր էին ծնօղք թագաւորին. և ոչ ոք գիտէր թէ ծնօղքն էին արքային։ Եւ եկեալ առ նոցա հրեշտակն՝ ողջոյն մատուցանէր նոցա յարքայէն աղէքսանդրէ. և ասէ ցնոսա՝ ով սիրելիք իմ, տեսէք զպատրաստութիւն ձեր. զի տէրն իմ արքայ՝ կամի ընդ ձեզ այս ինչ օր 'ի սեղան նստիլ և ճաշակել ընդ ձեզ։ Ասէ զինուորն. որ էր հայր թագաւորին ով սիրելի իմ որ հնեալ եղիցի ժամանայն յորում աւուր նստելոց է տէր արքայ ընդ մեզ 'ի ճաշ։ Այլ և մայրն ասէ ցհրեշտակն այսպէս ասասցես տեառն մերոյ արքայի՝ եթէ ոչ լինի մեզ ցնծութիւն և առաւել ուրախութիւն մեծ քան զայն, որ նստիցի ընդ մեզ 'ի ճաշ.

քանզի ծառայք նորա եմք։ Նա՛ դարձա՛
հրեշտակն առ արքայն և ասէ. Տէր արքայ՝
ծանուցի զհրամանս քո. և նոքա ուրախ
եղեն յոյժ վասն գընալոյն քո առ նոսա։
Յետ այնորիկ ո՛չ բազում աւուրց ելին
արքայն բազում զօրօք առ հայր իւր. և
հայրն ել ընդ առաջ նորա։ Նա՛ իբրև եհաս
առ արքայն՝ էջ ի ձիոյն և անկեալ երկիր
պագ արքային. և ո՛չ գիտէր թէ իւր որ-
դին է որ ընկէց զնա ի ծով։ և արքայն
յարոյց զնա ի գետնոյն և հրամայեաց
դարձեալ հեծանել ի ձի։ Նա՛ նա հե-
ծեալ ի ձի՝ երթային երկոքեան ի միասին.
մինչև եկին ի տուն զինուորին։ Նա՛
մայրն ևս ել ընդ առաջ նորա. և անկեալ
երկիրպագ նմա. և արքայն յարոյց զնա։
Նա՛ ասէ մայրն. տէր արքայ՝ ուրախուի̃ է

 Մեզ մեծ

մեզ մեծ այսօր. որ տէրն մեր արքայ՝ փա-
ռաշուք անձամբն իւրով նստելոց է ընդ
մեզ ՚ի ճաշ: Եւ՛ իբրև պատրաստեցաւ
ճաշն՝ ասէ զինուորն ցարքայն. տէր արքայ՝
ժամ է ճաշելոյ: և եկ արքայն նստիլ ՚ի ճաշ:
Յայնժամ զինուորն էառ ՚ի ձեռն իւր
ջուր՝ ծառայել արքային. և կինն նորա որ
էր մայր արքային՝ առեալ որբիչ ՚ի ձեռն՝
կայր յանդիման արքային:

Եւ՛ արքայն իբրև ետես զայս՝ ծիծաղե-
ցաւ և ասէ ընդ միտս իւր. ահա կատարե-
ցաւ բանն պիւլպիւլին. զի ահա հայր իմ
և մայր իմ առին ջուր և որբիչ՝ և սպասեն
լուանալոյ ձեռաց իմոց: Ասէ. Թագաւորն
ցծառայս իւր. առէք զջուրն ՚ի ձեռանէ
զինուորին և զորբիչն ՚ի ձեռանէ կնոջն.
և դուք ծառայեցէք ինձ:



Ասէ

Ասէ զինուորքն ցարքայն · տէր ընդէր
ոչ համարիս արժանի զմեզ ծառայել քեզ
և եղիցի մեզ փառք յաւիտենից։ Ասէ
Թ͞գրն· նըստարուք դուք քանզի ծերա-
ցեալ էք· և վ͞ս ծերութե͞ ձերոյ պատուեմ
զձեզ։ Եւ իբրև բազմեցաւ արքայն ՚ի
սեղանն, նստոյց զհայրն ՚ի յաջմէ և ըզ-
մայրն ՚ի յահեկէ· և նոքա որչափ և կա-
րէին ուրախացուցանէին զարքայն։
Եւ յետ ճաշոյն եմուտ արքայն ՚ի ներ
քըսագոյն սենեկին· և հրամայեաց զինուորին
և կնոջն նր͞ մտանել զկնի իւր· և ա͞մցուն
հրմ͞յեց արտաքս ելանել և փակել զդուռն։
Եւ ասէ ցնոսա արքայն · սիրելիք իմ
աղաչեմ զձեզ հարցից ձեզ բանմի և ասա
ցէք ինձ զճշմարիտն։ Ունէիք զաւակ ՚ի
վ͞ր երկրի թէ ոչ։ և նոքա ասեն· ո՛չ որդի
և ո՛չ դուստր։

Վայ թփրն. բնաւ ոչ է ծնել ձեզ որդի ։
Վայ զինէորն. ունէաք որդիմի եւ մեռաւ
Վայ թփրն. որպսի մահուամբ մեռաւ
Վայ զինուորն իւր մահուամբն ։
Վայ թփրն. եթէ լուայց որ այլ մահ
ուամբ մեռեալէ, յայնժամ դարձուցից
զտուութիւն ձեր 'ի գլուխ ձեզ ։
Վայ զինուորն. տէր արքայ՝ ընդէր
քննելով հարցանես վասն որդւոյ մերոյ ։
Վայ թփրն. ոչ է առանց պատճառանաց.
եւ կամիմ գիտել թէ որպ մեռաւ։ լուել
է իմ եթէ սպանելէք դուք զորդին ձեր
եւ եթէ ոչ պատմէք ինձ զստոյգն, մեռա
նիցիք եւ դուք։ Եւ նոքա լուել զբանն
արքային՝ անկան 'ի վր երեսաց իւրեանց
յերկիր՝ եւ խնդրէին զներումն ։
Իբրեւ ետես զնս արքայն անկել յերկիր



առաջի

ռաջի իւր՝ յարոյց զնոսա և ասէ․ կարծեմ
թէ սպանեալ էք դուք զորդին ձեր ։
Ասէ զինուորն․ տէր արքայ ողորմեա՛
մեզ․ էր մեզ որդեակ մի՝ և մեկնեց մեզ
զխօսս պխուլպխուլին․ իբր թէ լինելոց էր
ինքն մեծատուն՝ որ ես և մայրն նր ծա-
ռայելոց իցէ քնմա։ և մեք լցեալ նախանձու՝
ընկեցաք զնա 'ի ծով ։ Ասէ թգւորն․
զի՞նչ չար լինէր եթէ կատարէր այդպէս
այլ պատիւ և փառք ձեր յաւելուին ։
Իսկ արդ՝ մեղս ծանրագոյնս գործեցիք
առաջի այ․ քանզի յոյժ յիմարութիւնէ
հակառակ լինիլ կամացն այ ։
Յետ վճար խօսիցին՝ ասէ ցնոսա թգւորն
ով քաղցրիկ ծնօղք իմ ես եմ աղէքսանդր
որդին ձեր զոր ընկեցիք 'ի ծով ։ Իսկ
ած ողորմութն իւրով փրկեաց զիս և

 հաւոյց

Հասոյց այսպիսի մեծութեան. և կատարեցաւ
խօսքն պիւլպիւլին՝ որ հայրդ իմ ջուր
առեալ ՚ի ձեռին լուանալ զձեռս իմ,
և մայրդ իմ զսրբիչն. և խօսքն այս ոչ
խափանեցաւ ։ Եւ նոքա լուեալ զայս՝
երկեան յերկիւղ մեծ. և անկան ՚ի վերայ
երեսաց իւրեանց առ ոտս որդւոյն իւր-
եանց. և խնդրէին ներումն և ողորմութիւն ։
Ասէ ցնա թագաւորն. մի երկնչիք՝ զի ոչ
ինչ լինի ձեզ չար. և եթէ ոչ էիք ընկե-
ցել զիս ՚ի ծով՝ ոչ հասանէի յայս մեծութեան ։
Եւ համբուրեաց զհայր և զմայր իւր
և մայրն յառաւել խնդութենէն լայր ։
Ասէ ցնա թագաւորն. մի լայք՝ այլ քաջալե-
րացարուք. և ամ ինչ որ ՚ի ներքոյ ձեռին
իմոյ է՝ հնազանդ լիցի ձեզ ։ Եւ առեալ
զնա մեծի պատուով և ոսկէխակազմ կառօք

դարձա՛ւ յետս 'ի քաղաքն 'ի պալատն իւր.
և էին ծնօղքն նորա 'ի պատուի զա̄մ
ա՛ւուրս կենաց իւրեանց:

Եւ՛ իբրև վճարեաց դիոկղետիանոս
զաւակն իւր, դարձեալ առ կայսրն և ասէ.
տէր արքայ և հայր իմ սիրելի՝ 'ի միտ առեր
զբանս իմ զոր ասացի: Ասէ ցնա կայսրն.
այո 'ի միտ առի. Ասէ որդին. այսպէս
թէ և ինձ շնորհէր ա̄ծ իմաստութի̄, ես
ոչ հանէի 'ի ձէնջ զտէրութի̄ ձեր. և ոչ
պակասացուցանէի զպատի՛ւ ձեր. այլ օրըստ
օրէ յա՛ւելու՛ի զպատի՛ւ ձեր. որպէս նա
արար ծնողաց իւրոց:

Ասէ կայսրն. ո՞վ քաղցրիկ որդեակ իմ
լա՛ւ առակ ասացեր մեզ: Այսուհետև
'ի քեզ յանձնեմ զթագա՛ւորութի̄ս իմ. և
ես բնակիմ առանձին. վս̄ զի ծերացեալ եմ:

Ասէ

Ասէ որդին. հայր իմ արդ լցին իրաւ֊
ունք թագուհոյն: Եւ հրամայեաց
կայսրն դատաւորաց քննութիւն առնել:
Ասեն դատաւորքն ցկայսրն. տէր արքայ
զի՞նչ քննեսցուք զդա. զի ինքնին բերա֊
նով իւրով խոստովանեցաւ: Եւ այլ մե֊
ծագոյն վկայ սիրաւն իւր որ գտաւ
կանացի զգեստիւ:

Եւ նոյնժամայն հրամայեաց որդի արային
որ կապեցին զթագուհին ամեհի ձիոյ ագի.
և քարշեալ փողոցէ 'ի փողոց՝ տարեալ
այրեցին ընդ սիրաւն իւրում: Եւ ամենքեն
օրհնէին զած. որ զանպարտն փրկեաց
և զթագուհին պատժեաց:

Յետ այնորիկ ոչ բազում աւուրց մեռաւ
կայսրն. և թգրեաց 'ի տեղի նորա որդի
արքային դիկողէտիանոս:



Եւ

Տ՜ր դ պրպտօքն մ.ծ.ցոյց և ս քան զևս յոյժ
Տ՜ր իմաստութ՟ վարէր զա՟մ երկիրն որ
՚ի ներքոյ տէրութ՟ իւրոյ էին. և ամ՟քն
օրհնէին զա՟ծ և գովէին զիմաստութ՟ին
դ լոկղէ տիրանոսի կայսերն. և սիրէին զնա
որ այնպիսի քաղաքավարութ՟ վայելէր
զաթոռն իւր: Տ՜ր կեցո՟ւ բարի կենօք՝
ծաղկեալ որդւովք և դըստերօք լէ՛
ա՛մուրբք հանգեաւ խաղաղութ՟:
Տ՜ր քի՟ մարդասիրին փառք
յա՛ւիտեանս յա՛ւիտենից.

Ո ամէն: Ղ

Ա Տէ

Ռ Յ Ռ

Ա Բ Գ Դ Ե

Զ Է Ը Թ Ժ

Ի Լ Խ Ծ Կ

Հ Ձ Ղ Ճ Մ

Յ Ն Շ Ո Չ

Պ Ջ Ռ Ս Վ

Տ Ր Ց Ւ Փ

Ք

Սուրբ երրորդութն փրկէ ըզ
քեզ յամ փորձութէ․ փարատե
ցաւ ցաւ սրտի քո․ մեծ ուրախութ իւն
և շնորհ 'ի յոյս․ և դու բարձրանաս մեծ
պատուով։ Այլ յորժամ ընծայեցար 'ի
ծնողաց քոց՝ մեծ հիւանդութի կրեցեր․ և
հալածական եղար 'ի յազգականաց քոց և
'ի բարեկամաց։ Բայց պատրաստ կացց
զանձն քո 'ի գաղանաց և յանօրինաց․ զի
փաթորակ կայ առաջի քո․ և չարախօսքն
քո շատ են․ զնա աղօթք որմ առ ած որ
փրկէս 'ի նոցանէ․ և 'ի խորհուրդս քո



զինչ

զինչ որ բռնեալ ես և կամիս՝ այնպէս
կատարի ։ վիճակ բարի եղաւ քեզ ։

(Բ)

Բանն տծ անսխալն՝ որ ՚ի հօրէ առա
քեցաւ, նա է լոյս ներքեւ լուսոյ ։ որ փրկէ
զքեզ յամ փորձութէ ։ փառաւորեցաւ ցաւ
սրտի քո ։ և կատարեցաւ վիճակն քո ՚ի
բարին ։ զինչ բան որ բռնես՝ տն յաջողէ
քեզ և առաջնորդէ ։ Արդ արա զխոր-
հուրդ քո ։ թէ վաճառ ունիս՝ շահիս ։
թէ ՚ի ճանապարհ երթաս՝ բարով գաս ։
թէ հեռաւոր ունիս՝ բարով տեսանես ։
թէ հիւանդ ունիս՝ շուտով ողջանայ զոր
կորուսեալ ես գտանես արքունու վիճակն է ։

(Գ)

Գնա՝ մի՛ ինչ հարցաներ՝ զի բազում
նեղութիւնս ։ և տրտմութի կայ առաջի քո ։

 և վիշտք

և վիշտք մահու տրտմեցուցին զքեզ. և
և հաս ՚ի վեր քո նեղութիւն մեծ: չկայր քեզ
օգնական և ո՛չ սիրել: զի ՚ի հայրենական
ժառանգութենէն զրկեցար. և այժմ տարակու-
սեալ ես մեր կենացդ: Արդ աղաչեմ զԱստուած
և ուխտակատարեմ անմահ. որ կործանէ ըզ-
թշնամին քո. և հանէ զքեզ ՚ի նեղութենէ
՚ի լոյս. և քո սրտի կամքն ՚ի բարին կատարի:
՚ի ջրէ պատրաստ կայ. յունանու վեհակնէ

(Դ)

Դու ո՛վ սիրելի՛ մեր այդ բանիդ հարցա-
նես և հոգաս հանապազ. Աստուած փրկէ զքեզ
և հանէ յայսմ նեղութենէ զանձն քո. և յան-
կարծակի ՚ի տեղաց մի ըռզակիս՝ ուստի
ակն ոչ ունիս. և բանայ քեզ Աստուած դուռն
բարի: ՚Ի ճանապարհ երթաս և բարով
գաս. և թշնամին քո յամօթ լինի: Հեռաւոր


ունիս

ւնիմ՝ տեսանես. վիշտք մահու տրտմե-
ցուցին զքեզ՝ բայց մի տանաս զայն։ փոխել
կամիս ՚ի տեղւոջէ ՚ի տեղ, սակայն մի համբե-
րէ և ապա փոխեա՛ց. և բարի գտանես.
մի ծանրանաս և ուրախ լինիս. յուսամ առ. ած
որ չվնասիս։ գտանիցես վիճակնէ ։

(Ե)

Երանի է քեզ ով սիրելի՝ ած է քեզ
օգնական. բայց դու շատես դատել և
չեղաւ քեզ հանգստութի. և չեղաւ քեզ
օգնական. ոչ եղբայր և ոչ սիրելի։ Որ
ջալիս ծովու կու ծփաս. և քո կենացդ
հանգիստ չես գտաներ. ով սիրելի տուր
փառս այ զի ուրախութի հասանի քեզ յայ
և առողջութիւն։ Թէ փոխիս ՚ի տեղացդ
բարոյ հանդիպիս. և ամ դժուարութի
՚ի բարին դառնայ։ ՚ի յաւագագ պատրաստ

կայ· որոգայթ կացուցանէ ·'ի յընկեր բանաց և 'ի մատնողաց պատրաստ կացիր ։ սուրբ

գրիգորի վիճակնէ ։

(Զ)

Զարմացեալ եմ ով այր՝ զի երկմտեալ ես և 'ի թշնամեաց սասանիս· և խորհիս վասն մեծատանց · և ոչ խորհիս առնել զաղաչանս այ· աղօթից ծուլ կու կենաս· վն այնորիկ եկն 'ի վր քո նեղութի մեծ · և թշնամին քո զօրացաւ 'ի վերայ քո ։ Գնա աղաչեա զած և ուխտ կատարեա նմա՝ զի հանցէ զքեզ յամ նեղութէ · և ազատիս յորոգայթէ · վաճառ ունիս սիրով շահիս։ մաթէոսի վիճակնէ ։

(Ի)

Ով այր՝ առնուս զոր խորհիս և ուրախ լինիս · և ազատիս 'ի չարէ ։ գնա գոհացիր

զնոյ. բայց մարդ մի կայ որ մտօք չար կու-
խորհի քեզ. բայց ած հանէ զքեզ յամ-
նեղութէ և յորոգայթէ. զի դու բարի ես
և ած բարի առաջնորդէ քեզ: զինչ ՚ի
ձեռքդ բան բռնես` յաջողէ քեզ ած զոր
ցանկաս` տեսանես. զոր կորուսեալ ես`
գտանես. թէ հիւանդ ունիս` ողջանայ.
թէ տուն շինես կամ հողագործութի
առնես` բարի գայ և ըղձակով կատարի:
՚Ի կախարդ կանանց պատրաստ կաց.
Մ. փոխսի վիճակն է:

(Ռ)

Ո՛վ մարդ` ժամանակ դժուարութե ելն
՚ի մտէ քո. և տրտմեցար յազգականաց քոց
և ՚ի բարեկամաց. և ազգն քո նենգաւոր
եղեն քեզ. և եղև աւերումն տան քո. և
շրջեցար դու ՚ի վերայ երկրի:

Այլ գոհանայիր զԱ̃յ. զի գալոց է քեզ
ուրախութի̃ ԺԸ. և զով ուղես տեսանես։
Թէ 'ի ճանապարհ երթաս՝ բարով գտա-
նաս. զինչ բան առնես՝ յաջողէ քեզ Ա̃ծ։
զուխտն զոր խոստացեր ես Ա̃յ՝ կատարէ։
Թէ վաճառ առնես՝ շահիս. ապա սրտահեշա
կայիր։ սեթայ վիճակն է։

(Թ.)

Ո՛չ յառաջեցար 'ի բարին. զոր ունէիր
զրկեցիր. ոչ կայր քեզ զօգնակին. ոչ եղբայր
և ոչ սիրելի։ Արդ աղաչեմ զԱ̃ծ որ փրկէ
զքեզ և հանէ 'ի նեղութենէ զանձն քո։
Բայց դու անլուր ըդես. և աղօթ լից ծուլ
կու կենաս. մ̃ք այնարիկ եկն 'ի վերայ քո
նեղութի̃. և դու շրջեցար յօտար երկիր՝
բայց ոչ փնասեցար։ Ապա թէ ոչ գտա-
նաս 'ի կամս Ա̃յ, դայ 'ի վ̃ր քո նեղութի̃. և



լինի

լինի յափշտակութեան ընչից քոց և աւերութեան
տան քո . և ամ բան զինչ որ բռնես՝ ոչ
յաջողի . և զոր ուզես՝ ոչ տեսանես . զոր
կորուսեալ ես՝ ոչ գտանես ։ Այլ թէ
դառնաս ՚ի կամս այ, նա փակած դուռ մի
բացուի քեզ և յաւելու բուղակն քո ։
Գնա աղօթք արա այ և ուխտ կտրէ
որ այլ չես գործես զչարիս . և ազատիս ՚ի
տանջանացդ ։ Այս գրիգորի վիճակն է ։

(Ժ)

Զոր ինչ ՚ի ձեռքդ բան բռնես, յա-
ջողէ քեզ այ . և արա զխորհուրդ սրտի քո ։
Աշխատիս տուր անձին քո՝ զի ուրախանալ
կամիս ՚ի բանդ որ բռնել ես ։ ՚Ի ձեռաց
քոց ելանէ ողորմութի . և բազում մք կերի-
ցեն զվաստակս ձեռացքոց ։ Այլ հիւան-
դացար շատ՝ որ ՚ի մահ գնացեր . և այժ-


եհան

եհան զքեզ ՚ի նեղութենէ և ապրեցոյց։
Ի հեռաւոր տեղաց մի ուսուի այն ոչ
ունիս՝ բարի գալոցէ քեզ. և տրտմութի
քո՝ ուրախութի փոխարկի. զի դու բարի
ես՝ և ած բարի առաջնորդէ քեզ ։ և
զաւակ մի շնորհաւոր լինի քեզ ։ Բայց
՚ի ոխրելեաց բախտ ոչ ունիս. վն այնորիկ
պատրաստ կացիր՝ զի ՚ի զուր լեզուա֊
կանիս և տուգանք տաս ։ Գնա աղաչեա
զած եւ ուխտ կատարեա նմա. զի ողորմու֊
թիւնն նր եկեսցէ ՚ի վերայ քո ։ Թէ ՚ի
ճանապարհ երթաս՝ բարով գաս՝ և բարւոյ
հասանիս ։ սողոմոնի վիճակն է

(Ի)

Ո՛վ այր՝ ապաւինեալ ես ՚ի խորհուրդ
քո և մտաւանդ դու խան ոյ ։ զի տրտմութի
քո՝ ուրախութի փոխարկի ։ ՚ի հեռաւոր



տեղաց

տեղաց՝ ձայն աղէ տեղց լուես. կամ հեռուես որ
մարդ տեսանես. և յայն առողջութիւն գտանես
և գարման ուկէ բաց քոց ոչ պակասի։ բայց
ծնողաց քոց գխմար արձ մի՛ լինիր. նա զինչ
որ ուզես յայն՝ տայ քեզ ա(ստուա)ծ։ Սէ փոխիլ
տեղոջէ ՚ի տեղ՝ բարի լինի քեզ. և յամ
գժուէ արաւէ ազատիս։ և զինչ խորհուրդ
զոր ունիս և բան որ բանես՝ նա գնա արա.
չատ շահ և ըռզակ առնուս. և փախչան
քո ՚ի բարի օր լինի։ զաղարու վերջանէն է։

(Լ)

Ո՛վ այր՝ կու տեսանեմ զքեզ և զխորհուրդ
քո որ նմանիս ալեաց ծովու. նմանիս ձըն
ձղկի որ անկաւ ՚ի ձեռս որսողաց. նոյնպէս
և դու ՚ի ձեռս բռնաւորաց անկանիս։
Գնա աղաչեա զա(ստուա)ծ և ուխտ կատարեա
նմա. որ փրկէ զքեզ տէր ա(ստուա)ծ քո յամենայն


որոգայ

ողորգայցէ և ՚ի նեղութէ․ քանզի քեզ զդուռն բարւոյ և ըռզակայց· այլ դու խառն զոր խոստացեր եւ ո՛՝ կատարեմ։ Ապա թէ ո՛չ գտանես ՚ի կամս այ, գայ ՚ի վերայ քո նեղութիւն և լինի յափշտակութիւն տան քո և ընչեց քոց։ Ո՞ դու հալածական լինիս և վիշտք մահու տրտմեցուցանեն զքեզ․ և օտար երկիր վտարիս։ Ո՞ թէ գտանես ՚ի կամս այ, նա փակեալ դուռն բացցէ ի քեզ· և զոր ինչ ՚ի ձեռքդ բան բռնես՝ յաջողէ քեզ ած ։ Այլ պատրաստ կաց ՚ի ջրոյ և ՚ի գազանաց· և ՚ի վատ գործոց։

յօնանու վնձանին է։

(ԽՍ)

Ո՛վ մարդ՝ ողորմութիւնն այ լինի ընդ քեզ զամ աւուրս կենաց քոց· բայց ՚ի յօտար աշխարհ վտարեցար։ զոմ ուղես աւեսանես

զինչ կամիս առնուս. զոր կորուսեալ եմ
գտանես. այլ յընկերացդ բախտաւորութիւնս
այլ 'ի յայս շատ շնորհս ունիս. և զաւակ մի
շնորհաւոր լինի քեզ: Բայց փիշտք մա
հու տրտմեցուցին զքեզ. իսկ բան և խոր
հուրդ զոր արեր ես՝ զնա արա շահիս և
բարիդ տանես. այլ 'ի քո աղդէն ոչ շահիս
Նա 'ի քո վատաւիէն բազումք կերիցեն
և պարգևս 'ի յայս առնուս: յերկան կնկանէ
մի փախթորակն. յիշեցաց և 'ի կախարդաց
պատրաստեալ կացիր: Ով մարտիրոսի վիճակնէ

(ԾՀ)

Ո՛վ այր դու՝ նմանես գետոյ որ երթայ
յերկար և ոչ կայ նմա դադարումն :
Դու համբաւական եղար և 'ի հայրենական
ժառանգութենէն զրկեցար. և 'ի ծնողաց
քոց ոչ խնդացեր. զբաղախտես որ ամէն


մարդ

մարդ ընկեալ է զքեզ ։ Արդ աղաչեմ
զա̃ծ եւ ուխտ կատարեմ նմա․ որ օգնէ
քեզ ա̃ծ եւ փրկէ զքեզ յորոգայթէ ։
Դու մի տրտմիր զի բանիդ դժուարութիւն
՚ի լսելանէ․ եւ քեզ ձայն աւետեաց գայ
եւ դու խնդաս եւ ուրախանաս ։ յանկարծակի
ընզակ գայ քեզ՝ ուստի ակն ոչ ունիս ։
Սեթայ վիճակն է ։

(Կ)

Ո՛վ սիրելի՝ կակղացո զսարդքդ քո եւ պա
հեա զկամս ա̃յ ․ եւ տուր հաց քաղցելոց
եւ ջուր ծարաւեաց։ Ապա թէ ոչ դառ
նաս ՚ի կամս ա̃յ ․ նա գայ ՚ի վե̃ր քո նեղութի
ւն․ եւ յափշտակութին ընչից քոց եւ աւերու
մըն տան քո ․ եւ ա̃մ բան զոր ինչ բռնես
ո՛չ յաջողի․ եւ որում ցանկաս ո՛չ հասանիս․
եւ զոր կորուսեալ ես ո՛չ գտանես ։

 Ապա

Ապա թէ դառնաս 'ի կամս այ̃ և զպատ
ուիրանս նր̃ պահես, նա ողորմութիւն այ̃
հասանէ 'ի վր̃ քո. և յաւագաց մեծարես
և դուռն մի փակած բացուի քեզ. և յաւե
լու ըղձակն քո։ Սղ̃ արեգակն 'ի վերայ
արարածոց՝ այնպէս այ̃ բարին հասանէ 'ի
վր̃ քո. և յաջողէ քեզ զոր ինչ դու կամիս։
աչք աւագաց քաղցրանայ 'ի դիմացդ. և
տուրես բարով գայ քեզ։ յակոբայ վերձակնէ

( Ձ )

Ո՛վ մարդ՝ ա՛ւետիս տամ քեզ. զի դու
բարի ես և ա̃ծ բարի առաջնորդէ քեզ.
և տ̃ր փրկեաց զքեզ յամ̃ յորոգայթէ։
Լինիս ցանկալի ամենեցուն. և ո՛չ լինի
պակասութի̃ ընչից քոց. և տայ քեզ ա̃ծ
փառք և մեծութի̃։ բայց պատրաստ կաց 'ի
լեզուէ մի որ չփաթորակիս. զի համ̃զ



ընդ

ընդ քեզ է այն լեզուն ։ Գտնեմ աղաչեմ զՔեզ և ուխտ կատարեմ նմա որ ազատիս 'ի չարէն. զինչ խորհուրդ որ ունիս արժ և մի' փախեր. զինչ դու ուզես' այնպէս

կատարի։ Բարսեղի վիճակն է։

(Զ)

Ով մարդ' ձայն ցնծութեան և ուրախութեան մատուցանեմ քեզ. զի դու փախուցեալ ես և տարակուսեալ. և սատանեցար յազգաց և 'ի բարեկամաց քոց. և ազգն քո նենգաւոր եղեն քեզ. և շատ իրաց զրկեցար։ Տուն քո հայրենի' դարձաւ 'ի յաւեր. և դու շրջեցար 'ի վերայ երկրի. և սուգ մահու տրտմեցոյց զքեզ ։ այլ այժմ փառք տուր Այ' զի հասեալ է քեզ ուրախութիւն մծ. բազմամեայ լռ.զակն քո. ունիս և արծաթն. զինչ ուզես կատարի ։ Այլ պատրաստ



կաց 'ի

կաց ՚ի յանօրինաց և ՚ի պատանելութէ՛ որ
՚ի փայլթերակ չանկանիս. թէ հեռաւոր
ունիս զայս. և այլ զինչ խորհուրդ ունիս
կատարիս. մաղթեսն վիճակն է ։

(Ո)

Ո՛վ մարդ՝ պարզեցաւ որձակութեան կա-
տանաց քոց. ով մոգքն որ եւ լին յարևելից
և եկեալ ան քո գտին զնա և ուրախեղեն
Նոյնպէս և դու ուրախանաս ՚ի բանս քո
և ՚ի խորհուրդդ որ բռնելես ։ Թող է
՚ի ճանապարհ երթաս՝ բարով դառնաս
և բարի գտանես ։ Ով մեղուցես յաղթեց
փարաւօնի և եզ իպտացւոցն, նոյնէս և
դու յաղթես թշնամեաց քոց. և զինչ
խորհեր ես զնա արա. ՚ի բարին առաջ
Նարգէ քեզ տէր աստուած ։ մեզոց
վիճակնէ ։



Ո՛վ

(Ռ)

Ո՛վ մարդ՝ զոր հարցանես ասեմ քեզ. եղար դու ՚ի մանկութէ քում մչ հայածական. և պանդխտութի կրեցեր զամ աւուրս կենաց քոց. և սասանեցար յաջղաց և ՚ի յանօրինաց. և ազգն քո նենգաւորք եղեն քեզ։ Ո՛վ սիրելի իմ՛ փախեր՝ զի հասեալ է քեզ ուրախութի և կատարեցաւ վիճակս քո ՚ի բարին։ զինչ ուզես ՚ի յայտ տայ քեզ ած. Թէ ՚ի ճանապարհ երթաս՝ բարով գաս։ այլ ՚ի կանանց դրացեաց պատրաստ կաց զի շատ բամբասանք լսես գանիելի վիճակն է։

(Ս)

Ո՛վ այր՝ նենգաւոր տեսանեմ զքի զմարդ ՚ի չարութ յիմարեալ ես՝ և ընկեր բոջք չար առնես. և ամենեցուն վնաս խորհիս։



Ընկեն

Ընկեա՛ զնենգութ̅ն ՚ի մտաց քոց. և ընկե-
րոջդ չար մի՛ խորհիր. որ չանկանիս ՚ի
մեծ նեղութ̅ն. և պատուհաս գայ ՚ի վ̅ր քո
Մի՛ խնդասցիր ՚ի ծնողաց և ո՛չ ՚ի զաւակաց
և ամ̅ բանս զինչ որ առնես՝ ո՛չ յաջողի քեզ։
Ապա թէ դառնաս ՚ի կամս ա̅յ՝ և ընկե-
րոջդ և ամ̅ն մարդոյ նենգութ̅ն ո՛չ առնես
նա ծագէ ա̅ծ զողորմութ̅ն իւր ՚ի վ̅ր քո.
և ո՛չ լինի պակասութ̅ն ընչից քոց. և մեծաւ
պատուով վախճանիս։ յաւեթայ վիճակնէ

(Յ)

Ո՛վ մարդ՝ աճեցուս տամքեզ. զի կտրե-
ցաւ վիճակս քո ՚ի բարին. և դու խոր-
հուրդ ունիս ՚ի սիրտըդ. ո՛չ կարես բըռ-
նել և ո՛չ թողուլ։ մի՝ վախեր զնա արա.
զի խորհուրդ քո ՚ի բարին կատարեցաւ
Ո՞ր լուսինն որ զխաւար գիշերն լուսաւորէ
այնպէս

այնպէս լուսաւորի խորհուրդ քո որ բըղ-
նեալ ես. և հաստանէ քեզ ըողջակ 'ի յետոյ. և
ում ցանկաս հասանիս. և յաճախագաց բարէ
գտանես. և աճեստեց ձայն լսես և խնդա-
գնա աղաչեմ զքեզ որ խորտակէ ըզ քո
թշնամին: Տէր գրիգորի վկձակն է:

(Ռ)

Ո՛վ մարդ՝ ահա 'ի նեղութեան տեսանեմ
զքեզ. զի մեծամեծ փաթերակ կայ առաջի
քո. և 'ի նեղութեան անկանիս: Բազումք
խորհին քեզ չարիք և դու ոչ իմանաս
զխորհուստ անձին քո. և զի ոչ առնես ըզ-
կամս այ՝ վն այնորիկ եկն 'ի վր քո նեղութիւն:
զինչ խորհուրդ ունիս ոչ կատարի. թէ
'ի ճանապարհ երթաս՝ ոչ լինի քեզ բարի:
Այլ թէ դառնաս 'ի կամս այ և զուխտ
զոր խոստացերես կատարես, նա փախած

գտանեմ բացեալ իբրև զդ. և յաւէտ լու ընդ զէնքո

(Շ)

Ո՛վ մարդ՝ բազում բարիս կու տեսանես մատուցի քո․ ամենայն պտուղս ՚ի մշտամշտաց․ ու բախտաւոր և բարեաց հանգ իսկ խնդաս ՚ի զուարակէ և ՚ի կենդանեաց քում մէջ․ և լինիս յիշատակ ծնողաց քոց։ Եւ զինչ որ խնդրես ՚ի յայն՝ ամենայն․ զոր կորուսեալ է պտանես․ թէ հեռաւոր ունիս՝ գայ որ տեսանես․ թէ հիւանդ ունիս՝ ողջանայ և որքան զոր աղէկ լինի քեզ։

(Ո)

Ո՛վ մարդ՝ պահպանէ քեզ յամ ժամ գոհանալ ըստ այս․ զի թէ պէտս տրտմեցար, բայց պարծեցար ու բախտաւոր և շնորհքն այս հաստանեն ՚ի վերայ քո։ Եւ մէ պատրաստ կաց ՚ի յամօրենաց և ՚ի գաղտնեաց․ զի փառաւորակ

կայ առաջի քո։ բայց պարգեւ եւ շնորհ 'ի
յԱյ առնուս. եւ յորդոց խնդաս. եւ լինիս
ցանկալի ամենեցուն. եւ ոչ լինի պակասութիւն
ընչից քոց։ Թէ փախիս 'ի տեղւոջէ 'ի
տեղ՝ բարւոյ հանգստին. ձայն աւետեաց
լսես. եւ հեռաւոր մարդ տեսանես. քո
մահն 'ի բարի օր լինի. եւ երազն որ տե-
սերես բարի է։ աւրահամու վիճակն է։

(Չ)

Ով մարդ՝ փառաւոր իս յամենեցունց. եւ
առնուս. բարի իշխանութի. որ Թ շնորհն
քո յամօթ լինի. եւ յօտար երկիր գնաս.
եւ առնուս պարգեւս. եւ յԱյ դժուարութե
ազատիս. Ն եւ զօղ ուղեւ՝ բարւոյ տեսանես.
եւ ում ցանկաս՝ հասանիս։ Այլ պատրաստ
կաց 'ի գաղանաց եւ 'ի բարձր տեղւոց. 'ի
կախարդաց եւ 'ի չնաւորես կնոջէ՝ որ շարէ



փաթ

փաթթորանէր ։ Դնա՛ աղաչեմ զա̃ծ և ուխտ կատարեմ նմա ․ որ ազատիս 'ի շատ չարէ ․ և բանայ քեզ տ̃ր ա̃ծ դուռն բարի և ըռզակաց ։ սեթայ վիճակն է ։

(Պ)

Պարգև բարեաց տայէ քեզ ա̃ծ ․ չարն հեռացաւ և բարին մօտեցաւ կամօքն ա̃յ ։ Եւ դու ես իմաստուն որ խրատ տաս ամենեցուն ․ բայց պահեմ զանձըն քո 'ի չարկամաց ․ և զոր ինչ գործես և բան որ բռնես՝ 'ի բարին առաջնորդէ քեզ տ̃ր ա̃ծ ։ բայց 'ի սիրելեաց բախտ ո՛չ ունիս ։ Յա̃ծ ապաւինէ որ կործանէ զքո թշնամին ․ և հանէ զքեզ յա̃մ որոգայթէ ․ և լինիս ցանկալի ա̃մցուն ․ և ո՛չ լինի պակասութիւն ընչից քոց ․ և զինչ խորհիս՝ կ̃րէ 'ի բարին ։ մովսէսի վիճակն է ։

(Ջ)

Ո՛վ մարդ ՚մեծ էիր և խոնարհեցիր. զմ-
տաւ ածես և ոչ կարես կալ ՚ի վերայ մէկ
խորհրդի. դու մի՛ տրտմիր՝ գալոց է քեզ.
ուրախութի՟ւն մեծ՝ ուստի այն ոչ ունիս. զի
դու բարի ես՝ և ա՟մ բարի առաջնորդ է
քեզ: Փոխանան տրտմութե՟ ուրախութ՟ի
լինի քեզ. բարի և շնորհ ՚ի յա՟յ առնուս:
Գ՟նմ արմ զխորհուրդ քո. թէ վաճա-
առնես՝ շահիս. թէ ՚ի ճանապարհ եր-
թաս բարով գաս: այլ ՚ի վերայ բախտիդ
քննու՟թի առնես և հարցանես. ա՟մ բանայ
քեզ զդուռն բարոյ. և յաւէրլու ըղձակն
քո մաղթէ ուի վիճակն է:

(Ռ)

Ո՛վ մարդ՝ սասանեցար յաղգաց և ՚ի յա-
նօրինաց. հասա՟ ՚ի վ՟ր քո տրտմու՟թի. և



եղև

եղև ամէն բուժումն տանջանաց ՚ի բարի կամաց քոց.
և խորհուրդ քո հաճեցաւ ՚ի կորուստ է լինել.
Ո՛վ այր մի՛ հոգար վասն այդ բանիդ զի
շուտ գայ ՚ի վերայ քո բարին. և տէր Աստուած
հանէ զքեզ ՚ի խաւարէ ՚ի լոյս. և քո
մուրատն հասանես. Այլ պատրաստ կաց
՚ի յանկէ բռնացդ զի բախտ ոչ ունիս. և կայ
մարդ մի չարակն որ մտօքն չար կու խորհի
քեզ. ՚ի կախարդաց պատրաստ կաց.

աղամայ վերջանէ ։

(Ս)

Ո՛վ մարդ սէր կենաց քոց ընդէր հարցանես. զինչ յիմարեալ ես և չար խորհիս
և ամենեցուն փիաս առնես. ՚ի տեղւոջէ ՚ի
տեղ փոխիս և ուրեք ոչ հաստատիս զոր
կորուսեալ ես ոչ գտանես. Ընկեալ զնեն
դու է ՚ի մտաց քոց. ընկեր քոյ և ամէն մարդոյ



չար

մի՛ խորհիր․ թէ չլսես փաթ որայ՛ խօսգնմ
աղաչեմ զա̃ծ որ ազատես 'ի շատ չարէ ։

(Ս)

Ո՛վ սիրելի տէր փառաց իմ․ զի գալոց է․
քեզ ուրախութի ուստի ակն ոչ ունիս։
Նա՛ 'ի քո վաստակէն շատ մարդ կերի
ցէ․ և զա՛մա՛կ մի խնդամիտ ուտե սմնես․ և
տայ քեզ զա̃ծ առողջութի։ Ա՛յլ պատրաստ
կաց 'ի բոլորերեսս մարդոյն և 'ի չարակն
կնոջէ․ որ մտօքն չար կու խորհին քեզ․
պատրաստ կաց 'ի նոցանէ որ չանկանիս 'ի
փորձութի։ և զինչ բան բանես 'ի բարին
առաջնորդէ քեզ տր ա̃ծ ։ 'ի հեռաւոր
տեղոց ձայն աւետեաց լսես․ կամ հեռաւոր
մարդ տեսանես։ զնմ արա զխորհուրդ քո

(Տ)

Ո՛վ մարդ ուրախութի մատուցանեմ քեզ զի

զի դու փախնելես և տարաժուսնել։ զբա-
խտես. զոր կու տաս կռվով կու թափես
ում բարի կամնես նա քեզ չար կամենէ։
Այլ յաղօթից և աղաչանաց դու մի՛
դադարիր. զայս է քեզ ուրախութի՟ն
ուստի ակնոչ ունիս։ Հեռացի՛ որ սնունիս զայ
թէ աղքատես հարստանաս. թէ հիւանդ
ունիս ողջանայ. թէ երաղ ես տեսեր
բարի է։ ղուկասու վիճակն է։

(Բ)

Ո՛վ մարդ ցծուի և ուրախուի տամ քեզ.
զի դու բարիես և ա՟ծ բարի առաջնորդէ
քեզ. և ում ցանկաս հասանիս։ բայց թէ շնա
միքն քո շատեն. այլ դու մի՛ փախեր ՚ի
նոցանէ զի ա՟ծ է քեզ օգնական. բայց և
՚ի կնոջէ բախտ ոչ ունիս։ Պատրաստ.
կաց որ ՚ի գնտան չի մտանես. իրա՛ւ ի տա՛

 գանք

զանձս տաս։ այլ իրք զոր կորուսեր քեզ զը-
տանես։ Ի ճանապարհ կամիս երթալ և
երկուցմիտես․ գնա և մի՛ վախեր․ ընդ որ
երթաս բարով գաս։ զինչ բան որ բռնես
յաջողէ քեզ ած․ և զինչ խորհուրդ որ
ունիս ած ՚ի բարին կատարէ․ և օր քան
զօր աղէկ կլինիս։ մարկոսի վճռակն է։

(Ց)

Ո՛վ մարդ բազում բարիս կու տեսանեմ
առաջի քո․ առնուս պարգևս ՚ի մեծամեծաց
ուրախանաս և բարոյ հանգիստ։ Ես ըն-
դաս ՚ի զաճակէ և ՚ի կնոջէ քումմէ․ և
լինիս բարի յիշատակ ծնողաց քոց․ թէ
փոխիս ՚ի տեղաց ոչ հաստատիս․ զի ամքեն
նենգաւորքն քեզ։ Կա՛ ՚ի մարդոյ բախտ
ոչ ունիս․ այլ քո բարին ՚ի յոյս է․ և տայ
քեզ ած զիւր ողորմութին անչափ․ և յամ

 դժուար

զժուարութիւն աղքատիս. և երանի որ տեսցէր
ես ՚ի բարին կատարի :

(Ւ)

Ո՛վ մարդ չարն հեռացուէ ՚ի քէն և բարին մօտեցաւ. այլ սասանեցար ՚ի յազգաց և անօրինաց. և ազգն քո նենգուէ որ եղեն քեզ : Պատրաստ կացիր ՚ի թշնամեաց քոց. զի կայ մարդ մի չարակն և կին մի կախարդ որ մտօքն չար կու խորհին քեզ. և ՚ի յընկերոտացդ փաթերակ կայ առաջի քո դատաստանն ունիս կամ ճանապարհ կամ վաճառ համբերէ : աբրահամու վիճակնէ :

(Փ)

Անզգամ մարդոյ մի՛ լինիր սիրելի որ չէ փաթորակիս. և ՚ի ձեռաց քո իրք է կորել. մի՛ տրտմիր ՚ի քեզ դառնայ : Զինչ խորհուրդ ունիս կատարէ ած.



բայց

բայց սակաւ մի համբերէ. զի պիղծ մարդ
մի կայ՝ որ մտօքն չար կու խորհի քեզ.
Թէ պատրաստ կենաս իւր մէջն նա ազատիս
՚ի չարէն: Սամերգալ ՚ի մէջ քու տրտմութե.
բայց ած խափանեց. և բղձում ու բախտ ի կայ
տու. չի քս Ամենասուրբն որ ած զինքն
սիրեց. և ՚ի տրտմութէ ազատեց. նոյնպէս և զսու
ազատիս յամէնչարէ: սահոկայ վերձակնէ:

(ԿՌ)

Ով այր տեսանեմ զքեզ. որ մէկմի կու
յաղթէ քեզ. և լեզուով և սրտով չար
կու խորհի քեզ. կամ հոր մի կու փորէ
քեզ: այլ ոչ կարէ վնաս տանել քեզ:
Գնա ու խտ կատարէ ած՝ որ շատ չարէ
փրկեցար. զի հասե ալ էր քեզ նեղութի
ն. ծ, այլ ած դարձոյց զչարն ՚ի գլուխն իւր
Ամենասուրբ խաչակայ. որ հայր իւր



կամէր

կամէր զենուլ զնա . այլ ած օգնեաց նմա
և փրկեաց զնա. և բազում մեծութեան
և փառաց հասաւ . նոյնպէս և դու
ուրախանաս կամօքն աստուծոյ.

սուրբ յակոբայ
վճարին է ։

Եւ այսուցիկ ամենեցուն գիտօղն է ած մխիթարիտ . զի մարդ ոչ է տեսօղ սրտից և ապագայից, այլ ած։ Ուստի զոր ինչ ասեն և գրեն իմաստասէրք, թէ ակամ կարծեօք են։ Ա̃ որոյ նմա միայնոյ այ գիտողին գաղտնեաց և յայտնողին
ծածկութից փառք 'ի յամ
արարածոց 'ի յաւիտեանս
յաւիտենից
ամէն։

Ո

Ն Ա

Տր Ց

Շ : Շ

| | | |
|---|---|---|
| Խոյն | Ցուլ | Երկուորք |
| Խեցգետին | Առիւծ | Կոյս |
| Կշիռ | Կարիճ | Աղեղնաւոր |
| Այծեղջիւր | Ջրհոս | Ձուկն |
| Հրատ | Արեգակն | Լուսաբեր |
| Փայլածու | Լուսին | Երեւակ |
| | Լուսնթագ | |

*Կոյսն ։

Ո՛վ մարդ՝ զլոյսն անըսպառ ծագեսցէ ա՟ծ 'ի վ՟ր քո․ և ողորմութ՟ն իւր յաջողեսցէ քեզ զորդու կամս․ այլ երազես տեսեր և զարհուրեր ․ մի՛ վախեր՝ զի Թէպէտ պատերազմի ահագին է, բայց նշան բարւոյ է ․ ըռզակ գալոց է քեզ ուստի ակն ոչ ունիս․ և այլ զինչ խորհել ես՝ կատարի․ Թէ հիւանդ ունիս ողջանայ ․ և պատուհասն 'ի քէն հեռանայ կամաւ՟ն ա՟յ․ այս աւուրքս որ 'ի վ՟ր քո գալոց է լաւ է քան զառաջինսն ։

*Կշիռն ։

Ո՛վ մարդ՝ զինչ որ խորհեցար մի՛ վախեր այնպէս ուրախանաս որպ՟ս պիտոյ է քեզ ․ բայց զխորհուրդդ ամէն մարդոյ մի՛ ասեր․ զի քո վնասն 'ի կշիռն է ․ և ամէն բան

քեզ յաջողէ։ յիշողաց պատրաստ կացիր
և յամենայն ժամ աղօթեա՛ արա՛ . զի ամեն
չար 'ի քէն հեռանայ և 'ի հոգոց ազատիս։
Թէ 'ի ճանապարհ երթաս՝ բարով գաս.
և թէ վաճառ ունիս բարով շահիս։

*Կարիճն :

Ո՛վ մարդ՝ գիտացիր որ կարճի թունով
կամի հարկանել զքեզ մարդ մի. պատրաստ
կացիր 'ի նմանէ և յայդ խորհրդոյդ հե-
ռացիր՝ որ պահէ զքեզ Աստուած։ Թէ չէ յետոյ
ապաշաւեսս. և թէ հեմբերես սակաւ իկ
մէ, զինչ որ կամք ունիս կատարի։

*Աղեղնաւորն :

Ո՛վ մարդ՝ ժամանակս ուղղորդեցաւ քեզ.
և քո սրտին խորհուրդն 'ի բարին կատարե-
ցաւ. արա՛ զինչ որ կամիս և խնդաս 'ի բանս
քո. և տայ քեզ Աստուած զխնդրուածս քո մի՛

 արտորայք

մտորար սանկած մի համբերէ. և ուստի
այն ոչ ունիս՝ ուրախանաս. թէ տուն
չինես՝ յաջողէ քեզ Տր. և 'ի նեղութէ
ազատիս. թէ հեռաւոր ունիս՝ տեսնուս:
բայց 'ի ճեղոնէգ. պատրաստ կացիր:

*Աղեղնաւորն:

Ով մարդ՝ յիշեա՛ զԱծ 'ի բանս քո և նա
հանէ զքեզ 'ի տրտմութէ զի տրտմութի
հասանէ քեզ 'ի սիրելեաց քոց. կասես
երբ ճար լինի ինձ կամ յաջողութի. և կու
ցուցանէ թէ հիւանդ եմաս՝ բայց շուտով
ողջանաս. թէ հեռաւոր ունիս գայ. և
կատարի խնդիրքդ 'ի բարին:

*Ջրհոսն:

Ով մարդ՝ բարութի շատ ունէ իր և յանձ
նէն զրկեցար. պանդխտեցար և չար դե
պեցաւ քեզ. կու լի սիրելեաց՝ հետ քեզ
եղեն.

ձգեն. և դէտ նաւու 'ի վեր ծովուն երեր-
ման կաս. և կամիս քո կենացդ հանգիստ
գտանել՝ և ճար չես գտաներ: Ո՛վ մարդ-
մի՛ տրտմիր՝ զի տրտմութիւն քո ուրախութիւն
փոխի. և զոր խորհիս կատարի կամաւն Աստուծոյ:

*Ձուկն:

Ո՛վ մարդ՝ հեռաւոր որ տեսնուս. կամ ձայն
աւետեաց լսես և խնդաս. զի դժարն
քո անցաւ և բարին մօտեցաւ: այլ թէ
խոստումն ունիս կատարէ. և յիշոցաց
պատրաստ կացիր: և ո՛չ կապեալքն որ
արձակին՝ և փակեալ դուռն որ բացուի,
մինչ բանալցէ քեզ Ած դուռն ողորմութեան

*Հրափն:

Ո՛վ մարդ՝ նման ես դու հովուին որ փախ-
եաւ 'ի ցրտոյն և եմուտ 'ի յայրն. և ոչխա-
րաց հոգս ո՛չ տարաւ: երեկ գայլն և արար



գէշ:

գէ չ։ Նոյնպէս և դու ՚ի բարոյն հեռանաս և երթաս զհետ չար խորհրդոյն պատրաստ կաց ՚ի նմանէ և ՚ի նենգաւոր մարդոյ. և յայդ խորհրդոյդ հեռացիր. զի չար խօսք կան հետ քեզ. այլ բանդ որ ՚ի մտին է՝ քեզ չարէ։ ահա՛ առաջի քեզ զամենայն ։

*Աւետարան ։

Ո՛վ մարդ՝ ով արեգակն որ լուսաւոր է զարարիչս, այնպէս լուսաւորի խորհուրդ քո. զոր կամիս կատարել ցոյց է քեզ ամ ըզ բարին. բայց ՚ի թուխ բոլորերէս մարդոյ մի պատրաստ կացիր . զի սրտովն նենգէ զքեզ. և լե զօրովն քաղցր խօսի ընդ քեզ։ բայց դու ՚ի բանի մի վըր հօգս ունիս՝ և հետ մտիտ քննութիւն կաս. մի՛ վախեր՝ շուտով լուսաւորի խորհուրդ սրտի քո։

*Լուսաւորիչ ։



Ո՛վ

Ո՛վ մարդ՝ 'ի հետ չար մարդոյ 'ի շուրջ մի՛ գար. ապա թէ ոչ լսես փաթերակիս 'ի նմանէ. և 'ի քո լեզուէդ պատրաստ կացիր. և յամէն մարդոյ քաղցր խօսք մի՛ խաբիր. զի կամին կորուսանել զքեզ։ սա-կայն մի համբերէ. թէ չէ յետոյ ապաշաւ-
ես. շատ բարու 'ի կայ առաջի քո. կորուստն գտանի. և զինչ որ առնես՝ յաջողէ քեզ Ած։

*Փայլածուն։

Ո՛վ մարդ՝ 'ի հեռաւոր տեղեաց ձայն առեալ լսես և խնդիր քո կատարի. և ուխտն զոր դրել ես կատարէ Ած. չարն հեռանայ 'ի քէն և բարին մօտենայ քեզ։ զինչ բան որ ունիս՝ արա համարձակ. զի քո կամքն լինի և ուրախանաս Ածով։

*Լուսինն։

Ո՛վ մարդ՝ ցօղ ողորմութեանն Այ անպակաս

 լիցի 'ի

լիցի ՚ի քէն. և տ̃ր ա̃ծ հաստատեսցէ ըզ
սիրտ քո։ զոր ինչ խորհեսցես՝ արա և մի՛
վախեր. զի շատ բարութի̃ կայ առաջի քո։
և ՚ի հեռաւոր տեղաց ձայն աւետեաց լսես
՚ի մօտ աւուրս և ուրախանաս ։ և զինչ
սրտովդ ուզես՝ աջողք տեսանես և խնդաս։

*Երրորդն:

Ո՛վ մարդ՝ ընթերցօղ անիրաւ՛ ջանաս և ՚ի
զուր աշխատիս. զի դժուարին է բանդ
և անհաստատ գործդ. զի խորհուրդդ այդ
որ ՚ի սրտիդ է ո՛չ է պատշաճ ժամանակիս։
փոխանակ բարւոյ չար հանդիպի քեզ. և
թէ չլսես խրատու՝ փաթերուկիս ժամանակ
մի համբեր տուր սրտիդ. և զյոյսդ առ
ա̃ծ կալ հաստատուն և մի՛ վախեր. զի
թշնամին քո գլորի և դու կանգնիս
կամաւն ա̃յ ։



Ո՛վ

Ո՛վ մարդ՝ վիճակս 'ի բարին ելեւ քեզ. այս
ղազարու վիճակն է որ երեքօրեայ մեռեալն
յարեաւ ։ Շատ աճուրքէր որ քո վիճակն
'ի պրծէն ելած էր. եւ դու 'ի տրտմութե կաս
զէրդ Նոյն երերալով 'ի վր ծովուն մի՛ վախեր
շուտով ելանես 'ի նեղութենէդ ։ Այլ խոստմն
զոր ունիս կտրէ եւ յիշոցց պատրաստ կաց. եւ
զաղօթս հարց կտրե ։ որ ելանես 'ի նե-
ղութենէդ ։ եւ 'ի խած մարդու մի բարի լինիցի քեզ ։
Սա այսուցիկ ամենեցուն գիտող է ած ճշմարիտ.
զի մարդ ո՛չ է տեսող սրտից եւ ապգյից, այլ
ած ։ Ուստի զոր ինչ ասեն եւ գրեն իմաստա-
սէրք, թէ ականն կարծեօքն ։ Ա՛ռ որոյ
նմա միայնոյ ած՝ գիտողին գաղտնեաց եւ յայտնա-
զին ծածկութեց՝ փառք 'ի յամ արարածոց
'ի յաւիտեանս յաւիտենից Ամէն ։

* Առ բարեսէր ընթերցողաց ։ *

Շնորհիւն Այ յանկ ելեալ աւարտեցաւ տպագրութիւն պատմութեան գրքուկիս այսորիկ որ կոչի Եօթն իմաստասէր ։

Բայց արդ յերես անկեալ յերկիր մեծաւ թախանձանօք կոչկոչեալ ժամեմք ողջոյն բարեսէր բարեմիտ և Աստուածասէր խոհեմութք զարդարեալ Քրիստոսի հարցդ, որ ոք հանդիպեսցի սմա, մի՛ ստգտանեալ մեղադրիցէ․ այլ անքնասիրս արասցէ ամենայնում Ամիէ․ քանզի զՍրն հոժանդակութի մեզ ապաւէն կալաք որ զմեզ այս քանս մինչև ցայսվայր հասուցանել կարողս արար ։ աղաչեմք և հայցեմք 'ի ձէնջ զի մի՛ զննողք և որոնողք մերոց պակասութեան գուցէք․ քանզի քաջ իսկ գիտեմք մեք եթէ գոն բազումք որք եթէ կամիցեն կարողք են քան զայս լաւա



գոյնս

գոյնս հնարել յաղագս պայծառութե
հայկազեան սեռ.ին, որպէս և որ զխօսէ ոչ
սակաւ ինչ ծախս արարաք թող զմ.ր այն
քան հարստութեան տարածմունս. մինչ զի զօրն
ողջոյն ոչ բաւական գոլով և զգիշերն տիւ
արարեալ առ գործոյն պարապեցաք քրտը
նաջան դեգերմամբ, այլ անձանձրութ
ընկալարուք զդուզնաքեայ զաշխատանս և
սիրով ընդունել սջիք։

Արդ ՚ի վաղձանի բանիս յիշեսջիք որոց
զվաստակած որ ՚ի տանն Հայոց զՏէր
Յարութիւն Շմաւոն Շիրազեցի
զնախկին սահմանողն և զառաջնահնար
բազմաշխատ տգնութեան առձեռն բերողն
սոյնոյ գեղեցիկ տպարանիս։

Նա և յիշեսջիք զբազմաշխատ ձեռն
նասուն աշակերտ և հոգևոր հարազատ
որդին

իմ գ Մաշէկ Ծատուր նոր
Ջուղայու Թարվիզեցի Շարիֆեան
զծնողսն իւր որ ՚ի սկզբանէ գործոյս
վաստակակից իմ եղև։
Արժանէ բարի յիշատակն թողուլ ՚ի
ի աշխարհի զպարոն Յակոբ Սիմոն
Այուբեանց կոչեցեալն որ նախկին յոր
որիչ գտաւ և ձրի աշխատէր ՚ի վերայ
պարանիսառ հոգւոտ ազգին խորհելով։
Այլ և անձինք բազումք բարեպաշտութ̅
արդարեալք և ՚ի յազգաշահ իրողութիւ
րախութ̅ սրտի նպաստիւ արդեան
եռնամուխք (որոց զանուանս գրեմք)
ստորև կարեկցեալ օգնեցին ՚ի փառս
իոյն ա̅յ և ՚ի պարծանս լուսաւորչական
հայկազեան տոհմին։ Բարձր մարեծնունդք
նախ ազնուածին, բնութ̅ բարի, քաղցր,



իմաստուն

իմաստուն, հեզ, հանդարտ, ողորմած բա
րեսէր Ն։աշելի երիտասարդ Յ։աբէ
թեան տոհմ Շ։նորհօք լի ։

Նա և ամ պատուէրյ արժանիք Աղա
Մարութ Յովսէփ փունջեանց և որ
Յարութի Կարապետն և որդն Մանու
Յակոբջան որ ոսկերիչ մանուկենց ասի։
Նշանագրեալք՚ի գրքոյս անզուգ բարե ր
րութք մխիթարիչքն մեր ։ վերջապ
շնորհակալութիւն հասարակ բնակչ
մադրասիս հայոց՚ի մեծաց մինչև ցփոքու
որն որ վարձատրեսցէ աստ և՚ի հանդե
ձելումն ամէն եդուք յիշօղքդ յիշեալ
լինիջիք անմահ դաւ՚ին ոյ ։

այս է երրորդ տպագրութիւնն ։ :